

ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ
ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՍԵՐ ՄԱՐԴԸ



ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷԶՄԻԱԾԻՆ

2018



ՎԱԶԳԵՆ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԵՏ ԲՅՈՒՐԱԿԱՆԻ
ԱՄԱՌԱՆՈՑՈՒՄ

«ԱՍՏՎԱԾԱՍԵՐ ՄԱՐԴԸ»

ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Գրքի կողքի ձևավորումը՝ Մաշտոց Ջոբանյանի
Copyright @ 2018

By Archpriest Fr. Hovsep Hagopian

All right are reserved.

First edition – 2018

Printed in Armenia-Holy Etchmidzin

For information and address

902 E. Providencia Str.

Burbank, CA 91501, USA

e-mail: frhovsepfaith@hotmail.com

Youtube - Hovsep Hagopian

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ.

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Հրամանաւ Տեառն Յովնանու Արքեպիսկոպոսի
Առաջնորդին Միացեալ Նահանգաց
Արեւմտեան Թեմի

ՍՈՒՅՆ ՔԱՐՈԶԳԻՐՔԸ
ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ
ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ



WESTERN DIOCESE OF
THE ARMENIAN CHURCH OF NORTH AMERICA
Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Վերնաժողովան Թեմ
HIS EMINENCE ARCHBISHOP HOVNAN DERDERIAN, PRIMATE

ՄՐՏԻ ԽՕՍՔ

Առաջին անգամը չէ, որ մեր Սուրբ Եկեղեցւոյ նուիրեալ սպասաւորներէն՝ Արժանաշնորհ Տ. Յովսէփ Աւագ Քինյ. Յակոբեանը լոյս կընծայէ հոգեշունչ քարոզներու փունջ մը, որոնք Աստուծոյ սէրն ու իմաստութիւնը կը բուրեն, եւ ընթերցողը կը ներշնչէ քրիստոնէական ոգով ու Սբ. Էջմիածնի տեսիլքով:

Միրելի Տէր Հայրը, իր աւելի քան չորս տասնամեակ ծառայութեանը ընթացքին սերունդներու կեանքն է լուսաւորած Աստուածաշունչ Մատեանէն ճառագայթող պատումներով: Սոյն հատորը՝ տիտղոսագրութեամբ «Աստուածասէր մարդը», իր մատչելի քարոզներով հոգեւոր հաց է քրիստոնէայ հաւատացեալին համար, որպէսզի իր կեանքն ապրի Աստուծոյ հետ եւ իր առօրեան արդիւնատրէ Աստուածաշունչ Մատեանի կենսատու խօսքերով:

Միրելի Տէր Հայր, Ձեր վարձքը կատար: Թող Աստուծոյ Աջը միշտ հովանի ըլլայ Ձեր վրայ, որպէսզի Ձեր կեանքը շարունակէր յետ այսու դնել վասն պայծառութեան մեր Սուրբ Եկեղեցւոյ, որուն արմատը Սբ. Էջմիածինն է:

Մնամք սիրոյ ջերմ ողջունիլ՝

Յովնան Արքեպիսկոպոս
Առաջնորդ
Միացեալ Նահանգաց Արեւմտեան Թեմի

Պըրպէնք, Յուլիս 31, 2018

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Իմ հայրենի ժողովրդի ընթերցանությանն եմ հանձնում իմ նոր Քարոզգիրքը, որն անվանել եմ «ԱՍՏՎԱԾԱՍԵՐ ՄԱՐԴԸ»:

Աղոթող եմ Ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Ն.Ս.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի քաջառողջության և իր եկեղեցանվեր ու հայրենաշեն գործոց հաջողության համար:

Արևելահայերենի ուղղագրության և մտքի դասավորման, ինչպես նաև գրքի կազմը պատրաստելու աշխատանքի մեջ, իրենց կարևոր լուման ունեն Առաջնորդարանի աշխատակիցներ՝ ինձ շատ սիրելի Հայկ Մադոյանն ու Մաշտոց Ջորանյանը, որոնց նույնպես հայտնում եմ իմ սերն ու շնորհակալությունը:

Քարոզգրքիս լույս ընծայման նպատակն է ինչ որ չափով հազեցնել մեր ժողովրդի հոգու ծարավը: Եթե մի կաթիլ իսկ հաջողվեմ իմ այս առաքելության մեջ, դա կլինի իմ վարձը: Աղոթեցեք ինձ համար:

Միրով՝

Հովսեփ Ավագ Քահանա Հակոբյան

Օգոստոս, 2018

Բրբենկ, Կալիֆորնիա, ԱՄՆ

ՏԻՐՈՋ ԽՈՍՔԻ ՆՎԻՐՅԱԼ ԾԱՌԱՆ

«Աստվածասեր մարդը» խորագրով այս գիրքը մեկն է այն բազում ստեղծագործական գործերից, որ Տեր Հովսեփ Քահանան հրատարակել է վերջին տասնամյակին:

Եթե դուք կարդում եք այս տողերը, ուրեմն իրավ ծարավն ունեք Աստծու կենաց խոսքի:

«Աստվածասեր մարդը» վստահ եմ կդառնա ձեր լավագույն բարեկամն ու ուղեկիցը և դուք նման մեր Տիրոջ աշակերտների՝ պիտի բացականչեք՝ «Տեր, ո՞ւմ մոտ պիտի գնանք: Դու հավիտենական կյանքի խոսքեր ունես» (Հովհ. 6:69):

Այստեղ դուք կգտնեք հոգևոր մտորումներ ու խոհեր ներշնչված Աստվածորդու օրինակից: Տիրոջ խոսքի հմուտ քարոզիչ և նվիրյալ Տեր Հովսեփ քահանան ձեզ է բերում իր հոգևոր կյանքի փորձառությունը և իմաստությունը: Գնահատելի և օգտակար աշխատանք:

Քարոզխոսությունը դարերով եղել է թե՛ հայ հավատացյալ անհատի և թե՛ ազգի ներշնչում ու զգացմանց աղբյուր, որի լավագույն ավանդությունները Տեր Հովսեփը շարունակում է «Աստվածասեր մարդը» քարոզգրքում: Հայ ազգը կարողացել է իմաստավորել իր պատմությունը և հաղթական դուրս գալ բազում փորձությունների միջից, որովհետև իր կյանքը ամբողջովին խաբսխել է աստվածաշնչային ճշմարտությունների վրա: Սուրբ Գիրքը եղել է հայ մարդու հացը և ջուրը հանապազօրյա: Եվ նրանից բխող հույսը, սերն ու հավատքը այն գորավոր ազդակներն են, որոնք ներշնչել են հայ հավատացյալին հետևելու Տիրոջը դեպի Գողգոթա և անդին՝ դեպի Հարություն:

Տեր Հովսեփ քահանայի քարոզները գեղեցիկ են իրենց պարզության մեջ, միևնույն ժամանակ խորիմաց ու

սրտաբուխ: Հեղինակի հիմնական հոգածության առարկան իր հոտին հոգու սնունդ մատակարարելն է, այն մտահոգությամբ, որ չլինի թե իր հոտը աշխարհի նյութապաշտության մթնոլորտում սովամահ լինի:

Տեր Հայրը, իր հավատքի անկեղծությամբ ոգևորված, հզոր շեշտ է դնում յուրաքանչյուր քարոզի ու խոսքի մեջ, որպեսզի արթնացնի ու սթափեցնի իր ընթերցողին: Իր խոսքը գրավիչ է՝ համեմված գեղեցիկ բարոյական պատմություններով: Քարոզները, կարծես, փոքրիկ մարգարիտներ լինեն՝ կյանքի ծովի մեջ ծփացող: Երբ կարդաք ու ավարտեք այս քարոզգիրքը, մի ամբողջ մարգարտաշար վզնոց կունենաք:

Պիտի խորհուրդ տամ, որ ամեն օր մի քարոզ կարդաք, ինչ պայմանների տակ էլ որ կլինեք մի զլացեք սնուցելու ձեր հոգին: Կարդացեք, երբ ուրախ եք ու հանգիստ, կարդացեք, մանավանդ, երբ մտահոգ եք, տխուր ու անդեկ: Այո՛, անպայման կարդացեք, երբ արկածների հոր-ձանքը ծռել է ձեր մեջքը ու ձեր բազուկները թուլացել են հուսախաբություններից: Եվ Տիրոջ կյանքի խոսքը նորից կգորացնի ձեր ձեռքերը, նոր հույզով կլցնի ձեր սիրտն ու կամրացնի ձեր կամքը:

Երբ վերջացնեք կարդալ այս քարոզգիրքը, պիտի զգաք ձեզ ավելի գորացած հավատքով, ավելի ազնվացած ու վեհացած, դե իհարկե՝ ավելի երջանիկ:

Տեր Հայր ջան, վարձքդ կատար:

Զաքարիա Քահանա Սարիբեկյան
Հոգևոր Հովիվ Մբ. Աբգար Հայց. Եկեղեցու
Մարտ 10, 2018
Արիզոնա, Սքաթստեյլ, ԱՄՆ

ԱՍՏՎԱԾԱՍԵՐ ՄԱՐԴԸ

«Ամեն ոք, որ մարդասեր է, ուրեմն աստվածասեր է, և ամեն ոք, որ աստվածասեր է, նաև մարդասեր է»

Ընդհանրական Քրիստոնեական
Վարդապետներ

Այս խոսքը վերցրել են Ընդհանրական Քրիստոնեական Վարդապետների խրատներից:

Վստահ են, որ բոլորիս սրտին խոսող նյութ է սա, որովհետև խոսքը գնում է մարդասեր և աստվածասեր լինելու մասին:

Հարց է ծագում. «Ո՞վ է մարդասերը, որը նաև աստվածասեր է, և ո՞վ է աստվածասերը, որը նաև մարդասեր է»:

Եկեք մի պահ մտածենք այս երկու բառերի իմաստների մասին. մարդասեր, նշանակում է մարդ սիրող, աստվածասեր՝ Աստված սիրող: Ի՞նչ կապ կա այս երկուսի միջև: Կապը պիտի փնտրենք հենց մարդու ստեղծագործության մեջ: Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերի համաձայն և Իր սերը դրեց նրա մեջ: Ոչ միայն սերը, այլ նաև խիղճը, կամքն ու խելքը: Նա ամեն օր ստեղծելով աշխարհի բարիքները, տեսավ, որ լավ են և ասաց. «Թող լինեն»: Ուրեմն Աստված սիրով ստեղծեց ամեն ինչ ու կատարյալ էր: Բայց Նա մտածեց, որ այս բոլորի համար պիտի ստեղծի ամենակատարյալը, որը Մարդն էր: Եվ Աստված սիրով դա արեց:

Ուստի մարդը ոչ միայն մարդասեր է, քանի որ իր նմանին է տեսնում, այլ մարդ սիրելով բնականաբար նաև աստվածասեր է: Հակառակը չի կարող լինել, քանի որ անկեղծ ու սրտանց սեր կա: Եթե մեկը մարդկանց չի սիրում և նրանց հետ վատ հարաբերություններ ունի, կնշանակի նա, եթե ասի էլ, թե Աստծուն սիրում է, ինքն իրեն է խա-

բում: Եթե մեկը Աստծու ստեղծածին, որին տեսնում է, չի սիրում ինչպե՞ս կարող է սիրել Նրա Ստեղծողին, որին չի տեսնում: Դա նման է այն զավակին, որն ասում է, թե ես Աստծուն սիրում եմ, բայց իր ծնողներին անտեսում է, ուշադրություն չի դարձնում, չի հիշում նրանց, զբաղվում է իր առօրյա գործերով: Բացարձակապես սուտ է, մի հավատացե՞ք նրա խոսքերին: Նա երբեք էլ Աստծուն չի սիրում, քանի որ Նրա ներկայացուցիչներին՝ Իր ծնողներին, երկրի վրա անտեսում է:

Ավարայրի երգիչ Սուրբ Եղիշե Վարդապետն ասում է. «Անմահ Աստծու անմահ պատկերը մարդն է» և միաժամանակ ցույց է տալիս, թե մարդն ինչո՞վ է նման Աստծուն. «Բանական է միայն մարդը և հրեշտակը, իսկ Աստված վեր է երկնքից և երկրից»: Աստծուց տրվածը մեր մեջ արտահայտված է երեք կարողություններով՝ խելք, ազատ կամք և խղճմտանք, որի պատճառով մեր ֆիզիկական մարմնով կապված ենք աշխարհի հետ, բայց Աստծուց տրված հոգով՝ ազատ ու անկախ ենք նրանից:

Դժբախտաբար մարդը հենց սկզբից՝ Ադամից սկսած, մեղք գործեց և իր աստվածատուր կարողությունները փոխեց դրանով, որը մարդու հոգին վերածեց պատերազմի դաշտի, ուր նա պայքարում է չարի՝ սատանայի դեմ, որն ուրախանում ու հրճվում է մարդու ամեն մի ձախողությամբ:

Վանականներից մեկը պատմում է.

«Մենք սառած գետ տեսանք և դրա ափին բազմաթիվ մարդկանց: Մոտեցանք և գետով անցնող մարդկանց տեսանք: Նրանցից ոմանք գնում էին ընտանիքների հետ, լուսավոր և ուրախ դեմքեր ունեին, որովհետև միասին էին: Իսկ մյուսները գնում էին առանձին-առանձին և տխուր էին ու համարյա ամեն քայլափոխի գետն էին ընկնում: Ոմանք գետն անցան և շարունակեցին իրենց ճանա-

պարհը, իսկ ոմանք այդպես էլ մնացին ջրի մեջ: Ես իմ ուղեկից ծեր վանականին հարցրեցի. «Ինչո՞ւ են ոմանք գետն անցնում, իսկ ուրիշները չեն կարողանում»: Նա ինձ ասաց. «Ով երկրի վրա ապրելով, խոստովահայր է ընտրել և ընդունել նրա խրատները, երբ խոստովանել է, կատարել մեղքերի դիմաց գրված ապաշխարանքները, ահա դրանց ես դու այժմ տեսնում գետն անփորձ անցնելիս: Իսկ նրանք, ովքեր դրա մեջ են ընկնում ու խեղդվում, կյանքի ընթացքում խոստովանահայր չեն փնտրել, անփութորեն խոստովանել են և ասել. «Մենք ինքներս էլ գիտենք, թե ի՞նչ է մեղքը, ի՞նչը՝ ոչ»: Ու ահա գետի միջով նրանց ոչ ոք չի ուղեկցում և աջակցում... Մենք էլ անցնե՞նք գետը», - ասում է նա: Վախենում եմ, - ասացի ես, - գետը ընկնեմ: - Քո խոստովանահայրը քեզ կպահի», - ժպիտով պատասխանեց ծեր վանականը:

Եղիշե վարդապետը շարունակում է. «Ես (Աստված) Իմ կենդանի պատկերը մարդու կենդանի դեմքի վրա նկարեցի, և աշխարհում ոչ ոք չի կարող նմանվել Ինձ, բայց միայն մարդը: Աստված ոչ մեկին չի երևում, բայց միմիայն մարդուն, երկրի վրա Աստված ոչ մեկին այդքան չի սիրում, որքան՝ մարդուն: Միայն Աստված է մարդասեր և միայն մարդը՝ աստվածասեր»:

Խոսքով եպիսկոպոս Անձևացին՝ Սբ. Գրիգոր Նաբեկացու հայրը, գրում է. «Չար է մեղքի երևույթը, և առավել չար է գործողի համար..., մեկին՝ աշխարհական ցնորքների, մյուսին՝ արձաթափության, մեկ ուրիշին՝ փառամոլության, երրորդին՝ նախանձի ու ատելության մեջ...»: Իսկ Վարդան վարդապետ Այգեկցին շարունակում է. «Այս պատճառով բոլոր սրբերը նրան (մեղքին) կոչեցին չարիք, մեղք, անօրեննություն, մահ, ապականություն, դժողք, կորուստ, նաև շուն՝ լրբության, առյուծ՝ չարաչար պատառոտելու, զվարակ՝ խփելու պատճառով և վիշապ, որով-

հետև մեղքը հեշտությամբ է մոտեցնում մարդուն, տգրուկ կոչեցին նրան, որովհետև չի կշտանում մեղքերից, որոնք գործվում են աշխարհում և չի ասում. «Բավականացա և կշտացա»:

Վաղինակ Վրդ. Մելոյանը այսպես է բացատրում մարդու աստվածասեր և մարդասեր լինելը.

«Ինչո՞ւ աստուածսիրության և մարդասիրության պատվիրանները իրարից անբաժան են ներկայացվում (Մատթ. 22:37-39, Դուկ. 10:27): Աստվածասեր եղողը չի կարող մարդասեր չլինել... Մարդասեր լինելը նշանակում է մահից կյանքի անցնել. «Մենք գիտենք, որ մահվանից դեպի կյանք անցանք, քանզի սիրում ենք մեր եղբայրներին» (Ա.Հովհ 3:14): ...Փաստենք հետեւաբար, որ մահից կյանքի ենք անցել՝ սիրելով մեր նմանին...»:

Մարդիկ իրենք է, որ մեր սիրույն կարոտ են և ոչ թե Աստված: Հովհաննես առաքյալն ասում է. «Ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել» (Ա. Հովհ. 4:20): Անտեսանելիի հանդեպ մեր սերը ապացուցվում է տեսանելիի նկատմամբ մեր ցուցաբերած սիրով: Ի՞նչ է իմաստը «Ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է...» բառերի: Առաքյալը ուզում է ասել, որ եթե չենք սիրում գործնականում օգտակար լինել մեր եղբորը, որին տեսնում ենք կարոտյալ և թշվառ վիճակում, ինչպե՞ս կարող ենք հանդգնել մենք մեզ աստուածասեր համարել:

Արդարև, ի՞նչ օգուտ, երբ սեր ենք ցուցաբերում Աստծուն, որին Նա երբեք էլ կարիք չունի և ոչ մի սիրո կաթիլ մարդկանց նկատմամբ, որին նրանք այնքան կարոտ են: Ի՞նչ օգուտ, երբ սիրում ենք Աստծուն, բայց չենք սիրում մարդուն, որի սիրո համար Աստծու սիրտը սրախողխող եղավ խաչի վրա: Ինչո՞վ կօգտվենք, երբ սիրո անթիվ մարգարիտներ ունենք մեր սրտի գանձանակում, մինչ մեր

շրջապատը լցնում ենք սիրո անթիվ մուրացկաններով: Սիրո դրամների կարիքը ունեցող մարդկանց թիվը շատ ավելի է, քան ոսկյա դրամների կարիքը ունեցող մարդկանց...» («Ես եմ ճամբան, ճշմարտությունը և կյանքը» քարոզգրքից):

Եկեք ուրեմն փորձենք մեղք չգործել, սիրենք մարդկանց և Աստծուն անկեղծ սրտով՝ մարդասեր և աստվածասեր լինենք: Խնդրենք, որ Տերը մեզ բոլորիս պարզև առավել շնորհներ ու կարողություն, որպեսզի այս անցավոր աշխարհում կարողանանք մեր նմանների նկատմամբ բարի ու արդար գործեր կատարել, ի փառս Աստծու: Ամեն:

ԱՐԴԱՐԻ ԱՂՈԹՔԸ

«Արդարի աղոթքը շատ ազդեցիկ է և
օգնում է» (Հակոբոս 5:16):

Այս խոսքը ես վերցրել եմ Հակոբոս Առաքյալի Ընդ-
հանրական թղթի 5-րդ գլխի 16 համարից, ուր նա խոսում
է, թե արդարի աղոթքը շատ ազդեցիկ է և օգնում է:

Որպեսզի ավելի պարզ լինի Հակոբոս Առաքյալի
այս խոսքի իմաստը, մեջբերենք 5-րդ գլխի 13-16 համար-
ները. «Ձեզնից մեկը վշտի՞ մեջ է ընկել, թող աղոթի. մեկը
բերկրանքի՞ մեջ է, սաղմոս թող ասի. հիվա՞նդ է ձեզնից
մեկը, թող կանչի եկեղեցու երեցներին և նրանք նրա վրա
թող աղոթք անեն, թող յուզով օծեն նրան Տիրոջ անունով:
Եվ հավատով եղած աղոթքը կփրկի հիվանդին, ու Տերը
նրան ոտքի կկանգնեցնի: Եվ եթե մեղք գործած լինի, այդ
նրան պիտի ներվի: Ձեր մեղքերը միմյանց խոստովանեցեք
և միմյանց համար աղոթք արեք, որպեսզի բժշկվեք, քանզի
արդարի աղոթքը շատ ազդեցիկ է և օգնում է» (Հակոբոս 5:
13-15) ու շարունակում է «...Եղբայրներ իմ, եթե ձեզնից մե-
կը շեղվի ճշմարտության ճանապարհից, իսկ մեկ ուրիշը
նրան հետ բերի, թող իմանա, որ, ով մեղավորին իր մոլո-
րության ճանապարհից հետ է բերում, կփրկի նրա հոգին
մահվանից և կծածկի մեղքերի մի ամբողջ բազմու-
թյուն» (Հակոբոս 5: 13-20):

Առաքյալի այս խոսքը չի վերաբերում միայն ար-
դարներին, այլ նաև մեզանից յուրաքանչյուրին:

Հարց է ծագում, թե՞ «Ո՞վ է արդարը և ինչո՞ւ է ար-
դարի աղոթքը ազդեցիկ»:

Քաջատրությունը Ադամ Քահանայինն է. «...Ար-
դար լինելու մասին Պողոս առաքյալը Հռոմեացիներին
ուղղված թղթում ասում է. «Ոչ ոք արդար չէ, ոչ իսկ մեկ
հոգի» (Հռոմ. 3:10): Պողոս Առաքյալը Կորնթացիներին

ուղղված առաջին թղթում խոսում է նաև հոգեպես կատարյալների մասին (Կորնթ. 2:6): Ուրեմն, պետք է արդար հասկացության մի քանի տեսակներ առանձնացնենք՝ բացարձակապես արդարություն, որ հատուկ է Աստծուն և համեմատական արդարություն, որ հատուկ է մարդուն: «Ոչ ոք արդար չէ» խոսքը վերաբերում է համեմատական արդարությանը, որովհետև Աստծո բացարձակ արդարության համեմատ ոչ ոք արդար չէ, բացի դրանից դա ցույց է տալիս մարդու մեղավոր լինելը:... Պողոս առաքյալի նշած՝ հավատքով կատարյալներն արդեն այն մարդիկ են, ովքեր, մեղքերի համար գղջալով, հավատքի, հոգևոր ապրումների մեջ առաջանալով, հասել են հոգևոր առումով որևէ առաջընթացի...: Հակոբոս առաքյալը հենց այսպիսիներին նկատի ունի, երբ ասում է, որ արդարի աղոթքը գորավոր է և կարող է օգնել: Սակայն պետք է նկատի ունենալ, որ այդպիսի աղոթքը կարիքն ունի այն մարդու գործակցության, ում համար աղոթում են, որպեսզի այդ մարդը նաև իր կամքով չշարունակի մնալ մեղքերի մեջ և ապրի աստվածահաճո կերպով»(Ադամ Քահանա Մակարյան, «Ոչ միայն հացիվ»):

Մարդիկ կան, որոնք մեղք են գործում իրենց նմանի նկատմամբ և կարծում են, թե Աստծուն խոստովանելով, թողություն կարող են ստանալ ու դա բավական է: Բայց Հակոբոս առաքյալն ասում է, որ դա բավական չէ, քանի որ այդ մեղքը, որը կատարել ենք, պետք է խոստովանենք ու նրանից ներում խնդրենք: Սա անհրաժեշտ պայման է: Զղջալ և ներում հայցել ու ապա աղոթել, որպեսզի արժանանանք Աստծու ողորմածությանը:

«Արդարի աղոթքը շատ ազդեցիկ է և օգնում է»:
Բոլոր առաքյալները իրենց Վարդապետի օրինակով
մշտապես աղոթքի մեջ էին: Բանտերի փակ դռները և
շղթաները բացվում ու կտրվում էին նրանց աղոթքների
գորույթամբ: Իսկ ի՞նչ է այսօր իրականությունը: Ո՞ւր են
աղոթողները: Դժբախտաբար այսօր սրտանց ու անկեղծ
աղոթողների թիվը պակասել է, մարդիկ նույնիսկ իրենք
չեն աղոթում, ուր մնաց որ աղոթեն ուրիշների համար:
Երանի չէր այդպես լինել: Բայց չհուսահատվենք, դեռ կան
մարդիկ, որոնք աղոթում են ամեն օր և ոչ միայն իրենց, այլ
նաև մեր երիտասարդների համար, որոնք, ցավով եմ
ասում, սխալ ճանապարհների մեջ են և հիվանդ են: Եր-
բեմն մարդիկ թերահավատորեն ասում են, թե ի՞նչ օգուտ
մեր աղոթքից, մեկ է չարը իր գործը անելու է, մենք անգոր
ենք ու ձեռքները հուսահատ թափ են տալիս: Թուլակամ
մարդիկ են այդպես մտածում: Պիտի հիշենք, որ մեր
աղոթքները, խնդրանքի ձևով ուղղված են Աստծուն, որ-
պեսզի Նա օգնի մոլորվածներին: Մենք ո՞վ ենք, իբրև մար-
դիկ ի՞նչ գորություն ունենք, բայց ձեռքներս ծալած չալիտի
նստենք. «Կաթիլն էլ օվկիանոսին օգուտ է, եթե ես իմ բարի
գործն ու աղոթքը չանեմ, օվկիանոսը գուրկ կմնա իմ կա-
թիլից»- ասում է Մայր Թերեզան: Հետևենք նրան և սըր-
տանց աղոթենք:

Ես հավատում եմ բոլորիս աղոթքների գորու-
յթանը: Մանավանդ մայրերի աղոթքի ուժին:

Այս հեքիաթը աղքատի մասին է.

«Հավատա միայն քո Տեր Աստծուն, ապավինեցեք
Աստծու գորույթանը»:

Ժամանակով մի բարի թագավոր կար: Նա սովո-
րություն ուներ ամեն իրիկուն հասարակ հագուստներով
շրջելու քաղաքում, որպեսզի տեսնի, թե ինչպե՞ս է ապրում
իր ժողովուրդը:

Մի երեկո՝ իր սովորական պտույտի ժամանակ, տեսնում է մի աղքատ մարդու, որն իր խրճիթի դռան առջև նստած, աղոթում էր ու մրմնջում.

Տեր Աստված ինձ 100 ոսկի տուր:

Թագավորը լսում է ու անցնում: Քիչ այն կողմ գնալով՝ տեսնում է մի ուրիշ աղքատի, որը նույնպես աղոթում էր ու ասում.

Տեր թագավոր ինձ 100 ոսկի տուր:

Հետևյալ օրը թագավորը հրամայում է սկուտեղի վրա 100 ոսկի դնել, ծածկել փլավով ու հավի մսով և ուղարկել այն աղքատին, որը թագավորից էր 100 ոսկի խնդրում:

Այն հիմարին էլ թող Աստված տա,- ինքնիրեն մրմնջում է թագավորը՝ մտածելով մյուս աղքատի մասին:

Նույն օրը երեկոյան թագավորը նորից դուրս է գալիս պալատից և ուղղվում դեպի այն աղքատի տունը, որին 100 ոսկի էր ուղարկել: Աղքատը, իր խրճիթի դռանը նստած, դարձյալ աղոթում էր ու ասում.

Տեր թագավոր ինձ 100 ոսկի տուր:

Այս լսելով՝ թագավորը շատ է զարմանում: Մոտենում է ու հարցնում.

Ա՛յ մարդ, թագավորի կողմից այսօր քեզ փլավ չբերի՞ն:

Բերին, շնորհակալ եմ:

Կերա՞ր:

Կերա:

Ի՞նչ կար մեջը:

Նուշ ու չամիչ:

Ուրի՞շ:

Հավի միս:

Ուրիշ բան չկա՞ր:

Ո՛չ:

Բոլորը կերա՞ր:

Ո՛չ, շատ էր: Մնացածը տվեցի ինձ պես աղքատ ու քաղցած հարևանիս:

Թագավորը մորուքը շոյում է ու հեռանում: Քիչ այն կողմ տեսնում է մյուս աղքատին, որն ասում էր Աստծուն.

Շնորհակալ եմ, Տե՛ր Աստված. որ լսեցիր աղոթքս ու 100 ոսկի ուղարկեցիր:

Թագավորը համոզվում է, որ ա՛յս մարդն էր խե՛լացի: Նա դիմել էր ոչ թե իր աշխարհիկ տիրոջը՝ թագավորին, այլ Աստծուն, որ դեկավարում է ոչ միայն մարդկանց, այլև ամբողջ Տիեզերքը:

Դուք էլ, ձեր կյանքում շարժվեցե՛ք Աստծուն խնդրող աղքատի նման»:

Շատ անգամ ինձ դիմում են իբրև հոգևոր հայր, որպեսզի աղոթեմ իրենց համար. «Տեր Հայր, աղջիկս հիվանդ է, նեղությունների մեջ ենք, խնդրում ենք աղոթիր մեզ համար» կամ «Տեր Հայր, հոգեկան անհանգստություն ունեմ, գիշերները չեմ կարողանում քնել, մի տեսակ ներքին տագնապ ունեմ, խնդրում եմ աղոթքներիդ մեջ հիշիր ինձ» և այլն: Ամեն մեկս էլ կարող ենք աղոթել և խնդրել մեր նմանների համար՝ առողջություն, հոգեկան հանգստություն, հոգսերից ու մտահոգություններից ազատում: Ուրիշների համար աղոթելով, մենք մեզ էլ հոգեպես հանգիստ կզգանք, այն մտածումով, թե մի բարի գործ ենք կատարում և հավատացեք, Աստված մեզ ավելիով կտա: Աղոթող են այն մարդիկ, ովքեր մարդասեր ու աստվածասեր են, խղճմտանք, օգնելու ցանկություն ունեն, Աստծու պատվիրաններին հետևող են, մի խոսքով իրենց հավատը գործի վերածող են:

Եկեք ամեն օր աղոթենք մեկս մյուսի, մանավանդ մեր երիտասարդների համար, մոտենանք ու խոսենք Աստծու հետ, մեր հոգսերն ու մտահոգությունները, մեր

հավատարմությունը, սերն ու գոհունակությունը աղոթքի միջոցով հանձնենք ու հայտնենք Նրան: Պողոս Պատրիարքն ասում է. «Եթե մեկը խնդրում է կյանք, իմաստություն, զավակ կամ ունեցվածք, մտքում պիտի դնի դրանցով ծառայել Աստծուն, այսինքն՝ կյանք է խնդրում, որ ապաշխարի, իմաստություն, որ սխալվելով մեղքի մեջ չընկնի, զավակ, որ նրան Աստծու ծառա դարձնի, ունեցվածք, որ աղքատներին ու կարոտյալներին բաշխի... Աղոթելիս պետք է խնդրել, որ Աստծու կամքը կատարվի մեր մեջ և ոչ թե մերը՝ ըստ այսմ. «...ոչ թե ինչպես ես եմ կամենում, այլ ինչպես Դու ես կամենում» (Մարկ. 14:36): Ամեն:

ԱՇԽԱՐՀԻ ՇԱՀԸ

«Ի՞նչ օգուտ է մարդուն, եթե աշխարհը շահի,
բայց իր անձը կորցնի....» (Ղուկ.9:25-26):

Հիսուս ասում է. «Ով սիրում է իր անձը պիտի կորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կպահի հավիտենական կյանքի համար» (Հովհ. 12:25): Ըստ մեր Տիրոջ, այն անձը, ով որ մտածում է միայն իր անձի մասին, մեկ է մի օր պիտի մեռնի ու հեռանա այս կյանքից, ի՞նչ օգուտ է, եթե նա ապրել է անիմաստ կյանքով: Այդ անձը պիտի գիտակցի, որ իր ապրած անիմաստ կյանքի համար պիտի արժանանա հավիտենական պատժի: Ո՞վ պիտի հիշի նրան կամ ինչպե՞ս պիտի հիշեն: Իսկ նրանք, ովքեր չեն մտածում իրենց անձի մասին, այն պիտի պահեն հավիտենական կյանքի համար: Ո՞ր է հավիտենական կյանքը, չե՞ որ մենք գիտենք, թե մարդ իբրև Աստծու ստեղծած արարածը ապրում է ժամանակավոր մի կյանքով, ինչպե՞ս կարող է իր անձի մասին չմտածող մարդը այն պահել հավիտենական կյանքի համար: Շատ պարզ է, երբ մենք մշտապես հիշում ենք նրան, իբրև Աստծու ճանապարհով ապրած մարդու, որը կարողացել է բարի ու արդար գործեր կատարել, ապա նա մեր հիշողության մեջ մնում է մնայուն կերպով: Որով իր բարի անունով նա ապահովում է հավիտենական կյանքը:

Հիսուս շարունակում է Իր խոսքը. «Եթե մեկը կամենում է իմ հետևից գալ, թող ուրանա իր անձը և իր խաչը մշտապես վերցնի և գա իմ հետևից. որովհետև, ով որ կամենա իր անձը փրկել, այն պիտի կորցնի, իսկ ով որ իր անձը ինձ համար կորցնի, այն պիտի փրկի: Ի՞նչ օգուտ է մարդուն, եթե աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի ու տուժի...» (Ղուկ. 9:23-25):

Ֆրանսիացի նշանավոր գորահրամանատար Նապոլյոն Բոնապարտը իր կյանքի մայրամուտին ասել է, թե մենք բռնակալներս փորձեցինք ուժով և ճնշումով Թագավորություններ հիմնել, որոնք կործանվեցին, սակայն եկավ Մեկը, որի անունը Հիսուս էր և Նա հիմնեց Իր ՄԻՐՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, որին մինչև այսօր միլիոնավոր մարդիկ են հետևում:

Այո՛, այն ինչ որ նյութական է, կորստյան ենթակա է: Ուր որ չկա բարոյականություն, այնտեղ ուշ թե շուտ կյանքը պիտի մեռնի, ինչպես եղավ Հռոմեական Կայսրության, Ասորեստանի Հզոր Պետության, Բյուզանդական Կայսրության և Խորհրդային Միության պարագաներում:

Այս պատմությունը հետաքրքիր է և ճիշտ ցույց է տալիս նյութի վրա հիմնված Թագավորության կործանումը, որը կոչվում էր «ՓՈԻՉ, ԴԱՏԱՐԿ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ»:

«Աշխարհում մի թագավորություն կար, որտեղ բազմաթիվ հարուստ ու պարապ մարդիկ էին ապրում: Նրանք զվարճանալուց բացի ուրիշ ոչինչ չէին անում, միայն ուտում էին, խմում ու պարում և որպեսզի սերունդները հիշեին իրենց՝ մի հուշարձան կառուցեցին, որի վրա գրված էր. «Երգի՛ր ու պարի՛ր, երգի՛ր ու պարի՛ր, իսկ դու էլ՝ մահ, կողքով անցիր»:

Բայց ժամանակի ընթացքում այս թագավորության հարստությունն սպառվեց, ուժերը պակասեցին և հեռավոր երկրներից եկած ցեղերը գրավեցին այն: Բոլոր բնակիչներին գերեվարեցին ու սպանեցին, տներին ու հողակտորներին տիրացան: Նախկին անհոգ թագավորությունը մոռացվեց, միայն հուշարձանի արձանագրությունն էր հիշեցնում զվարճալի ժամանակների մասին: Զավթիչները ցանկացան դա էլ ոչնչացնել, Բայց մի ծերունի խորհուրդ տվեց թողնել այն.

Թող նախկին գրառումը մնա գալիք սերունդների համար, միայն մի քանի խոսք ավելացրեք դրա վրա. «Ով պարում էր այստեղ ու երգում արդեն վաղուց է հոդում փտում»:

«Երիտասարդներից մեկը նպատակ էր դրել հարստանալ: Եվ տարիներ շարունակ գիշեր ցերեկ աշխատելով առանց հանգստի, տիրացել էր մեծ հարստության. քաղաքներից մեկի բարձունքին ամենաթանկանոց բնակարաններից մեկն էր ձեռք բերել իր բոլոր հարմարություններով: Ուրախացել էր, որ հարուստ էր, քանի որ երկար տարիներ այդ նպատակով էր չարչարվել: Սակայն որոշ ժամանակ անց նրա մոտ հայտնաբերվում է անբուժելի հիվանդություն: Հիսուսի խոսքն է. «Ի՞նչ օգուտ է մարդուն, եթե աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի...»: Ի՞նչ էք կարծում, այս մարդու համար ի՞նչ օգուտ էր, որ հսկա հարստություն ուներ, ի՞նչ պիտի կարողանար անել այդ հիվանդության դեմ, որը բուժել անհնար էր: Փորձենք ոչ միայն հարստանալ, այլ նաև նրա միջոցով բարիք գործել: Հիսուս ոչ թե հանդիմանում կամ քննադատում է հարուստներին, այլ նրանց հորդորում է, որ այն օգտագործեն բարի գործեր կատարելու համար:

Հակոբոս առաքյալն ասում է. «Ով որ գիտե, թե ինչ է բարին, և չի անում, նրա համար այդ մեղք է» (Հակ. 4:17): Այո՛, իրապես մեղք է, երբ կարող ես բարի գործ անել և չես կատարում: Իսկ խիղճդ ո՞ւր է, խիղճ, որը Աստծուց է:

Այս պատմությունը թե՛ հետաքրքիր է և թե՛ ուսանելի.

«Մի պատանի էր գնում ճանապարհով: Հանկարծ տեսնում է գետնին մի մետաղադրամ է ընկած: «Մետաղադրամն էլ է փող», - մտածում է նա ու վերցնելով այն դնում է դրամապանակի մեջ:

Հետո սկսում է մտածել. «Իսկ ի՞նչ կանեի, եթե հազար ռուբլի գտնեի: Հորս ու մորս համար նվերներ կգնեի»: Հազիվ էր այդ մասին մտածել, երբ զգում է, որ դրամապանակը ծանրացել է: Նայում է դրա մեջ, իսկ այնտեղ արդեն հազար ռուբլի կար:

«Տարօրինակ է,- զարմանում է պատանին,- մի մետաղադրամ էր, իսկ հիմա հազար ռուբլի դարձավ: Իսկ ի՞նչ կանեի, եթե տասը հազար ռուբլի գտնեի: Մի կով կգնեի և հայրս ու մայրս կաթ կխմեին»: Եվ արագ դրամապանակի մեջ է նայում, իսկ այնտեղ արդեն տասը հազար ռուբլի էր:

«Այ քեզ հրաշք,- ուրախանում է պատանին,- իսկ ի՞նչ կանեի, եթե հարյուր հազար գտնեի: Մի տուն կգնեի, կամուսնանայի և հորս ու մորս էլ կտեղափոխեի նոր տուն»: Եվ կրկին դրամապանակի մեջ է նայում. հարյուր հազարն այնտեղ էր:

Դրամապանակը փակում է ու մտածումնքի մեջ ընկնում. «Միգուցե պետք չէ՞ հորս ու մորս նոր տունն: Իսկ եթե նրանք կնոջս դուր չգա՞ն: Թող հին տանն ապրեն: Կով պահելն էլ հեշտ չէ, ավելի լավ է այծ գնեմ: Շատ նվերներ էլ չեմ գնի, ինձ համար պետք է հագուստ գնեմ»: Եվ պատանին զգում է, որ դրամապանակը թեթև-թեթև է: Բացում է այն, իսկ այնտեղ միայն մեկ մետաղադրամ էր»:

Երբեմն զարմանում եմ, որ օր առ օր մենք մեզ ստիպում ենք երկրային բարիքներ կուտակել ու հավաքել, սակայն նույնիսկ մեր թույլ իսկ չենք նվիրում երկնքում գանձեր հավաքելուն: Խոսքով ասում ենք՝ հավատում ենք Աստծուն, սակայն մեր գործերով ցույց ենք տալիս, որ այլ չաստվածների ենք հետևում՝ ինչպես՝ դրամ, հարստություն, մեր անձի ու «ես»-ի մեծարանք և պատիվ, բայց ի՞նչ

օգուտ է սրանցից, քանի որ այն ինչ նյութական է, կորստյան ենթակա է:

Եվս մի պատմություն, որը հետաքրքիր է և ուսանելի.

«Փոքրիկ տղան ոտաբոբիկ կանգնած էր կոշիկի խանութի ցուցափեղկի մոտ և առանց աչքը թարթելու նայում էր ապակու մեջ դրված մի գույգ տաք, կաշվե և հավանաբար շատ հարմար աշնանային կոշիկների: Այդ պահին տեսնելով փոքրիկին նրան է մոտենում գեղեցիկ և լավ հագնված մի կին ու քնքշորեն հարցնում.

Փոքրիկ, ի՞նչին ես այդպես անընդհատ նայում, ինչ-որ բանի մասի՞ն ես մտածում:

Ես խնդրում եմ Աստծուն, մորաքույր, որպեսզի նա ինձ մի գույգ տաք կոշիկներ տա,- պատասխանում է տղան:

Առանց որևէ մի խոսք ասելու, կինը զգուշությամբ բռնում է տղայի ձեռքը և մտնում է կոշիկի խանութ: Նա խնդրում է վաճառողին բերել վեց գույգ մանկական գուլպաներ և եթե հնարավոր էր՝ տաք ջուր, օճառ ու սրբիչ: Երբ աշխատակիցը բերում է այն ամենը, ինչ որ խնդրել էր կինը, նա երեխայի հետ գնում է մի անկյուն, հանում իր ձեռնոցները և սկսում լվալ երեխայի ոտքերը, ապա չորացնում սրբիչով: Հետո նրանք սկսում են փորձել մի քանի գույգ կոշիկներ, այդ թվում նաև այն աշնանային կոշիկները, որոնց տղան նայում էր դրսից: Դրանք ճիշտ տղայի ոտքով էին:

Այդ բարի կինը գնում է բոլոր կոշիկները և նաև մի քանի գույգ գուլպաներ: Մեկը նա հագնում է տղային, իսկ մնացածը դնում է տոպրակի մեջ ու տալիս նրան: Հետո նա շոյում է տղայի գլուխն ու ասում.

Ինձ թվում է հիմա դու քեզ ավելի լավ ես զգում, այդպես չէ՞:

Բարի մորաքույրը արդեն շրջվել էր, որ գնա, հանկարծ փոքրիկը բռնում է նրա ձեռքն ու արցունքոտ աչքերով հարցնում.

Մորաքույր, Դուք Աստծու կի՞նն եք»:

Ահա բարության, ողորմության ամենամեծ օրինակը: Օգնել կարիքավորին, տկարին ու անկարին, նշանակում է այդ բարիքը Հիսուսին անել:

Եկեք այնպես ապրենք մեր կյանքը, ինչպես վերելվում փոքրիկին իր օգնությունը ցուցաբերած մորաքույրը: Եթե ոչ՝ ի՞նչ օգուտ է...: Օգնենք ու սիրենք: Հիսուս եղավ մեզ համար մեծագույն օրինակը՝ օգնեց, բուժեց ու սիրով Իր կյանքը գոհաբերեց խաչի վրա մեր փրկության համար: Մեզ մնում է հետևել Նրա օրինակին ու դառնալ Նրա Սիրո Թագավորության մշտական բնակիչները: Ամեն:

ՏԻՐՈՋ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆԸ

«Յույց տուր մեզ քո ողորմությունը, Տեր, և քո
փրկությունը շնորհիր մեզ»

(Մաղմ. 84:8)

Սաղմոսաց գրքի 84-րդ գլխի համարից եմ վերցրել
այս խոսքը:

Կարդալով այս խոսքը կարող ենք այն երկու մասի
բաժանել.

ա. Ինչպե՞ս կարող է Աստված մեզ ցույց տալ Իր
ողորմությունը, ի՞նչ ճանապարհով և ո՞ւմ միջոցով»:

բ. «Եվ Քո փրկությունը շնորհիր մեզ»:

Աստված միշտ էլ ողորմած է եղել մարդկանց
նկատմամբ:

Սբ. Հովհան Ոսկեբերան Հայրապետն ասում է.
«Մի՞ թե՛ Նա, որ քեզ արժանացնում է շնորհների, չի՞ կարող
նույնը անել և՛ կարիքավորների համար և՛ բավարարել
նրանց պակասությունները: Բայց նա թողնում է նրանց
աղքատության մեջ այն բանի համար, որպեսզի նրանք
արժանանան մեծ պարգևների՝ համբերությամբ այդ բոլո-
րը կրելու համար և դու էլ ողորմություն տալով, ձեռք
բերես անվեհերություն»:

Պետք է զգուշանալ, որ ողորմությունը սխալ ճանա-
պարհով չտրվի: Երբ դու ողորմություն ես տալիս աղքա-
տին, բայց մշակին զրկում ես իր վարձից, ճիշտ չես վճա-
րում գնած ապրանքիդ արժեքը, լրիվ չես հատուցում պար-
տատիրոջ պարտքը. երբ դու, մեկին օգնելով, մյուսին
վնասում ես, երբ մեկին տալիս ես, մյուսից խլում, մի ձեռ-
քով կառուցածդ մյուսով քանդում ես. «Չե՞ս իմանում,-
ասում է երանելի Օգոստինոսը,- որ քո այդպիսի անհամե-
րաշխ վարմունքի վրա ոմանք խնդում են, ոմանք՝ ողբում:

Մի երկուսը գոհանում են, բայց մեծ մասը հայհոյում և Աստված արդյոք ո՞ւմ ավելի պետք է լսի...»:

Սակայն, որպեսզի քո տված ողորմությունը պտուղներ տա, պետք է այսպես վարվես ու դատավոր չլինես.

1. Չպետք է քննես, թե այսինչ մուրացկանը ճշմարիտ աղքատ է, թե՝ սուտ, որովհետև թեպետ մեկը, աղքատ ձևանալով, իրավունք չունի ողորմություն ստանալու, բայց դու չպետք է զրկես քեզ ողորմածության պտուղներից, երբ այդպիսի մեկին ողորմություն ես տալիս, ձեռքդ է սխալվում, ոչ թե սիրտդ: Քրիստոս քո սրտի մեջ լավ է տեսնում, ինչ որ տվիր նրան...:

2. Տված ողորմությունդ, արած բարերարությունդ պետք է լինի ի փառս Աստծու և ոչ թե ի փառս մարդկանց...:

բ. «ԵՎ ՔՈ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՇՆՈՐՀԻՐ ՄԵԶ»: Հարց է առաջանում, թե՝ «Աստված ինչպե՞ս պիտի փրկի ու Իր փրկության շնորհը պարգևի մեզ» և կամ «Միայն ողորմություն տալով կարո՞ղ ենք Տիրոջ փրկությանը արժանանալ»:

«Ողորմությունը փետրավոր և ոսկեթև է. աղքատներին բաժանելիս՝ ոսկեղեն թներով երկինք է սլանում», -ասում է Սբ. Հովհան Ոսկեբերան Հայրապետը և շարունակում է. «Փառավորիք Տիրոջը այն բանի համար, որ Նա քո փրկության համար թույլ է տվել այդ մարդուն ապրել աղքատության մեջ, որպեսզի դու դրանով կարողանաս գտնել քեզ համար միջոց, թե՛ մեղքերդ սրբելու և թե՛ բարի կերպով օգտագործելու Տիրոջից քեզ վստահված բարիքները և վաստակել այն գովքը, որ վեր է ամեն խոսքերից և մտքից...»: Պողոս Պատրիարքը շարունակում է. «...Ողորմությունը մեղքերը քավում ու Աստծու ցասումը մեղմացնում է, սակայն պահանջում է ունենալ կատարյալ զոջում

ու խոստովանություն, ինչպես նաև աղոթք ու պահեցողություն: Որովհետև Աստված ոչ միայն ողորմած է, այլև արդար...» («Խրատի Թանգարան»)

Այս պատմությունը ողորմության և փրկության արժանանալու լավագույն օրինակն է.

«Ալեքսանդրիայում Պատրիարքն էր Հովհաննեսը, որին չքավորների հանդեպ ունեցած իր սիրո համար Ողորմած էին անվանում: Ամեն բան տալով, որպեսզի թեթևացնի չքավորների վիճակը, ինքը մնում էր ծայր աստիճանի աղքատության մեջ: Հասարակ հագուստը, փոքր ննջարանը՝ մաշված ծածկոցով, որը գործված էր կոպիտ թելից, կազմում էին նրա ողջ ունեցվածքը: Անվանի քաղաքացիներից մեկը Ալեքսանդրիայից նրան մի ծածկոց է նվիրում, որն արժեր 36 արծաթ և նրա հանդեպ ունեցած սիրուց խնդրում է, որ այն անպայման օգտագործի իր կարիքների համար: Սուրբը այդ գիշեր օգտագործում է նոր ծածկոցը, բայց միտքը 36 արծաթի կողմն էր, որը ծախսվել էր դրա վրա, երբ քանի՞ մարդ կարելի էր կերակրել այդ գումարով: Այս միտքն ամբողջ գիշեր նրան հանգիստ չէր տալիս: Վաղ առավոտյան, երբ լույսը բացվում է, նա իսկույն մեկին ուղարկում է, որ վաճառեն ծածկոցը: Վերցնելով գումարը իր սովորության համեմատ այն բաժանում է աղքատներին: Քաղաքացին, տեսնելով իր ծածկոցը շուկայում, նորից է գնում այն ու նվիրում սրբին՝ նույն խնդրանքով: Բայց հոգատար հովիվն այս անգամ էլ չի ուզում փորձել այն և մինչև երեկո վաճառում է ծածկոցը, գումարը նորից բաժանելով աղքատներին, որպեսզի գիշերը հանգիստ քնի: Համառ քաղաքացին երրորդ անգամ է բերում նույն ծածկոցը: Մբ. Հովհաննեսը ասում է. «Ես միշտ կվաճառեմ այն ապրանքը, որն ինձ պետք չի, տեսնենք թե մեզանից ո՞ր մեկն առաջինը կդադարեցնի անել իրենը» (Հոգեշահ գրքերից):

Այսպես էին վարվում մեր պատմության ընթացքին թե՛ որոշ թագավորներ և թե՛ Հայրապետներ, ինչպես օրինակ՝ Աշոտ 3-րդ թագավորը, որը Ողորմած անունն էր վաստակել, Սբ. Ներսես Շնորհալի Հայրապետը, մեր ազգի ցավերի ու վշտի Կաթողիկոս Խրիմյան Հայրիկը, և շատ ու շատ այլ անձինք:

Փորձենք ողորմած լինել, այն ոչ թե պարտականություն համարենք, այլ մեր սրտից բխած սիրո արտահայտություն մեր նմանի նկատմամբ, որն այսօր կարիքավոր է, աղքատ է, սոված է, մերկ է և ուրախ չէ: Ո՞վ գիտի այդ մուրացկանը ի՞նչ անցյալ է ունեցել, ինչպիսի՞ մարդ է եղել և ո՞ւր է հասել: Հիշենք, որ մեզանից ամեն մեկն էլ կարող է կյանքի շրջադարձային բերումով հայտնվել այդ մուրացկանի ու կարիքավորի վիճակին:

Սուրբ Հովհան Մանդակունի Հայրապետի խրատն այս է. «Արդ՝ չսպասենք վերջին օրվան, չլինենք ագահ, աղքատներին կարոտ չթողնենք, Քրիստոսին չտրտմեցնենք, այլ՝ որբերին կերակրենք, այրիներին խնամենք, պանդուխտներին հավաքենք, սովածներին կերակրենք և Քրիստոսին մխիթարենք: Երկրի վրա առատատուր մխիթարություն սերմանենք և երկնքի մեջ ողորմություն հընձենք, երկնային խորանները բարձրանանք ու մեծապայծառ խնդությամբ անսպառ ուրախությունը վայելենք մեր Տիրոջ՝ Հիսուսի հետ»: Ամեն:

ՀԻՍՈՒՄ ԹԱԿՈՒՄ Է ՄԵՐ ԴՈՒՌՈՐ

«Ահավասիկ ես դռան առաջ եմ և բախում եմ, եթե մեկը ականջ դնի իմ ձայնին և բաց անի դուռը, կմտնեմ նրա մոտ և կընթրեմ նրա հետ և նա՝ ինձ հետ» (Հայտ. 3:20):

Այս խոսքը ես վերցրել եմ Հովհաննես Առաքյալի Հայտնության գրքի 3-րդ գլխի 20 համարից: Այս համարից կարող ենք առանձնացնել երկու կարևոր մտածում.

ա. Ես դռան առաջ եմ և բախում եմ.

բ. Եթե մեկը ականջ դնի իմ ձայնին և բաց անի դուռը, կմտնեմ նրա մոտ կընթրեմ նրա հետ ու նա՝ ինձ հետ:

Իհարկե այս երկու մտածումն էլ բառացի չպետք է հասկանանք, քանի որ Հիսուս այսօր ֆիզիկապես մեզ հետ չէ և ուղղակիորեն չի կարող մեր նյութական դուռը թակել: Պատկերացրեք, եթե Հիսուսի փոխարեն ձեր դուռը ծեծում է մի մուրացկան կամ կարիքավոր մեկը և դուք նայում եք դռան արանքից ու տեսնելով նրա տխուր և աղքատիկ վիճակը, դուռը չեք բացում նրան օգնելու ու ինչ որ ձևով թեթևացնելու նրա վիճակը, դուք մերժում եք ոչ թե մուրացկանին, այլ՝ Հիսուսին, քանի որ Նա ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ ինձ համար արեցիք» (Մատթ. 25:40): Հիսուս ձեր դռան առաջ էր ու ծեծում էր այն, քանի որ Ինքը եկավ մուրացկանի ու աղքատի կերպարանքով, բայց դուք մերժեցիք նույնիսկ դուռը բացել: Եթե ասեք հավատ ունեք, դուք ձեր դեմ կմեղանչեք, քանի որ ձեր հավատի արտահայտությունը մեղքն էր: Հակոբոս առաքյալն ասում է. «Հավատը առանց գործերի մեռած է»:

Դժբախտաբար ապրում ենք այնպիսի մի ժամանաշրջանում, երբ մարդկանց ականջները խլացել են և չեն լսում Հիսուսի դռան թակոցը, ոչ միայն չեն լսում, այլ

նույնիսկ չեն բացում այն: Եթե դուռը փակ է, եթե մեր սրտերի դռները փակ են ու չենք ուզում դրանք բացել մեր Արարչի առաջ, ինչպե՞ս նա պիտի մտնի ներս, ի՞նչ ձևով: Ինչպե՞ս նա կընթրի մեզ հետ ու առավել ևս մենք՝ Նրա հետ:

Շատերը պատճառաբանում են, թե մի կյանք ենք ապրում, Հիսուս, Աստված, հոգևոր բարիքներ, սրանք մեզ չեն կշտացնի, դրամը, ունեցվածքը, հարստությունն են, որոնք մեզ հնարավորություն պիտի ստեղծեն լավ ապրելու ու վայելելու կյանքը: Սատանան երբեք չի քնում, նա միշտ արթուն է ու նա մարդուն ստիպում է դառնալ դրամի երկրպագուն: Այսօր մենք ոչ թե խոնարհվում ենք Ամենագոր Աստծու առաջ ու հավատում Նրա զորությանը, այլ՝ դժբախտաբար դարձել ենք չարի ստրուկը, որը երևում է զանազան վայելքների ու հաճույքների կերպարանքով: Իսկ երբևէ մտածե՞լ ենք, թե ի՞նչ ենք տանելու այս աշխարհից, ո՞ւմ ենք թողնելու մեր հարստությունը, մեր ունեցվածքը, ոսկիներն ու դրամները: Մի պահ միայն, երբ գերեզմանոցում ենք, գիտակցում ենք, որ բոլորիս վերջը այնտեղ է, բայց հետո... խաղատներ, գինետներ. ճաշարաններ, կեր ու խում, ահա մեր կյանքը: Չենք գիտակցում, որ սրանք բոլորն էլ ժամանակավոր հաճույքներ են, անցողիկ ու անհրապույր: Հիսուս ծեծում է մեր դուռը, ո՞վ պիտի բացի Նրա առաջ: Եթե հավատում ենք, ուրեմն առանց տատանվելու, պիտի խոնարհվենք Հավատի Զորագլխի առաջ և լայնորեն բացենք մեր դռներն ու սրտերը Նրա զորության առաջ, որպեսզի գա և մեր հոգիները փրկության արժանացնի:

Այսօր Հիսուս մեզ հետ է, բայց մենք Նրա հե՞տ ենք: Իրականությունը ցույց է տալիս, որ մենք շատ հեռու ենք Հիսուսի հետ լինելուց: Նա տեղ չունի մեր տան մեջ:

Գյուղում մի կոշկակար էր ապրում: Արդար կյանքով էր ապրում, մեծ հավատ ուներ: Եվ ահա, եկեղեցական մի մեծ տոնից առաջ հիվանդանում է ու շատ է վշտանում, որ չի կարող եկեղեցի գնալ: Հանկարծ, տոնի նախօրեին, ինչ-որ մեկի մեղմ ու հեզ ձայնը երագում նրան ասում է. «Քանի որ դու չես կարող ինձ մոտ գալ, Ես կգամ քեզ մոտ»: Կոշկակարն արթնանում է և ուրախանում. «Մի թե Աստված Ինքն է այցելելու ինձ»: Ողջ առավոտ տունը մաքրում ու կարգի է բերում, որքան կարող էր տոնական հյուրասիրություն է պատրաստում և սպասում է ցանկալի Հյուրի այցին: Եվ ահա, պատրաստության ժամանակ, պատուհանից մի լացող տղայի է տեսնում: Իր մոտ է կանչում նրան ու հարցնում. «Ինչո՞ւ ես լալիս»: «Այսօր միակ կոշիկներս պատռվեցին և այլևս հագնելու ոչինչ չունեմ, իսկ մեր ընտանիքն աղքատ է ու նորը գնել չի կարող», - ասում է տղան: Այն ժամանակ կոշկակարը հանգստացնում է տղային և ասում. «Կոշիկներդ ինձ տուր, ես կվերանորոգեմ»: Կարճ ժամանակ անց, երջանկությունից շողացող տղան, կանգնած էր վերանորոգված կոշիկներով: Նրան ճանապարհելով՝ կոշկակարը շարունակում է իր գործը: Երեկոյան մի աղքատ կին է գալիս նրա մոտ և ասում. «Ներիր ինձ, խնդրում եմ: Երկարաճիտք կոշիկներս քեզ եմ տվել վերանորոգելու, իսկ վճարել չեմ կարող... Բայց առանց դրանց էլ անհնար է դուրս գալ, որովհետև ցրտել է...»: Կոշկակարը ժպտում է ու ասում. «Երկարաճիտք կոշիկներդ պատրաստ են, կրիր և մի մաշիր», - և դրանք կնոջն է տալիս՝ առանց որևէ բան պահանջելու:

Մթնում է: Կոշկակարը, գործերը վաղուց ավարտած, նստել էր պատուհանի մոտ և սպասում էր խոստացված Հյուրին: Արդեն քնելու ժամն էր, երբ անպտուղ սպասումից ընկճված կոշկակարն սկսում է անկողինը բացել: Եվ ահա, դուռը թակում են: Բացելով այն, նա իր

առջև տեսնում է մի անցորդի, ով ասում է. «Թույլ տուր այստեղ գիշերեմ, ողջ օրը քայլել եմ, բայց գիշերելու տեղ չունեմ, ոչ ոք ինձ գիշերելու տեղ չի տալիս... Կոշկակարը խղճում է նրան և հրավիրում ներս: Իր անկողինը նրան է տալիս, իսկ ինքը տեղավորվում է հատակին: Նստած մտածում էր. «Երևի անարժան գտնվեցի Հյուրին, որովհետև այդպես էլ չայցելեց ինձ այսօր... Հավանաբար արժանի չեղա այդ մեծ տոնական օրը Նրա հետ անցկացնելու պատվին»: Այսպիսի տխուր մտքերով էլ կոշկակարը քնում է: Եվ կրկին այն նույն մեղմ ձայնն է լսում երագում. «Ես այսօր երեք անգամ քեզ մոտ եկա և ամեն անգամ դու Ինձ ուրախությամբ ընդունեցիր»:

Տեսա՞ք, Հիսուս ինչպե՞ս է այցելում մեզ, ի՞նչ կերպարանքով և ո՞ւմ միջոցով: Կոշկակարը արժանի եղավ, որ գնահատվի Հիսուսի կողմից, քանի որ բարի գործեր կատարեց:

Վերադարձել եք աշխատանքից, հոգնած, օրվա դժվարություններից նեղված ու բարկացած, փորձում եք հանգստանալ և հանկարծ մեկը թակում է դուռը: «Ո՞վ է», - ասում եք Ձեր մտքում, հյո՞ւր է, չեմ սպասում որևէ մեկին, բացե՛մ, թե՛ չբացեմ: Ձեր մեջ ալեկոծումներ են սկսում, չեք կարողանում կողմնորոշվել, ի՞նչ անել: Բացեք, պիտի զբաղվեք հյուրով, որի համար շատ ժամանակ չունեք, քանի որ հոգնած եք: Զբացեք, մի տեսակ նեղացրած կլինեք եկողին, որը ո՞վ գիտե գուցե ձեր հարազատներից կամ ընկերներից մեկն է: Վերջապես մի քանի բույս մտածելուց հետո, որոշում եք բացել: Դժկամությամբ և հոգնած տեսքով բացում եք դուռը և ո՞վ հրաշք, դուռը թակողը հենց Ինքն է, Հիսուսը: Նրան տեսնելով հիշում եք Իր խոսքը. «Ահավասիկ ես դռան առաջ եմ և բախում եմ, եթե մեկը ականջ դնի իմ ձայնին և բաց անի դուռը, կմտնեն նրա մոտ և կընթրեն նրա հետ և նա՝ ինձ հետ»: Ուրախությամբ

բացում էք դուռը և Հիսուս ողջագուրվում է ձեզ հետ: Լույսը մտնում է ձեր տունը ու պայծառորեն լուսավորում ձեր մութ բնակարանը:

Հիսուսի համար փակ դռներ չկան: Երկրներ կան, ուր մարդիկ վախի մեջ են և իրենց դռների վրա մի քանի փականքներ ունեն, որպեսզի ապահով լինեն, բայց արդյո՞ք ապահով են: Գողերը այնքան վարպետացած են, որ տասը փականք էլ լինի դռան վրա, եթե փորձեն կողոպտել, նորից իրենց չար մտադրությունը կիրագործեն: Ի՞նչ պիտի անենք այդ պարագային: Եթե Հիսուս մեզ հետ է, ոչ մի բանից չպիտի վախենանք: Պիտի լսենք Հիսուսի թակոցը: Ճիշտ է աշխարհի աղմուկի մեջ բավական դժվար է լսել Նրա մեղմ թակոցը, բայց եթե մեր սրտում ու հոգում տեղ ունի մեր Տերը, մենք անպայման կլսենք նրա թույլ թակոցը ու լայնորեն կբացենք մեր տան դռները, որոնք մեր սրտի ու հոգու դռներն են և Հիսուս ժպիտով կմտնի մեզ մոտ ու կընթրի մեզ հետ: Երանելի են այդպիսի ծառաները:

Եկեք բացենք մեր սրտի դռները Տիրոջ առջև, խոստովանենք Նրան մեր մեղքերը, խոսենք Նրա հետ մեր տկարությունների, նեղությունների, թուլությունների ու սխալների մասին: Նա անպայման կլսի մեզ ու ներս կմտնի մեր սրտերից ներս և ինչպես բարի կոշկակարի հետ տեղի ունեցավ, Հիսուս երեք անգամ այցելեց նրան, մենք էլ փորձենք օգտակար լինել մեր նմաններին, կարիքավորներին, նեղյալներին և մեր ողորմությունը չզլանանք տկարներին, որպեսզի արժանանանք Տիրոջ ողորմությանն ու այցելությանը: Ամեն:

ԸՆՏԱՆԻՔԸ ՈՒԺ Է
ՀՈԳ ՏԱՆԵԼ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱՍԻՆ

«Եթե մեկը յուրայիններին և մանավանդ ընտանիքին
խնամք չի տանում՝ հավատն ուրացել է և ավելի չար է,
քան անհավատը» (Ա. Տիմ. 5:8):

Այս խոսքը ես վերցրել եմ Պողոս Առաքյալի իր աշակերտ Տիմոթեոսին ուղղած առաջին նամակի 5-րդ գլխի 8-րդ համարից, ուր նա շեշտում է Ընտանիքին հոգատարություն ցույց տալու և ուշադրության արժանացնելու մասին; Իսկ եթե մեկը հոգ չի տանում և ուշադիր չի իր ընտանիքի նկատմամբ, նշանակում է նա իր հավատն ուրացել է ու ավելի չար է, քան՝ անհավատը»: Պողոս Առաքյալը ուղղակի հարվածում է նշանակետին: Ընտանիքը իրապես սիրտն է յուրաքանչյուր ազգի, առավելապես մեր դարավոր ու բազմաչարչար ժողովրդի: Ընտանիքը ազգի հենաայունն է: Եթե չկա առողջ, համերաշխ ու սիրող ընտանիք, կա հիվանդ ազգություն: Ազգի ամրությունը՝ ընտանիքի սրբության ու համերաշխության և սիրո մեջ է:

Հարց է առաջանում, թե՝ «Ի՞նչ է Ընտանիքը: Կարելի՞ է ընտանիք ունենալը: Մեր ազգի համար ի՞նչ է Ընտանիքը»:

Այս հարցերի պատասխանը տալիս է Ամենայն Հայոց Վշտի Կաթողիկոս Խրիմյան Հայրիկը. «Ընտանիքը մի փոքր թագավորության երկիրն ու սահմանն է: Սույն ընտանեկան պալատի ու թագավորության մեջ ո՛չ ոստիկան կա, ո՛չ սուր, ո՛չ բռնություն, ո՛չ զավազան, այլ ամեն ինչի տեղ՝ հայրական սերն ու մայրական գորովն է:... Դուք ձեր զավակներին օրհնեցեք այնպես, որ նրանք հայրենատուր սուրբ կրոնը, հավատը, սուրբ ավանդությունները անարատ ու անեղծ պահեն:... Օրհնեցեք, որ նրանք Ավե-

տարանը գրկեն ու սովորեն նրա սիրո դասերը, եղբորը սիրեն, ընկերոջը սիրեն ու մարդասեր լինեն»:

Մի անգամ մի եպիսկոպոսի մոտ պիղծ ոգուց տանջվող մի պատանու բերեցին: Միշտ մարդասեր եպիսկոպոսը, առանց խնդրանքների բժշկում էր բոլորին, բայց այս անգամ դժկամություն ցուցաբերեց: Ծնողները լացակումած աղաչում էին Աստծո մարդուն, որ խղճա իրենց որդուն և ազատի այդ պիղծ ոգուց: Ու Աստծու մարդը ասաց. «Ձեր որդին անարժան է բժշկության, այդ տանջող ոգին տրված է նրան, որովհետև նա հայրասպան է»: Ծնողները լսելով այս սարսափում են: Իսկ եպիսկոպոսը հարցնում է նրանց. «Ձեր որդին հաճախ է ձեզ անպատվում»: «...«Այդ ճիշտ է», - պատասխանում է հայրը: «Եվ դուք մի անգամ այդ արարքից խիստ դառնացած աղոթել էիք, որ Աստված պատժի նրան, այդպես չէ», - շարունակում է եպիսկոպոսը: «Մեղք ենք գործել Աստծո առաջ», - հառաչելով պատասխանում են տղայի ծնողները: «Ո՛հ, թող ձեր տղան տանջվի, որպես արժանի պատիժ», - ասում է Աստծու մարդը: Բայց դժբախտ ծնողները խղճահարվելով իրենց որդու համար, չէին դադարում աղաչել, որ նա Աստծուն խնդրի և բժշկի իրենց որդուն: Ու միայն պատանու ծնողների արցունքների համար, եպիսկոպոսը օրհնում և Աստծուն աղոթելով բժշկում է նրան» (Վկայություններ Սուրբ Գրքից):

Սուրբ Պսակի ժամանակ քահանան խրատում է. «Դրա համար տղամարդը պիտի թողնի հորը և մորը ու պիտի գնա իր կնոջ հետևից, և երկուսը մեկ մարմին պիտի լինեն: Ապա ուրեմն ոչ թե երկու, այլ մեկ մարմին են: Արդ, ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ. 19:5-6): Աստծու պատգամը շեշտում է ընտանիքի կարևորությունը: Այն սխալ չհասկանանք: Աստված չի պատվիրում, որ այր և կին մոռանան իրենց ծնողներին, այլ շեշ-

տում է ու առաջին գծի վրա է դնում ընտանեկան կյանքը: Եթե ընտանիքը իր ամբողջությամբ համերաշխության ու սիրո մթնոլորտում է ապրում, ապա դա մեծ ուրախություն է առաջին հերթին նրանց ծնողների համար, որոնք տարիներ շարունակ չարչարվել են, անքուն գիշերներ անցկացրել, զոհողությամբ ու նվիրումով նրանց հասցրել են այդ վիճակին: Եվ երբ տատիկներն ու պապիկները իրենց գիրկն են առնում նրանց պտուղներին՝ զավակներին, թոռներին, ապրում են ու վայելում իրենց բարի գործի՝ անձնըվիրության արդյունքը:

Հետաքրքիր է, որ հին ժամանակներում Կ. Պոլսի եկեղեցիներից մեկում մի տուփ էր կախված, որի մեջ ամեն նոր ամուսնացած մարդ փող էր գցում, եթե մի տարվա ընթացքում չէր զղջացել իր ամուսնության համար: Եվ այդ տուփը համարյա միշտ լիքն էր լինում: Ի՞նչ կպատահեր, եթե հիմա մեզանում էլ սահմանեին մի այդպիսի տուփ. անկասկած միշտ դատարկ կլիներ: Ինչո՞ւ Կ. Պոլսում այդպես չէր, որովհետև այնտեղ օրիորդները դաստիարակվում էին քրիստոնեական ոգով, և նրանց ներշնչում էր առաքինության զգացումը, որը դժբախտաբար մեր ժամանակների կանանց կարծես անծանոթ մի բան է: ..

Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետն ասում է. «Քանդակագործը անկենդան մարմին է ստեղծում, իսկ իմաստուն դաստիարակը կենդանի պատկեր, որին նայելով ուրախանում է թե՛ Աստված և թե՛ մարդ:... Հաճախ ծնողներից շատերը ամեն ինչ անում են, որ զավակը ունենա հիանալի ձի, սքանչելի տուն կամ թանկարժեք ունեցվածք, իսկ այն մասին, որ նա ունենա ընտիր հոգի ու բարեպաշտ մտածմունքներ նրանք ոչ մի ուշադրություն չեն դարձնում:... »: (Հովհան Ոսկեբերան): Շատ գեղեցիկ և ուսանելի խոսքեր են:

Հովհաննես Առաքյալը իր Ընդհանրական թղթի երրորդ գրքում ասում է. «Չունեն ավելի մեծ ուրախություն, քան այն, երբ լսում եմ, թե իմ որդիները ճշմարտությամբ են ընթանում» (Գ. Հովհ.1:4):

Այս պատմությունը ընտանիքի երջանկության մասին է.

«Մի փոքրիկ քաղաքում իրար հարևանությամբ ապրում էին երկու ընտանիք: Ընտանիքներից մեկում անդադար վեճ ու կռիվ էր, ուր շարունակ իրար էին մեղադրում և պարզաբանում, թե ո՞վ է ճիշտ, ո՞վ սխալ, իսկ մյուս ընտանիքում ամեն ինչ խաղաղ էր, ոչ՝ վեճ կար, ոչ՝ կռիվ:

Անհամերաշխ ապրող ընտանիքի կամակոր կինը զարմանում է, թե իր հարևանները ինչո՞ւ չեն կռվում իրար հետ: Ու այս տրամադրությամբ, մի օր նա իր ամուսնուն ասում է.

Գնա ու տես, թե ի՞նչ են անում հարևանները, որ իրենց մոտ ամեն ինչ այդպես հարթ է ու խաղաղ:

Ամուսինը գնում է և թաքնվում հարևանի բաց պատուհանի տակ ու սկսում ուշադիր հետևել, թե ի՞նչ են անում տանտերերը: Այդ պահին տանտիրուհին տունն էր կարգի բերում: Մի շատ թանկագին ծաղկաման ձեռքին նրա փոշին էր մաքրում: Իսկ ամուսինը հեռուստացույց էր դիտում: Հանկարծ այդ պահին հեռախոսը զանգում է: Կինը արագ ծաղկամանը դնում է սեղանի ծայրին, այնպիսի դիրքով, որը կարող էր թեթև շարժումից ընկնել ու վազում է հեռախոսի մոտ:

Հակառակի պես ամուսինն էլ ուզում է սենյակից ինչ որ մի բան վերցնել: Սեղանի մոտից անցնելուց, նա անզգուշորեն դիպչում է ծաղկամանին, որը վայր ընկնելով կոտրվում է:

Թաքնված հարևանը վախեցած մտածում է.

Վայ, ի՞նչ կլինի հիմա:

Կինը մոտենում է, ավստասանքով հոգոց է անում ու մեղմ ասում ամուսնուն.

Ներիր ինձ, սիրելիս, ես եմ մեղավորը: Ծաղկամանը ճիշտ տեղում չէի դրել:

Ի՞նչ ես ասում, թանկագինս: Այդ ես եմ մեղավոր: Շտապում էի ու անզգուշաբար չնկատեցի ծաղկամանը: Ոչինչ, մի մտածիր, թող ավելի մեծ դժբախտություն չունենանք:

Թաքնված հարևանը շատ է նեղվում, տուն է գալիս անտրամադիր: Կինը նրան անհամբեր հարցնում է.

Ինչո՞ւ այսքան ուշացար: Մի բան իմացա՞ր:

Այո՛:

Եվ ի՞նչ են նրանք անում:

Զգիտեմ, թե նրանք ի՞նչ են անում, բայց մի բան ինձ համար պարզ դարձավ, որ նրանց տանը բոլորը մեղավոր են, իսկ մեր տանը բոլորը ճիշտ են»:

Մի այլ պատմություն

«Ամուսինը զոջաց, սակայն չհասցրեց ասել...

Երբ ամուսինը վերադարձավ, կինը պատրաստել էր ընթրիքի սեղանը: Միասին ճաշեցին, ամուսինը այլևս չհամբերեց, բռնելով կնոջ ձեռքը, ասաց, որ կարևոր բան ունի ասելու... լարեց բոլոր ուժերը, մի ներքին ձայն նրան համարձակություն տվեց և նա ասաց կնոջը, որ ուզում է բաժանվել նրանից, որ իր սիրտը արդեն ուրիշին է պատկանում, միասին ապրելն արդեն ցանկալի չէ: Զարմանքը մեծ եղավ ամուսնու, երբ կնոջ դեմքի արտահայտությունը չփոխվեց, բայց ցավ տեսավ աչքերի մեջ: Հաջորդ օրը ամուսինը շատ ուշ վերադարձավ, սեղանին մի գրություն գտավ, այսպիսի բովանդակությամբ. «Ես չեմ ճաշել, ուղղակի շուտ պառկեցի հոգնածության պատճառով»:

Առավոտյան կինը առաջարկեց ամուսնուն մի քանի պայմաններ ամուսնալուծության վերաբերյալ, չպահանջելով ոչինչ ամուսնուց: Միայն խնդրեց, որ ամուսնալուծությունը հետաձգի մեկ ամսով, և հնարավորության սահմաններում այդ մեկ ամիսը սիրալիր լինեն միմյանց նկատմամբ, որովհետև իրենց տղան քննությունների է նախապատրաստվում, չլինի թե իրենց որոշումը ազդի նրա հոգեբանության վրա, ով դեռ ոչինչ չի զգացել նրանց հարաբերություններից: Եվս մի տարօրինակ առաջարկ արեց ամուսնուն, որ վերջինս այդ մեկ ամսվա ընթացքում իրեն ձեռքերի վրա տանի ննջասենյակից մինչև հյուրասենյակ, ինչպես դա արել էր իրենց հարսանիքի օրը:

Ամուսնուն տարօրինակ թվաց առաջարկը, նույնիսկ մտածեց, որ կինը խելքը թոցրել է, բայց համաձայնվեց, որովհետև մտքում ծրագիր ուներ նոր սիրո հետ: Երբ առաջին օրը ձեռքերի վրա տարավ կնոջը, այնքան անսովոր էր, որ նույնիսկ երեխան ծիծաղեց ու զարմացավ: Անցնում էին օրերը, ամուսինը ամեն օր զգում էր, որ կինը ավելի թեթև է քան նախորդ օրերը և մի օր էլ զգաց, որ տանում է այնպիսի ջերմությամբ, ինչպես ձեռքերի վրա տարել է հարսանիքի օրը: Տղան գնաց դասի, կինը՝ աշխատանքի, ամուսինը մնաց մենակ. մի միտք էր նրան տանջում. նա հասկացել էր, որ մանրունքներ են պակասել իրենց ամուսնական հարաբերությունների մեջ, խորհեց և վճռական դուրս եկավ տնից: Մեքենան վարում էր սովորականից շատ արագ, իջավ մեքենայից, նույնիսկ դուռը չփակեց, վախենալով, որ մի վայրկյանը կարող էր իր որոշումը փոխել: Գնաց սիրուհու մոտ. ասաց, որ փոխել է մտադրությունը ամուսնալուծության վերաբերյալ ու չի կարող իր հետ ամուսնանալ. դեռ միտքը չավարտած զգաց

ապտակը երեսին և հազիվ հասցրեց լսել դռան չխկոցը ու անհարգալից բառեր...

Արդեն վստահ որոշմամբ մտավ ծաղկի խանութ, պատվիրեց վաճառողին, որ ծաղկեփնջի բացիկի վրա գրի այսպիսի տողեր. «Միրելիս ես քեզ ձեռքերիս վրա կտանեմ այնքան ժամանակ, մինչև մահը կբաժանի մեզ»: Վերցրեց ծաղիկը ամենայն ուրախությամբ, մտքում նախապատրաստելով գեղեցիկ նախադասություններ, զոջման խոսքեր կնոջը ասելու համար: Երեկոյան վերադարձավ տուն, կնոջը գտավ անկողնում մահացած: Պարզվեց, որ նա տառապել է քաղցկեղով քանի ամիս շարունակ, մինչ ամուսնու սիրտը զբաղված էր այլ կնոջով: Ամուսինը նույնիսկ չէր էլ նկատել նրա տառապանքը: Իսկ կինը վերջին քայլերը արել էր միայն նրա համար, որպեսզի ինքը տղայի աչքում մնա որպես սիրող ամուսին և հոգատար հայր: Մանրուքներ կան, որոնք ընտանիքում շատ ավելի կարեվոր են քան դղյակը, շքեղ մեքենան, բանկային հաշիվը... Հետևաբար գտեք ժամանակ ձեր կեսի համար և կատարեք մանրուքներ միմյանց համար, որոնք կդարձնեն ձեզ ավելի մտերիմ ընտանեկան հարաբերություններում: Թող ձեր ընտանիքը լինի ամենաերջանիկը («Հոգևոր քարոզներ»):

Ընտանիքը ոչ միայն ազգի հենարանն է, այլ նաև մի փոքրիկ եկեղեցի է: Խորհրդային տարիներին, երբ արգելված էր Աստված, կրոն, եկեղեցի, խաչ, հավատ բառերը, հայ քրիստոնյա ընտանիքը մնաց իր հավատի բարձրության վրա ու պահեց, պահպանեց իր բոլոր ավանդություններն ու սրբությունները: Փառք ու պատիվ հայ ընտանիքին:

Տեսեք թե ի՞նչ է ասում այս մասին մեր հայրենի գրողներից Մուրացանը. «Ազգերի գորությունը ընտանիքների մեջ է: Զորավոր է ա՛յն ազգը, որ ունի զորավոր ընտանիքներ. սիրով, միությամբ, առաքինի և հավատա-

րիմ կենակցությամբ ապրող ընտանիքներ: Ով որ կամենում է զորավոր տեսնել յուր ազգը և հաղթող՝ հայրենիքը, նա ամենից առաջ ընտանիքները պիտի խնամե, ինչպես մի հոգատար պարտիզպան, որ ծառի ճյուղերը զորացնելու և նրանից պտուղ քաղելու համար խնամում է ծառի արմատները, որոնք թեպետ հողի մեջ են թաղված և չեն երևում մարդկանց, բայց իրանց մեջ ամփոփում են ծառի կենդանությունը: Ինչպես որ չի կարող ապրել այն տունկը, որի արմատները չորացած են կամ որդնակեր, այնպես և կանգուն չի մնալ այն ազգը, որի ընտանիքներում տիրում է ապականություն, որոնցից հալածական է սերը, միությունը, առաքինությունը, և, նամանավանդ, Աստուծո երկյուղը»:

Եկեք աղոթենք, որ Տերը մեր ազգին պարգևի ավելի ամուր, համերաշխ ու սիրով լի մի ընտանիք, ընտանիք՝ բազում զավակներով, որոնք դաստիարակվելով դառնան մեր ժողովրդին դեպի հավիտենություն առաջնորդող ու դեպի Աստված տանող մի հրաշալի սերունդ: Ամեն:

«Ո՞ՒՐ ԷՒՐ ԱՍՏՎԱԾ»
ԲԱՐԻՆ ԵՎ ՉԱՐԸ ՀԱԿԱՌԱԿ ԵՆ ԻՐԱՐ

Այս նյութը ընտրեցի, քանի որ աշխարհում բարին ու չարը միշտ մրցության մեջ են և մենք շատ անգամ չենք կարողանում կողմնորոշվել, թե ո՞ր ճանապարհ ընտրենք՝ բարո՞ւ, այսինքն՝ Աստծու, թե՞ չարի՝ սատանայի:

Ինչպե՞ս կարելի է հանգիստ մտածել Աստծու Բարության և Ամենակարող լինելու ու միաժամանակ չարիքի գոյության մասին:

Կարելի՞ է բացատրել այս հակադրությունը, օրինակի համար, Աֆրիկայի անապատներում և անտառներում սովից հյուծվող անմեղ մի երեխայի մորը:

Կամ ինչպե՞ս բացատրենք այս մասին Նյու Յորքի Սեպտեմբերի 11-ի պայթյունների և Աֆղանստանի ոմբակոծումների տակ անմեղորեն մեռածների հարազատների:

Իսկ մենք ազգովին նույն հարցը չտվեցի՞նք Մեծ Եղեռնին ու չերգեցի՞նք՝ «Ո՞ւր էիր Աստված...»:

Արդյոք պատասխաններ կա՞ն այս հարցերին:

Ռուս նշանավոր գրող Դոստոևսկին, ասել է. «Ամբողջ մարդկության երջանկությունը մի երեխայի արցունքներն անգամ չարժեն»: Ահա այսպիսի հարցեր են առաջանում մարդու մտքում, երբ նա դեմ հանդիման է գտնվում մանավանդ մեծ ողբերգությունների և աղետների դիմաց:

Հրեա մեծ փիլիսոփա Լեվինասը, ապրելով հոլոքոսթը, կորցնելով իր ամբողջ հարազատներին, նրանց մեջ նաև իր կնոջն ու երեխաներին, ապրելով լիովին այդ մեծագույն աղետը, որին որպես հետևանք Աստծու գոյությունը դրժեց, երկար տարիներ հետո հասավ այն եզրակացության, թե Աստված Ինքն էլ այդ օրերին «Տառապում

էր» համակեդրոնացման ճամբարների գազի սենյակներում: Չարի ներկայության հարցը գոհերից ավելի տալիս են կողմնակի մարդիկ, մինչ տուժվածները ապրելով փորձում են մոտենալ Աստծուն: Օրինակ, Եղեռնի ժամանակ մեր պապիկներն ու մամիկները նման հարցեր երբեք չտվեցին, այլ ընդհակառակը՝ ավելի ամուր կառչեցին իրենց հավատին ու ցուցաբերեցին քրիստոնեական պատմության ամենացայտուն հավատի վկայություններից մեկը:

«Ով մարդկային արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ», - ասել է վաղամեռիկ Բանաստեղծ Սիամանթոն:

Բարու և չարի հակադրության պարագային, երբ խոսում ենք չարի մասին հարցերը շատ են. «Ինչո՞ւ Աստված թույլ տվեց նրա գոյությունը, ինչպե՞ս եղավ, որ չարը տարածվեց աշխարհով մեկ, ինչո՞ւ Աստված վերջնականապես չի կործանում նրան և այլն և այլն»: Հարցեր են, որոնք մշտապես հուզում են այսօր բոլոր մարդկանց:

Աստվածային ստեղծագործությունը իր ամբողջության մեջ Բարի է ու կատարյալ: Արդարորեն Եզնիկ Վարդապետ Կողբացին ասում է. «Եթե Բարին ու չարը չլինեին, ապա Աստված ինչի՞ հիման վրա Իր դատաստանը պիտի աներ: Ինչի՞ հիման վրա Բարին պիտի պարգևատրվեր ու չարը՝ պատժվեր»:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԺՇԿԻ ՀՆԱՐԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

«Կյանքի խաչմերուկում հանդիպում են երիտասարդ բժիշկն ու մահը և նրանք ջերմորեն զրուցում են կյանքի ու մահվան մասին: Բավական զրուցելուց հետո, իրար հետ պայմանավորվում են: Մահն ասում է, եթե ես հիվանդի գլխավերևում կանգնած լինեմ, նա իմն է. հիվանդը պիտի մեռնի, իսկ եթե ոտքերի մոտ՝ քոնն է:

Տարիներ են անցնում: Երիտասարդ բժիշկը այդպես շատ հիվանդների կյանքեր է փրկում և հայտնի դառնում աշխարհում իբրև հրաշալի, խղճով, բարի ու ազնիվ բժիշկ:

Մի օր, հեռու քաղաքների հիվանդանոցներից մեկից հրավիրում են նրան ծանր վիրահատության: Երբ բժիշկը մտնում է վիրահատության սենյակ, տեսնում է, որ հիվանդը մի երիտասարդ ու գեղեցիկ աղջիկ է: Ու հանկարծ սարսափով նկատում է, որ մահը կանգնած է այդ գեղեցկուհու գլխավերևում: Բժիշկը ցնցվում է: Երկար մտածելու ժամանակ չկար ու նրա միտքը արագ կոդմոնոշվում է:

Նա անմիջապես կարգադրում է, որ մահճակալը շուտ տան հակառակ կողմը՝ գլուխը ներքև, ոտքերը վերև: Եվ մահը գլխիկոր հեռանում է այդ գեղեցիկ աղջկանից ու բժշկին հնարավորություն տալիս փրկելու նրա կյանքը»:

Բժիշկը խիղճ և ցանկություն պիտի ունենա: Եվ եթե այդպիսին է, նա անպայման կկարողանա հրաշքներ գործել՝ հիվանդին փրկելու, նույնիսկ մահվան դեմ դուրս գալու: Այդպիսի բժիշկը ընտրված է Աստծու կողմից: Նա իրապես Հիպոկրատի երդում տված բժիշկն է, որի համար մարդկանց կյանքը փրկելը սրտի ու խղճի պարտականությունն է:

Աստված մարդուն օժտել է ամենակարևոր հատկանիշներով՝ խելքով, խղճով ու ուժեղ կամքով: Այդ պատճառով մարդը աշխարհում Աստծու ստեղծագործության պսակն է: Եթե նա իր հույսը Աստծու վրա դնի, երբեք էլ չարը չի կարողանա հաղթել նրան, ինչպես այս պարագային արեց բժիշկը իր հնարամատությամբ փրկելով երիտասարդ աղջկա կյանքը:

Չարը չի կարող արգելք հանդիսանալ Գերագույն Բարուն, որ է Աստված:

Ղապտիների Պատրիարք Շենուդա Գ.-ի գեղեցիկ խրատը.

«Աշխարհից ոչինչ չեմ ուզում, քանի որ ոչ թե իմ շահի համար է աշխարհն ինձ որևէ բան տալիս, այլ՝ իրեն հպատակեցնելու: Նրանք, ովքեր աշխարհի տվածը վերցրել են, դարձել են աշխարհի ստրուկները: Տվել է նրանց մարմնի հաճույքներ՝ զրկելով հոգու անբժությունից: Տվել է աշխարհիկ վայելքներ՝ զրկելով երկնային Արքայության օրհնություններից: Սատանան նրանց տվել է աշխարհի բոլոր թագավորությունները և դրանց փառքը, որպեսզի իր առջև խոնարհեցնի ու երկրպագել տա իրեն: Նա ամեն միջոցի դիմում է, որպեսզի կորստյան մատնի մարդկանց հոգիները: Ինչ վերաբերում է ինձ. «Ամեն ինչից զրկվեցի, և այդ բոլորը աղբ եմ համարում, որպեսզի շահեմ Քրիստոսին» (Փիլ. 3:8): Այս աշխարհն ավելի շատն ու ավելի լավն է վերցնում, քան տալիս է: Իրեն տենչացողներին նա իրեն է ենթարկում: Ուրեմն, ես ոչինչ չեմ ուզում նրանից:

Աշխարհից ոչինչ չեմ ուզում, քանի որ վեր եմ նրանից: Ես Աստծո որդի եմ, Աստծո նմանությամբ և պատկերով, Ես Սուրբ Հոգու տաճար եմ և Աստծո բնակարան: Ես միակ արարածն եմ, ով ճաշակում է Նրա Սուրբ Մարմինն ու Արյունը: Ես ավելի վեր եմ կանգնած, քան աշխարհը, և ավելի ճիշտ կլինի ասել, որ աշխարհն ինձնից սպասելիք ունի, քանի որ ես ունեմ երկնքի և երկրի բանալիները. ես, ում Աստված Իր անսահման ողորմածությամբ կամեցավ դարձնել աշխարհի լույսը և երկրի աղը (Մատթ. 5:13-14):

Աշխարհից ոչինչ չեմ ուզում, որովհետև միայն Քեզ եմ ուզում. Քեզ, որ մինչև վերջ ինձ սիրեցիր և Քո անձը տվեցիր ինձ համար, որ ինձ ոչնչից ստեղծեցիր և փոխարենը չպահանջեցիր Քեզ ծառայել, այլ ավելի շուտ՝ ես Քեզանով ղեկավարվելու կարիքն ունեմ: Դրա համար է, որ

ուզում եմ ազատագրվել աշխարհից և միանալ Քեզ, որ Քեզ ճանաչելու շնորհն ես տվել ինձ»:

Աստծու ստեղծագործության ամբողջապես բարի լինելու մեծագույն ապացույցը տեսնում ենք հանդերձյալ կեանքում, ուր ոգեղեն բոլոր արարածները, ունեն Ազատ կամք, նրանցից մի խումբն էր միայն, որը լքեց իր բարու ազատ ընտրությունը և հետամուտ եղավ չարին, ընկավ ու դարձավ չարի աղբյուրն ու մարմնացումը:

Ընդունում ենք, որ իբրև մարդիկ տկար արարածներ ենք, շատ անգամ մեր հոգին հոժար է, չարին հաղթելու, բայց մեր մարմինը տկար է այն գործադրելու: Սակայն աշխարհում անկարելի բան չկա, եթե մարդը իր ամբողջ էությանմբ ձգտի իրագործել այն: Մենք կարող ենք հաղթել մեր տկարություններին, երբ գործի դնենք Աստծու կողմից մեզ տրված ամենամեծ հատկանիշը՝ կամեցողությունը, կամքը:

Աստված բոլորիս հետ է՝ չար, թե՛ բարի: Նա միշտ ավելիով բարիների հետ է: Եվ սպասում է, որ չարը դարձի գա, մոլորվածն ու մեղավորը ետ վերադառնան: Աստված համբերող է: Մենք էլ համբերող լինենք ու բարի և արդար գործեր կատարենք: Ամեն:

ՔԱՂՅՐՈՒԹՅՈՒՆ

«Իսկ հոգու պտուղն այս է՝ սեր, խնդություն,
խաղաղություն, համբերություն, քաղցրություն,
բարություն, հավատարմություն, հեզություն,
ժուժկալություն այսպիսի բաներին օրենք չկա»
(Գաղ.5:22-23):

Այս խոսքը ես վերցրել եմ Պողոս Առաքյալի Գաղատացիներին ուղղած նամակի 5-րդ գլխի 22-23 համարներից, ուր նա խոսում է՝ սիրո, խնդության, խաղաղության, համբերության, քաղցրության, բարության, հավատարմության, հեզության, ժուժկալության մասին, որոնք Հոգու պտուղն են: Ես այս խոսքերի միջից ընտրեցի քաղցրությունը:

«Ի՞նչ է քաղցրությունը: Ինչպե՞ս կարելի է քաղցր լինել կամ ի՞նչ վերաբերմունք պիտի ունենա մեկը քաղցր լինելու համար: Քաղցրությունը առավելություն է, թե՞ թերություն: Ի՞նչ է շահում քաղցր մոտեցում ունեցող մարդը»:

Մեր ժողովուրդը հետաքրքիր մի խոսք ունի. «Քաղցր լեզուն օձին էլ բնից կհանի»: Իմաստուն խոսք է: Քաղցր լեզվով խոսողին, չի կարելի շփոթել շողոքորթողի կամ կեղծավորություն անողի հետ: Դրանք տարբեր մոտեցումներ են: Հիսուս այս մասին ասում է. «Այս ժողովուրդը շրթունքներով է ինձ մեծարում, բայց իրենց սիրտը հեռացած բաժանված է ինձնից...: Լսեցեք և իմացեք, ոչ թե՛ ինչ որ բերանով է մտնում, այն է պղծում մարդուն, այլ ինչ որ ելնում է բերանից, այն է պղծում մարդուն» (Մատթ. 8:11):

Քաղցրությունը հոգեկան ազնվություն է: Ժպիտը և հանգիստ խոսելը լավ են, սակայն դրանք հոգու քաղցրությունը չեն: Կոպտությունն ու ատելությունը կարող են բարեկամիդ կամ մտերիմիդ հեռացնել քեզանից:

Այս պատմությունը դրա խոստուն վկան է.

«Հայրը իր գավակին դպրոց է տանում և ուսուցչին ասում է.

Զավակիս դպրոց եմ բերել կրթվելու համար: Տեսնեմ թե ինչքանով պիտի կարողանաք օգնել նրան: Խոստովանվում եմ, որ նա ինձ ծանոթ երեխաներից ավելի վատ է:

Մի օր ուսուցիչը նոր աշակերտի գրասեղանի մոտից անցնելու ժամանակ ձեռքը ազնվորեն դնում է նրա ուսի վրա: Տղան վախեցած մի կողմ է քաշվում:

Ինչո՞ւ վախեցար,- հարցնում է ուսուցիչը:

Կարծեցի, թե պիտի խփես,- պատասխանում է տղան:

Ինչո՞ւ այդպես կարծեցիր:

Որովհետև ես շատ վատ տղա եմ,- եղավ նրա պատասխանը:

Ո՞վ է ասում, որ դու վատ տղա ես:

Հայրս ու մայրս են ասում;

- Բայց ինչքան որ ես տեսնում եմ դու վատ տղա չես և կարող ես որևէ տղայի պես լավը լինել: Աստծուց խնդրիր, որ բարի լինես և վատահ եղիր, որ պիտի հաջողվես,- խրատում է ուսուցիչը:

Խեղճ փոքրիկի աչքերը թրջվում են, որովհետև նա այսպիսի խոսքեր լսելու սովոր չէր և երբ ուսուցիչը հեռանում է, նա ինքնիրեն մտածում է և ասում. «Երբ ամեն մարդ ասում է, թե ես վատ եմ, արդյոք կարո՞ղ եմ բարի լինել: Ուսուցիչը չասաց, որ ես վատն եմ, այլ շեշտեց, թե կարող եմ լավ լինել: Հետևաբար, այսուհետև լավ պիտի լինեմ», - որոշում է ու սկսում գործադրել այն սկսած հենց այդ օրվանից: Դասերի մեջ առաջադիմության ոգի ցուցաբերելով հաջողություն է ունենում և սիրվում բոլորից:

Ապագային մեծ մարդ է դառնում և Միացյալ Նահանգներից մեկի կառավարիչն է ընտրվում»:

Ահա ազնիվ վերաբերմունքի, քաղցր խոսքի և անկեղծ սրտի արդյունքը: Ուսուցիչը պատճառ հանդիսացավ վատ նկատված տղայի բարձրացմանը:

Մարդուն գնահատելու կամ գովաբանելու ժամանակ շեշտը պետք է դրվի իր կատարած գործերի և ոչ թե անձի վրա, որովհետև ամեն մարդ էլ իր թերությունն ու առավելությունը ունի:

Երկինքը բաց է ընդունելու բոլոր քաղցր գործեր կատարողներին և հոգիներին:

Պարկեշտ և մաքուր մարդու մասին Առակաց գրքում ասվում է. «Նա չափով և իմաստությամբ է բացում իր բերանը, և սահման է դնում իր լեզվին» (Առակ. 31:26):

«Որ մարդու խոսքը գործություն ունի, այդ բանը շատերս գիտենք, և համոզվել ենք սեփական փորձից, բայց որ լռությունն էլ ոչ պակաս գործություն ունի, դրա մասին քչերս գիտենք: Աստծո սրբերը շատ լավ էին հասկացել շատախոսության մեղքի ապականիչ գործության կործանարար ազդեցությունը և ամեն ջանք գործադրել են առանձնանալ և լռության մեջ իրենց Տիրոջ ձայնին ունկնդրել, քանզի համոզվել էին, որ Աստված լռության մեջ է խոսում, երբ հանդարտվում են մեր աշխարհասեր կրքերի պղտոր ալիքները, որոնք անդադար փոթորկում են մեր հոգիները: Ու դրանով իսկ ձգտում էին կատարելության, քանզի կարդացել էին Աստծո ծառայի խոսքը, որ գրել էր. «Եթե մեկը խոսքով չի մեղանչում, նա կատարյալ մարդ է» (Հակ. 3:2), (Սուրբ Հայրերի խրատներից):

«Մի եղբայր գնաց Հայր Թեոդորոսի մոտ և երեք օր այնտեղ մնալով նրան աղաչում էր խրատական խոսք լսելու համար: Իսկ ծերը բնավ ոչինչ չխոսեց նրա հետ և այդ ժամանակ եղբայրը տրտմած գնաց այդտեղից: Հարց-

րեց հորը իր աշակերտը. «Հայր, ինչո՞ւ նրան մի բան չխոսեցիր, որի պատճառով էլ գնաց տրտմած»: Ծերը պատասխանեց. «Եղբայր, ի՞նչ ասեի, քանզի խոսքի վաճառական էր և ցանկանում էր օտար խոսքերով հարստանալ, բայց չէր ցանկանում դրանցից մի բան սովորել, այլ ձևացնում էր ի ցույց մարդկանց» (Սուրբ Հայրերի վարքից):

«Նորահավատ եղբայրը հարցրեց մենակյացին. «Ի՞նչն է լավ, լուր, թե՞ խոսելը»: Մենակյացը նրան պատասխանեց. «Եթե խոսքերը աննպատակ են, ապա թող դրանք, իսկ եթե օգտակար են, ասա, մանավանդ եթե դրանք բարի են, մի հապաղիր» (Սուրբ Հայրերի վարքից):

«Հայր Մակար Մեծը, երբ ցրում էր վանական եղբայրների ժողովը՝ ասաց. «Եղբայրներ, փախե՛ք»: Նրանցից մեկը հարցրեց. «Հայր, ո՞ւր փախչենք այս անապատից»: Այդ ժամանակ Հայր Մակարը ձեռքը դրեց բերանին ու ասաց. «Սրանից փախե՛ք»: Այս ասելով գնաց իր սենյակը. փակեց դռները ու մնաց մենակ (Սուրբ Հայրերի վարքից):

Ղևոնդ Վարդապետ Ալիշանն ասում է. «Ինչպե՞ս կարող ենք մեր սրտերը պահել, երբ մեր լեզուները բաց դռների են նման: Լռությունը սուրբ մտածմունքների ծնողն է: Սրբությունը կարելի է և լռությամբ քարոզել»:

Այո՛, ամեն մարդ պիտի իմանա, թե ինքը ի՞նչ և ինչպե՞ս է խոսում:

Մեր ժողովուրդը ասում է «Լեզուն ոսկոր չունի»: Երբեմն կան մարդիկ, որ չգիտեն ի՞նչ են խոսում և ինչքա՞ն են խոսում: Հիսուս խրատում է, որ մեր խոսքերում և աղոթքներում շատախոսություն չանենք, իմանանք մեր չափը ու խոսելու ձևը: Խոսենք համով ու հոտով, քաղցր լեզվով, որպեսզի հաճելի լինի և՛ Աստծուն և՛ մարդկանց:

Սև սրտից հնարավոր չի մաքուր սեր ակնկալել:
Քաղցրությունը ոսկե շղթայի օղակն է, որը մարդկանց
սրտերը իրար է մոտեցնում:

«Բարի խոսքը մեղրի խարիսխ է, և հոգու բժշկու-
թյուն է նրա քաղցրությունը» (Առակ. 16:24),- ասվում է
Առակաց գրքում:

Ուրեմն, փորձենք աղոթքով մաքրվել, Աստծու հետ
զրուցելով հավատի զորություն ստանանք, իսկ քաղցր
խոսքով մարդկանց սիրտը շահենք, որպեսզի Տերը մշտա-
պես մեզ պահապան և օգնական լինի: Ամեն:

ՀՈԳԵՎՈՐ ԿՈՒՐՈՒԹՅՈՒՆ

«Մարմնի ճրագը աչքն է, երբ աչքը առողջ է,
ամբողջ մարմինը լուսավոր կլինի... (Ղուկ.11:34):

Այս խոսքը Ղուկաս Ավետարանչինն է. շարունակելով 11-րդ գլխի 34-36 համարները կարդում ենք. «Մարմնի ճրագը աչքն է, երբ աչքը առողջ է, ամբողջ մարմինը լուսավոր կլինի, իսկ երբ աչքը պղտոր է, մարմինն էլ խավար կլինի: Արդ, զգույշ եղի՛ր, գուցե այն լույսը, որ քո մեջ է, խավար լինի: Եթե քո ամբողջ մարմինը լուսավոր է, և նրա մեջ խավարի մաս չկա, ամեն ինչ այնպես լուսավոր կլինի, ինչպես երբ ճրագը իր շողերով լուսավորի քեզ» (Ղուկ.11:34):

Հետաքրքրական է սակայն իմանալ, թե ինչի՞ց է առաջ գալիս հոգևոր կուրությունը:

«Ով չարիք է գործում, ասում է լույսը և չի գալիս դեպի լույսը, որպեսզի նրա գործերը իր երեսովը չտան» (Հովհ. 3:19),- ասում է Հովհաննես առաքյալը:

Հոգևոր կուրության արդյունքը անհավատությունն է, և «այդ անհավատների մտքերը այս աշխարհի աստվածը կուրացրեց, որպեսզի նրանց մեջ չծագի Քրիստոսի Ավետարանի փառքի լույսը» (Բ. Կորնթ. 4:4),- ասում է Պողոս Առաքյալը Կորնթացիներին ուղղած երկրորդ թղթում:

Իսկ անհավատության արդյունքը պարզապես ասելությունն է, որովհետև՝ «Ով ասում է, թե ինքը լույսի մեջ է և ասում է իր եղբորը, սուտ է և խավարի մեջ է տակավին: Ով սիրում է իր եղբորը, բնակվում է լույսի մեջ և նրա մեջ գայթակղություն չկա: Իսկ ով ասում է իր եղբորը, խավարի մեջ է, խավարի մեջ է շրջում և չգիտե, թե ուր է

գնում, որովհետև խավարը կուրացրել է նրա աչքերը» (Ա. Հովհ. 2:9:11):

Կուրությունը մեծ դժբախտություն է, քանի որ կույրը չի կարող տեսնել Աստծու ստեղծած բոլոր բարիքները: Սակայն ավելի մեծ դժբախտություն է հավատի կուրությունը, քանի որ նրանից տառապողը զրկված է աստվածային լույսից և չի կարող տարբերել չարը բարուց:

Ճրագի նպատակը լուսավորել է: Առանց լույսի խավար կլինի: Խավարի մեջ հնարավոր չէ բնականոն կյանքով ապրել:

Հոգևոր կույրերի համար իրենց շրջապատը նեղ է թվում և ուզում են տարածվել, իրենց ազդեցությունը ընդարձակել, որովհետև իրենց սահմանն ու կարողությունը չեն տեսնում: Եթե կարողանային տեսնել, այն ժամանակ իրենց գործունեությունը կկենտրոնացնեին և ուրիշների դժբախտությունների պատճառ չէին լինի:

Ի՞նչ է սրա բուժումը: Ֆիզիկական կույրը դիմում է բժշկին: Հոգևոր կույրը պիտի դիմի Քրիստոսին. «Ես եմ աշխարհի լույսը, ով իմ հետևից է գալիս, խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը» (Հովհ. 8:12):

Այս պատմությունը եկեղեցական հայրերի կյանքից է. Կարդացեք և մտածեք ձեր հոգու փրկության ու կուրության մասին:

«Մի վանահայր իր վերակացության տակ ուներ տասը վանական: Այս վանականներից մեկը շատ անհոգ էր և իր փրկության համար ոչ մի ջանք չէր թափում: Վանահայրը, հաճախ այցելելով նրան, խնդրում էր. «Եղբայր, աշխատիր հոգուդ փրկության համար, որովհետև եթե մահանաս, այդ ապրելակերպիդ պատճառով հավիտենական տառապանքներից չես խուսափի»: Սակայն եղբայրը միշտ անհնազանդություն էր ցուցաբերում և չէր լսում վանահորը: Եվ մի օր էլ նա հանկարծամահ եղավ: Վանա-

հայրը շատ տխրեց եղբոր համար, քանի որ նա բավականին ծույլ ու անհոգ ապրեց: Վշտից աղոթքի մղվելով՝ վանահայրն ասաց. «Տեր Հիսուս Քրիստոս, ցույց տուր ինձ եղբոր հոգին»: Եվ այսպես երկար աղոթեց: Մի անգամ աղոթքի ժամանակ ընկավ տեսիլքի մեջ և տեսավ մի կրակե գետ, նրա մեջ բազմաթիվ մարդկանց, որոնք, կրակի մեջ պապակվելով, տառապալից տնքում էին: Իսկ նրանց մեջտեղում իր վանականին, որ մինչև վիզը մխրճված էր կրակի մեջ: Վանահայրն ասաց աշակերտին. «Օհ, եղբայր և որդի, մի՞թե չէի աղաչում, որ հոգ տանեիր հոգուդ համար, որպեսզի չընկնեիր այս տառապանքների մեջ»: Եղբայրը պատասխանեց, «Փառք եմ տալիս Աստծուն այն բանի համար, որ քո աղոթքներով գոնե գլուխս կրակից դուրս է մնացել»:

Մաքրեք ձեր հոգիները աղոթքով, որպեսզի բացվեն ձեր հոգու աչքերը: Մի զրկեք ձեզ երկրային բարիքները վայելելուց, բայց մի մոռացեք դրանց Ստեղծողին՝ Գերագույն Ծնողին: Այս ձևով ձեր հոգիները փրկած կլինեք հավիտենական կրակների մեջ այրվելուց ու կբացվեն ձեր հոգու աչքերը»:

«...Ով անաստվածություն է քարոզում, նա նախապատրաստում է մարդկանց համար ամենամեծ պատուհասները՝ սանձարձակություն, ստորացում, ստրկություն և տանջանք... Մեր սերունդը կոչված է ցույց տալու մարդկանց իրենց սպասող ահեղի ճակատագիրը, որպեսզի հավաստիացնի նրանց, որ առանց Աստծո ճանապարհը տանում է դեպի կործանում... Բայց ինչպե՞ս ցույց տալ դա հոգևոր կույր մարդկանց, ովքեր չեն կարող և չեն էլ ուզում տեսնել», - ասում է մտածողներից մեկը:

Ժողովրդական հին իմաստության համաձայն, մտքի պակասությունը աչքի կուրությունից ավելի վատ է: Սակայն հոգու կորությունը գերազանցում է այս բոլորին

իր չափից ավելի վարակված վիճակում, որովհետև հոգե-
վոր կուրություն, այս վիճակում, նշանակում է արևի լույսի
ներքև ապրող մի մարմնի մեջ խավար հոգի ու միտք:

Պողոս Առաքյալը Կորնթացիներին ուղղած իր նա-
մակում ասում է. «Ոչ հոգևոր մարդը Աստծու Հոգուց եկած
ճշմարտությունները չի ընդունում, որովհետև այդ հիմա-
րություն է նրա համար և չի կարող հասկանալ, քանզի
հոգևոր կերպով են քննվում դրանք» (Ա. Կորնթ.2:14):

Ռուս Ուղղափառ Եկեղեցու Միտրոպոլիտ Իլար-
իոն Ալֆեեն ասում է.

«Մարդը, որը զուրկ է հավատից, հոգեպես կույր է:
Այդպիսի մարդը չի տեսնում սեփական մեղքերը, չի նկա-
տում Աստծո նախախնամությունն իր կյանքում: Եթե
նույնիսկ նրա աչքի առաջ հրաշք կատարվի, նա կփորձի
բացատրել դա կամ հանգամանքների բերմամբ կամ դեպ-
քերի բնական ընթացքով: Այդ մարդուն չի դիպչում Աստծո
շնորհը, քանի որ նրա սիրտը կարծրացած է, իսկ աչքերը
չեն տեսնում Աստծո լույսը: Հավատը հնարավորություն է
տալիս տեսնել իրերի իմաստը: Այն հնարավորություն է
տալիս մարդուն տեսնել Աստծո նախախնամությունը
սեփական կյանքում: Այն բացում է մարդու աչքերը տես-
նելու սեփական մեղքերը և անկատարությունները՝ թույլ
տալով գիտակցել դրանք, ապաշխարել և բժշկվել դրան-
ցից, ինչպես մարդիկ բուժվում են ֆիզիկական հիվան-
դություններից:

Ըստ Էուդյան՝ անհավատությունը հիվանդություն
է, իսկ հավատը՝ հոգևոր առողջություն: Այդ իսկ պատ-
ճառով, երբ մենք մեր կյանքում հանդիպում ենք անհա-
վատ մարդու, իսկ այդպիսիք բավականին շատ են մեր
շրջապատում, ապա մենք պետք է հասկանանք, որ չարժի
նրա անհավատության մեղքն ամբողջովին բարդել հենց

այդ մարդու վրա: Ինչպես հիվանդությունները՝ մեկի մոտ այն կարող է լինել ի ծնե, մեկ ուրիշի մոտ՝ ձեռքբերովի: Բայց չէ՞ որ մենք չենք մեղադրում հիվանդներին իրենց հիվանդության համար, այլ նրանց ապաքինում ենք մաղթում և ինքներս էլ, որքանով կարողանում ենք, փորձում ենք օգնել նրանց առողջանալ: Այդպես և անհավատ մարդկանց հետ մեր փոխհարաբերություններում մենք պետք է հասկանանք, որ անհավատությունը հոգևոր կուրություն է: Բայց դա այնպիսի կուրություն է, որից հնարավոր է ապաքինվել, նույնիսկ եթե մարդն ի ծնե է կույր: Բժշկողը Աստված է, բայց մենք էլ այդ հարցում հանդիսանում ենք օգնականներ անհավատ մարդկանց համար: Մարդիկ կհավատան Աստծուն, եթե մեզնից ոչ միայն գեղեցիկ խոսքեր լսեն, այլև տեսնեն, թե ինչպես ենք մենք քրիստոնեավայել ապրում, կատարում Աստծո պատվիրանները և, ամենակարևորը, թե ինչպես է Հիսուսի հանդեպ հավատը վերափոխում մեր կյանքը:

Ու ինչպես աշխարհը չէր ստեղծվի առանց Աստծո, այնպես էլ ամբողջ մարդկային մշակույթը կկործանվեր, եթե Աստծու Հոգին հեռանար նրանից: Չէր լինի կյանք առանց արևի: Չի կարող լինել մարդկային հոգի՝ առանց Աստծու: Մարդը՝ մերժված ու լքված Աստծու կողմից, կորցնում է իր ստեղծագործ ուժը՝ նա դառնում է անսիրտ, առանց ոգեշնչման, դաժան մի արարած, որն անգոր է հայեցության ու նոր, կատարյալ ձևերի ստեղծման մեջ, այլ ավելի ունակ փոխադարձ տանջահարելուն ու համընդհանուր ավերածության, և նրա կյանքը լցվում է վախով, տաժանակիր աշխատանքով ու փոխադարձ մատնությամբ: Պատմությունը տվել է այդ բոլորի ծանրակշիռ վկայությունները, մի թե անհրաժեշտ են նոր հաստատումներ և հետագա տառապանքներ...»:

Ամեն օր աղոթեցեք նրանց համար, որոնք հիվանդ են, անօգնական են, մերկ են, տուն չունեն, բանտում են, հարբեցող ու ծխող են: Հավատացեք և մի՛ կասկածեք, որ ձեր աղոթքների շնորհիվ բարի գործ արած կլինեք, կբացվեն ոչ միայն ձեր հոգու աչքերը, այլ նաև նրանց, որոնց համար դուք աղոթում եք ու Աստված լսելով ձեր աղոթքները իր ժամանակին անպայման նրանց կտա հոգու խաղաղություն և փրկություն: Ամեն:

:

ՆՄԱՆՎԵՑԵՔ ԱՍՏՕՈՒՆ

«Նմանվեցեք Աստծուն, որպես սիրելի զավակներ, և ընթացեք սիրով, ինչպես որ Քրիստոս սիրեց մեզ և իր անձը մատնեց մեզ համար որպես անուշահոտ պատարագ և զոհ Աստծուն» (Եփես.5:1-2)

Այս խոսքը ես վերցրել եմ Պողոս Առաքյալի Եփեսացիներին գրած նամակի 5-րդ գլխի 1-2 համարներից, ուր Հիսուս մեզ խրատում է նմանվել Աստծուն:

Հետաքրքիր է, իսկ մենք ինչպե՞ս պիտի կարողանանք նմանվել Աստծուն: Իմ բնաբանում, Պողոս Առաքյալը հստակ ասում է. «Նմանվեցեք Աստծուն, որպես սիրելի զավակներ, և ընթացեք սիրով, ինչպես որ Քրիստոս սիրեց մեզ»:

Ուրեմն, նմանությունը Աստծու հետ միմիայն կարող է լինել սիրով, քանի որ Աստված Քրիստոսի միջոցով սիրեց մեզ Նրան ուղարկելով մեր մեղքերի փրկության համար: «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տվեց, որպեսզի նա, ով հավատում է նրան, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա. Որովհետև Աստված իր Որդուն աշխարհ ուղարկեց ոչ թե նրա համար, որ դատապարտի աշխարհը, այլ որպեսզի փրկի աշխարհը: Ով հավատում է նրան, չի դատապարտվի, իսկ ով չի հավատում նրան, արդեն իսկ դատապարտված է՝ Աստծու միածին Որդուն չհավատալու համար» (Հովհ. 3:16-18),- ասում է Հովհաննես Ավետարանիչը:

Աստծուն նմանվելու ու նրա ճանապարհով ընթանալու համար, հեռու պիտի մնանք կյանքի սխալ արարքներից՝ պոռնկությունից, խաբեբայությունից, ստախոսությունից, ագահությունից, դրամասիրությունից, կռապատությունից, ավագակությունից: Աստված մեզ զգուշացնում է, որ հեռու մնանք այսպիսի բաներից ու մասնակից

չլինենք ինչ պարագայում էլ, որ լինի. «Ուրեմն,- շարունակում է Պողոս Առաքյալը Եփեսացիներին ուղղած իր նամակում,- «նրանց մասնակից մի եղեք, որովհետև թեպետև մի ժամանակ խավար էիք, հիմա լույս եք ի Տեր. ընթացեք ինչպես լուսո որդիներ, քանզի լուսո պտուղներն են բարությունը, արդարությունը և ճշմարտությունը» (Եփես. 5:7-9):

Հարց է ծագում, թե՞ «Ի՞նչ է Աստծուն մոտենալու ամենակարևոր և առաջին քայլը»:

Աստծուն նմանվելու և Նրան մոտենալու առաջին և ամենակարևոր քայլը մարդուն սիրելն է: Մարկոս Ավետարանիչը իր Ավետարանի 12-րդ գլխի 28-34 համարներում պատմում է, թե մի օր՝ «Օրենսդետներից մեկը, մոտենալով, լսում էր նրանց, մինչ վիճում էին, երբ նա տեսավ, թե Հիսուս նրանց պատասխանը լավ տվեց, հարցրեց նրան և ասաց. «Ո՞ր պատվիրանն է առաջինը»: Եվ Հիսուս ասաց նրան. «Ամենից առաջինն է՝... մեր Տեր Աստվածը միակ Տերն է, եւ դու պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ մտքով և քո ամբողջ գործությամբ», սա է առաջին պատվիրանը: Եվ երկրորդը՝ նման է սրան. «Դու պիտի սիրես քո ընկերոջը քո անձի պես» չկա ուրիշ պատվիրան ավելի մեծ, քան սրանք»: Եվ օրենսդետը նրան ասաց. «Լավ է, Վարդապետ, ճշմարտությամբ ասացիր, թե Աստված մեկ է, և բացի նրանից, ուրիշ Աստված չկա, և նրան ամբողջ սրտով, ամբողջ գործությամբ ամբողջ մտքով սիրելը, ինչպես և ընկերոջն իր անձի պես սիրելը առավել է, քան ողջակեցները և զոհերը»: Եվ Հիսուս տեսնելով, թե նա իմաստությամբ պատասխան տվեց, նրան ասաց. «Հեռու չես Աստծու արքայությունից»: Եվ այլևս ոչ ոք չէր համարձակվում նրան բան հարցնել» (Մարկոս 12:28-34):

Այս պատմությունը հետաքրքիր է.

«Օրերից մի օր մի ճամփորդ մոտենում է հոգևոր հովվին ու ասում, որ ցանկանում է ապրել հոգևոր և ճգնակյաց կյանքով: Խոհեմ և երկար տարիներ ճգնակյաց կյանքով ապրող հովիվը մեղմ ժպտալով ասում է. «Որդիս, իսկ դու երբևէ որևէ կնոջ սիրելի ես»:

«Ոչ, դուք ինձ սխալ հասկացաք, ես ասում եմ, որ ինձ բացարձակ չի հետաքրքրում աշխարհիկ կյանքը, ես ուզում եմ ինձ ամբողջովին նվիրել Աստծուն և ապրել միմիայն հոգևոր կյանքով», - բողոքում է ճամփորդը:

«Որդիս, խնդրում եմ՝ լսիր ինձ ուշադիր, ես հարցնում եմ. դու քո կյանքի ընթացքում արդյոք չե՞ս սիրել որևէ կնոջ կամ գոնե երեխայի, մի թե դու ոչ ոքի չես սիրել»:

«Ախր, ես պարզ ասում եմ, որ աշխարհիկ կյանքն ինձ չի հետաքրքրում, ինձ ոչինչ պետք չէ այս ունայն աշխարհից, որտեղ ամեն հարաբերության մեջ մի օր կեղծիք է ծլում, որտեղ մարդիկ ավելի շատ իրենց շահն են հետապնդում, քան միմյանց հարգելն ու սիրելը, որտեղ մարդիկ օրվա հացը վաստակելու համար ուրանում են ամեն մի սրբություն, որտեղ մարդիկ իրենք էլ են հոգնել իրենցից: Ախր, ես ինչպե՞ս կամ ինչո՞ւ սիրեմ նրանց, ոչ, ես ուզում եմ բարձրանալ լեռները, առանձնանալ ու ինձ լիովին նվիրել Աստծուն:

Ետ վերադարձիր աշխարհ, փորձիր սիրել մարդկանց. դա է Աստծուն մոտենալու ու նմանվելու առաջին քայլը», - պատասխանում է Հովիվը»:

Ադամ քահանա Մակարյանը գրում է մարդուն Աստծուն նմանվելու հատկանիշների մասին. «Մարդու մասին շատ հետաքրքիր մտքեր ունի Սուրբ Գրիգոր Նյուսացին: Եկեղեցական Հայրն ասում է, որ ի տարբերություն կենդանիների՝ մարդը չունի բնական զենքեր՝ կոտոշ, պաշտպանող մազեր, արագություն, ճիրաններ, և կարծես թե խղճալի է իր այս մերկությամբ: Բայց եթե մարդն այդ

բնական զենքերն ունենար, ապա կարիք չէր զգա մյուս արարածների, մինչդեռ հիմա իշխում է նրանց: Արագու-թյան համար մարդն օգտագործում է ձիուն, մերկությունը ծածկելու համար՝ ոչխարին, պաշտպանության համար՝ ատամներով զինված շանը: Մարդն ուղիղ իրան ունի, իսկ կենդանիներն ունեն ներքև հակված մարմին: Դա ցույց է տալիս մարդու իշխող դիրքը և դեպի երկինք ուղղված հայացքը: Կենդանիներն իրենց զգացումներն արտահայտում են ձայներով և մարմնի շարժումներով: Մարդն իր զգացումներն արտահայտում է լեզվով, սակայն լեզվով նա նաև թաքցնում է իր մտքերը: Կենդանիներն զգում են և հասկանում, մարդը կարող է անել ավելին՝ մտածում է և իմանում, բայց նրանք երկուսն էլ ցանկանում են: Սակայն ցանկանալու ունակությունը մարդը պետք է օգտագործի ոչ թե կենդանիների պես՝ մարմնական հաճույքների և մեղսալի կրքերի համար, այլ առավել պետք է ցանկանա հաստատուն մնալ այն ճանապարհին, որ ցույց տվեց Աստված... Եվ մարդը պատկերն է Աստծո առաջին հերթին իր ազատ կամքով, նաև հոգու անմահությամբ...: Եվ Աստծո պատկերը մեր հոգիներում անաղարտ պահելու համար քրիստոնեությունը մեզ պատվիրաններ է տալիս, որոնցով մենք կարող ենք ապրել աստվածահաճո ընթացքով և արժանանալ Երկնքի Արքայության...» (Ադամ Քահանա Մակարյան «Քրիստոնեության Իսկությունը» գրքից):

Աստված սեր է: Եվ եթե մենք ուզում ենք նմանվել Նրան, պետք է սիրենք ոչ միայն Աստծուն, այլև մարդկանց՝ մեր ծնողներին, մեր ընտանիքը, մեր ընկերներին, մեր Հայրենիքը, մեր Եկեղեցին, մի խոսքով երկրի վրա Աստծու ստեղծած ապրող ու շնչող մարդկանց: Տիրոջ պատգամը այս է՝ Սեր և միմիայն Սեր: «Սիրեցեք միմյանց», - ասաց Տերը: Եվ սերը միայն խոսքով չի լինում, այլ մեր ամենօրյա

գործնական կյանքով: Եթե սիրենք մարդկանց անկեղծ ու մաքուր սիրով, Աստծուն նմանվելու և Նրան մոտենալու կարևոր և առաջին քայլը կատարած կլինենք ու ինչպես Հիսուս է ասում. «Հեռու չենք լինի Աստծու Արքայությունից»: Ամեն:

ՔԱՆՔԱՐՆԵՐԻ ԱՌԱԿԸ

«Արդ, դրանից առեք այդ քանքարը և տվեք նրան,
ով տասը քանքար ունի» (Մատթ. 25:28):

Առաջին հայացքից այս խոսքերը զարմանալի և նույնիսկ կարելի է ասել դաժան են թվում ու մենք ակամայից մտածում ենք, թե՝ «Ո՞ւր է մարդկային խիղճը, ո՞ւր մնաց արդարության և եղբայրության ոգին»:

Մատթեոսի Ավետարանի 25-րդ գլխի 14-30 համարներում Հիսուս պատմում է մի առակ. «Մի հարուստ մարդ հեռավոր երկիր գնալուց առաջ կանչում է իր ծառաներին ու ամեն մեկին որոշ գումար տալով, պատվիրում է, որ դրանք գործի դնեն և իր վերադարձին ավելիով ետ վերադարձնեն: Առաջին երկուսը դրամները գործի մեջ են դնում և նույնքան գումար շահում ու այդպես վերադարձնում են իրենց տիրոջը: Տերը արժանվույն գնահատում է նրանց աշխատանքը: Երրորդ ծառան այսպես է պատասխանում, երբ իրենից տերը հաշիվ է պահանջում. «Տեր, գիտեի, որ դու մի խիստ մարդ ես, հնձում ես, ինչ որ չես սերմանել, և հավաքում ես այնտեղից, ուր չես ցանել. վախեցա. գնացի և թաքցրի քո այս քանքարը հողի մեջ: Արդ, ահավասիկ, քոնը՝ քեզ»: Տերը պատասխան է տալիս նրան և ասում. «Չար և ծույլ ծառա, գիտեիր, որ հնձում եմ, ուր չեմ սերմանել, և հավաքում այնտեղից, ուր չեմ ցանել. դու պետք է իմ այդ դրամը լուծայափոխների մոտ դնեիր, և ես, գալով, տոկոսով միասին պահանջեի այն, ինչ որ իմն է: Արդ, դրանից առեք այդ քանքարը և տվեք նրան, ով տասը քանքար ունի. քանի որ՝ ով ունի, նրան պիտի տրվի և ունեցածը պիտի ավելացվի, իսկ ով չունի, նրանից ունեցածն էլ պիտի վերցվի: Իսկ այդ անպիտան ծառային հանեցեք դուրս, արտաքին խավարը. այնտեղ կլինի լաց և ատամների կրճտում» (Մատթ. 25:14-30):

Եթե ուշադիր կարդանք Հիսուսի առակները, բոլորն էլ ուսուցողական են և իրենց մեջ ամփոփում են երեք կարևոր կետեր: Առաջինը՝ ցույց են տալիս մարդկային թույլ կողմը կամ մեղքը, երկրորդը՝ գործած սխալի համար նախատեսված, անկասկածորեն արդար պատիժը և վերջապես երրորդը՝ փրկության ճանապարհը, ինչպես ո դուրս գալ սխալ ու կործանարար վիճակից:

Այս առակը ևս բացառություն չէ: Եկեք տեսնենք, թե ո՞րն է այստեղ մեղքը, որը Քրիստոս հանդիմանում է:

Այս առակում մեղքը անշուշտ ծուլությունն է, տերը շատ լավ գիտեր, որ վերջին ծառային ընդամենը մեկ քանքար էր տվել, և նրանից չէր ակնկալում հինգը կամ տասը, բայց գոնե մեկը երկու դարձներ: Նա մատը մատին կպցնել չուզեց, առավել իր ծուլությունը արդարացնելու համար տիրոջ խստությունը պատճառ բռնեց:

Տերը հրամայեց առնել նրա ձեռքից ունեցած քիչն էլ: Նայենք մեր շուրջը և կտեսնենք Հիսուսի պատմած առակի շատ ապացույցներ: Ծույլ և ոչ աշխատասեր մարդիկ կամաց-կամաց վատնում են իրենց ծնողների վատակը ու մի օր էլ մնում են առանց որևէ բանի: Տեսե՛լ եք մեկին, որը ծույլ լինի և բարգավաճ կյանքով ապրի կամ մի բարի գործ անի: Եվ դրա համար էլ մեր եկեղեցական հայրերը ծուլությունը դասել են յոթը մահացու մեղքերի շարքում:

Այս բոլոր զգուշացումները անելուց հետո, Հիսուս խրախուսում է մեզ աստվածահաճո և աշխատասեր կյանքով ապրել առաջին երկու հավատարիմ ծառաների օրինակով: Աստված բոլորիս մի շնորհք, մի կարողություն է տվել: Սակայն ինչպես Ինքն է նշում առակում, բոլորը հավասար շնորհքներ չեն ստանում, մեկը ավելի՝ մյուսը՝ պակաս, յուրաքանչյուրը իր կարողության համեմատ: Կարևորը սակայն քանակը չի, այլ, թե ինչպես ենք գործա-

դրում մեր կարողությունը, աստվածատուր հնարավորությունները: Մեր բոլոր կարողությունները շրջանառության մեջ դնենք, ինչպես առևտրականներն իրենց նյութականն են առևտրի մեջ դնում ու այդտեղից էլ մեծ շահեր ստանում: Աղամանդը որքան էլ թանկարժեք է, իրենից մեծ արժեք չի ներկայացնում, մինչև չտաշվի ու գեղեցիկ շրջանակի մեջ չանցկացվի: Նույն ձևով մենք մեր բնատուր կարողությունները, հատկությունները պետք է մշակենք ու կատարելագործենք, ապա թե ոչ դրանք կառնվեն մեր ձեռքից, կարծես թե չենք ունեցել, ինչպես տեղի ունեցավ առակում պատմված մեկ քանքար ունեցող ծառայի հետ:

Միտրոպոլիտ Անտոնի Սուրոժսկին այսպես է մեկնաբանում. «Տերը, որ գնում էր հեռու երկիր, Հիսուս Քրիստոսն է: Նա կանչում է Իր ծառաներին և հանձնում նրանց Իր ունեցվածքը՝ ավետարանական ճշմարտության խոսքերը, քանզի «Տիրոջ խոսքերը ... ինչպես ընտիր ու փորձված արծաթ՝ ... մաքրված ու գտված» են (Մաղ. 11:7): Ծառաները նրանք են, ում վստահված է խոսքի ծառայությունը՝ եպիսկոպոսները, քահանաները, սարկավագները և մենք՝ բոլորս, որ ընդունեցինք Տիրոջից քանքարներ, այսինքն՝ աստվածաշնչյան պատվիրանները և Մուրբ Հոգու շնորհները: Մեզ հանձնելով Ավետարանի խոսքն ու ուսմունքը (յուրաքանչյուրին՝ ըստ իր կարողության, այսինքն՝ հավատի և մաքրության չափով)՝ Աստված սպասում է համապատասխան պտուղներ՝ բարոյականություն, առաքինություն, ժուժկալություն, ողորմածություն, հեզություն... Տերը մեզ չի դատում այն բանի համար, թե ինչքան պտուղ ենք բերել, այլ՝ թե ինչպես ենք վերաբերում մեզ վստահված քանքարին: Քարոզելու շնորհ, հարստություն կամ իշխանություն, կամ ինչ-որ գիտելիք և ընդունակություն ստացողը պետք է բազմապատկի դրանք Եկեղեցու և մերձավորների օգտին:

Տաղանդը հողի տակ թաքցնել՝ նշանակում է սեփական շնորհներից չկարողանալ օգտվել, Աստծուն ու մերձավորների՝ ծառայելու պարտքը մինչև վերջ չկատարել: Լուսնայափոխները նրանք են, ովքեր Քրիստոսի խոսքի համաձայն՝ Ահեղ Դատաստանի օրը պիտի վկայեն մեզ համար, թե՛ երբ քաղցած էինք, մեզ կերակրեցիք, ծառավ էինք, և մեզ ջուր տվեցիք, օտար էինք, և մեզ ձեր մեջ առաք, մերկ էինք, և մեզ հագցրեցիք, հիվանդ էինք կամ բանտարկյալ, և մեզ այցի եկաք (Մատթ. 25:35-40): Նրանց միջոցով Աստծո խոսքի արձաթը բազմապատկվում է, քանի որ ճշմարտության խոսքին ավելանում է հավատը, հավատին՝ արդարության գործերը, գործերին՝ գոհունակությունը, և այսպես բազմապատկվում է Աստծո փառքը:

Տերը միանման գովում է երկուսին էլ, ովքեր իրենց տրվածի վրա աշխատեցին, նրանցից յուրաքանչյուրը լսում է. «Ապրե՛ս, բարի՛ ու հավատարի՛մ ծառա»: Բարի ասելով՝ ընդհանրապես հասկանում ենք մարդասերին ու առատաձեռնին, ով բարություն է անում իր մերձավորներին: Եվ քչի մեջ հավատարիմ եղողները շատի վրա են կանգնելու, քանզի ինչ էլ ստանանք այս կյանքում, ինչ բարիքներ էլ վայելենք, չնչին են հանդերձյալ բարիքների հետ համեմատած: Ինչպես Դավիթ մարգարեն է ասում. «Տերն ուրախանում է Իր արարածներով» (Սաղ. 103:31) (Ըստ արքեպս. Ավերկի Տաուշևի «Նոր Կտակարանի Սրբազան Գրվածքների ուսումնասիրության ձեռնարկ» գրքի և միտրոպոլիտ Անտոնի Սուրճակու քարոզների)

Իբրև հայ հոգևորական, առանձնացմանս պահերին, երբեմն ինձ հարց էմ տալիս և այսօր էլ ձեզ էմ ուղղում այս հարցը, թե՛ «Մեր ունեցած բազմաթիվ շնորհները արդյոք պիտի բավականացնեն մեզ, մեր հավատի ուժով հաղթահարելու այս փոթորկահույզ կյանքի բազմաթիվ դժվարությունները, նեղություններն ու տառապանքները»: Ու

այս հարցի պատասխանը գոնե ես զգում եմ իմ հոգու մեջ, երբ մի փոքրիկ բարի ծառայություն եմ անում, երբ աշխատում եմ արդարորեն ու մաքուր ձևով իմ հոգու և խղճի պարտականությունը կատարել իմ Ընտանիքի, իմ Ազգի և իմ Եկեղեցու հանդեպ: Դուք էլ նո՛ւյնը արեք, մի բողոքեք, կարող եք, եթե ուզեք, որովհետև ամո՛ւր է ձեր Հավատը և ուժե՛ղ է Հայի Ոգին:

Միտրոպոլիտ Անտոնին շարունակում է իր մեկնաբանությունը. «...Անպիտան ծառան աշխատելու ժամանակն անցկացրեց անգործությամբ և իրավունք չունեք մեղադրել իր տիրոջը խստության մեջ: Տերը նրանից, ինչպես մյուսներից քիչ չէր պահանջում: Աստծուն դաժանության մեջ մեղադրելը մեղքի պատճառով Աստծո Որդի լինելու զգացումը կորցրած և դրա պատճառով Աստծուն դաժան ու անարդար, իսկ իրեն որպես զոհ պատկերացնող մեղավորի սովորական ինքնարդարացում է: Իրականում մեր Տերը Նա չէ, ով հանդիմանում ու սպառնում է, այլ Նա, ով գովում է մեզ բարի արարքների համար, բարեհաճ է մեր նկատմամբ և օրհնում է մեզ» (նույնը):

Մեր Եկեղեցու հայրենասեր Հայրապետներից Գարեգին Հովսեփյանցը ասում է.

«Խնդիրը այն է, որ յուրաքանչյուրս լավագույն ձևով կատարենք մեր պարտքը՝ որովհետև, «որին շատ տվեց, շատ էլ պիտի պահանջի, որին, որ քիչ տվեց՝ քիչ էլ պիտի պահանջի»: Բայց գնահատության արժանի է մեզանից ամեն մեկը, որը լավագույն կերպով կարողացել է օգտագործել իրեն շնորհված դրամագլուխը: Աստված գիտի լավագույնը գնահատել... Կյանքը կազմված է փոքր բաներից, բայց առանց այդ փոքր բաների լավ կատարման լավագույն մեծը չի ստեղծվի: Ամենահասարակ կարծված երևույթներն իսկ, իրենց արժեքն ունեն: Ամենալավ սերմը

նույնիսկ ժայռի վրա ընկած, անպտուղ կմնա, իսկ բարեբեր
հողում՝ արդյունավետ կլինի...»:

Ուրեմն պարտավոր ենք օգտագործել Աստծուց
մեզ տրված շնորհները և դրանք արժևորել մեր կյանքում
ու մեր բոլոր գործերում, ապրելով քրիստոնյային վայել
մաքուր և արդար կյանքով: Ամեն:

ԻՆՔՆԱԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ

«Իմ բարկության մեջ ես ասացի, թե հավետ չեմ սասանվի» (Սաղմ. 29:7):

Այս խոսքը ես վերցրել եմ Սաղմոսաց գրքի 29-րդ գլխի 7-րդ համարից, որտեղ Սաղմոսերգուն մեզ բացատրում է Ինքնախաբեության մասին:

Մարդիկ կան, որոնք փառասեր, ինքնահավան, անձնասեր ու հպարտ են: Մրանք կարելի է ասել գլխավոր պատճառներն են, որ մարդը ինքն իրեն խաբելու վիճակն ունենա: Իրապես ողբալի և վերին աստիճանի ցավալի է, երբ մարդը ինքն իրեն փորձում է խաբել:

«Ի՞նչ է ինքնախաբեությունը, ինչպե՞ս մարդ կարող է ինքն իրեն խաբել, ինչո՞ւ են մարդիկ հաճախ իրենց դնում այս վիճակի մեջ, ի՞նչն է պատճառը»:

Այսպիսի հարցեր են ծագում մեր մտքում, երբ մտածում ենք այդ մասին:

Կան մարդիկ, որոնք կարծում են, թե իրենք ուրիշներից ավելի խելացի ու ճարպիկ են, սակայն նրանք այս ձևով իրենք իրենց են խաբում:

Հայրենի գրողներից Րաֆֆին ասում է.

«Ինքնախաբեություն... դա մի շատ հասարակ բան է, բայց նրա մեջ թաքնված են մարդու բոլոր թշվառությունները: Տեսնում ես մեկը հիմար է, բայց կարծում է, թե խելք ունի: Մյուսը երկչոտ է, կարծում է, թե առյուծի սիրտ ունի: Երրորդը ոչինչ չէ սովորել, բայց իրան հանճար է երևակայում: Չորրորդը չարագործ մեկն է, բայց իրան առաքինության տիպար է համարում: Այս բոլորը առաջ է գալիս ինքնախաբեությունից:

Ինքնախաբեությունը մի աչք միայն ունի, և նա ամեն բան լավ կողմից է տեսնում: Նրա մյուս աչքը կույր է տգեղություններ, այլանդակություններ և մոլություններ

տեսնելու համար: Եվ այս պատճառով այն թշվառականը, որ մի այդպիսի ողորմելի դրության մեջ է գտնվում, միշտ գոհ է իր վիճակից, որովհետև իր մեջ թերություններ չէ տեսնում: Եվ դրա համար նա միշտ անշարժ է մնում. ոչ մի ձգտում դեպի առաջադիմություն և ոչ մի պահանջ կյանքից չունի. իրան ամեն բանով լիացած է համարում: Ինքնախաբեությունը բարոյական ինքնասպանություն է. մի մեռելություն է, որի մեջ մարդկային բոլոր կրքերը հանգիստ են»:

Ինքնախաբեության և ազահության ցայտուն օրինակ է Ավետարանի մեծահարուստի մտածելակերպը. «Գիտեմ, թե ինչ պետք է անեմ, կքանդեմ իմ շտեմարանները և ավելի մեծերը կշինեմ ու այնտեղ կհավաքեմ ցորենը և իմ ամբողջ բարիքները: Ով մարդ, շատ տարիների համար ամբարված բազում բարիքներ ունես, հանգիստ արա, կե'ր, խմի'ր և ուրա'խ եղի'ր»: Լսենք Աստծու պատասխանը. «Անմիտ, հենց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են, իսկ ինչ որ պատրաստել ես, ո՞ւմն է լինելու» (Ղուկ. 12:18-21):

Գալիս ենք ու գնում: Երկու բան չգիտենք՝ մեր ծրնունդը և մահը: Ծնունդից մինչև մեր մահը ընկած ժամանակն է, որ մերն է: Թե մենք ինչպե՞ս պիտի անցկացնենք այդ ժամանակամիջոցը, կախված է մեզանից: Հարստությամբ, թե՞ իմաստությամբ, բարի ու արդար գործերո՞վ, թե՞ չար գործերով: Սակայն մեր այս կյանքի համար մի օր պատասխան պիտի ստանանք Տիրոջից, եթե վարվենք ազահ ու ինքն իրեն խաբող Ավետարանի մեծահարուստի նման:

Հիսուս էլ փորձության ենթարկվեց: Սատանան նրան առաջարկեց քարերը հացի վերածել, սակայն մեր Տերը չխաբվեց նրան: Մեծագույն սխալը կլինեի, եթե քարերը հաց դառնային: Այդ հրաշքը անբնական կլինեի, իսկ

Հիսուսի բոլոր հրաշքները բնական ու աստվածային էին և այդ բոլորը կատարվեցին Աստծու Որդու գործության միջոցով:

Մարդիկ կան, ովքեր կարծում են, որ իրենց հույսը դնելով միայն Աստծու վրա, ամեն ինչի պիտի հասնեն: Սա ինքնախաբեություն է: Մարդուն Աստծու կողմից տրված է նաև՝ խելք, խիղճ և անկոտրում կամք, որպեսզի այդ բոլոր օգտագործելով հասնի ամեն ինչի ու Աստծուն փառք տա:

Այս պատմությունը կոչվում է «Անգոր աղվեսը», որը ուսանելի է.

«Բարեպաշտ մի մարդ անտառում տեսնում է մի աղվեսի, որը ոտքեր չուներ:

Նա ցանկանում է իմանալ, թե ինչպե՞ս է աղվեսը այդքան ժամանակ կենդանի մնացել: Եվ սպասելով որոշ ժամանակ ու տեսնում է մի վագրի, որը ատամներով բռնել էր որսը: Մի քիչ ուտելուց հետո, վագրը մնացածը տալիս է աղվեսին: Հաջորդ օրը գնալով, մարդը տեսնում է նույնը:

Վերադառնալով անտառից՝ մարդը մտածում է Աստծու ողորմածության մասին:

Եվ հանկարծ նա ինքն իրեն մտածում է. «Ես նույնպես կպառկեմ մի անկյունում և հույսս կդնեմ Աստծու վրա»: Այ քեզ հիմար տրամաբանություն:

Մի ամբողջ շաբաթ մարդը ծույլ-ծույլ պառկում է անկողնում ու տանից դուրս չի գալիս: Բնական է ոչ մի սնունդ չուտելով, նա ահագին հյուծվել էր, երբ հանկարծ լսում է մի ձայն, Ով նրան ասում է.

Ով դու, սխալ ճանապարհով քայլող, բաց աչքերդ և հասկացիր ողջ ճշմարտությունը: Օրինակ վերցրու ոչ թե աղվեսից, այլ՝ վագրից» («Գեղեցիկ ապրելու գաղտնիքները» գրքից):

Ի՞նչ գեղեցիկ օրինակ է, այո՛, օրինակ պետք է վերցնենք բարի գործ անողից, ոչ թե այն ընդունողից:

19-րդ դարի մեր հոգևորականներից՝ Գևորգ Եպիսկոպոսը ցույց է տալիս ինքնախաբեության ճշմարիտ ճանապարհը իր այս խրատի մեջ, որը վերաբերում է ոչ միայն Հիսուսի ժամանակվա փարիսեցիներին ու սադուկեցիներին, այլ նաև մեզ բոլորիս, երեկվա և այսօրվա ապրողներին: Բացենք մեր աչքերը ու ինքներս մեզ չխաբենք.

«Ահա մեկը, որ բարեպաշտի անուն է վայելում: Ի՞նչ է անում, հաճախ ժամ է գալիս, սրբերի առաջ մեծ-մեծ մոմեր տնկում, չոգում ու երկար աղոթում, քահանային հիշելիք տալիս, երբեմն աղքատին էլ չի մոռանում՝ բուռը կոպեկ է դնում, պատարագ է անել տալիս, ծնողների գերեզմանը օրհնում և այլն և այլն:

Այս բոլորը լավ, բայց մի՞թե սա է ճշմարիտ բարեպաշտությունը, մի՞թե սա է Փրկչի հոգով և ճշմարիտ երկրպագունը, մի՞թե նույնը չի կարող անել մի անհավատ և կամ անտարբեր մեկը: Հիսուս ջերմ հոգի է ուզում, որ հասկանա օտարին և սիրի նրան: Սակայն ո՞ւր որոնենք այդ հոգին:...

Ահա ձեզ հարուստ դասակարգը. ինչպես է հասկանում նա յուր պարտքը դեպի յուր աղքատ եղբայրը, ինչո՞վ է կապված նրա հետ. մի արտաքին կապով, որ չի բխում կարեկցությունից և սիրուց, այլ անձնասիրությունից: Մի ցուցադրական շարժում է անում հարուստը յուր ավելորդը նվիրելով կարոտյալներին՝ և արդեն կատարած է համարում յուր քրիստոնեական պարտքը դեպի ընկերը. բայց այս պարտաճանաչություն չէ, այլ լոկ մի շարժում յուր անունը հավերժացնելու, աժան ժողովրդականություն վայելելու նպատակով կատարված:

Սակայն ո՞ւր է ներքինը, որին այնքան կարոտում է աղքատը՝ կյանքի ծանր խաչը թեթևացնելու, յուր թշվառու-

թյունը մոռնալու համար: Ո՞ւր է հարուստի քաղցր խոսքը, բարեկամական վերաբերմունքը, եղբայրական հովանավորությունը, որ սրտի կապ է հաստատում մարդոց մեջ և հոգևոր մխիթարություն պատճառում:

Այսպես ուրեմն ճշմարիտ բարեպաշտները ներքնապես կենդանի ու Աստուծով բոցավառ հոգիներն են, որ ընդունակ են անձնվեր գործելու և եղբայրասեր ապրելու, որ միայն կարող է մարդուն երջանկացնել, դժողքը դրախտի վերածել, երկիրը երկնքի փոխել» (Գևորգ եպիսկոպոս, «Քարոզներ»)

Երբ մարդիկ հասկանան, թե այսօր իրենց վերջին օրն է, վստահորեն պիտի փորձեն ապրել անխաղաղի ու պարկեշտ մի կյանքով: Ինչ որ պիտի անենք, այսօր անենք. օրինակ եթե հիվանդ ունենք, աշխատենք այսօր այցելել, չթողնենք վաղվան ու փորձենք օգնել նրան մեր ներկայությամբ, եթե մեկը սգավոր է, գնանք ու մխիթարենք նրան, այցելենք ծերանոցները՝ մեծահասակների, ժամանակ անցկացնենք նրանց հետ, ժպիտ պարզենք նրանց մեր ներկայությամբ, սիրով և հարգանքով ուրախություն պատճառենք մեր ծնողներին ու չմոռանանք նրանց: Ապրենք խաղաղ կյանքով, չվիրավորենք ու չզրպարտենք ուրիշներին, չխլենք նրանց նյութական ու բարոյական իրավունքները և մանավանդ չխաբենք մենք մեզ, թե ամենակարող ու ամենագետ ենք: Հիշենք, որ նույնիսկ ամենատկար մարդն էլ կարող է օգտակար լինել ամենաուժեղին:

Սաղմոսերգուն զգուշացնում է ինքնախաբեությամբ տառապող մարդկանց. «Իմ բարկության մեջ ես ասացի, թե հավետ չեմ սասանվի»:

Միշտ պիտի հիշենք, որ անսասանը, մնայունն ու հավիտենականը միայն Աստված Ինքն է: Ամեն:

ԵՐԶԱՆԿՈՒԹՅՈՒՆ

«Երանելի է այն մարդը, որն ամբարիշտների խորհրդով չի շարժվում, մեղավորների ճանապարհին ոտք չի դնում և չարագործների հետ համախոհ չի լինում, այլ հաճույք է ստանում Տիրոջ օրենքներից» (Մաղմ. 1:1)

Հարց է ծագում. «Ի՞նչ է երջանկությունը, ինչպե՞ս կարող ենք երջանիկ լինել, ո՞վ կարող է մեզ երջանիկ դարձնել, ինչպիսի՞ երջանկության մասին ենք երագում»:

Սաղմոսերգուն խոսում է երջանկության մասին, որը հոգեկան հատկություն է և ոչ թե ֆիզիկական հաճույք: Աշխարհում հնարավոր չէ գտնել մի մարդու, որը չձգտի երջանկության: Սա ապացուցում է, որ մարդը անկատար էակ է: Մարդու սպասածը այս աշխարհում առանց ցավի ու առանց կարտոի մի կյանք է: Այսպիսի կյանքը նրան առաջնորդում է հոգեկան ուրախության, որը նրան բարձրացնում է դեպի երջանկություն: Այս իր ավարտին հասցնելու համար մարդը պետք է զինվի մտքի արդարությամբ, խղճի խաղաղությամբ և հոգու սրբությամբ, որով նա այս ձևով մոտեցած կլինի իր Արարչին:

Արտաքին գեղեցկությունները մարդուն չեն մեծացնում ու չեն բարձրացնում: Մարդը այն է ինչ որ է: Նրա մեջ պիտի հարգվի անձի արժեքը և ոչ թե արտաքին հագուստը: Այդքան էլ հեշտ չէ կյանքում երջանկության հասնել, որովհետև այն լի է նեղություններով, ցավերով ու տառապանքներով:

Այս փոքրիկ պատմությունը կարող է բացատրել երջանկության կարևորությունը.

«Անհավատ մի ազնվական հանրային պարտեզի անկյուններից մեկում լսում է մի փոքրիկ աղջկա գեղեցիկ երգը: Հետաքրքրությունից մոտենում է նրան և ուշադիր լսում: Երկար ժամանակ նրան լսելուց ու դիտելուց հետո,

տեսնում է, որ աղջկա այտերից արցունքի կաթիլներ են հոսում.

Ինչո՞ւ ես երգելու ժամանակ լաց լինում,- հարցնում է նա աղջկան.

Երջանկությունիցս,- պատասխանում է փոքրիկը:

Եթե այդքան երջանիկ ես, ինչո՞ւ ես լաց լինում,- շարունակում է ազնվականը հետաքրքրությամբ:

Հիսուսին այնքան եմ սիրում, որ ուրախությունիցս լաց եմ լինում,- պատասխանում է աղջիկը:

Ո՞ւր է Հիսուսը,- դարձյալ հարցնում է ազնվականը:

Երկնքում,- լինում է պատասխանը:

Քանի որ երկնքում է ի՞նչ կարող է անել քեզ համար: Նա չի կարող քեզ հագուստ կամ խաղալիք գնել կամ բերել, ինչպես անում են ծնողներդ ու ընկերներդ,- ասում է անհավատը:

Բայց Նա մի ուրիշ բան կարող է անել: Նա կարող է հոգուս մեջ իջնել ու ինձ երջանկացնել,- պատասխանում է փոքրիկ աղջիկը աշխուժությամբ:

Անիմաստ խոսք,- արհամարհանքով ասում է անհավատը:

Ոչ,- անիմաստ չէ,- հուզված շարունակում է փոքրիկ Ավետարանիչը: Գիտեմ, որ ասածս ճիշտ է և ինձ կերջանկացնի:

Անհավատ ազնվականը այս խոսքերից ձանձրացած սկսում է հեռանալ: Բայց հանկարծ մի հրեշտակի դիպչելն է զգում իր սրտին: Ապա փնտրում է Փրկչին քարոզած փոքրիկ աղջկան և իր ամբողջ էությունը լցվում է երջանկությամբ»:

Աստծու գործերը անքննելի են: Նա կարող է մեկ րոպեում մարդուն անհավատից հավատացյալ դարձնել:

Պողոս Պատրիարք Ադրիանապոլսեցին ասում է. «Չկա մեկը, որ երջանկություն չկամենա, բայց չգիտենալով

նրա տեղը՝ անընդհատ իզուր տատանվում է: Մերթ կարծում է, թե երջանկությունը համադամ խորտիկների մեջ է, և երբ շատ է զվարճանում, ձանձրանալով թողնում է այս և հարստությունն ցանկանում, հույս ունենալով, թե երջանկությունը նրա մեջ է: ...Ով կամենում է բախտավոր լինել, թող ապավինի Աստծուն, սակայն չթուլանա իր պահպանության համար անել այն, ինչ կարող է: Որովհետև Աստված կամենում է, որ մարդիկ ինչ որ կարող են անեն և ինչ չեն կարող իրեն հանձնեն: Բայց մարդ կա, որ կամենում է Աստծուն իր համար իբրև սպասավոր ունենալ, և ինչ որ պատշաճում է, որ մարդն անի, այն թողնում է, որ Աստված կատարի և երբ չի կատարում, Աստծուց դժգոհում է՝ չտարբերելով Աստծուն վայել գործերը մարդուն վայել գործերից» («Խրատի Թանգարան»):

«ՊԱՏՄՈՒՃԱՆԸ

Մի բարեպաշտ արհեստավոր աղոթում է, որպեսզի Երկնավոր Հայրն իրեն օգնի հանապազօրյա հացը վաստակելու համար: Աստված լսում է նրա աղոթքը: Եվ մի շինականի միջոցով մի քանի գեղեցիկ հախճապակյա ավսեններ է ուղարկում որպես նվեր:

Բարեպաշտ մարդն ուրախանում է, այդ ավսենները շուկայում վաճառում է և փոքրիկ գումար վաստակելով ետ դառնում դեպի տուն՝ գոհություն հայտնելով Աստծուն ու որոշելով այդ գումարից մի փոքր էլ հատկացնել իրենց գյուղի եկեղեցուն:

Ձանապարհին ավագակներ են հայտնվում, հափշտակում այս մարդու գումարը և մի պատահաբանությամբ, փոշոտ պատմուճան թողնելով հեռանում:

Արհեստավորը շատ է տխրում և ասում.

Տեր Աստված, մի փոքրիկ գումար էի վաստակել, սակայն այս փորձանքն եղավ: Այժմ դատարկաձեռն եմ

վերադառնում ու հոգևոր նպատակների համար էլ ոչինչ չէմ կարող անել...:

Իբրև միխթարություն վերցնում է պատահողական պատմուճանը, գցում ուսին, մտքերով տարված շարունակում ճանապարհը:

Թագավորական գնդի զինյալ հեծյալներ են մոտենում և շրջապատում նրան՝ բարձրաձայն ասելով.

Ահա գտանք նրան:

Արհեստավորը սրտատրոփ մտածելով, որ այս անգամ էլ մի նոր փորձանք է իրեն սպասում, դողդոջուն ձայնով հարցնում է, թե ո՞ւմ գտաք:

Հեծյալներից մեկն իջնում է ձիուց և պատասխանում.

Մեր թագավորը ժառանգ չուներ և իր կտակի համաձայն ավագակների կողմից գողացված այն պատմուճանը ով գտներ և կրեր իր ուսերին, որն այժմ դու ես կրում, պիտի ժառանգեր իր կարողությունը և թագավորությունը: Այժմ դու ես մեր արքան...:

Աստծո առատաձեռնությունն ու կամեցողությունն անսահման են մարդու հանդեպ...» (Հովհաննես Մանուկյան «Առակներ»):

Քրիստոս մեզ սովորեցրեց ոչ թե ապրել ուղղակի հավատալով ճշմարիտ Աստծուն, այլ կատարել նրա կամքը. «Ոչ ամեն մարդ, որ ինձ, «Տեր, Տեր» է ասում, երկնքի արքայություն կմտնի, այլ նա, ով կատարում է կամքը իմ Հոր, որ երկնքում է» (Մատթ.7:21): Ահա և ճշմարիտ երջանկության բանալին: Երջանկությունը չի գնվում ոսկով ու արծաթով:

Պողոս Պատրիարքը շարունակում է. «Որովհետև երջանկությունը, որը մտքի ու ցանկությունների հանդարտությունն է, ուրիշ բանի մեջ չի գտնվում, եթե ոչ իմաստության ու առաքինության: Ուստի յուրաքանչյուր մարդ

պիտի գտնի ու ձեռք բերի իմաստություն ու առաքինություն, որոնցով նա կկարողանա գտնել բնական երջանկությունն այս աշխարհում և գերբնականը՝ հավիտենական կյանքում:...»: Ամեն:

ՅՈՒՑԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ

«Համբավ (անուն) ձեռք բերենք ողջ աշխարհով
սփռվելուց առաջ» (Ծննդ. 11:4)

Այս խոսքը վերցրել եմ Ծննդոց գրքի 11-րդ գլխի 4-րդ համարից: Խոսքը ցուցամոլության մասին է:

«Ի՞նչ է ցուցամոլությունը, ովքե՞ր են ցուցամոլները, սա մոլությո՞ւն է, թե՞ առաքինություն»:

Ցուցամոլության տեսակները շատ են: Ոմանք փոքրիկ աղջնակների պես ցանկանում են ցուցադրել իրենց հագուստներն ու զարդերը: Աղքատները կամ մի քիչ ավելի դրամ ունեցողներն էլ հարուստներին հասնելու համար պարտքերի տակ են ընկնում, որպեսզի իրենք էլ հետ չմնան: Սա իհարկե երբեմն էլ ողբերգական վախճան է ունենում:

Կան ցուցամոլներ, որոնք իրենք իրենց գիտունի տեղ են դնում և խառնվում են միջոցառման ծրագրի գործադրությանը: Ժողովրդական խոսքն այսպիսի մարդկանց համար ասում է. «Կռիկիցդ վերև մի բարձրացիր»: Այս խոսքի մասին հետաքրքիր մի պատմություն կա, ըստ որի մի կռիկակար գնում է ցուցահանդես: Նկարները նայելու ժամանակ կանգ է առնում մի պատկերի առաջ, որը մի մարդու նկարն էր կանգնած վիճակում: Նկատում է, որ նկարիչը կռիկը անբնական կերպով է նկարել ու այդ մասին ասում է նրան: Նկարիչը, իմանալով նրա մասնագիտությունը, ուրախությամբ ընդունում է նրա նկատողությունը, բայց մի քանի րոպե անց կռիկակարը իր կարծիքն է հայտնում նաև գլխարկի մասին, սակայն նկարիչը նրան պատասխանում է. «Կռիկիցդ վերև մի բարձրացիր», նկատի ունենալով, որ նա գլխարկ կարող չի, այլ ըն-

դամենը կոշկակար է: Իհարկե այս խոսքը վերաբերում է բոլոր նրանց, ովքեր հասկանում են կամ չեն հասկանում, իրենց ցույց տալու համար կարծիքներ են հայտնում այս կամ այն բանի մասին:

Յուցամոլությունը անշուշտ թերություն է և մեղք: Ահա տեսեք, թե սաղմոսերգուն ինչ դիտողություն է անում այսպիսիներին, նկատի ունենալով, որ նրանք Աստծուց վեր չեն ու չեն կարող սխալ բաներ խոսել. «Ձեր կոտորները վեր մի տնկեք, և Աստծու մասին անիրավաբար մի խոսեք» (Սաղ. 74:6):

Յուցամոլը պարզապես մտքից թույլ մեկն է: Մտածողներից մեկն ասում է. «Յուցամոլությունը կեղծավորության ցուցադրոշակն է: Շատ խոսողը ձանձրալի ու կասկածելի է: Փարիսեցին ցուցամոլ է, որովհետև կեղծավոր է: Հպարտությունը սատանայի գլուխ-գործոց մեղքն է և նա ինքնին ստերի հայրն է»:

Իր ժամանակին մեր Տերը հանդիմանեց օրենսգետներին ու փարիսեցիներին, ովքեր ամեն ինչ ի ցույց ժողովրդի էին անում միայն, բայց իրենց ներսում մաքուր չէին և խորհուրդ տվեց Իր աշակերտներին լսել նրանց, քանի որ Աստծու խոսքն են քարոզում, սակայն չհետևեն նրանց գործերին:

«Մովսեսի աթոռի վրա նստեցին օրենսգետներն ու փարիսեցիները. ամեն ինչ, որ նրանք ձեզ ասեն, արեք և պահեցեք, բայց մի արեք ըստ նրանց գործերի, քանի որ ասում են, բայց չեն անում: Ծանր ու դժվարակիր բեռներ են կապում և դնում մարդկանց ուսերի վրա, բայց իրենց մատով անգամ չեն կամենում շարժել դրանք: Եվ իրենց բոլոր գործերն անում են՝ ի ցույց մարդկանց. լայնացնում են իրենց գրպանակները և երկարացնում իրենց զգեստների ծոպերը: Սիրում են ընթրիքների ժամանակ պատվո տեղերը, ժողովարաններում՝ նախապատիվ աթոռները և

հրապարակներում ողջույններ առնելը...» և շարունակում է.

«Վայ ձեզ կեղծավորներիդ՝ օրենսգետներիդ և փարիսեցիներիդ, որ նման եք սպիտակեցրած գերեզմանների, որոնք դրսից գեղեցիկ են երևում, մինչ ներսից լի են մեռելների ոսկորներով և ամենայն ապականությամբ: Նույնպես և դուք, դրսից մարդկանց արդար եք երևում, մինչ ներսից լի եք կեղծավորությամբ և անօրենությամբ» (Մատթ. 23: 1-6, 27-28):

«Մի անգամ իշխաններից մեկը գալիս է աբբա Սիմեոնին տեսակցության: Գալիս են կղերիկոսները և ասում. «Աբբա՛, պատրաստվի՛ր, քանզի մի իշխան է գալիս քեզ տեսնելու և օրհնություն ստանալու»: Եվ նա ասում է. «Այո՛, հիմա կպատրաստվեմ»: Աբբան հագնում է իր ցնցոտիները, հաց ու պանիր վերցնելով ձեռքը՝ նստում է դռանը և սկսում ուտել: Գալիս է իշխանն իր սպասավորներով և տեսնելով նրան՝ հայիտյում է և ասում. «Ա՛յս է անապատականը, որի մասին լսեցինք»: Եվ նույն պահին էլ ետ է դառնում» («Սուրբ հայրերի վարքն ու կենցաղավարությունը» գրքից, Հատոր Ա, Էջմիածին, 2016):

Խելացի մարդը որևէ մի գործ կատարելու ժամանակ չի մտածում պաշտոն կամ աթոռ ունենալու մասին, դա անում է ինչ որ մի գաղափարի հանդեպ ունեցած իր հավատի համար: Մինչդեռ ցուցամուլը ինքնիրեն անփոխարինելի է կարծում, մտածելով, թե՛ «Ես եմ որ կամ, ինձանից այն կողմ աշխարհ չկա» սկզբունքով: Աշխարհում ոչ մի անփոխարինելի մարդ չկա: Գլխավորը այն է, որ կյանքում ամեն մարդ իմանա իր տեղը:

Այժմ ցուցամուլության ժամանակաշրջան է և ցավով պիտի ասենք, որ այն մեծ տարածում ունի:

Այսօր մեր հասարակությունն, ասես, իր կամքն է թելադրում ամենքին՝ անգամ նրանց, ովքեր ի սկզբանե

դեմ էին դրան: Օրինակ, եթե դասարանում աշակերտներից մեկը Iphone չունի, ուրեմն նա վատն է, կամ եթե գործընկերներից մեկը արձակուրդն անցկացրել է տանը, ոչ՝ Թուրքիայում կամ Եգիպտոսում, ուրեմն նա գծուծ է: Եթե դուք գործարար եք, ուրեմն բոլորն ակնկալում են, որ պետք է մեծ և շքեղ մեքենա վարեք, այլապես դուք դադարում եք հաջողակ բիզնեսմեն լինելուց:

Եթե ձեր բոլոր գումարները ծախսեք ուրիշներին հաճելի լինելու նպատակով, մեկ է կտեսնեք, որ նախանձող մարդիկ և պատճառներ միշտ էլ լինելու են: Չգիտես ինչու՝ բոլորը կարծում են, որ այսպես նրանք նմանվում են հաջողակ և ինքնահաստատված մարդկանց: Մակայն իսկապես հասուն մարդը երբեք չի փորձի իրեն բարձրացնել ուրիշների աչքում: Նա չի կարող պարծենալ իր նվաճումներով, չի նվաստացնի իր աշխատողներին և հաջողություն չի ունենա իրենից ավելի ցածր մարդկանց հաշվին: Որովհետև այդպիսին նայում է ոչ թե ներքե, այլ վեր՝ դեպի երկինք. Ում նա ձգտում է հասնել: Եվ նա լավ հասկանում է, որ նոր հաջողություններ ունենալու համար պետք է մշտապես զարգանալ ու կատարելագործվել: Այսպիսի մարդու կյանքում ամեն ինչ իր ժամանակին է տեղի ունենում, և նա աստիճանաբար առաջ է շարժվում ու ավելի լուրջ և կարևոր հաջողությունների է հասնում:

Հարց է ծագում «Իսկ ինչո՞վ է ցուցամուրթյունը վտանգավոր»:

ա.Մարդը սահմանափակում է իր դրամական հնարավորությունները և իր գումարները ծախսում ոչ թե ինքնազարգացման, այլ ձևական կողմերը պահպանելու համար:

բ.Նա սկսում է ամեն ինչ հաշվարկել, թե՝ «Ինչ կասեն մյուսները» տեսանկյունից: Արդյունքում այնպես է

ստացվում, թե մեր սեփական կարծիքը կախված է ուրիշների մտածելակերպից:

գ. «Թվալու, ոչ թե ապրելու» պահանջը դառնում է մեր կյանքի գլխավոր նպատակը:

Սաղմոսերգուն մեզ խորհուրդ է տալիս հեռու մնալ ցուցամոլությունից. «Համբավ (անուն) ձեռք բերենք ողջ աշխարհով սփռվելուց առաջ» և ամեն ինչ կատարենք Աստծու կամքի համաձայն, որը մեզ թույլ կտա ավելի հանգիստ, խաղաղ ու ընտանեկան երջանկությամբ ապրել: Ամեն:

ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

«Ողորմությունն ու ճշմարտությունը պիտի հանդիպեն,
արդարությունն ու խաղաղությունը պիտի համբուրվեն»
(Սաղմ. 84:11)

Շատ իմաստուն և ուսանելի խոսք է, որն իր մեջ
ընդգրկում է չորս կարևոր կետեր. «Ողորմություն, ճշմար-
տություն, արդարություն և խաղաղություն»:

Ուշադրություն դարձրեք բնաբանիս մեջ օգտա-
գործված Սաղմոսերգուի խոսքին, ըստ որի՝ «Ողորմու-
թյունն ու ճշմարտությունը պիտի հանդիպեն, արդարու-
թյունն ու խաղաղությունը պիտի համբուրվեն», այսինքն
կարծես նա վստահ չէ, որ մարդու համար այնքան կարևոր
այս բարի հատկանիշները կարող են իրար հանդիպել և
կամ համբուրվել, աշխարհում տեղի ունեցող պատերազմ-
ների, նեղությունների ու դժբախտությունների պատճա-
ռով: Ինչո՞ւ: Ի՞նչն է պատճառը, որ այս միությունը կարող
է տեղի չունենալ: Որպեսզի կարողանանք այս հարցին
պատասխանել, վերցնենք ամեն մեկը առանձին, առանձին
և խորհրդածենք յուրաքանչյուրի մասին.

ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ

ա. «Ի՞նչ է ողորմությունը, արդյոք արժի՞ ողորմու-
թյուն տալ: Ո՞վ է ողորմածը»:

Յուրաքանչյուր մեղավոր մարդու խնդրանքն է
Ամենակարող Աստծուն, որ ողորմի և կամ ողորմած լինի
իր մեղքերի նկատմամբ, որովհետև միայն Տերը կարող է
մեզ ողորմել Իր գործությամբ: Եվ որպեսզի կարողանանք
Տիրոջ ողորմությունը շահել, մենք ինքներս այս երկրավոր
կյանքում պիտի լինենք ողորմած, այսինքն՝ Աստծու տված
պարգևներից բաժին հանենք կարիքավորներին, սովյալ-

ներին, նեղն ընկածներին, մի խոսքով ողորմություն տանք: Ողորմություն տալը շնորհ է և Աստծու մոտ ընդունելի:

«...Որովհետև տալով աղքատներին՝ Աստծուն է փոխ տալիս, և միայն տվածը չէ, որ Աստված երկնքի մեջ կվերադարձնի, այլ նաև կփրկի ողորմածին սատանայի թակարդներից, կազատի դժոխքից և երկնքի արքայություն կշնորհի նրան» («Խրատանի ապաշխարության»):

Այս պատմությունը ողորմության մասին է.

«Հովհաննես Ողորմածը, իմանալով, որ Թոռիլուս անունով մի վանական շատ ժլատ ու արծաթասեր է, նրան հրավիրում է հիվանդանոց՝ տեսնելու անդամալույծներին ու հիվանդներին: Այնտեղ նկատելով, որ Թոռիլուսի մոտ փող կա՝ սուրբն ասում է նրան. «Տեր, հարմար ժամանակ է աղքատ եղբայրներին մխիթարելու՝ նրանց ողորմություն տալով»:

Թոռիլուսը վախենում է, որ իրեն կմեղադրեն ժլատության մեջ, սկսում է բաժանել ոսկին, որը կազմում է երեսուն լիտր: Բայց տուն վերադառնալով՝ գղջում է ոսկին բաժանելու համար և այնքան է վշտանում, որ անկողին է ընկնում: Որոշ ժամանակ անց Հովհաննեսը նրան ճաշի է հրավիրում, բայց Թոռիլուսը պատճառաբանում է, թե հիվանդ է: Հովհաննեսը գլխի է ընկնում, թե ի՞նչն է նրա հիվանդության պատճառը, և իր հետ 30 լիտր ոսկի վերցնելով՝ գնում է նրան տեսնելու: «Ես քեզ բերել եմ այն գումարը, որ դու իմ խնդրանքով հիվանդանոցում բաժանեցիր: Վերցրու այն և քո ձեռքով գրիր, որ Աստծուց դրա դիմաց ապագայում քեզ հասանելիք պարգևն ինձ տրվի»:

Թոռիլուսը ոսկին տեսնելով դողում է ուրախությունից և անմիջապես գրում. «Ողորմած Տեր, փոխատուցիր իմ տեր Հովհաննեսին՝ Ալեքսանդրիայի Պատրիարքին, այն ոսկու փոխարեն, որ ես՝ մեղավոր Թոռի-

լուսս բաժանեցի հիվանդանոցում, քանզի նա իմն ինձ վերադարձրեց»:

Գումարը ստանալով Թոռիլուն անկողնուց վեր է կենում, կարծես երբեք հիվանդ չէր եղել, և գնում է Պատրիարքի մոտ ճաշելու:

Հովհաննեսը նրան հյուրասիրելիս իր սրտում աղոթում էր Աստծուն, որ նրան բժշկի այդքան սարսափելի արժաթասիրությունից:

Եվ Աստված լսում է նրա աղոթքը: Հաջորդ գիշեր Թոռիլունը երագում մի հրաշալի տուն է տեսնում, աննկարագրելի գեղեցկությամբ, որի դարպասների վրա ոսկյա տառերով գրված էր. «Թոռիլուն վանականի հավետ հանգստի կացարան»: Նրա սիրտը խլրտում է ուրախությունից, բայց հանկարծ հայտնվում է մի բարետես և ահեղ մարդ ու այդտեղ գտնվող ծառաներին ասում. «Ողջ աշխարհի Տիրակալը ինձ հանձնարարեց ջնջել Թոռիլունի անունը և դրա փոխարեն գրել Ալեքսանդրիայի Պատրիարք Հովհաննեսի անունը, որը նրանից գնեց այս տունը երեսուն լիտր ոսկով: Ուրեմն փոխեք մակագրությունը»:

Թոռիլունը ճշում է ահից ու ափսոսանքից և վեր է թռչում անկողնուց: Հասկանալով, թե ինչ անգին տուն է կորցրել Երկնքում՝ նա սկսում է լաց լինել և ինքն իրեն հանդիմանել արժաթասիրության համար: Հագիվ էր լույսը բացվել, նա գնում է երանելի Հովհաննեսի մոտ, պատմում նրան իր երագի մասին, երգվում ուղղվել, և պահպանել իր երդումը, որովհետև դրանից հետո նա դառնում է առատաձեռն ու ողորմած բոլորի հանդեպ» («Բարեպաշտության Թանգարան»):

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

բ. «Իսկ ի՞նչ է ճշմարտությունը, ո՞վ է ճշմարտախոսը, աշխարհում ճշմարտություն կա »:

Հիսուս ասաց. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և Կյանքը: Ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ՝ ինձանով: Եթե ինձ ճանաչեիք, ապա կճանաչեիք և իմ Հորը, այսուհետև կճանաչեք նրան և տեսել եք նրան» (Հովհ. 14:6-7):

Հետաքրքիր է Պիղատոսի և Հիսուսի երկխոսությունը: «...Պիղատոսը նրան ասաց. «Թե որ այդպես է, ուրեմն դու թագավոր ես» Հիսուս նրան պատասխանեց. «Դու ես ասում, որ թագավոր եմ, բայց ես դրա համար իսկ ծնվել եմ և դրա համար իսկ եկել եմ աշխարհ, որպեսզի ճշմարտության համար վկայեմ: Ամեն մարդ, որ ճշմարտությունից է, իմ ձայնը լսում է: Պիղատոսը նրան ասաց՝ «Ի՞նչ է ճշմարտությունը» (Հովհ. 18. 37-38): Ճշմարտությունը հենց Ինքը՝ մեր Տերն է Հիսուս Քրիստոսը, որը եկավ վկայելու այդ մասին: Եվ ճշմարտախոսն էլ Ինքն է:

Ժողովուրդը մի լավ խոսք ունի. «Ճիշտ խոսողը տեղ չունի» կամ «Ճիշտ խոսողի գլուխը ծակ է»: Ամեն մարդ չի սիրում, երբ իր մասին ճշմարտությունն են ասում, նույնպես պետություններ, կազմակերպություններ, ընկերություններ: Շատ մարդկանց ձեռք չի տալիս լսել ճշմարտության մասին և այդ պատճառով էլ աշխարհում ճշմարտախոս մարդիկ հալածվում են ու տեղ չունեն:

Ապա Սաղմոսերգուն շարունակում է իր խոսքի մեջ արդարության ու խաղաղության մասին:

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արդարությունը երկնքից երևաց: Տերը բարություն պիտի գործի, իսկ մեր երկիրն իր պտուղը պիտի տա: Արդարությունը նրա առջևից պիտի գնա, ճանապարհ տալով նրա ընթացքին» (Սաղմ. 84:12-14),- ասվում է սաղմոսաց գրքում:

գ. Հարց է ծագում. «Ի՞նչ է արդարությունը, արդար մարդիկ կա՞ն: Աստված արդա՞ր է»:

Աստված արդար է և աշխարհին ու մարդուն բարությանմբ ստեղծեց: Հիսուս եկավ Իր Հոր արդարությունը հաստատելու երկրի վրա: Եվ Իր կյանքի ու գոհողության գնով ցույց տվեց մարդկանց արդարության ճանապարհը, ասելով. «Վայ ձեզ, դպիրներ ու փարիսեցիներ, կեղծավորներ.... արհամարհում եք Օրենքի ավելի ծանրակշիռ բաները՝ արդարությունը, ողորմությունը և հավատարմությունը» (Մատթ. 23:23):

Բարեբախտաբար աշխարհում դեռևս արդար մարդիկ կան, որոնք փորձում են ինչ որ չափով պահպանել արդարությունը. թե նրանք ինչքանո՞վ են դա կարողանում անել, ժամանակը ցույց կտա:

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

դ. «Ի՞նչ է խաղաղությունը և Ո՞րն էր Հիսուսի բերած խաղաղությունը»:

Աշխարհի խաղաղությունը փոփոխական է, մի տեղ վերջանում է, մի ուրիշ տեղ նորից է սկսվում: Հիսուս ասաց Իր աշակերտներին. «Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ձեզ չեմ տալիս այնպես, ինչպես այս աշխարհն է տալիս. ձեր սրտերը թող չխռովեն և չվախենաք...» (Հովհ. 14:27):

Հիսուսի բերած խաղաղությունը՝ Հոգու խաղաղությունն էր, որը Նա պատգամ թողեց Իր աշակերտներին ու հետևողներին:

Փորձենք այնպես անել, որ այս չորս կարևոր կետերը իրենց արժանի տեղը գտնեն մեր կյանքում. «Ողորմությունն ու ճշմարտությունը հանդիպեն, արդարությունն ու խաղաղությունը համբուրվեն», որպեսզի բարիք բերեն աշխարհին, մեր ընտանիքներին ու մեր ժողովրդին: Ամեն:

ԹԱՐԳՄԱՆԻՉ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

«Որք զարդարեցին տնօրինաբար զիմաստ անեղին,
հաստատելով յերկրի զգիր կենդանի...» (Շարական)
«Ուրբեր տնօրինաբար զարդարեցին Անստեղծի իմաստը
երկրում հաստատելով Կենդանի Գիրը...»

Հոկտեմբեր ամիսը նվիրված է Հայ Մշակույթին:
Տոնն է նաև մեր Սուրբ Թարգմանիչ Վարդապետների՝
Սահակի և Մեսրոպի, Եղիշե Պատմիչի, Մովսես Քերթովի,
Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու և Ներ-
սես Կլայեցու (Շնորհալի): Թարգմանիչ ընդհանուր անվան
տակ հայտնի են Սբ. Մեսրոպ Մաշտոցին և Սբ. Սահակ
Պարթևին աշակերտած ավելի քան հարյուր սաներ:

Մինչև 5-րդ դար Հայ Եկեղեցին դեռևս չէր հայացել,
որովհետև չունեի իր սեփական գիրն ու գրականությունը
և նույնիսկ Հայաստանում քրիստոնեությունը պետական
կրոն հռչակվելուց մեկ դար հետո էլ, հակառակ որ վան-
քերում ու եկեղեցիներում կանոնավոր արարողություն-
ներ էին կատարվում, ընթերցվում էր Սուրբ Գիրքը, բայց
ժողովրդի համար անհասանելի էր և անհասկանալի, քա-
նի որ եկեղեցական լեզուն ասորերենն էր: Աստծու խոս-
քերը լսում էին, բայց շատ շատերի սրտերին չէր հասնում:

Սբ. Մեսրոպ Վարդապետի, Սբ. Սահակ Պարթև
Կաթողիկոսի և Վռամշապուհ թագավորի նախաձեռնու-
թյամբ ու Աստծու կամքով, ստեղծվեցին հայ գրերը: Ապա
սկսվեց Սուրբ Գրքի ամբողջական թարգմանությունը, որը
մշակումներով ու լրացումներով տևեց մոտ 30 տարի: Սբ.
Մեսրոպ Մաշտոցը այն անվանեց Աստվածաշունչ, այն
մտածումով, որ Աստծու շունչը կա Սուրբ Գրքի ամեն մի
տողի մեջ (Բ. Տիմ. 3:16): Աստվածաշունչը հայերեն էր և
Աստված արդեն խոսում էր մեր ոսկեդենիկ լեզվով: Նրանց

կատարյալ թարգմանության շնորհիվ Աստվածաշնչի հայերեն օրինակը բոլոր ազգերի կողմից ընդունվեց և անվանվեց Թագուհի Թարգմանությանց, այսինքն՝ ԹԱԴԳ-ՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱԳՈՒՀԻ ու 5-րդ դարը իրավամբ կոչվեց Հայ Ժողովրդի ՈՍԿԵԴԱՐԸ:

Թարգմանիչ Վարդապետները իրենց կյանքով դարձան հայ ժողովրդի թարգմանը Աստծու մոտ: Նրանք դեռ շարունակում են իբրև փարոս լուսավորել հայոց ապագան: Թարգմանչաց տոնը հայ հոգու պանծացման տոնն է:

Մեր եկեղեցու հայրերն այսօր էլ կարծես խոսում են մեզ հետ: Մբ. Սահակը սովորեցնում է մեզ մեծ լինել և խոնարհ, Մբ. Մաշտոցը՝ չվախենալ և աղոթքով հաղթահարել դժվարությունները, Եզնիկը՝ ուղեցույց է հավատը պաշտպանելու, Եղիշեն՝ հայրենասիրությամբ է լցնում մեզ, Խորենացին՝ ուսուցանում է հայոց պատմությունը, Շիրակացին՝ առաջնորդում է բնության և տիեզերքի գաղտնիքների մեջ, Գրիգոր Նարեկացին՝ մեր հոգին բարձրացնում է դեպի Աստված, Շնորհալին՝ հայ հավատի բանաձևն է տալիս և սովորեցնում Աստծու փառքը երգել ... «Թարգմանիչներ» անվանված հոգևոր մշակութային հոգր շարժումն անկրկնելի երևույթ էր հայոց պատմության մեջ: Թարգմանիչները հիմք դրեցին ազգային ինքնություն գրականության, ճարտարապետության, պատմագրության, բժշկության, փիլիսոփայության, աստվածաբանության, երաժշտության, որով մենք քաղաքակիրթ աշխարհի լիիրավ անդամը դարձանք: Այդ նրանք էին, որ գրեթե ոչնչից ստեղծեցին ինքնատիպ մի մշակույթ, որ ուրիշ ոչ մեկ ազգի հետ չես շփոթի: Այդ նրանց ջանքերով էր, որ ազգը համախմբվեց միասնական մեկ հավատի շուրջ և կարողացավ ետ վանել պատմության դառը փորձությունները:

Հազար ու մի փոթորիկներ անցան հայ ժողովրդի վրայով, բայց ոչ մի արհավիրք չկարողացավ հայ ժողովրդի հոգուց խլել իր սեփական մայրենի լեզուն և իր արյունով գնված քրիստոնեական հավատը, որ մեր պապերը կտակեցին մեզ: Նրանք կտակեցին չբաժանվել մեր Մայր Եկեղեցուց, որ ծննդավայրն է հայ լեզվի և հայ մշակույթի:

Այսօր մեզ մնում է աղոթել Աստծուն և մաղթել, որ Թարգմանչաց ոգին ու նրանց շնորհները մնան հայ ազգի յուրաքանչյուր անհատի հետ:

«Առանց մեսրոպյան ոճով մարդակերտումի խախուտ են մեր ազգային կյանքի բոլոր կերտվածքները, ինչպես խախուտ են աշխարհի ավագահիմն ու հողաշեն կառույցները ...: Հայ Գիրքը մյուռոն է մեր ժողովրդի գավակների համար: Նա, որ Հայ Գիրք է կարդում, մյուռոնվում է հայությամբ: Հայաստանը միայն հող ու քար չէ, վանք ու եկեղեցի չէ, խաչքար ու հուշարձան չէ, բերդ ու պարիսպ չէ, կամուրջ ու աղբյուր չէ, այլ մագաղաթ ու գիրք է», - ասում է հոգեւույս Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Իսկ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանցը շարունակում է. «Հայ տառերի գյուտի հետ Աստվածաշնչի թարգմանությունը մեր երանելի հայրերի՝ Սուրբ Սահակի և Սուրբ Մեսրոպի ու նրանց աշակերտների հետ, Մերձավոր Արևելքի ազգերի համար ևս նշանակալից պատմական երևույթ էր: Նրանց և հաջորդող սերունդների ձեռքով թարգմանվել են գրեթե բոլոր նշանավոր հայրերի գործերը: Աստվածաշնչի թարգմանությունը միայն մի գլուխգործոց էր՝ դասական հստակ գրաբարով, հայ լեզվի հարստության ամենամեծ գանձարանը...Հիշատակելի է վերջապես, մեր հոգևոր աշխարհի բանաստեղծությունը մեր շարականների հեղինակների

հետ՝ Մբ. Գրիգոր Նարեկացին, Մբ. Ներսես Շնորհալին և ուրիշները...»:

Իր խոսքն է ասում նաև մեր հայրենի գրողներից՝ Ղազարոս Աղայանը.

«Բավական չի ազգասեր և հայրենասեր լինելը: Պէտք է մի քիչ էլ լեզվասեր լինել, պէտք է սիրել, պաշտել, գգվել հարազատ լեզուն. այս սերը միայն մեր առջև կբացի լեզվի անհատնում ճոխությունը, նրա նրբությունը և քաղցրությունը: Եթե բոլոր հայ մայրերը այնքան հայրենասեր և ազգասեր լինեն, որ իրենց զավակների հետ մայրենի լեզվով խոսեն, նրանց սրտում ազգային պատվասիրություն ու հայրենիքի սեր թողնեն, էլ այնուհետև ի՞նչ մահ կարող է սպառնալ մեզ»:

Թարգմանիչ վարդապետները իրենց անսահման ջերմությամբ և հավատի լույսով ցրեցին տիրող խավարը ու սիրով և ջերմությամբ լցրեցին հայ մարդու հոգին: Նրանց տքնաջան աղոթքի ու նվիրումի շնորհիվ Աստվածաշունչ մատյանը հայերեն թարգմանվեց և հայը առաջին անգամ լինելով հնարավորություն ստացավ իր մայրենի լեզվով կարդալու Աստծու կենդանի խոսքը: Նրանք իրենց լայն գործունեությամբ նպաստեցին Հայոց աշխարհի հոգևոր-մշակութային զարթոնքին:

Դժվար է պատկերացնել, որ եթե 5-րդ դարում չլիներ Թարգմանչաց շարժումը, մատենագրական ինչպիսի անհեղինակ կորուստ կարող էինք ունենալ: Մեր Սուրբ Հայրերը ոչ միայն հայերենի թարգմանեցին Աստվածաշունչ Մատյանը, այլ նաև բազում սուրբգրային մեկնություններ, մեծ հեղինակների գործեր. այս ձևով մեզ հիշատակ թողեցին հայրախոսական մի ամբողջ հսկայածավալ շտեմարան: Փառք ու պատիվ նրանց:

Հոգեւոյս Գարեգին Ա.-ը շարունակում է. «Դարձեք դեպի մեր արմատները, դարձեք դեպի մեր ինքնությունը,

դարձեք դեպի մեր արժանապատվությունը, դարձեք դեպի մեր արժեքները, որոնք խորթ չեն, հարազատ են, մարդկային քաղաքակրթության անկորնչելի արժեքներին, բայց մերն են, մեր արյանը խառնված, մեր հայրերի հոգով կյանք առած, մեր նախնիների անուններով մրկըրտված:... Այդ դարձով մենք ավելի մոտ կլինենք Աստծուն... Եկեղեցի, մշակույթ, ազգ, հայրենասիրություն այս բոլորը օդում կմնան, մինչև որ չմարդանան, կյանք չստանան մեր կյանքի միջից՝ մեր ժողովրդի կյանքի սիրույն»:

Այսօր մեզ մնում է աղոթել Աստծուն և մաղթել, որ Թարգմանիչ Վարդապետների ոգին ու նրանց շնորհները մնան հայ ազգի յուրաքանչյուր անհատի մեջ, ծիլ տան ու ծաղկեն, աճեն ու բազմանան՝ ի փառս մեր ժողովրդի և ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու: Ամեն:

ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ

«...Եվ մի տար փորձության, այլ փրկիր մեզ չարից»
Տերունական Աղոթք

Հիսուսի տված «Հայր Մեր» աղոթքը ամեն անգամ արտասանելիս հանդիպում ենք այս խոսքին, որը զգուշացնում է մեզ հեռու մնալ չարի փորձությունից, չար, որը ոչ մի բանի առջև կանգ չի առնում, այլ ամեն բոլոր և ամեն պահ փորձում է մեզ դարձնել մեղավոր, մեղքի մեջ թաթախված կտրված Աստծու հովանուց:

Չարը, սատանան նույնիսկ Հիսուսին փորձեց, երբ անապատում քառասուն օր ոչ խմեց, ոչ էլ կերավ: Եվ Սատանան նրան ասաց. «Եթե Աստծո Որդի ես, այդ քարին ասա, որ հաց լինի»: Հիսուս նրան պատասխանեց. «Գրված է. «Միայն հացով չէ, որ կ'ապրի մարդ, այլ՝ Աստծու ամեն խոսքով»: Հետո սատանան Նրան փորձեց ևս երկու անգամ: Բոլոր փորձությունները հաղթահարելով և պատասխանները տալով Հիսուս նրան ասաց. «Ինձանից հեռու գնա, սատանա, որովհետև գրված է՝ պիտի երկրպագես քո Տեր Աստծուն և միայն Նրան պիտի պաշտես» (Մատթ. 4:10):

Այս պատմությունը մի ճգնաժամի մասին է, որին չարը փորձության է ենթարկում.

«Մի օր միջօրեին, երբ շոգը հասել էր իր գագաթնակետին,- պատմում է աբբա Եղիան,- իմ քարանձավի դուռը ծեծեցին: Դուրս գալով ես տեսա մի կնոջ և հարցրեցի նրան. «Քեզ ի՞նչ է պետք»: «Հայր իմ, ես էլ եմ ապրում նույն կյանքով, ինչ դու: Իմ փոքրիկ քարանձավը քոնից մի քարնկեցի հեռավորության վրա է գտնվում»:

Եվ նա ցույց տվեց ինձ հարավային կողմում գտնվող իր քարանձավը:

«Անցնելով անապատով,- շարունակեց նա,- սաստիկ շոգից ես ծարավեցի, խնդրում եմ ինձ մի քիչ ջուր տուր»։ Դուրս բերելով գավաթը՝ ես տվեցի նրան։ Նա էլ խմելով հեռացավ։ Իսկ նրա հեռանալուց հետո սատանան իմ դեմ մարմնավոր սաստիկ պատերազմ սկսեց՝ անմաքուր խորհուրդներ բերելով մտքիս։ Այդ պատերազմից հյուծվելով և էլ անկարող լինելով հանգցնել մարմնավոր կրակը, ես վերցրեցի գավազանս ու ելա քարանձավից, այն ժամանակ երբ շոգից նույնիսկ քարերն էին սաստիկ տաքացել։ Ես շտապեցի գնալ կնոջ մոտ՝ մարմնավոր այդ կրքին բավարարություն տալու համար։ Ես համարյա մոտեցել էի նրա քարանձավին, իսկ կիրքն այրում էր ինձ։ Եվ հանկարծ ես ընկա զմայլանքի մեջ և տեսա, որ հողը բացվեց ու կլանեց ինձ։ Եվ ահա տեսնում եմ, որ ամենուր փռված են մեռած մարմիններ՝ նեխած ու քայքայված, որոնք անտանելի գարշահոտություն էին արձակում։ Մեկը, որ փայլում էր սրբությամբ, մատնացույց արեց այդ մարմինների կողմը և ասաց․ «Ահա սա կնոջ մարմինն է, իսկ սա տղամարդու։ Բավարարի կիրքդ, ինչպես կուգես և ինչքան կուգես։... Եվ այսպիսի հաճույքի համար տես, թե որքան սխրագործություններ ես ցանկանում կորցնել։ Հանուն ինչ-որ մեղքի ցանկանում ես քեզ զրկել երկնքի արքայությունից։ Օ, թշվառ մարդկություն։ Մեկ ժամվա մեղավոր հաճույքի համար դուք պատրաստ եք կորստի մատնել ձեր ամբողջ կյանքի սխրանքները։

Իսկ այդ ընթացքում ահագնացող գարշահոտությունից ես ընկա գետին։ Մոտենալով՝ սուրբ այրն ինձ վեր բարձրացրեց և սանձեց իմ մեջ բորբոքված այդ պատերազմը։ Եվ ես վերադարձա իմ խուցը՝ գոհություն հայտնելով Աստծուն»։

Պողոս առաքյալի թղթերից մեկում ասված է. «Ինքը չարչարվեց՝ փորձն առնելով. կարող է և փորձվողներին

օգնական լինել» (Եբր. 2:18): Այս բառերով Պողոս առաքյալը Տեր Հիսուս Քրիստոսի մասին է խոսում. Ով փորձվեց և փորձվողներին կարող է օգնել: Իրոք, մեր Տերը կրեց երկրային կյանքի բոլոր նեղությունները, ողջ տառապանքը, ընդհուպ՝ խաչելությունը: Հիսուս մարդկանցից ոչ միայն մարմնավոր տառապանք, նեղություն, զրպարտանք, անարգություն ունեցավ, այլ սատանայից էլ նեղություն կրեց:

Սուրբ Հայրերն ասում են, որ երբ մեզ վրա որևէ փորձություն է հասնում, ամենից առաջ մենք ինքներս մեզ պիտի նախատենք: Մենք պետք է հիշենք, որ մեղավոր ենք և դրա համար էլ ամեն տեսակ նեղությունների ենք արժանի: Պողոս առաքյալն իր թղթերից մեկում ասում է. «Աստված ձեր կարողությունից ավելի փորձության մեջ ձեզ չի գցի» (Ա Կորնթ. Ժ, 13): Դրա համար էլ, երբ փորձություններ են վրա հասնում, պետք է հիշենք, որ մեր ուժերից վեր փորձություն չենք ունենալու:

Երբեմն մենք հուսալքության մեջ ենք ընկնում և խռովքն է մեր հոգին պարուրում, որովհետև մտածում ենք, որ փորձությունները մեր ուժերից վեր կլինեն: Բայց իրականում ուժերից վեր փորձություններ չեն ուղարկվում և Տերը, դրանք ուղարկելով, մխիթարություն էլ է մեզ տալիս, իսկ անհրաժեշտ պահին փորձությունից ընդհանրապես ազատում է:

Ռուս Ուղղափառ Եկեղեցու վարդապետներից Բորիս Խոլչևն ասում է. «Փորձությունները ոչ միայն մարդու կյանքն են ուղեկցում, այլ դրանք մահվան ժամանակ էլ են անխուսափելի: Մահվան սարսափելի ժամին փորձություններն են մարդու հոգին պատում: Հոգևոր մի գիրք կա՝ «Անտեսանելի պատերազմ»: Այդ գրքում պատմվում է երեք փորձությունների մասին, որոնք մարդուն իր մահվան ժամին են հասնում:

Առաջին փորձությունը հավատքի կասկածներն են: Հանկարծակի Աստծո գոյության, Քրիստոս Փրկչի Աստվածամարդության և հավատքի կրոնական այլ հարցերի վերաբերյալ կասկածներ են ծագում: Այս կասկածները սուր նետի պես մարդու հոգին խոցում են: Իսկ երբեմն Աստծո և մարդու վերաբերյալ հայհոյական մտքերն են դրանց միանում:

Երկրորդ փորձությունը վախն է: Այն պարուրում է հոգին, որը մահացողին մոտեցող դիվական խավար գնդերի մերձենալն է զգում: Այդ ժամանակ դները մարդու հոգին վախով են ջանում պարուրել:

Վերջապես մահվան ժամի երրորդ փորձությունը հուսալքությունն է: Երբ մարդը հոգին ավանդելուն է մոտ, դները հուսալքության մեջ են աշխատում նրան գցել: Նրանք ասում են. «Դու չես փրկվի: Քեզ համար դարձ չկա: Միևնույն է՝ դու կորած ես»: Եթե մարդը համաձայնի դիվական այդ ներշնչումներին, նրան հուսալքությունը, փորձությունն է պատում:

Այս երեք փորձություններն են մահվան ժամին մարդու վրա հասնում. հավատքի մեջ կասկած և հայհոյիչ մտքեր, վախ, հուսալքություն և թերահավատություն փրկության համար: Այն խոստովանահայրերը, ովքեր վերջին խոստովանությունն են ընդունում, ովքեր մահացողներին ճանապարհ են դնում մահվանից մեկ օր կամ մի քանի ժամ առաջ, հավաստում են, որ այս երեք փորձությունները մահվան ժամին իսկապես փոթորկում են մարդուն: Նրանք կարող են վկայել, որ իսկապես խավարի ուժերը մահացողներին կա՛մ հավատքի կասկածներ, կա՛մ վախ, կա՛մ էլ փրկության վերաբերյալ հուսալքություն են ներշնչում» (Բորիս Արքիմանդրիտ Խուլչև. «Զրույցներ Տերունական աղոթքի մասին, խնդրվածք վեցերորդ»):

Իսկ Հույն Ուղղափառ եկեղեցու եպիսկոպոսներից, ով Հույն Եկեղեցու սրբերի շարքն է դասվել, Թեոփան Արգելականն ասում է. «Մաքսավորությունները, որոնց մարդը հանդիպում է, յուրատեսակ մի փորձություն են: Դրանցում թշնամիները նույնպես փորձության են ենթարկում մարդուն, աշխատում են տարբեր խարդավանքներով Աստծուց հեռացնել նրան: Եթե մարդը երկրային կյանքի ընթացքում սովորել է փորձություններին դիմանալ, ապա նա մաքսավորություններում էլ փորձչին կհաղթի: Իսկ եթե կյանքում փորձություններին տեղի է տալիս, ապա մաքսավորություններում կպարտվի:

Եթե մենք փորձություններն անհրաժեշտ ձևով կրենք, աղոթել սովորենք, ապա մեր կամքը, գործությունը, առ Աստված ձգտումը կամրապնդվի, մենք դիմանալու գործություն կստանանք: Իսկ փրկվելու, Աստծուն մոտենալու ցանկությունն ամեն մի մարդ ունի: Այդ ցանկությունը սատանան ուզում է փորձությունների, նեղությունների միջոցով վերացնել»:

Սատանան արթուն է և մշտապես մեզ տանում է փորձության: Ուրեմն, պետք է հավատի մեջ ավելի գորանանք, մշտապես Աստծուն կանչենք օգնության: Հիսուս հաղթահարեց սատանայի փորձությանը, երբ անապատում քառասուն օր ծոմ պահեց: Վերջին հարցումից հետո, Նա սատանային ասաց. «Ինձանից հեռու գնա, սատանա»: Մենք էլ ամեն անգամ, երբ այսպիսի փորձության առջև կգտնվենք, երբ կզգանք, որ այլևս փրկվելու ճանապարհ չկա ու չարը պիտի իր կամքը թելադրի և շեղի մեզ Աստծու ճշմարիտ ճանապարհից, Հիսուսի նման ասենք. «Տիրոջ անունով հրամայում ենք քեզ, մեզանից հեռու գնա, սատանա և հանգիստ թող մեզ», այն ժամանակ Աստված մեզ կվերցնի Իր ամուր ձեռքերի վրա ու մենք կզգանք հոգեպես թեթևացած, հանգստացած և ամրացած: Ամեն:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

«Իսկ եթե խոստովանենք մեր մեղքերը, հավատարիմ է նա և արդար՝ մեր մեղքերը մեզ ներելու և մաքրելու համար մեզ ամեն անհրաժեշտությունից» (Ա. Հովհ. 1:9):

Այս խոսքը վերցրել եմ Հովհաննես Առաքյալի Ընդհանրական առաջին թղթի 1-ին գլխի 9-րդ համարից, ուր Առաքյալը խոսում է խոստովանության մասին:

«Ի՞նչ է խոստովանությունը: Ինչպե՞ս պիտի խոստովանվենք, ինչո՞ւ պիտի խոստովանվենք, ինչի՞ց պիտի խոստովանվենք, ո՞ւմ պիտի խոստովանվենք, քանի՞ անգամ պիտի խոստովանվենք, խոստովանությունը անհրաժեշտությո՞ւն է»:

Երկու առաքյալներ խոսում են մեղքերի մասին: Հակոբոս Առաքյալն ասում է. «Ձեր մեղքերը միմյանց խոստովանեցեք և միմյանց համար աղոթք արեք, որպեսզի բժշկվեք» (Հակ. 5:16): Իսկ Հովհաննես Առաքյալն ասում է. «Իսկ եթե խոստովանենք մեր մեղքերը, հավատարիմ է նա և արդար՝ մեր մեղքերը մեզ ներելու և մաքրելու համար մեզ ամեն անհրաժեշտությունից» (Ա. Հովհ. 1:9):

Խոստովանություն նշանակում է մի սխալ գործված արարք գիտակցել ու ընդունել այնպես, ինչպես որ կատարված է, նման այն հիվանդին, որն ընդունում է, թե հիվանդ է և ապա դիմում է բժշկի, որպեսզի ստանա համապատասխան բուժում: Այսինքն՝ գիտակցել և ընդունել, որ մեղավոր ես: Մեղքի գիտակցություն:

Խոստովանությունը սկսվեց մկրտությամբ: Մատթեոս Ավետարանիչը պատմում է, թե Հովհաննես Մկրտիչը սկսեց քարոզել և ապաշխարության հրավիրել ժողովրդին. «Այն ժամանակ նրա մոտ էին գնում բոլոր երուսաղեմացիները, ամբողջ Հրեաստանն ու Հորդանանի շրջակայքի ժողովուրդը, մկրտվում էին նրանից Հորդա-

նան գետում և խոստովանում էին իրենց մեղքերը» (Մատթ. 3:5-6):

Ամեն քայլափոխի մեղք ենք գործում, ուզելով կամ չուզելով, գիտակցաբար կամ անգիտակցաբար: Կարևորն ու զլխավորը այն է, թե արդյոք մենք զոջո՞ւմ ենք մեր կատարածի համար, ապա փորձո՞ւմ ենք այդ մեղքը քավել և կամ թողություն ստանալ:

Այստեղ հարց է ծագում, թե՝ «Ո՞վ կարող է թողություն տալ մեր մեղքերին, Ո՞վ ունի այդ իշխանությունը»:

Հիսուս ամեն իշխանություն ունեւ մեղքերին թողություն տալու: Եվ նկատի առնելով, որ Ինքը մարմնապես ներկա չպիտի լինի մեր մեջ, երկրի վրա, հիմնեց Իր Խորհրդական Մարմինը՝ Եկեղեցին, որպեսզի շարունակի Իր սրբազան ու աստվածային գործը: Իբրև հետևորդներ նշանակեց Իր առաքյալներին, որոնց ուղարկեց մասնավոր մի առաքելությամբ. «Ինձ է տրված ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա, ինչպես Հայրը ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում» (Մատթ. 28:18): Իր աշակերտներին տված իշխանությունը ավելի հստակեցրեց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ որ կապեք երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում: Եվ ինչ որ արձակեք երկրի վրա, թող արձակված լինի երկնքում» (Մատթ. 18:18) և «Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի, եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (Հովհ. 20:23):

Առաքյալներից շարունակաբար այդ իշխանությունը փոխանցվեց Եկեղեցու հոգևոր հայրերին: Այսօր մեր եկեղեցիներում, երբ հավատացյալը ուզում է խոստովանվել իր մեղքերը, Սուրբ Պատարագի ընթացքում քահանան կարդում է զանազան ընդհանուր մեղքեր և ապա թողություն է տալիս: «Եվ ես ինձ տրված քահանայական իշխանությամբ ու մեր Տիրոջ՝ Հիսուսի Իր աշակերտներին տված հրամանի գործությամբ, թե՝ «ինչ որ կապեք երկրի

վրա՝ կապված պիտի լինի երկնքում և ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված պիտի լինի երկնքում», արձակում եմ քեզ քո բոլոր մեղքերից, լինեն դրանք մտքով, խոսքով թե՛ գործով, Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: ...»: Քահանան շեշտում է, թե Հիսուսի Իր աշակերտներին տված հրամանի գործությամբ և իր ունեցած քահանայական իշխանությամբ է, որ արձակում է հավատացյալին իր մեղքերից: Մեղքերի խոստովանությունը, որը մեր եկեղեցում կատարվում է հավաքական կերպով, միշտ էլ կարող ենք ունենալ, դրա համար ժամանակ չկա, քանի որ ամեն քայլափոխի մեղք ենք գործում: Դժբախտաբար կա մի իրականություն, որը չենք կարող անտեսել. այսօր ամեն մարդ, որը քիչ թե շատ ծանոթ է հոգևոր Խոսքին, իրեն է վերապահում այդ «իշխանությունը», որը չունի:

Մեղքերի խոստովանությունից հետո թողություն ստացած հավատացյալը մոտենում է Սուրբ Հաղորդության Խորհրդին և ստանում Հիսուսի մարմինն ու արյունը:

Աբրոսիոսը ասում է. «Երբ մարդու մեղքերը ծանոթ են Աստծուն, ինչի՞ց պիտի ամաչի դրանք խոստովանելուց. այն հոգին ազատում է մահվանից, բացում է երկընթի դռները և մեզ փրկության հույս է բերում»:

Սրբերը եթե սրբացան, պատճառն այն է, որ նրանք Աստծու և աշխարհի առջև ճշմարտությունը խոստովանեցին իրենց արյան գնով իսկ: Խոստովանությունը կրոնական մի օրենք է: Աստծու առջև ոչինչ ծածուկ չպիտի մնա;

Հույն միտրոպոլիտ Աթանաս Լեմենոսին ասում է. «Մենք մեղավոր ենք այն բանի համար, որ Քրիստոսին չճանաչող մարդիկ կան և վիթխարի պատասխանատվություն պիտի զգանք այդ մարդկանց հոգիների համար: Մենք արդարացի չենք մեր այն եղբայրների հանդեպ, որոնք մեր մեջ սրբություն չեն տեսնում, ուստի և Ավետարանին չեն մոտենում: Ուրեմն այն, ինչը որ մեզ իրա-

պէս անհրաժեշտ է, Եկեղեցու մեջ սրբությունն է և սուրբ մարդիկ:

Ես խոստովանահայր դարձա ու սկսեցի մարդկանց խոստովանեցնել, երբ դեռ Աթոսում էի ապրում ու շատ երիտասարդ էի: Մի անգամ ծեր Պաիսիոսին հարցրեցի, թե ի՞նչ հարցեր ուղղեմ այն մարդկանց, ովքեր խոստովանության են գալիս: Բանն այն է, որ նրանցից ոմանք խնդրում էին, որ ես իրենց հարցեր տամ և հետո իրենք պատասխանեն: Ծեր Պաիսիոսն ասաց.

Հարցեր տալուց խուսափիր, բայց եթե մարդիկ շատ են համառում, ապա առաջին հարցը թող լինի այն, թե մարդն արդյոք սիրո՞ւմ է Աստծուն, ի՞նչ հարաբերություններ ունի Նրա հետ: Հետո հարցրու, թե այդ մարդն իր կողքի մարդկանց, ինքն իրեն և իրեն շրջապատող ամեն բան սիրո՞ւմ է արդյոք:

Որովհետև հենց Տերն է ասում, որ առաջին ու ամենամեծ պատվիրանը Աստծուն ողջ սրտով սիրելն է, իսկ դրան կմիանան և մնացածը:

Աթոսում ես այսպիսի մի պատմություն եմ լսել. ոմն վանականի խոստովանահայրը մահանում է և նա ծերի շորերը գերանին հագցնելով, ասել է. «Քանի որ այլևս խոստովանահայր չունեմ, այս գերանին եմ հարցնելու»: Այդպես էլ սկսում է անել ու մի անգամ, երբ ինչ-որ բան է հարցնում, գերանից լսում է՝ «Ոչ, այդպես չանես»:

Այնպես որ Տերը գործում է մեր հավատին համապատասխան... Վա՛յ մեզ, եթե հենվենք ոչ թե Աստծու, այլ մարդկանց վրա:

Պատճառներից մեկը, որ ես անձամբ եմ մարդկանց խոստովանեցնում, այն է, որ չեմ ուզում գրասենյակում նստել ու ինչ-որ կառավարիչ լինել: Խոստովանությունն ամենապարզ միջոցն է իմանալու, թե ինչի՞ մասին են մտածում մարդիկ, ինչո՞վ են մտահոգ, ինչ խնդիրներ

ունեն: Ես շատ եմ ուրախանում, երբ մարդիկ հանձին իրենց եպիսկոպոսի հայր են տեսնում: Ուրախանում եմ, երբ գիտեմ, որ մարդիկ կարող են գալ եկեղեցի, գտնել ինձ և պատմել իրենց խնդիրների մասին: Առաջնորդարան՝ իմ գրասենյակը, ամիսը մեկ-երկու անգամ եմ գնում: Այնտեղ ես ինձ քաղաքապետի պես եմ զգում, ուստի նախընտրում եմ լինել եկեղեցում ու մարդկանց հետ տեսնվել: Եկեղեցին եպիսկոպոսի բնական վայրն է»:

Աշխարհային իմաստով խոստովանությունը ծիծաղելի բան է, որովհետև կրոնը իբրև դիմակ օգտագործողների համար էականը դիրքն է և ոչ թե սրբությունը: Նրանց համար ճշմարտությունը խոստովանվելը մի կորած ճակատամարտ է, որովհետև նյութի և դիրքի գործությունը կարող է խեղաթյուրել այդ ճշմարտությունը: Բայց ոչ մեկը չի կարող ուրանալ, թե վերջնական հաղթանակը միշտ պատկանում է ճշմարտությանը հոգեկան արիությամբ և անկեղծ խոստովանությամբ:

Մեղքը խավար է, իսկ խոստովանությունը՝ լույս: «Աստված լույս է, և նրա մեջ խավար չկա, բոլորովին չկա» (Ա. Հովհ. 1:5): Խոստովանվողը լույսի մեջ է ապրում, լույսի մեջ ապրողը հոգեպես հաղորդակցվում է Աստծու հետ:

Ճշմարտության խոստովանությունը մեծ նկարագրի առաքինությունն է: Իսկ մեղքերի խոստովանությունը սրբության առաքինությունն է:

Կան հարյուրավոր մեղքեր, սակայն ուզում եմ թվել մի քանի մեղքեր, որպեսզի պարզ լինի, թե ինչպիսի՞ մեղքերի է, որ Քահանան իր իշխանությամբ թողություն է տալիս. խորամանկություն, անզգամություն, շռայլություն, զեխություն, ժլատություն, ատելություն, նենգություն, արվամոլություն, իզամոլություն, անասնական, գրաստական. պոռնկական խորհրդով, հարբեցողություն, անեծք, տրտունջ, բամբասանք, հայհոյություն, գողություն,

սպանություն և այլն: Այս բոլորից բացի մեր նախահայրերը ընտրել ու առանձնացրել են յոթը մահացու մեղքեր՝ հպարտություն, նախանձ, բարկություն, ծուլություն, ազահություն, որկրամոլություն (շատակերություն), բղջախոհություն (ցանկասիրություն) և սրանց տեսակները:

Քահանայի խոստովանության արձակման աղոթքը.

«Թող Մարդասերն Աստված ողորմի և թողություն շնորհի քո բոլոր մեղքերին, նրանք, որոնք խոստովանվեցիր և նրանք, որոնք մոռացար: Եվ ես ինձ տրված քահանայական իշխանությամբ ու մեր Տիրոջ Հիսուսի Իր աշակերտներին տված հրամանի գործությամբ՝ թե՛ «ինչ որ կապեք երկրի վրա՝ կապված պիտի լինի երկնքում և ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված պիտի լինի երկնքում», արձակում եմ քեզ քո բոլոր մեղքերից, լինեն դրանք մտքով, խոսքով թե՛ գործով, Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով ու հանձնարարում եմ, որ հաղորդակից մնաս Սուրբ Եկեղեցու խորհուրդներին, որպեսզի ինչ բարի գործ, որ անես՝ ծառայի քո օգտին և հավիտենական կյանքի փառքի համար»: Ամեն:

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ

«Միայն ձեր շահը մի փնտռեք, այլ յուրաքանչյուր ոք՝
ընկերոջ շահն էլ» (Փիլ.2:4):

Այս խոսքը ես վերցրել եմ Պողոս Առաքյալի Փիլիպպեցիների ուղղված նամակի 2-րդ գլխի 4-րդ համարից, ուր Առաքյալը խոսում է այն մասին, որ ամեն մարդ միայն իր շահը չպիտի փնտրի, այլ նաև՝ ընկերոջը: Մի խոսքով Առաքյալը մեր ուշադրությանն է հանձնում մարդկանց հետաքրքրության մասին:

Երկու տեսակ հետաքրքրություն կա՝ լավ և վատ: Վատ հետաքրքրությունը չար նկարագրի արդյունք է և պարզապես հավատի պակասությունն է: Ըստ Առաքյալի՝ աշխատել չսիրողների և ծուլների արարք է: Վատ հետաքրքրությունից տարվածները «Միաժամանակ և անգործության են վարժվում՝ շրջելով տնից տուն. և ոչ միայն դատարկապորտներ են, այլև շատախոս և ավելորդ հետաքրքրասեր. և խոսում են բաներ, որ պետք չէ խոսել» (Ա. Տիմ. 5:13):

Առաքյալը դատապարտում է այս դիրքը: Հավատացյալը հեռու պիտի մնա նման պարագաներից: Հեռու մնալու պայմանը այն է, որ ամեն մարդ իր գործով պիտի զբաղվի և հետաքրքրվի լավ բաներով, որոնք իրենց կազնրվացնեն ու կզարգացնեն:

Հետաքրքրությունը մարդու ներաշխարհից բխած մի երևույթ է: Ամեն մարդ հետաքրքրվում է իր նախասիրություններով:

Ամեն համայնքում էլ կան մարդիկ, որոնք կարծես թե իրենց գործով ու տնով չեն զբաղվում, այլ հետաքրքրվում են ուրիշների կերածով ու խմածով և նրանց կյանքով: Բնական է այս անելով, նրանք չեն հարստա-

նում, սակայն լուրերը լցնում են ստերով ու չափազանցություններով և դրանով ուրախացնում են սատանային, դժբախտացնելով ու վիրավորելով ազնիվ մարդկանց:

Եթե այսպիսի մարդկանց լսողներ էլ կան, ապա նրանք էլ հանցակից են, քանի որ տեղյակ լինելով այսպիսիների ստախոսությանն ու չափազանցությանը, նրանց կարևորություն են տալիս և հավատում նրանց ասածներին:

Առաքյալը խստիվ դատապարտում է այս դիրքը: Նա հստակ կերպով ասում է. «Ստուգեցեք, թե ո՞րն է հաճելի Տիրոջը, և խավարի անպատու գործերին մասնակից մի եղեք, այլ մանավանդ մերկացրեք դրանք» (Եփես. 5:11) և շարունակում է. «Տեսեք, թե ինչպիսի զգուշությամբ պիտի ընթանաք. ոչ թե ինչպես անմիտներ, այլ ինչպես իմաստուններ» (Եփես. 5:15): «Միայն ձեր շահը մի փնտռեք, այլ յուրաքանչյուր ոք՝ ընկերոջ շահն էլ»:

Մարդկային քաղաքակրթության զարգացումը կախում ունի ընկերոջ լավը փնտրող մարդկանցից: Եթե ուրիշի լավը կամ օգուտը չփնտրենք կլճանանք ու մենք մեզանով կմնանք: Ուրիշի լավը փնտրելու ձևերը բազմաթիվ են, բայց այդ բոլորի գլուխն է բարոյական օգուտը:

Այս պատմությունը հետաքրքիր է.

«Երիտասարդ աղջիկը գալիս է հոր մոտ և սկսում նեղսրտել. «Հա՛յր, հոգնել եմ, այնքան ծանր կյանքով եմ ապրում, այնքան դժվարությունների ու փորձությունների միջով եմ անցնում, որ, կարծես, միշտ լողում եմ հոսանքի դեմ: Այլևս ուժ չունեմ... ի՞նչ անեմ»: Հայրը պատասխանի փոխարեն, ջրով լցված երեք հավասարաչափ կաթսա է դնում կրակի վրա, ապա մեկի մեջ գցում է գազար, մյուսի մեջ՝ ձու, իսկ երրորդի մեջ սուրճ է լցնում: Որոշ ժամանակ անց նա կաթսայից հանում է գազարն ու ձուն, երրորդ

կաթսայից լցնում սուրճը մի բաժակի մեջ և հարցնում աղջկան.

Ի՞նչ է փոխվել:

Ձուն և գազարը եփվեցին, իսկ սուրճը լուծվեց ջրում, – պատասխանում է աղջիկը:

Ո՛չ, դուստր իմ, դա միայն մակերեսային հայացք է իրերի վրա, – ասում է հայրն ու բացատրում, – Տե՛ս, պինդ գազարը, մնալով ջրի մեջ, դարձավ ավելի փափուկ ու ճկուն: Փխրուն ու հեղուկ ձուն դարձավ պինդ: Արտաքինապես դրանք չփոխվեցին, այլ միայն իրենց կառուցվածքը փոխեցին արտաքին հավասար անբարենպաստ պարագաների ազդեցության տակ՝ եռացող ջրի մեջ...

Շարունակելով միտքը՝ հայրը եզրափակում է ասածը. «Այդպես և մարդիկ են. արտաքինապես ուժեղները կարող են թուլանալ ու տկարանալ այնտեղ, որտեղ նուրբ ու փխրուն մարդիկ դառնում են ավելի ուժեղ...»:

Իսկ սո՛ւրճը, – զարմացած հետաքրքրվում է դուստրը:

Սուրճն ամենահետաքրքիրն է: Այն ամբողջությամբ լուծվեց նոր՝ թշնամական կամ խորթ միջավայրում՝ նրան դարձնելով եռացած համեղ ըմպելիք: Այնպես որ, աղջի՛կս, կան յուրահատուկ մարդիկ, ովքեր իրենք են փոփոխում միջավայրը և ոչնչից ստեղծում են նորն ու գեղեցիկը՝ քաղելով իրավիճակից օգուտ և գիտելիքներ, – դստեր գլուխը շոյելով՝ հայրը տվեց հուսահատ դստեր հարցի պատասխանը»:

Եթե ուրիշի բարոյական օգուտը չփնտրենք, մենք մեզ կնվաստացնենք: Հանրային կյանքում գոյություն ունեցող ծառայության ձևերը պարզապես ուրիշի լավը փնտրելու համար են և արդյունք են վսեմ հետաքրքրությունների, որոնք մաքուր նկարագրերի և հոգեկան առաքինությունների պտուղներն են:

Դժբախտաբար իրականությունն այլ է: Այսօր մարդիկ ոչ թե Աստծու, այլ իրենց փառքն են փնտրում, և ամեն ինչ անում են, որպեսզի միայն իրենք փառավորվեն, առանց հասկանալու, որ իբրև մարդիկ իրենք ժամանակավոր են ու իրենց փառքը նույնպես, բայց Աստծու փառքը՝ հավիտենական է: Ինչ որ նրանք կազմակերպում են՝ համերգներ, ճաշկերույթներ, հանդիսություններ, գինեձոներ, հավաքույթներ, միշտ ուզում են, որ իրենք պատվավոր տեղերում երևան ու առաջինը իրենք խոսեն ու ներկայանան: Իսկ եթե փորձես մի քիչ շեղվել և կշեռքի նժարը թեքել այլ մարդկանց կողմը, պարզ է, թե դեպի ո՞ւր կարող ենք գնալ: Իսկ ոմանց հետաքրքրասիրությունը չափ ու սահման չի ճանաչում, ամեն ինչի մեջ իրենք են, ամեն բանում իրենց ասածը պիտի լինի: Իրենք անպայման պիտի իմանան, չիմանան... հանկարծ սրտի կաթված կստանան: Ամեն խմբում իրենք ներկա են, եթե նույնիսկ արժանի էլ չեն ու այդքան շնորհքներ էլ չունեն, բայց մեջն են, որովհետև իրենց հետաքրքրասիրությունն է խեղդում, թե ի՞նչ պիտի լինի: Երանի այդպես չլինեք, այլ խոնարհությունն ու համեստությունը թագավորեին մարդկանց սրտերում: Բայց ավաղ...:

«Մի օր բարեպաշտ մի մարդ ներկայանում է անգլիացի մի փիլիսոփայի ու ամբաստանում մի մեծահարուստի իբրև անաստված:

Փիլիսոփան լսելուց հետո, հանգիստ պատասխանում է նրան.

Սխալվում եք, հարցը չի վերաբերում անաստվածության, որովհետև աշխարհում անաստված մարդ գոյություն չունի: Այն մեծահարուստը, որի մասին խոսում եք, հավատում է մի գերագույն էակի, միայն մի տարբերությամբ, որ այդ ամենագոր էակը՝ հենց ինքն է»:

Այս պատմությունից կարելի է դաս քաղել, թե ուր որ Աստված արմատախիլ է եղել, երկրպագությունը գնում է հիվանդ «ես»-ին: Սա վերաբերում է նաև հետաքրքրասեր մարդուն, որի «ես»-ը ամենագոր է իր համար:

Պոդոս Պատրիարք Ադրիանապոլսեցին ասում է. «Անենեզ ու պարզամիտ մարդիկ մեկի մասին դատելիս իրենց կասկածն ավելի շրջում են դեպի բարի կողմը, իսկ նենգավորներն ու խորամանկները՝ դեպի չար կողմը: Որովհետև մարդկանց հատուկ է իրենց նման ճանաչել ու համարել ուրիշներին և ըստ այդմ դատել նրանց խոսքերի ու գործերի մասին: Ուստի, պարզամիտներն արագ են խաբվում, որովհետև բոլորին հավատում են՝ կարծելով, թե բոլորն էլ պարզամիտ են, իսկ խորամանկները ոչ ոքի չեն հավատում, և այս երկու ծայրերն էլ մոլություն են: Որովհետև ինչպես որ պատշաճ չէ բոլորին հավատալ, այդպես և պետք չէ բոլորին նենգավոր կարծել, այլ պետք է իրերի մասին արդարությամբ դատել, առանց աջ կամ ձախ շեղվելու» («Խրատի Թանգարան»):

Կեղտոտված բերանը կարող ենք ջրով լվանալ, բայց ոչ՝ սիրտը: Այն մաքրելու համար կարիքն ունի զրդման: Խղճի արցունքը միայն կարող է մաքրել կեղտոտված սիրտը:

Ուրեմն, փորձենք մաքրված սրտով ու խղճի մտքով մեկս մյուսին օգնական լինել՝ աղոթքով, հավատով և սիրով: Ամեն:

ՆԱԽԱՆՁՈՏ ՄԱՐԴԸ

«Որովհետև, ուր հակառակություն և նախանձ կա,
այնտեղ կա անկարգություն և ամեն չար բան»
(Հակ.3:16):

Սաղմոսերգուն այս խոսքերը ասում է ցույց տալու համար նախանձող մարդու կյանքի ընթացքը, այսինքն այն նմանվում է մի ցեցի, որը մարդու սրտում թաքնված մշտապես կրծում է, ուտում, սպառում նրան, այն ամենամեծ ու ուժեղ ծառերի նման, որոնց ներսում թաքնված որդերը կրծելով տապալում են նրանց:

«Ի՞նչ է նախանձը: Ինչո՞ւ պիտի նախանձենք, ինչի՞ համար: Նախանձելը անհրաժեշտությո՞ւն է: Ինչպե՞ս կարող ենք ազատվել նրանից»:

Նախանձը յոթը մահացու մեղքերից մեկն է: Մեր եկեղեցական Հայրերը իրավամբ բազում մեղքերի կողքին հատկապես առանձնացրել են յոթը մեղքեր, որոնց անվանել են մահացու: Նախանձի կողքին մահացու մեղքեր են նաև՝ հպարտությունը, բարկությունը, ծուլությունը, ազահությունը, որկրամոլությունը, ցանկասիրությունը և սրանց զանազան կերպերը:

Օգոստինոս Հայրապետի բացատրությամբ նախանձը «Ուրիշների բախտավորությանց համար տխրություն է, և միաժամանակ նրանց ձախորդությունների համար էլ՝ ուրախություն»:

Նախանձողը նման է այն մարդուն, որը լցված է ատելությամբ և եթե չի կարողանում իր ատած մարդուն վնասել, ինքն իրեն է թույնում: Նույնն է նաև նախանձող մարդու պարագային: Նրա ուղեղը անընդհատ աշխատում է, ինքն իրեն տանջելու աստիճան, ուրիշների առաջադի-

մությունների, հաջողությունների ու նվաճումների պատ-
ճառով:

Նախանձը լինում է ն' հարուստի և ն' աղքատի մոտ:
Եթե նախանձողը նույնիսկ միլիոնատեր է և ամեն օր իր
սեղանին առատ ուտելիքներ ունի ու դրանք մատուցվում
են թանկարժեք ամանեղենի մեջ, երբ տեսնում է, թե իր
աղքատ հարևանը մի թռչնի միս է ուտում, նախանձում է
նրան, որովհետև իր աչքին նրա այդ քիչը իր առատ ուտե-
լիքից ավելի մեծ է երևում:

Մեզանից յուրաքանչյուրը կյանքում բախվում է
կոպտության, նախանձի, ատելության, վիրավորանքի
հետ, սակայն միայն քչերն են կարողանում ճիշտ արձա-
գանքել դրանց: Որպեսզի կարողանաք ձեր հոգեբանական
առողջ վիճակը պահպանել, չպետք է թույլ տաք, որ հույ-
զերը կառավարեն ձեզ:

Պետք է հիշեք, որ ավելի հաճախ վիրավորվում են
դժբախտ մարդիկ, իսկ նույնատիպ պատասխան տալը
կամ վիրավորելը պարզապես անիմաստ է: Ավելի լավ է
վարվել այնպես, ինչպես դա արեց այս առակում սամու-
րայը:

«Իմաստուն սամուրայը ռազմական գաղտնիքներ
էր սովորեցնում երիտասարդ զինվորներին և կիսվում էր
նրանց հետ իր ունեցած փորձով ու գիտելիքներով: Մի
անգամ նրա մոտ է գալիս զինվորներից մեկը՝ Զայկորա
անունով, որը հասցրել էր ճանաչում ձեռք բերել իր դաժա-
նությանը և սանձարձակությանը: Նա անտեղի վիրա-
վորում էր հակառակորդներին և մարտի ժամանակ դիմա-
ցինի բարկությունը ի շահ իրեն օգտագործելով գետնին էր
տապալում վերջինիս:

Նա մի օր մոտենում է ու սկսում վիրավորել սամու-
րային: Սակայն նրա վիրավորանքները անպատասխան
էին մնում, իսկ սամուրայը շարունակում էր իր ուսու-

ցումը: Զայկորան անվերջ փորձում էր վիրավորել իր ուսուցչին, սակայն վերջինս շարունակում էր անտեսել նրան: Ցանկալի արդյունքին չհասնելուց հետո նա հեռանում է: Զինվորները հարցնում են իրենց ուսուցչին, թե ինչո՞ւ չպատժեց իրեն նեղացնողին ու վիրավորողին

Զինվորների հարցին իմաստուն սամուրայը պատասխանում է.- ատելությանը, նախանձին և վիրավորանքին պետք է կարողանալ վերաբերել որպես նվերի, որը, ոչ մի պարագայում, չպետք է ընդունենք: Երբ մենք հրաժարվում ենք նվերից, թողնում ենք, որ այն մնա տիրոջ մոտ...»:

Այս առակը մեզ սովորեցնում է ճիշտ արձագանքել անտեղի վիրավորանքին, կոպտությանը և նախանձին:

Նախանձը հոգու ցեցն է, որ ուսում է զգայարանները, տոչորում է սիրտը, նեղում է միտքը, կտրում է քունը, ալեկոծում է հոգին, դող է զգում մարմնի մեջ և վատ ժանգի պես ապականում է մարդու բոլոր բարեմասնությունները: Նախանձը մինչև անգամ մարդու կերպարանքն է փոխում, և նույնիսկ՝ խարխլում առողջությունը: Այսպես նախանձոտը կրակով է եփում իրեն, այլ ոչ թե ուրիշներին: Յուրաքանչյուր մոլություն հակառակվում է մեկ առաքինության. օրինակ՝ հպարտությունը՝ խոնարհությանը, ազահությունը՝ առատաձեռնությանը և բարկությունը՝ հեզությանը:

Նախանձի մեջ այնքան չարություն կա, որ ոչ միայն ուրիշին է վնաս հասցնում, այլ մանավանդ ավելիով՝ ինքն իրեն:

Այս պատմությունը հետաքրքիր է.

«Թագավորներից մեկը խոստանում է նախանձոտ և ազահ մարդկանց, թե ի՞նչ խնդրեն իրենից, նրանց կտա իրենց ուզածը, սակայն մի պայմանով, որ ով վերջինը խնդրի, նրան կրկնակի պիտի տա: Եվ երբ երկուսն էլ

դանդադում են խնդրել թագավորից, հրամայում է, որ նախ նախանձոտ մարդը խնդրի:

Եվ պատկերացնում էք, թե ի՞նչ է խնդրում նախանձոտը մարդը, աներևակայելի է: Նա խնդրում է իր մեկ աչքը հանել, ինչո՞ւ. չէ՞ որ թագավորը ուզեց օգնել նրան իր ուզածը կատարելու, ինչո՞ւ նախանձոտ մարդը ուզեց, որ թագավորը իր մեկ աչքը հանի: Կարծում եմ պարզից էլ պարզ է: Նա չուզեց բարի մի բան, որպեսզի ազահ մարդուն թագավորը կրկնակի բարիք չանի ավելին տալով նրան»:

Մի նախանձեք, մեկ է, ոչինչ չեք շահելու:

Այն օրից, երբ այդ մոլությունը մտնում է մարդու սիրտը, էլ ոչ մի չարությունից չի նեղվում, չի խնայում անմեղին, չի վախենում մարդասպանությունից, նույնիսկ հայրասպանությունից: Նախանձն էր, որ շարժեց Կայենին Աբելի դեմ, Եսավին՝ Հակոբի դեմ, 11 եղբայրներին՝ Հովսեփի դեմ, որովհետև, ինչպես առաքյալն ասում է. «Ուր որ նախանձ ու կոթիվ կա, այնտեղ են անկարգությունն ու ամեն չարությունները»:

Փիլիսոփաներից Սոկրատեսն ասում է. «Նախանձը հպարտության դուստրն է և ոճրագործության ու վրեժի հեղինակը: Այն գաղտնի խռովության սկիզբն է և մշտապես առաքինությունը չարչարողը: Այն հոգու փափուկ և կպչուն պինդ շաղախն է: Մի թույն, մի սնդիկ, որը ուտում է մարմնի միսը և չորացնում ոսկորների ծուծը»:

Բոլորս էլ հիշում ենք Կոլոմբոսի պատմությունը: Երբ նա Ամերիկան հայտնաբերում է, իր վայելած ժողովրդականության համար պալատականներից շատերը նախանձում են ու սկսում հալածել նրան: Մի օր ճաշի ժամանակ նա տեսնելով իր նկատմամբ ունեցած նրանց այս վերաբերմունքը, ուզում է դաս տալ ու ասում է. «Ո՞վ կարող է այս ձուն ծայրի վրա կանգնեցնել»: Բոլորը փորձում են և չեն կարողանում, երբ հերթը հասնում է Կոլոմ-

բոսին, նա մոտենում է սեղանին, ձվի մի ծայրը հարվածում է սեղանին ու կոտրում և այդպես կանգնեցնում է այն: Մյուսները ծիծաղում են ու ասում, թե իրենք էլ կարող էին այդպես անել: «Գլխավորը այն մտածելն ու գործադրելն է», - պատասխանում է նա:

Հունական դիցաբանության մեջ պատմվում է մի նախանձողի մասին.

«Ըստ այդ պատմության հույներից մեկը անձնապան է լինում: Ինչո՞ւ, ի՞նչն էր պատճառը: Պարզվում է՝ պատճառը և դա նախանձն է: Հույները օլիմպիական խաղերի իրենց հերոսի արձանը կանգնեցնում են հրապարակի վրա, ի նշան գնահատանքի: Եվ քանի որ ինքնապան եղող մարդը հերոսի հակառակորդն է եղել, գիշերները գաղտագողի գնացել և փորձել է արձանը տապալել, որովհետև նախանձից մեռնում էր: Երկար փորձերից հետո նրան հաջողվում է արձանը վայր գցել, սակայն չկարողանալով այդ քարե զանգվածից արագ հեռանալ, տակն է մնում ու ճգմվում»:

Անտիսթենես փիլիսոփան ասում էր. «Եթե մեկն ստիպի ինձ ընտրություն անել, ես ավելի լավ կհամարեմ ագռավ լինել, քան նախանձոտ, որովհետև ագռավները միայն մեռելների դիակ են ուտում, իսկ նախանձոտները կենդանի մարդկանց են պատառոտում»:

Պիտի գիտակցենք, թե Աստծու պատկերով ստեղծված յուրաքանչյուր մարդ տարբեր կարողության տեր է: Աշխարհի վրա ապրող միլիոնավոր մարդիկ որևէ մեկը մյուսին նման չեն՝ ո՛չ դեմքով և ո՛չ էլ մտքով: Ամեն մարդ տարբեր տեսք ու կարողություն ունի: Աստված ամեն մեկին տարբեր շնորհներ է տվել:

Հարց է ծագում, իսկ ինչպե՞ս կարող ենք ազատվել նախանձից: Կա՞րողյոք մի դեղամիջոց, որը հնարավորություն կտա ընդհանրապես ձերբազատվել այդ մահա-

ցու մեղքից: Աշխատեք առաջին հերթին այդ մեղքով չտա-
ռապել:

Իսկ մեր եկեղեցական Հայրերը խրատում են.
«Ուզո՞ւմ եք ազատվել նախանձից, արհամարհեք ժամա-
նակավորը և սիրեք հավիտենականը, այսինքն հավատով
զորացրեք ինքներդ ձեզ ու Աստծու օգնությամբ և օրհնու-
թյամբ փորձեք ձերբազատվել դրանից: Մենք մեզ պիտի
փոխենք, այնքան քաջություն պիտի ունենանք, որ մենք
մեզ հաղթենք, փորձենք չար մտքերն ու կասկածները հե-
ռացնել մեզանից, այն ժամանակ կլինենք մի այլ աշխար-
հում, որը հաճելի կլինի և՛ մեզ և՛ մեր շրջապատի մարդ-
կանց»: Ամեն:

ԲԱՄԲԱՍԱՆՔԸ ՄԵՂՔ Է

«Ականջ մի դիր բամբաստողին, ընդունելու նրա
բամբասանքները, որպեսզի մահ չծնվի քո հոգում, քանի
որ բամբասանքը մահվան կերակուր է»:

Երանելի Օգոստինոս Հայրապետ

Այս խոսքը ես վերցրել եմ Ընդհանրական Քրիս-
տոնական Հայրերից՝ Երանելի Օգոստինոս Հայրապետի
խրատներից: Խոսքը բամբասանքի մասին է:

«Ի՞նչ է բամբասանքը, մարդիկ ինչո՞ւ են բամբա-
սում, կարելի՞ է չբամբասել»:

Բամբասել նշանակում է որևէ մեկին ստերով ու
գրպարտություններով ստորացնել: Քանզի սուտն ինքնին
մեղք է:

Անգլիացի նշանավոր թատերերգակ Վիլյամ Շեքս-
պիրը ահա թե ինչպե՞ս է ներկայացնում բամբասողնե-
րին. «Բամբաստողի շրթունքը դաշույնից ավելի սուր է, նրա
լեզուն գերազանցում է Նեղոսի բոլոր թունալից որդերին,
նրա շունչը քամիների վրա է բազմում և շրջում է աշխար-
հի բոլոր կողմերը»:

Այսօր աշխարհի ամեն կողմում մարդիկ հեռա-
խոսներ ունեն և այնքան անգործ մարդիկ կան, որոնք
ժամերով խոսում են ու խոսում սրա նրա ու բոլորի մասին,
իմանալով կամ չիմանալով ճիշտն ու սխալը:

Աստծու պատվերը այս է. մի՛ բամբասեք, մեղք է:

Պողոս Պատրիարք Ադրիանապոլսեցին ասում է.
«Շատ անգամ մարդն անգիտությամբ է ընկնում բամբա-
սանքի մեջ, երբ պատմում է մեկի գործերի մասին: Եվ
թեպետ ասողի միտքն ուղղակի նպատակ չունի ուրիշնե-
րին դատել, այլ միայն պարզապես ասել ինչ որ տեսավ
կամ լսեց, սակայն խոսքն այնպես է շրջվում, որ լսողն իր
հետաքրքրասիրությամբ խոսքը բամբասանքի է վերա-

ծում: ...Ուստի պետք է խիստ զգույշ լինել որևէ մեկի մասին ինչ-որ բան պատմելիս»:

Ահա ձեզ մի ցայտուն օրինակ.

«Մի մարդ իր երազը պատմում է կնոջը, ուր իբրև թե իր բերանից մի թռչուն է թռել և կատակով պատվիրում, որ ոչ մեկին չասի այս մասին:

Ամուսինը հազիվ ոտքը տանից դուրս է հանում, թե չէ կինը կանչում է հարևանուհուն ու ծիծաղելով ասում նրան այդ մասին: Բնական է, հարևանուհին էլ զանգում է իր բարեկամուհուն և ասում, թե հարևանի ամուսնու բերանից երկու թռչուն է դուրս թռել: Երկուսը դառնում է չորս և մինչև երեկո չորսը դառնում է քառասուն: Երեկոյան, երբ մարդը տուն է վերադառնում, իր ընկերներից մեկը կանգնեցնում է նրան ու ծիծաղելով հարցնում. «Այս ինչե՞ր եմ լսում, այսօր առավոտյան երազում քո բերանից քառասուն թռչո՞ւն է դուրս եկել»:

Ահա ձեզ սուտ ու կեղծ մի պատմություն, որ մի օրվա մեջ քառասուն անգամ բազմապատկվել է չարամտությամբ, առանց տեսնելու այն և անդրադառնալու նրա իմաստին:

Պողոս Պատրիարքը շարունակում է. «Մի բամբասանքից սովորաբար երեք չարիք է ծնվում. առաջին՝ բամբասողը մահու չափ մեղանչում է, երկրորդ՝ լսողը մեղսակից է դառնում, երրորդ՝ բամբասվածը նույն մեղքով մեղանչում է կամ ուրիշ մեղքեր էլ գործում...: Արդարև, չարիքների մեջ բամբասանքից ավելի մեծը չկա և այժմ չկա նրանից ավելի տարածվածը, ու թեպետ ամենքը գիտեն, որ ուրիշներին բամբասելը ծանր մեղք է, բայց դեռևս շարունակում են նույնը»:

«Կարելի՞ է չբամբասել»: Այո, կարելի է, երբ մարդն ինքն իրեն է բամբասում, իրավացի է, ոչ մեկին չի վնասում ու չի դատապարտում և ինքն իրեն մեղավոր է համարում:

Եթե նա կարողանում է այդպես վարվել, ուրեմն ճշմարտախոս, արդար ու բարի միտք ունեցող մեկն է:

«Եղբայրներ, միմյանց մի բամբասեք. ով բամբասում է իր եղբորը կամ դատում է իր եղբորը, չարախոսում է օրենքի մասին և դատում է օրենքը. իսկ եթե օրենքն էս դատում, օրենքը պահող չես, այլ՝ դատավոր: Կայ մեկ Օրենսդիր և Դատավոր, որ կարող է փրկել և կործանել. դու ո՞վ ես, որ դատում ես քո մերձավորին» (Հակ. 4:11-12), - ասում է Հակոբոս Առաքյալը:

Լսենք այս պատմությունը

«Մի մարդ գալիս է իր հոգևոր ուսուցչի մոտ և ասում. «Գիտե՞ք ինչ ասաց ձեր մասին այսօր ձեր ընկերը»:

«Մպասի՛ր, - կանգնեցնում է նրան ուսուցիչը, - սկզբից, այն ինչ ուզում ես ասել, անցկացրու երեք մաղերով»:

«Որո՞նք են այդ երեք մաղերը», - զարմանում է աշակերտը:

Նախ՝ պետք է անցկացնենք ճշմարտության մաղով: Դու համոզվա՞ծ ես, որ այն ինչ ուզում ես ինձ ասել ճիշտ է»,

«Ոչ, ես պարզապես լսել եմ այդ մասին»,

«Լավ, ուրեմն դու չգիտես՝ ճի՞շտ է դա, թե՞ ոչ:

Երկրորդ՝ լավության մաղով: «Դու ուզում ես ասել իմ ընկերոջ մասին ինչ-որ լա՞վ բան»:

«Ոչ», - ավստոսանքով պատասխանում է աշակերտը:

«Եթե լավ չի, ուրեմն վատ բան է, բայց անգամ վստահ չես, որ ասածդ ճիշտ է լինելու»:

Երրորդ՝ օգտակարության մաղով: «Կարիք կա՞, որ ես լսեմ այդ մասին»:

«Ոչ, կարիք չկա», - համաձայնվում է աշակերտը:

«Այսպիսով, - եզրակացնում է ուսուցիչը, - այն ինչ դու ինձ ուզում ես ասել, ո՛չ ճիշտ է, ո՛չ լավ, ո՛չ էլ օգտակար: Ուրեմն, ինչո՞ւ ես ինձ ասում»:

Հիշենք, և նախքան մեր ծանոթների մասին լուրեր ու բամբասանքներ տարածելը, այդ ամենը անցկացնենք ճշմարտության, լավության և օգտակարության մաղերով:

Սարգիս Վարդապետ Շնորհալին ասում է. «Եթե մեղավոր է նա, ում դատում ես, պետք է գթաս նրան ու արտասվես նրա համար, ոչ թե դատապարտես, պետք է կարեկցես ու ցավակից լինես, ոչ թե բամբասես...: Այս պատճառով է, որ «Բամբասողներն Աստծո արքայությունը չեն ժառանգելու» (Ա. Կորնթ.6:10): ...Արդ, եղբայրներ, դադարենք միմյանց դատելուց, մեր լեզուն լռեցնենք բամբասելուց...Ուրիշների համար բժիշկ չդառնանք՝ ինքներըս մեծամեծ ցավերով լցված լինելով: Ինքներս մեզ նայենք ու մեր սրտի գաղտնածածուկ խորհուրդները քննենք, մեր մեղքերը դատապարտենք և մեր ցավերը բժշկենք ու խոստովանությամբ բոլորը մեկ առ մեկ ներկայացնենք. ոչ միայն գործով կատարվածները, այլև դատարկ խոսքերն ու չար խորհուրդները, արատավոր հայացքները, կեղտոտ բաներ լսելը կամ մտքի ոչ բարի շարժումները: Բոլորս եթե մեկ առ մեկ ներկայացնենք մեր մեղքերը, Տերը կների...»:

Այն լեզուն, որ ուրիշներին բամբասում է, ուրիշների մեղքերն իրենով մաքրում է, իսկ ով իրեն է բամբասում, իր մեղքերի խոցը մաքրում ու բուժում է:

«Մի մարդ քայլում էր թաղամասով՝ անիծելով քահանային և նրա մասին տարածելով չար և կեղծ բամբասանքներ: Մի գեղեցիկ օր նա զգում է իր մեղքը և գալիս է քահանայի մոտ, որպեսզի ներողություն խնդրի: Նա քահանային ասում է, որ պատրաստ է ամեն ինչի, որպեսզի իր մեղքերին թողություն տրվի: Քահանան նրան պատասխանում է.

Ես ուրախ եմ քեզ համար: Շատ կարևոր է, որ դու անդրադարձել ես ու ընդունել սխալը: Տերը թող ների քեզ,

ես մինչև քո գալը, արդեն քեզ ներել էի: Աղոթիր և Աստծուց ներում խնդրիր: Իսկ ես կաղոթեմ քեզ համար»:

Պողոս Պատրիարքը շարունակում է.

«Այսուհետև զգույշ եղեք անօգուտ քրթմնջյունից և բամբասանքներից խնայեցեք ձեր լեզուն, որովհետև գաղտնի շշնջյունը զուր չի անցնի, և ստախոս բերանը կսպանի հոգին» (Բմաստ. 1:11):

Շատ անգամ մարդն անգիտությամբ է ընկնում բամբասանքի մեջ, երբ պատմում է մեկի գործերի մասին....:

Բամբասանքն այլ մոլություններից ավելի հաճախ է հանդիպում մարդկանց մեջ, որովհետև առաջ է գալիս գործի կամ խոսքի որևէ թերությունից: Եվ քանի որ առանց թերության մարդ չկա, մեկը գործերի մեջ է սխալվում, մյուսը՝ խոսքի, եթե մեկի բոլոր սխալները մեջտեղ բերելով՝ մարդ բամբասի, հարկ է, որ բոլորին բամբասի, և այդժամ բամբասողին ո՞վ կդատի, որովհետև ինքն էլ է սխալական մարդ:

Ուրեմն՝ մի բամբասեք, այլ՝ ներեք: Ամեն:

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

«Երանի նրանց, որ քաղցն ու ծարավը ունեն
արդարության, որովհետև նրանք պիտի հագնան»
(Մատթ.5:6)

Այս խոսքը ես վերցրել եմ Մատթեոս Ավետարանչի
5-րդ գլխի 6-րդ համարից:

Հիսուս Լերան վրա Իր քարոզում խոսեց ինը երա-
նիների մասին. դրանցից չորրորդն է այս երանին, ուր
Հիսուս խոսում է արդարության մասին:

Նշենք մի քանիսը այդ երանիներից.

«Երանի հոգով աղքատներին, որովհետև նրանցն է
երկնքի արքայությունը».

«Երանի սգավորներին, որովհետև նրանք պիտի
մխիթարվեն»:

«Երանի հեգերին, որովհետև նրանք երկիրը պիտի
ժառանգեն» և այլն:

Հարց է առաջանում, թե՝ «Ի՞նչ է արդարությունը»:

Եթե խորքում ուսումնասիրենք, արդարությունն բա-
ռը մեծ իմաստ ունի:

Ըստ մեր Տիրոջ արդարությունը երկնքի բանալին է.
«Եթե ձեր արդարությունը ավելի չլինի, քան օրենսդե-
սերինը և փարիսեցիներինը, երկնքի արքայությունը չեք
մտնի» (Մատթ.5:20):

Հիսուս ամեն անգամ շեշտում էր, թե աղոթելիս
ուրիշ ոչ մի բան չխնդրենք Հորից, այլ միայն երկնքի ար-
քայությունը. «Նախ խնդրեցեք Աստծո արքայությունը և
նրա արդարությունը, և այդ բոլորը ձեզ ավելիով կտա»
(Մատթ.6:33):

Աստծո հետ կապ հաստատելու համար պետք է
Նրան նմանվենք, քանի որ ստեղծված ենք Նրա պատ-
կերով: Մարդիկ կարող են մաքուր և պարկեշտ լինել,

սակայն քրիստոնյա չլինել. այսինքն՝ ավելի կապված լինեն ունեցվածքին. հողին, հարստությանը, դրամին, մարմնին և մեռնելուց հետո ամեն բան թողնել այստեղ: Այսպիսի մարդիկ կարծում են այս կյանքում ուտել-խմելով, թանկարժեք հագուստներ հագնելով ու մեքենաներ քշելով և պալատների նման տներում ապրելով՝ ապահով են, բայց դա խաբուսիկ է: Նրանք նույնիսկ աշխարհը չեն կարողանում ապահովել, քանի որ հեռանում են դատարկ ձեռքերով: Այդպես չէ քրիստոնյայի պարագային: Նա հետևելով Հիսուսի օրինակին, իր ազնվությամբ, արդարությամբ ու հավատի գործերով, նվիրումով և զոհողության ճանապարհով ձգտում է ժառանգել Երկնքի արքայությունը: Այս աշխարհը նրա համար միջոց է, երկինքը ժառանգելու համար:

Արդարության հակառակորդներն են՝ ազահությունը և եսասիրությունը:

«Հարուստ և ազահ մարդկանցից մեկը մեռնում է, բայց աչքերը բաց են մնում: Բոլոր հուղարկավորները փորձում են փակել նրա բաց աչքերը, բայց չեն կարողանում: Ուշիմ և հնարագետ մի մարդ, մի քիչ փոշիացած հող է բերում և աչքերին քիչ-քիչ կաթեցնում է: Աչքերը անմիջապես փակվում են: Այս է արդարությունը ոտնակոխող մարդու վերջավորությունը»:

Ազահությունը յոթը մահացու մեղքերից մեկն է: Այդ մոլությունը ունեցողը անկուշտ է և երբեք էլ չի գոհանում իր ունեցածով:

«Մի քաղաքում երկու մարդ կար. մեկ հարուստ էր, մյուսն՝ աղքատ: Հարուստն ուներ շատ ու շատ հոտեր ու նախիրներ, իսկ աղքատը ոչինչ չուներ, բացի մի փոքրիկ էգ գառնուկից, որը ծախու էր առել ու պահում էր: Գառնուկը մեծացավ նրա ու նրա որդիների հետ: Նա ուտում էր նրա հացից, նրա բաժակից խմում, նրա ծոցում էր քնում:

դա կարծես նրա դուստրն էր: Այդ հարուստ մարդու մոտ մի անցորդ եկավ: Հարուստը չուզեց իր հոտերից ու արջառներից մի անասուն մորթել, որ հյուրասիրի իր մոտ եկած անցորդին, առավ աղքատի գառնուկը և կերակուր պատրաստեց իր մոտ եկած մարդու համար» (Բ. Թագ. 12:1-5): Աստված գիտի, որ այդ անխիղճ հարուստը չարագործ է:

Աստծու թշնամին մեղքն է: Իսկ արդարությունը դրա դեմն առնելու ուժն է:

Ոչ մի մարդ չի ուզում վատ բան ուտել, նույնիսկ գողերն ու ավագակները, երբ գողություն են անում ու սպանում են մարդկանց լավ բաներին տիրանալու համար են գործում դրանք:

Ագահը հեռու է մնում բարի գործերից, իսկ եսասերը, եթե անում էլ է, հետին նպատակներ է հետապնդում:

«Երանի նրանց, որ քաղցն ու ծարավն ունեն արդարության, որովհետև նրանք պիտի հագնենան», - ասում է մեր Տերը:

Քաղցն ու ծարավը ապահովում են մարդու ֆիզիկական սնունդը: Բնական է, որ առանց ուտելու և խմելու չենք կարող ապրել, քանզի ապրելու համար սնունդը կարևոր է: Սակայն հոգու սնունդը տարբեր է: Մեր ամենօրյա աղոթքով կարող ենք սնել մեր հոգին: Հիսուս նկատի ունենալով մեղավորներին ու արդարներին, ասում է. «Եվ նրանք պիտի գնան դեպի հավիտենական տանջանք, իսկ արդարները՝ հավիտենական կյանք» (Մատթ. 25:46):

Աստված առատաձեռն է: Աստծու մատակարարությունը անսպառ և անսահման է: Բայց տալիս է խնդրողին: «Խնդրեցեք և Աստծուց կտրվի ձեզ»:

Էմմանուել քահանա Նազարյանն ասում է. «Աստված մարդուս համար երկու կյանք է պատրաստել, մեկը՝

զգայական, մյուսը՝ հոգևոր, մեկն ասպարեզ է, մյուսը՝ վարձատրության տեղ, մեկը դարձրել է ծով, մյուսը՝ նավահանգիստ, մեկը ժամանակավոր է, մյուսը՝ հավիտենական, մեկը ձեռքերիս է, մյուսին սպասում ենք: Բայց մարդս ստեղծված է ոչ այնքան ժամանակավոր, որքան հավիտենական կյանքի համար:...

Հիսուս այդ հանդերձյալ կյանքն անվանում է «Երկրնքի արքայություն», «Աստծո արքայություն» կամ «Հավիտենական կյանք»: Երկնքի կամ Աստծո արքայություն ասելով՝ Նա ուզում է մեզ հասկացնել, որ Աստծո կամքը կատարելը, ինչպես հրեշտակներն են կատարում երկրնքում, մի անսպառ երանության աղբյուր է, մի արքայություն, մի երկնային թագավորություն:

«Արդարների փառքն էլ երկու տեսակ է. մեկը նրանց գործերի, մյուսը՝ հատուցումների փառքը: Այժմ միայն արդարների հոգիներն են ստանում իրենց գործերի փառքը, հավիտենական կյանքում ստանալու են հատուցումների փառքը՝ հոգով ու մարմնով, հետևապես բարձրանալու են մի փառքից մյուսը՝ փառաց ի փառս» (Էմմանուել քահանա Նազարյան, «Պարզ քարոզներ»):

Սբ. Հովհան Ոսկեբերան Հայրապետն ասում է. «Մեղավորներն արքայությունից զրկվելու համար ավելի կցավեն, քան հավիտենական տանջանքների համար»:

Մեղավորներին խղճի խայթն է որ կրծելու է և տանջելու նրանց սիրտը. ա. Թե նրանք ինչ չնչին բանի համար դատապարտվեցին. բ. Թե ինչ թեթև բան էր պահանջվում փրկվելու համար. և գ. Թե ինչ մեծ բարիք կորցրեցին:

Սարգիս Վարդապետ Շնորհալին ավելացնում է. «Եթե բոլոր արարածները հավիտենական կյանքից զրկվողի վրա մշտապես աղիողորմ կերպով ողբան, դարձյալ

չեն կարող ողբալ այն բոլորի միայն մի մասը, ինչին որ արժանի է այդպիսի մի ողորմելին»:

Տաթևի վանքի վանահայր՝ Միքայել Վարդապետն ասում է.

«Եկեղեցու սուրբ հայրերն ասում են, որ դժոխքի տանջանքներում մարդիկ անընդհատ ծխի մեջ կլինեն և այդ ծխից նրանց աչքերը արտասուքներով կլցվեն ու այնպիսի սառնամանիք կլինի, որ ատամներով անընդհատ կկրճտացնեն, ինչպես մարդ ցրտից է ատամները կրճտացնում: Իսկ արդարները կփայլեն Երկնքի Արքայության մեջ, ինչպես արեգակը, որովհետև արդարները, ովքեր արժանի կլինեն փրկվելու և Երկնքի արքայությունը ժառանգելու, լույսի նման կլինեն: Ինչպես արեգակն է ամեն առավոտ մեզ ուրախացնում, այնպես էլ արդարները մշտապես ուրախ պետք է լինեն երկնքի արքայության մեջ. և այնտեղ չի լինի ցավ, նեղություն ու տրտմություն, այլ հարազվարճ, մշտական ուրախություն և երջանկություն: Ուրեմն, գիտակցենք, թե Քրիստոս մեզ ինչի է կոչում. ընտրում ենք Երկնքի Արքայությունը, արդարների հետ ուրախությունը, թե՛ ընտրում ենք դժոխքի տանջանքները, աչքերի լացն ու ատամների կրճտոցը: Մեր առջև է դրված ընտրությունը. Աստված արդար է, բայց նաև ողորմած, սպասում է մեղավորի դարձին, չի ուզում նրա կորուստը: Ուստի, գիտակցենք և ճիշտ ընթանանք մեր կյանքը, որպեսզի Երկնքի Արքայությանն արժանանանք արդարների և սրբերի հետ: Ամեն:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ «ՄԽԱԼԸ»

«Ահա Քո աշակերտները անում են մի բան,
որ շաբաթ օրն անել օրինավոր չէ» (Մատթ. 12:2):

Հիսուսին արդեն մոտիկից ճանաչում էին և հեռավոր տեղերից հարյուրներով մարդիկ գալիս էին լսելու, մխիթարվելու ու հոգեպես զորանալու Նրա քարոզություններից: Այս ձևով հետզհետե շատանում էին Նրա հետևորդները: Այդ պատճառով էլ Նրա վայելած ժողովրդականությունը Փարիսեցիների դուրը չէր գալիս, և շարժում էր այդ ժամանակվա ուղղափառ ու օրինապաշտ հրեաների նախանձը:

Հիսուսին հետևելով, նրանք տեսնում են, որ Նրա խոսքերը գրավիչ զորությամբ և ուժեղ հեղինակությամբ խոր ազդեցություն էին թողնում լսողների վրա, որովհետև Նա ոչ միայն քարոզում էր, այլ նաև հրաշքներ էր գործում. սեղան էր նստում մեղավորների ու հիվանդների հետ. իսկ սա հրեաների համար անպատշաճ արարք էր և անհարգալից վերաբերմունք հրեական սովորությունների նկատմամբ: Սակայն նրանք չեն համարձակվում Նրա օրինազանցությունների մասին դիտողություն անելու, բայց այդ մասին թեթև կերպով ասում են Նրա աշակերտներին:

Սակայն պատահում է մի դեպք, որի մասին նրանք ուղղակի ասում են Հիսուսին:

Այդ մասին կարդում ենք Մատթեոսի Ավետարանում: «Հիսուս շաբաթ օրով անցավ արտերի միջով. նրա աշակերտները քաղցած էին և սկսեցին հասկ պոկել և ուտել: Փարիսեցիները երբ այս տեսան, Հիսուսին ասացին. «Ահա քո աշակերտները անում են մի բան, որ շաբաթ օրն անել օրինավոր չէ» (Մատթ. 12:2-6):

Եթե օրենքի տեսանկյունից նայենք, նրանց դիտողությունը արդարացի էր, որովհետև Աստծու պատվիրան-

ների մեջ գրված էր, որ Շաբաթ օրը չաշխատեն, այլ սուրբ պահեն: Մինչ Քրիստոսի աշակերտները պղծում էին Շաբաթի սրբությունը, որովհետև հասկեր էին քաղել, շփել իրենց ափերի մեջ ու կերել ցորենը:

Աստծու տված տասնաբանյա պատվիրաններից չորրորդում ասվում է. «Հիշիր շաբաթ օրը, որպեսզի սուրբ պահես այն: Վեց օր պիտի աշխատես և պիտի կատարես քո բոլոր գործերը: Յոթներորդ օրը քո տեր Աստծու շաբաթ օրն է: Այդ օրը դու ոչ մի գործ չպիտի անես...» (Ելք 20:8-10):

Հիսուս ոչ թե սաստեց ու արգելեց նրանց այդ անելու, այլ արդարացրեց Իր աշակերտներին: Երբ իրեն մեղադրեցին չընդունեց և երկու դեպքեր հիշեց հրեական պատմությունից.

ա. Նա հարց տվեց Փարիսեցիներին. «Մի՞ թե չեք կարդացել թե ինչպես Դավիթ թագավորն ու իր հետևորդները երբ քաղց զգացին, Աստծու Տունը մտան ու կերան Առաջավորաց հացը, որը Մովսիսական օրենքով միայն վերապահված էր քահանաների համար:... «Եվ նա նրանց ասաց. «Դուք չե՞ք կարդացել, թե ինչ արեց Դավիթը, երբ քաղց զգաց նա և նրանք, որ նրա հետ էին: Թե ինչպես մտավ Աստծու տունը և կերավ առաջավորության հացը, որն ուտել օրենք չէր ոչ նրա և ոչ էլ նրա հետ եղողների համար...» (Մատթ. 12:2-6):

բ. Նրանց հիշեցրեց քահանաների պարագան, որոնք խախտելով օրենքը Շաբաթ օրով հաց են եփում, զոհելի անասուններ են մորթում, բայց և չեն դատապարտվում, որովհետև ուզեն կամ չուզեն պետք է այդ գործերը կատարեն Շաբաթ օրով: «...Կամ թե Օրենքում չե՞ք կարդացել. որ շաբաթ օրերը տաճարում քահանաները պղծում են շաբաթը և անմեղ են: Բայց ասում եմ ձեզ, որ այստեղ տաճարից մեծ մեկը կա» (Մատթ. 12:2-6):

Իր խոսքը վերջացնելով Հիսուս եզրակացնում է. «Դավիթը իր սովածության համար անտեսեց օրենքը. արդարացավ, քահանաները՝ նույնպես արդարացան. ուրեմն ինչո՞վ են պակաս Իմ աշակերտները, որոնք ծառայելու համար հասկեր քաղեցին և ցորենը կերան, որպեսզի ուժ առնեն ու շարունակեն Ինձ ծառայել, քանի որ Տաճարից ավելի մեծը կա այստեղ»:

«ԱՐԴՅՈՔ ԻՆՉ ԷԻ՞Ր ՓՆՏՐՈՒՄ...

Ամբրոսիոս անունով հռչակավոր մի ճգնավոր է լինում: Նրա համբավը և հրաշագործությունները ամենուր տարածված են լինում: Մի երիտասարդ ցանկանում է նրա աշակերտը դառնալ, ավելի ճանաչել Աստծուն, նվիրվել հոգևոր կյանքին: Մի անգամ հանդիպում է մի ծերունու, ով նրան ասում է.

Եթե ուզում ես ավելին իմանալ Աստծու մասին, այդ դեպքում փնտրիր Ամբրոսիոս ճգնավորին, նա քո առջև կբացահայտի Աստծո խորհուրդները: Երիտասարդը ճամփա է ընկնում ու գտնում հռչակավոր սրբին ու ասում.

Հա՛յր սուրբ, մանկությունիցս Աստծուն եմ փնտրել և կամեցել Նրան լավ ճանաչել, Նրա ճանապարհներն ու շավիղներն իմանալ և Նրան հետևել: Խնդրում եմ, ընդունիր ինձ որպես աշակերտ քեզ մոտ: Ճգնավորը նայում է երիտասարդին, ժպտում ու հարցնում.

Արդյո՞ք կարող ես թողնել աշխարհը և հետևել ինձ;
Կարող եմ,- պատասխանում է երիտասարդը:

Ճգնավորն ասում է.

Այդ դեպքում, հետևիր ինձ ու լսիր, թե Տիրոջ մասին քեզ ինչ կասեմ ու կպատմեմ, և թե ինչպես է պետք հոգևոր կյանքով ապրել: Եվ նրանք զրուցելով քայլում են: Նրանց դեմ-դիմաց գեղեցիկ կառք է գալիս քաղաքի եպիսկոպոսը՝ ոսկեզոծ զգեստներ հագած ու մեծ հարգանքով բարևելով ճգնավորին ասում է.

Հա՛յր սուրբ, գիտեմ, որ Աստծո առաջ մեծ շնորհ ունես և բազում աշակերտներ: Ինձ մի օգնական է պետք, ուղարկիր աշակերտներիցդ որևէ մեկին՝ որպես ինձ օգնական:

Երիտասարդը տեսնելով գեղեցիկ կառքը, հրաշագեղ նժույզներն ու եպիսկոպոսի ոսկեզոծ հագն ու կապը, խնդրում է.

Սրբազան հայր, մանկությունիցս ի վեր ցանկացել եմ ծառայել Աստծուն ու Նրա շավիղներն ու ճանապարհները իմանալ վերցրու ինձ՝ իբրև քեզ օգնական: Եպիսկոպոսը նայում է ճգնավորին, որը գլխի շարժումով իր հավանությունն է տալիս: Երիտասարդը մեծ ուրախությամբ նստում է կառքը, եպիսկոպոսի հետ հեռանում: Ետ է նայում ու մի տեսիլք է տեսնում, որ ճգնավորի հետ մի ծերունի է քայլում: Ծերունին կանգնում է, շրջվում: Դա այն ծերունին էր, որ երիտասարդին խորհուրդ էր տվել գտնել ճգնավորին ու աշակերտել նրան: Այնուհետև ծերունին վերափոխվում է և երիտասարդը պայծառ լույսի մեջ տեսնում է Հիսուսին: Հիսուս նրան հարցնում է.

Արդյո՞ք ինձ էիր փնտրում:

Երիտասարդը պատասխանում է.

Տե՛ր իմ, գիտես, որ միշտ քեզ եմ փնտրել, քանի որ հոգևոր էությունս միշտ կամեցել է Քեզ մոտ շատ լինել և Քեզ ավելի լավ ճանաչել: Հիսուս նրան պատասխանում է.

Եթե դու հոգևոր լինեիր, կճանաչեիր Իմ խոսքը, կլսեիր Իմ ձայնը՝ կանչն ու հրավերը և կհետևեիր Ինձ, բայց դու ընտրեցիր աշխարհը և նրա անցողիկ փառքը» («Հայելի Վարուց, բարոյա-խրատական պատումներ»):

«Աստված օրենք էր սահմանել մեր բարիքի, կարիքի ու մեր օգտի համար: Երբ Նա պատվիրեց Շաբաթ օրը չաշխատել, այլ սուրբ պահել, նկատի ուներ, որ մեր մարդկային այս թույլ ֆիզիկական մարմինը վեց օր ան-

ընդհատ տքնաջան աշխատանքից հետո կարիք ունի հանգստի, կազդուրման: Նույնպես այդ վեց օրվա աշխատանքի ընթացքին, մեր մտքերը զբաղված լինելով աշխարհային մտահոգություններով, ընտանեկան, տնտեսական և այլ կարգի հարցերով, մենք ժամանակ չունենք հոգալու մեր հոգևոր կարիքները: Հետևաբար, մեզանից յուրաքանչյուրը իր պարտքը պիտի նկատի Աստծու կողմից մեր բարիքի համար սահմանված այդ սուրբ օրը նվիրելու իր հոգեկան ու մարմնական կարիքները հոգալուն» (Բաբկեն Վրդ. Թովիչյան, «Քարոզներ»):

Մի անգամ Անտոն Մեծը հուսահատության և ինչ-որ մռայլ մտքերի տրվեց, բայց շուտով ինքն իրենից վախենալով, աղաղակեց առ Աստված. «Տեր, ես ցանկանում եմ փրկվել, բայց չգիտեմ, թե ինչով զբաղվեմ: Ինձ ցույց տուր պիղծ մտքերից ազատվելու միջոցը: Ինձ փրկվել սովորեցրու»: Որոշ ժամանակ անց Անտոն Մեծը դուրս եկավ խցից և մի անծանոթ մարդու տեսավ, որը սկզբում նստած գործում էր, իսկ հետո կանգնեց և աղոթեց, հետո նորից նստեց և սկսեց զամբյուղ գործել, որից հետո դարձյալ աղոթքի կանգնեց... Դա ճգնավորի տեսքով Աստծո կողմից ուղարկված հրեշտակն էր, որպեսզի ուղղեր և նախազգուշացներ Անտոնին: Եվ երբ սուրբ Անապատականը նայեց նրան, անմարմին պահապանն ասաց նրան. «Այսպես վարվիր և փրկված կլինես»: Լսելով այս՝ սուրբ Անտոնն ուրախությամբ և հույսով լցվեց և այդ ժամանակից այլևս չէր խախտում հրեշտակային կանոնը: Ինչպիսի կոչում էլ որ քեզ տված լինի Աստված, ինչպիսի հանգամանքներ էլ որ շրջապատելու լինեն քեզ, աղոթիր քո հոգու փրկության համար... Աղոթքն ու աշխատանքը փոխադարձաբար ամրացնում են մեկը մյուսին:

Հիսուս չդարձավ «Շաբաթ»-ի գերին, քանի որ Շաբաթի տերն էր: Բժշկեց հիվանդներին, բացեց կույրերի

աչքերը, խուլերի ականջները և համրերի փակ բերանները, խնամեց որբերին, քաջալերեց և մխիթարեց այրիններին, ներեց մեղավորներին ու վստահություն ներշնչեց կարոտյալներին: Մի խոսքով Հիսուս դուրս գալով հրեական օրենքի նեղ շրջագծից, սիրով ծառայեց մարդկության, որովհետև քրիստոնեությունը ճշմարտություն է և կյանք: Ամեն:

ԲԱՐԵԿԱՄ

«Հավատարիմ բարեկամը հզոր պատվար է,
իսկ ով գտնի նրան, գանձ է գտել» (Միքայ 6:14)

Բարեկամ բառը նշանակում է բարին կամեցող: Ամեն մարդ փորձում է գտնել իր նմանին: Ավետարանն ասում է: «Նմանը իր նմանին է գտնում»: Ինչո՞ւ է այդպես: Որովհետև ամեն մարդ իր դիմացինի մեջ փորձում է գտնել այն լավ հատկությունները, որոնք ինքն ունի: Հայհոյող մարդը չի կարող բարեկամություն կամ ընկերություն անել այնպիսի մեկի հետ, որը չի հայհոյում ու չի կարողանում տանել այն, գիտենալով Աստծու պատվիրանը, «Մի հայհոյիր»: Կամ ստախտսը՝ ճիշտ խոսողի, հավատարիմը՝ անհավատարիմի, գողը՝ իր քրտինքով ապրողի հետ, և այլն:

Լինելով երկար տարիների հոգևորական և շատ ու շատ ընտանիքներին այցելող, տեսել եմ իրապես հրաշալի ընտանիքներ, որոնք անշահախնդիր կերպով երկար տարիներ մտերմություն են հաստատել իրար հետ զավակներով ու նույնիսկ թոռներով միասին: Այս փաստը իրապես ուրախալի է:

Սակայն կա և սրա հակառակ կողմը: Մարդիկ, որոնք սիրում են ճանապարհից շեղվել, օրենքները շրջանցել, մարդկանց խաբել, կոդոպտել, վիրավորել, արհամարհել, նախանձել: Մի խոսքով այսպիսիների հետ բարեկամություն կամ ընկերություն հաստատել, կնշանակի ընտանիքը քայքայել կամ ժամանակը անցկացնել բանտում:

Հիսուս մեզ ցույց է տալիս իսկական բարեկամության ճանապարհը, խրատելով Իր աշակերտներին,

«Այլևս ձեզ ծառաներ չեմ կոչում, որովհետև ծառան չգիտե, թե տերն ինչ է անում, այլ ձեզ բարեկամներ կոչեցի,

որովհետև այն բոլորը, ինչ իմ Հորից լսեցի, հայտնեցի ձեզ: Ոչ թե դուք ինձ ընտրեցիք, այլ ես ձեզ ընտրեցի և ձեզ կարգեցի, որ դուք գնաք և պտղաբեր լինեք, և ձեր պտուղը մնա, և ինչ էլ որ իմ անունով Հորիցս խնդրեք, ձեզ տա» (Հովհ. 15:17):

Մեկը կարող է հարց տալ, թե՝ «Արդյո՞ք մարդը կարիք ունի բարեկամության կամ ընկերության»: Իհարկե ունի: Մարդը ընկերային էակ լինելով բարեկամության կարիքն ունի թե՛ ուրախության և թե՛ տրտմության մեջ: Իսկ ով մեկի հետ բարեկամական սեր չունի, մարդկային բնության սահմանից դուրս է գալիս, որովհետև բարեկամների ընկերակցությամբ ուրախությունը մեծանում է, իսկ տրտմությունը՝ նվազում: Եվ ով չգիտի, թե ի՞նչ է բարեկամությունը կամ ընկերությունը, նա չգիտի, թե ի՞նչ է մարդ լինելը:

Կան մարդիկ, ովքեր կյանքի օգտվելու կերպերը չգիտեն կամ անտեսում են, որովհետև չեն գիտակցում, թե ո՞րն է կարևորը, ո՞րը՝ ոչ: Աստված նրանց ցույց է տալիս իրենց երազանքները կատարելու ճանապարհը և ճշմարիտ բարեկամին, սակայն նրանք անցնում են կողքով առանց նկատելու: Հետո անդրադառնում են, բայց ուշացած:

Այս պատմությունը այդպիսի մարդկանցից մեկի մասին է.

«Մի մարդ կար, ով երեք երազանք ուներ՝ բարձր վարձատրությամբ լավ աշխատանք ունենալ, ամուսնանալ բարի ու գեղեցիկ աղջկա հետ և... ողջ աշխարհին հայտնի դառնալ:

Նրա կյանքում շատ դեպքեր պատահեցին, մենք կպատմենք դրանցից երեքի մասին:

ա. Ձմեռային սառնաշունչ առավոտ էր և երիտասարդը հարցազրույցի էր շտապում մի հայտնի ընկերու-

թյունում: Հանդիպմանը հինգ րոպե էր մնացել, իսկ նա դեռ մի թաղամաս պիտի վազելով անցներ: Հանկարծ հենց նրա առջև մի տարեց մարդ սայթաքում է ու վայր ընկնում: Մեր հերոսը նայում է նրան, որոշում, որ հարբած է և առանց ձեռք մեկնելու՝ վազում է իր գործին: Բարեբախտաբար ժամանակին հասցնում է հարցազրույցին: Դժբախտաբար նրան չեն ընդունում իր երազած աշխատանքին:

բ. Ամառային մի տաք երեկո նա զրոսնում էր քաղաքում: Փողոցում ելույթ ունեցող արտիստների տեսնելով՝ կանգ է առնում, որպեսզի գմայլվի ներկայացմամբ: Հանդիսատեսը մեծաթիվ չէր, բայց ներկայացումը բավականին հետաքրքիր ու զվարճալի էր: Ներկայացման ավարտից հետո ծափեր են լսվում ու մարդիկ սկսում են ցրվել: Մեր տղամարդը նույնպես շրջվում է, որպեսզի հեռանա, բայց ինչ որ մեկի ձեռքի երկչոտ հպումն է զգում իր ուսին: Ներկայացման գլխավոր հերոսուհին էր՝ պառավ ծաղրածուի կերպարով: Նա սկսում է հարցուփորձ անել, թե արդյո՞ք ներկայացումը դուր եկավ նրան, գո՞հ է դերասանների խաղից: Բայց մարդը չի ցանկանում զրույցը շարունակել և զզվանքով շրջվելով, տուն է գնում:

գ. Աշնանային մի անձրևոտ երեկո մարդը տուն էր շտապում՝ ընկերոջ ծննդյան տարեդարձի տոնից հետո: Ծանրաբեռնված օր էր եղել և նա երազում էր րոպե առաջ տուն հասնել, լոգանք ընդունել և տաքուկ անկողնում քուն մտնելու մասին: Հանկարծ ինչ որ մեկի խուլ հեկեկոցներ է լսում: Մի կին մեր հերոսի տան մոտ, նստարանին նստած լաց էր լինում: Նա մենակ էր, առանց անձրևանոցի, և միայն թեթև բաճկոնի գլխանոցն էր նրան փրկում սառն անձրևից: Մեր հերոսին նկատելով՝ օգնություն է խնդրում նրանից: Ինչ-որ բան էր պատահել նրա ընտանիքում և կինը շատ էր ուզում որևէ մեկի հետ անկեղծորեն խոսել: Մարդը մտածմունքի մեջ է ընկնում, նրա հայացքի առջև

հառնում են լոգարանն ու անկողինը և նա, մրմնջալով, որ սարսափելի զբաղված է՝ շտապում է շենքի մուտքից ներս մտնել:

Մարդն ապերջանիկ կյանքով ապրում է ու մահանում առանց իր երազանքների կատարման հասնելու:

Հանդերձյալ կյանքում իր պահապան հրեշտակին է հանդիպում ու բողոքի ձևով ասում.

Գիտե՞ս, բոլորովին տխուր ու անպետք կյանք եմ ունեցել: Երեք երազանք ունեի, սակայն դրանցից և ոչ մեկն իրականություն չդարձավ: Ի նչ ափսոս...

Հը մ... Սիրելի՛ բարեկամ, ես ամեն բան արեցի, որպեսզի երազանքներդ իրականություն դառնան, և դրա համար պետք էր ընդամենը մեկ անգամ ձեռք մեկնեիր, աչքերդ բաց անեիր ու սիրտդ ջերմացնեիր:

Ինչի՞ մասին ես խոսում:

ա. Հիշո՞ւմ ես այն մարդուն, որ սայթաքեց սառույցի վրա ու ընկավ: Հիմա ցույց կտամ այդ պատկերը... Այդ մարդն այն ընկերության գլխավոր տնօրենն էր, որտեղ այդքան ուզում էիր աշխատել: Քեզ փայլուն ապագա էր սպասում: Այն ամենն, ինչ պահանջվում էր քեզանից՝ ձեռքդ մեկնելն էր:

բ. Հիշո՞ւմ ես պառավ ծաղրածուին, որը ներկայացումից հետո քեզ մոտեցավ իր հարցերով: Դա երիտասարդ, գեղեցկուհի դերասանուհի էր, որն առաջին հայացքից սիրահարվել էր քեզ: Ձեզ երջանիկ ապագա էր սպասում, երեխաներ, անմար սեր: Քեզնից ընդամենը պահանջվում էր աչքերդ բաց անել:

գ. Հիշո՞ւմ ես ձեր մուտքի մոտ լաց լինող կնոջը: Անձրևոտ երեկո էր և նա ամբողջովին թրջվել էր անձրևից ու արցունքներից... Նա հայտնի գրող էր: Ընտանեկան ճգնաժամ էր ապրում և ջերմ աջակցության կարիք ուներ: Եթե օգնեիր նրան տաքանալ քո բնակարանում, լսեիր և

մխիթարեիր նրան, ապա նա մի գիրք կգրեր, որում կպատմեր այդ դեպքի մասին: Գիրքը համաշխարհային ճանաչում ձեռք կբերեր և դու ևս, քանի որ առաջին էջում հեղինակը կնշեր այն մարդու անունն, ով այդ ստեղծագործության մուսան էր հանդիսացել: Ամենն, ինչ այն ժամանակ պահանջվում էր քեզանից՝ սրտիդ մի փոքրիկ կայծն էր միայն: Իսկ դու ուշադիր չէիր, բարեկա մա:

Պետք է ունկնդիր լինել կյանքին, այն հնարավորություններ է առաջարկում: Իսկ օգնությունը պետք է կարողանալ ոչ միայն խնդրել, այլև՝ արժանապատվորեն ընդունել»:

Ճշմարիտ բարեկամությունը կամ ընկերությունը հիմնականում գտնվում է իմաստունների, մարդասերների և առաքինիների մեջ: Ուստի ով մեկի հետ հավատարիմ բարեկամություն ունի, նշանակում է, թե ունի նաև իմաստություն կամ մարդասեր է: Ավելի շատ այդպիսիների հետ են մարդիկ փորձում բարեկամություն կամ ընկերություն անել: Իսկ նա, ով ոչ մի բարեկամ կամ ընկեր չունի, նշանակում է, տվյալ անձը կամ մարդ չի սիրում կամ ինչ որ մի բանի մոլի է:

Ավելի լավ է իմաստուն բարեկամներ ունենալ, քան բազում գանձեր, որովհետև իմաստուն բարեկամը նեղ օրն օգտակար խրատներով օգնում է, իսկ գանձերն ու հարստությունը՝ երբեք: Կեղծ բարեկամը կամ ընկերը անձրևային բարակ առու է, և ինչպես որ առուն անձրևի պակասելու դեպքում ցամաքում է, այդպես և կեղծ բարեկամն է հաջողության սառելու դեպքում՝ անհետանում:

Զարմանքի արժանի է, որ երբ մարդիկ ձի կամ էջ են գնում, նրա բնավորությունն ու բարքը քննում են, իսկ երբ որևէ բարեկամ են ձեռք բերում, միայն նրա արտաքին կերպարանքին են նայում, իսկ նրա բնավորության մասին չեն մտածում: Ով իր համար առաքինի ու ճշմարտախոս

մարդկանց չի ընտրում իբրև բարեկամ ու խորհրդակից, բնական է, որ խորամանկ շողոքորթների նենգավոր խոսքերից կվնասվի:

Սրանից ավելի վտանգավոր ի՞նչ հիմարություն կա, որ մարդիկ հիվանդ անասուններին առանց քաշվելու հեռացնում են իրենց տանից, իսկ մոլի բարեկամներին ընդհակառակը՝ շարունակ իրենց սեղանակից և խորհրդակից են դարձնում:

Ձախորդությունը բարեկամության կամ ընկերության փորձաքարն է: Ժողովուրդն ասում է. «Եթե ուզում ես իմանալ բարեկամիդ կամ ընկերոջդ անկեղծ ու հավատարիմ լինելու մասին, նրա հետ կամ ճանապարհ գնա և կամ գործի մեջ մտիր»: Կեղծ բարեկամը կամ ընկերը հայտնի թշնամուց առավել չար է, որովհետև իմացած թշնամիներից մարդ սովոր է զգուշանալ, իսկ զաղտնի կամ աներևույթ թշնամիներից կասկած չունենալով կարող է չարաչար վնասվել: Եթե կամենում ես, որ մեկը քեզ բարեկամ ու հավատարիմ ընկեր լինի, նախ դու նրա հետ անկեղծ եղիր, որովհետև եթե դու ուրիշների բարին չես ցանկանում, հույս մի ունեցիր, թե ուրիշները քեզ բարիք կկամենան: Հիշեք Ավետարանի ոսկե օրենքը. «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց...» (Մատթ. 7:12):

Իմաստուն բարեկամների կամ ընկերների խորատն ավելի լավ է պահպանվում, քան բազմահազարանոց գործը:

Սիրաքի գրքում ասվում է. «Բարեկամ լինելու փոխարեն մի եղիր թշնամի. քանզի չար անունը իր հետ կբերի ամոթ և նախատինք մեղավորին և երկերեսանուն: ...Քաղցրախոս լեզուն մեծացնում է մտերմությունը: Եթե բարեկամ ես ձեռք բերում, փորձով ձեռք բեր նրան և իսկույն մի վստահիր նրան, քանզի բարեկամ կա, որ բարե-

կամ է իրեն պետք եղած ժամանակ միայն և քեզ հետ բարեկամ չի մնա քո նեղության օրը:... Հավատարիմ բարեկամը կյանքի դեղ է և Տիրոջից երկնչողները միայն կգտնեն նրան: Ով երկնչի Տիրոջից, կհաջողի բարեկամության մեջ, որովհետև ինչպիսին ինքն է, այնպիսին էլ՝ իր մերձավորը» (Սիրաք (6:1:17):

Եթե ուզում ես կյանքում միշտ երջանիկ, ուրախ ու հաջողություններ ունեցող մեկը լինել, բարեկամ կամ ընկեր դարձիր մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, որը երբեք քեզ չի վնասի, չի լքի ու քո նեղության ժամանակ մենակ չի թողնի քեզ; Նա քո համար կլինի ամենահավատարիմ բարեկամը կամ ընկերը, ինչպես եղավ Իր աշակերտների համար: Անձանձրույթ աղոթքով փորձիր գտնել այն ճանապարհը, որը քեզ կարող է մոտեցնել Նրան ու ընկեր դարձնել: Ամեն:

ԳՈՀԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ

«Գոհություն մատուցեցեք Տիրոջն ու օրհնեցեք անունը նրա: Քաղցր է Տերը, նրա ողորմությունը հավերժ է, նրա ճշմարտությունը՝ սերնդից սերունդ» (Սաղմ. 99:4-5):

Սաղմոսերգուի այս խոսքը Աստծուն գոհություն մատուցելու մասին է: Գոհաբանության Տոնն է: Ամերիկայի Միացյալ Նահանգներում մի ամբողջ օր մարդիկ, քաղաքացիներ փառք ու գոհություն պիտի հայտնեն Աստծուն, որ ապրում են, ստեղծում ու մանավանդ փառաբանում Նրա անունը: Ամեն տարի մենք մեզ հարց ենք տալիս, թե՝ «Ինչո՞ւ ենք փառք տալիս Աստծուն», «Արդյոք դրա կարիքը կա»: «Մի թե չենք կարող ապրել առանց Աստծու փառաբանության ու շնորհակալության» կամ «Ի՞նչ պիտի տա մեզ Աստծուց շնորհակալ լինելը»:

Ահա այս հարցերն են, որոնք մեր մտքերը զբաղեցնում են ամեն տարի և շատ անգամներ նայելով մեր շրջապատին ու առօրյա կյանքին, մենք դրանց պատասխանները չենք կարողանում գտնել ու այդպես էլ անցնում է մի ամբողջ կյանք:

Գոհաբանության օրվա տոնակատարության նպատակն է գոհություն մատուցել Երկնավոր Հորը, այն բոլոր բարիքների համար, որոնցով օժտել է մեր երկիրն ու մեզ և մենք օգտվում ենք այդ բարիքներից: Դժբախտաբար, սակայն մեր երկրում տիրող նյութապաշտությունը և դրամի նկատմամբ ունեցած պաշտամունքը մի տեսակ դատարկել են մարդկանց այն գիտակցությունից, թե՝ «ամեն մեզ տրված բարիք և պարգև երկնքից է իջել» ու մենք այդ ստացողներս կարծես թե պարտադրված ենք գոհանալու Աստծուց: Երանի կարողանանք ոչ թե պարտադրաբար, այլ սիրով ամեն օր գոհանալ Աստծուց Իր տված բարիք-

ների ու պարզների համար և ամենօրյա մեր աղոթքների միջոցով փառք ու գոհություն հայտնենք Նրան:

Թեև Սուրբ Ծնունդը ամերիկյան Կոնգրեսի որոշումով ազգային տոն է, սակայն բոլոր Արևմտյան երկրներն էլ գիտեն, որ Սուրբ Ծնունդը հարձակման տակ է, ինչպես նաև տոնի հետ կապված կրոնական արարողությունները, որոնք հետզհետե կորցնում են իրենց իմաստը: Դժբախտաբար Ամերիկայի բնակչության կարևոր մասը, չասելու համար մեծ մասը, ինչպես նաև աշխարհում այլ ժողովուրդներ, թեքված են ավելի շատ այն արժեքների կողմը, որի բացատրությունը ամենակարճ ձևով կարելի է այսպես ամփոփել. «Դրամը խոսում է ու ամեն բան շարժվում է»: Միակ բանը, որ մեզ մի քիչ մխիթարում է և հույս է տալիս, այն է, որ գոնե Գոհաբանության օրը պահպանվում է ակնածանքը Աստծու և Իր պարզևաճ բարիքների նկատմամբ: Արևելյան եկեղեցիները Սուրբ Պատարագի ընթացքին Աստծուն փառաբանելու և գոհություն մատուցելու այս աղոթքն են ուղղում Տիրոջը. «Ով Տեր, Քրիստոս Աստված, բոլոր ժամանակների Թագավորը և Արարիչը ամեն բանի, գոհություն ենք հայտնում Քեզ այն բոլոր բարիքների համար, որ շնորհել ես մեզ...»:

«Ի՞նչ է նշանակում Աստծուն փառք տալ և մենք ինչպե՞ս պիտի գոհանանք Նրանից»:

Հետաքրքիր հարց է: Օրինակի համար լսում եք, որ ձեր ծանոթներից մեկը հիվանդ է և պառկած է հիվանդանոցում: Անմիջապես ձեր բոլոր գործերը թողնում եք ու գնում նրան այցելության: Ձեզ տեսնելով հիվանդի տրամադրությունը փոխվում է, ուրախանում է, ժամանակավորապես մոռանում իր ցավերը և ջերմորեն զրուցում է ձեզ հետ: Բավական ժամանակ մնալուց հետո, նրան առողջություն մաղթելով հրաժեշտ եք տալիս մի բարի գործ կատարողի բավարարվածությամբ: Ի՞նչ եք կարծում

սա Աստծուն փառք տալ չի՞ նշանակում, չէ՞ որ դուք այս պահին ձեր այցելությանը մի բարի և հրաշալի գործ կատարեցիք. հիվանդի տրամադրությունը բարձրացրիք՝ նրա մեջ հույս արթնացնելով կյանքի նկատմամբ: Եվ այսպես տարբեր առիթներով՝ այցելություն ծնողներին, հարգանք նրանց նկատմամբ, սեր մարդկանց հանդեպ, համերաշխություն ընտանիքի անդամների և ինչո՞ւ չէ նաև աշխատանքի վայրում ձեր ընկերների հետ: Բարություն, արդարություն, մաքրություն, համերաշխություն, խաղաղություն, սեր, սրանք բոլորն էլ Աստծու հատկանիշներն են, որոնք Նա ներարկեց Իր նմանի՝ մարդու մեջ: Եվ այս բոլորը կատարելով, դուք փառք եք տալիս ձեզ Ստեղծողին և ոչ միայն փառք եք տալիս, այլ գոհանում եք ձեր ունեցածով: Փառք տալ նշանակում է գոհ լինել: Երանի այդպես լինել:

Փառք տվեք և շնորհակալ եղեք, որ ապրում եք: Իրականությունը դժբախտաբար այլ է. այսօր ավելի շատ բողոքողներ ու գանգատվողներ կան Աստծուց, քան՝ շնորհակալ և գոհ եղողներ:

Հրեշտակների մասին այս պատմությունը դրա վառ վկայությունն է.

«ԵՐԿՈՒ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

Մի մարդ մահանում է ու գնում երկինք: Աստծու մոտ գնալու ճանապարհին նա տեսնում է երկու հրեշտակների: Նրանցից մեկը սուրճ էր խմում, գիրք էր կարդում և երբեմն էլ պատասխանում էր հեռախոսազանգերին: Երկրորդ հրեշտակը չափից ավելի զբաղված էր, նա ընդունում էր բազմաթիվ էլ-նամակներ, համակարգիչով պատասխանում էր շատ ու շատ հարցերի և այլ պարտականություններ կատարում: Մի խոսքով՝ համեմատած առաջին հրեշտակի հետ, այս մեկը չափազանց զբաղված էր:

Մարդը բարկացած այսպիսի անարդարության դեմ, շարունակում է իր ճանապարհը: Երբ հասնում է Աստծու մոտ, վրդովված Նրանից բացատրություն է ուզում, ասելով.

«Տեր Աստված ես գիտեմ, որ Դու արդար, մաքուր ու անաչառ ես և բոլորի նկատմամբ էլ սիրով ես վերաբերվում: Ես ուղղակի զարմացած եմ այն անարդարության վրա, որ տեսա իմ ճանապարհին»: Եվ պատմում է երկու հրեշտակների մասին ու սպասում պատասխանի:

Աստված ուշադիր լսելով նրան, ժպտալով պատասխանում է. «Բայց վրդովվելու կարիք չունես, քանի որ ոչ մի անարդարություն էլ չկա այդտեղ: Առաջին հրեշտակը ընդունում էր այն մարդկանց շնորհակալությունը, որոնք ուղղված էին Ինձ: Տեսա՞ր չէ ինչքան քիչ էին զանգերը: Այդ հրեշտակը ծույլ-ծույլ սուրճ էր խմում, քանի որ շնորհակալություն հայտնող համարյա չկա երկրից: Իսկ երկրորդ հրեշտակը, որը չափից ավելի զբաղված էր, ընդունում էր մարդկանց բողոքներն ու զանգասները, որոնք ինչպես տեսաք շատ ու շատ են»:

Այս պատմությունը ցույց է տալիս, թե մարդիկ ինչքան սխալ ճանապարհի վրա են: Անընդհատ բողոքում են, նեղվում, բարկանում, մտահոգվում են և աղոթքի կյանքով էլ չեն ապրում: Երբ հարցնում ես. «Ինչպե՞ս ես», - պատասխանը ժխտական է այսպես. «Մի օր լավ կլինեմ», իսկ թե ո՞րն օրն է գալու այդ լավ օրը անշուշտ ո՛չ ինքը գիտի և ո՛չ էլ որևէ մեկը: Իսկ ճիշտ չի՞ լինի, եթե նա պատասխանի «Փառք Աստծու, շնորհակալ եմ իմ այսօրվա վիճակից»: Այսպիսի մոտեցումը կոչվում է լավատեսություն, որը քեզ ուժ, հույս և լույս կտա խավարած ճանապարհին:

Հակառակ, որ աշխարհիկ արժեքների աստվածը՝ դրամն է տիրապետում, սակայն կան սովորություններ, որոնք դեռ պահպանվում են. օրինակ ճամբորդություննե-

րը, որով այցելում են իրենց հարազատներին, ընտանիքներով միասին անցկացնելն ու հնդկահավ ուտելը, աղոթելը և այլն:

Մեր եկեղեցու Ժամագրքի մեջ Աստծուն գոհություն հայտնելու և փառաբանելու շատ գեղեցիկ աղոթքներ կան, սա դրանցից մեկն է: Եկեք այս ուրախ առթիվ շնորհավորենք մեկս մյուսին, աղոթենք իրար հետ և գոհություն հայտնենք Տիրոջը.

«Գոհանում ենք Քեզանից, Տե՛ր Աստված մեր, որ Քո երևելի լույսով ուրախացրեցիր Քո բոլոր արարածներին, իսկ Քո պատվիրանների իմանալի լույսով լուսավորեցիր բոլոր նրանց, ովքեր հավատում են Քեզ: Զորացրու՛ և մեզ, Տեր՛, պահելու Քո պատվիրաններն այսօր և ամեն ժամ: Որպեսզի լուսավորված մտքով միշտ Քո կամքը կատարենք և գալիք բարիքներին հասնենք Քո բոլոր սրբերի հետ՝ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհով և մարդասիրությամբ»: Ամեն:

«ՄԵՂՔԸ Ո՞ՒՄՆ Է» (ՀՈՎՀ. 9:2)

Երբ առաքյալները Երուսաղեմում հանդիպեցին ի ծնե կույրին, Հիսուսին հարցրեցին. «Ռաբբի՛, մեղքը ո՞ւմն է, որ կույր է ծնվել, սրա՞նն է, թե՞ հորն ու մորը» (Հովհ. 9:2): Հիսուս պատասխանեց. «Ո՛չ դրա մեղքն է և ո՛չ էլ իր հոր ու մոր, այլ՝ որպեսզի դրա վրա Աստծու գործերը հայտնի լինեն...» (Հովհ. 9:2-6):

Կուրությունը մեծ դժբախտություն է, քանի որ կույրը չի կարող տեսնել Աստծու ստեղծած բոլոր բարիքները: Սակայն ավելի մեծ դժբախտություն է հավատի կուրությունը, քանի որ նրանից տառապողը զրկված է աստվածային լույսից և չի կարող տարբերել չարը բարուց: 5-րդ դարի Վարդանանց հերոսամարտի պատմիչ, մեր թարգմանիչ վարդապետներից Եղիշեն ասել է. «Լավ է կույր աչոք, քան կույր մտոք», այսինքն՝ ավելի լավ է, որ մարդ ֆիզիկապես կույր լինի, քան մտքով:

Մարկոս Ավետարանիչը պատմում է մի կույրի մասին.

«Եկան Բեթսայիդա. և Նրա առաջ բերեցին մի կույրի ու աղաչում էին, որ դիպչի նրան: Եվ Նա բռնելով կույրի ձեռքից՝ գյուղից դուրս հանեց. նրա աչքերը թքով թրջեց և ձեռքը նրա վրա դրեց. և հարցնում էր կույրին, թե բան տեսնո՞ւմ է: Նա բացեց աչքերը և ասաց. «Տեսնում եմ մարդկանց, որ շրջում են ինչպես ծառեր»: Նա կրկին ձեռքերը դրեց նրա աչքերի վրա. կույրը իր աչքերը բացեց և տեսնում էր. բժշկվեց և ամեն ինչ հստակ տեսնում էր: Նրան իր տունն արձակեց և ասաց. «Գյուղ մի մտիր, այլ գնա քո տունը, իսկ երբ գյուղ մտնես, գյուղում ոչ ոքի չասես»» (Մարկ. 8:22-26):

Քրիստոս եկել էր մարդկանց կուրացած հոգիները բժշկելու:

Սբ. Գրիգոր Վարդապետ Տաթևացին ասում է, որ մարդն ունի երեք տեսողություն:

«Առաջինը մարմնավոր աչքերն են, որոնցով տեսնում է աշխարհը և ճանաչում ամեն ինչ: Եվ ամեն մեկը չէ, որ լավ տեսողություն ունի. կա, որ թույլ տեսողություն ունի, կա կույր և կա շատ լավ տեսնող:

Երկրորդը մտավոր տեսողությունն է, որովհետև Աստված մեր մտքին թռիչք է շնորհել. մեր մտքով տեսնում ենք երևույթներ, իրողություններ, որ մարմնավոր աչքերով չենք տեսնում, ինչպես երազները, տեսիլքները և այլն: Եվ ամեն մեկը չէ, որ մտքի լավ երևակայություն, մտապալկերներ ունի: Կա, որ հստակ է, կա թույլ և կա դժվար, որովհետև կան մտազարներ, մտավոր հետամնացներ, թույլեր, տկարներ, որ մտքի տեսողությունից շատ թույլ են:

Եվ երրորդը հավատի տեսողությունն է, որ մեր սրտի մեջ Աստված է դրել: Եվ բոլորը չէ, որ օժտված են հավատի տեսողությամբ. կան սուրբեր, ովքեր կատարյալ հավատի տեսողությամբ են օժտված, կան սովորական մարդիկ, ովքեր ունեն հավատ, բայց այն թույլ է, չեն զարգացրել իրենց հավատը, չեն նմանվում սուրբերին, բայց Աստծու ողորմածությանն են ապավինում: Եվ կան անհավատներ, որ չեն հավատում Աստծուն, այլ ինչպես Սբ. Դավիթ մարգարեն է ասում՝ «Անզգամն ասաց իր սրտում, թե՝ «Աստված չկա»» (Սղմ. 52:1): Իրապես, Աստծո գոյությանը չհավատալը անզգամություն է: Եվ այս կույր մարդը կարծես այդ երեք կարգի մարդկանց էր խորհրդանշում, որովհետև չէր տեսնում ոչինչ, բայց եկավ և Տիրոջ առջև ընկավ: Երբ Քրիստոս թքով թրջեց նրա աչքերը, նա սկսեց տեսնել մարդկանց ծառերի նման, բայց դեռ կատարյալ տեսողություն չէր ստացել: Իսկ երկրորդ անգամ, երբ Քրիստոս ձեռքերը դրեց նրա աչքերի վրա, բժշկվեց: Ճիշտ այդպես էլ այս աշխարհում, քանի դեռ մարդը մեղքի,

չարիքների և անօրինությունների մեջ է թավալված, չի տեսնում Տիրոջ ողորմությունը, չի հավատում Նրան, չի հասկանում, որ Աստված ոչնչից է ստեղծել ամեն ինչ: Բայց երբ զոջում է ու դարձի գալիս, սկսում է հավատալ աստվածային ողորմություններին, սակայն պարզ աչքերով դեռևս հստակ չի տեսնում այն խոստումներն ու բարիքները, որ Աստված պարգևել է մարդկանց, այլ տեսնում է ինչպես ծառեր, որովհետև դեռևս ամբողջապես մեղքերից չի հրաժարվել ու ձերբազատվել, այլ իր հին սովորությունները, մեղքերի հակումները թույլ չեն տալիս, որ աստվածային, երկնային իրողություններն ու ճշմարտությունները տեսնի հստակ, մաքուր հավատի տեսությամբ»:

Երբ մարդու հոգևոր տեսողությունը կատարելապես բացվում է, ապա ճանաչում է աստվածային բոլոր բարիքները, ապրում է Տիրոջով՝ ազատ մեղքերից, ուրախ, խաղաղ և երջանիկ կյանքով:...

Եվ որքան թույլ է ներթափանցում մեր հոգու մեջ աստվածային լույսը, այնքան ավելի վատ ենք տեսնում աստվածային իրողությունները, սկսում ենք թերահավատել, ամբողջությամբ չվստահել Տիրոջը, ինչպես այսօրվա կույրն էր առաջին բժշկությունից հետո միայն ծառեր տեսնում, մարդկային կերպարանքները նմանեցնում ծառերի, այդպես էլ մենք աստվածային իրողությունների սովերներն ենք միայն տեսնում, ծառեր ենք տեսնում և ոչ բուն խորհուրդները:

«Չգնահատված անձնագրհություն... առակ

Մի աղջիկ կար, ով աստում էր ինքն իրեն և ողջ աշխարհը, որովհետև, ի տարբերություն մյուսների, կույր էր ու չէր կարողանում տեսնել: Աշխարհում նա միայն մի սիրելի էակ ուներ. դա մի տղա էր, ով սիրում էր աղջկան, ամենուր նրա կողքին էր ու պաշտպանում էր կյանքի

դժվարություններից և նեղություններից: Մի օր աղջիկը նրան ասաց. «Եթե կարողանայի տեսնել, անպայման կամուսնանայի քեզ հետ»:

Ու հրաշք տեղի ունեցավ. հիվանդանոցից զանգահարեցին ու աղջկան հայտնեցին, որ ստացել են աչքեր և հնարավոր է փոխապատվաստման միջոցով վերականգնել նրա տեսողությունը:

Վիրահատությունը հաջող անցավ ու երբ աղջիկը բացեց աչքերը, առաջին մարդը, ում տեսավ, բնականաբար, իր սիրելին էր, որը նրան, անմիջապես, հարցրեց. «Այժմ, երբ դու արդեն տեսնում ես, կամուսնանա՞ս ինձ հետ»: Աղջիկը կարոտալից հայացքով նայեց տղային ու ի՞նչ տեսավ... Տղան կույր էր: Աղջիկը չէր սպասում այդպիսի հարվածի: Այն միտքը, որ կյանքի մնացյալ օրերը անցկացնելու է նայելով այդ կույր երիտասարդին, սարսափեցրեց նրան: Նա հրաժարվեց ամուսնանալ կույր տղայի հետ: Երիտասարդ սիրահարը, արցունքն աչքերին, հեռացավ իր սիրելիից:

Օրեր անցան և աղջիկը մի երկտող ստացավ. տղան գրում էր. «Սիրելիս, խնդրում եմ քեզ, հոգ տար աչքերիդ, քանի որ քոնը լինելուց առաջ, դրանք ինձ էին պատկանում»:

Ահա թե ինչպիսի՞ն է մարդ արարածը և թե ինչպե՞ս է արձագանքում նրա ուղեղը իրավիճակների փոփոխությանը: Շատ քչերն են հիշում, թե ինչպիսին էր կյանքը ընդամենը մի քանի թույլ առաջ, ով էր կանգնած նրանց կողքին ամենացավալի իրավիճակներում, ով էր ասում՝ դիմացիր, սիրելիս, Աստված ամեն բան ինքը կհոգա:

Հովհաննես Վարդապետ Երզնկացին ասում է. «Աստված մարդուն ստեղծեց հոգով և մարմնով ու զարդարեց Իր պատկերի նմանությամբ և միտքը դարձրեց հոգու աչքը ու աչքը՝ մարմնի ճրագ: Մարմնի աչքով (մարդը) տեսնում է տեսանելի երկրիս գեղեցկությունը, իսկ հոգու աչքով՝ Աստծու հրամանները, որոնք լույս են և լուսավորում են հոգին»:

Իսկ 12-րդ դարի մեր վարդապետներից Բարսեղ Մաշկևորցին շարունակում է. «Մեղքի բնությանը մի նայիր, թե փոքր է, այլ՝ նկատի առ, որ մեղքը անհոգությունից մեծանում է, ինչպես մարմնի ցավերը, որոնք իրենց փոքրության մեջ, երբ անտեսվեն, հետզհետե կմեծանան: Այդպես էր Հուդայի պարագան, ուր փոքր բաներից մեծամեծ չարիքներ ծնվեցին. աղքատների ունեցածից գողանալը եթե նա փոքր բան չհամարեր, մատնությունն էլ չէր անի: Նույնպես են պոռնկությունն ու այլ չարիքներ, որովհետև մեկը անմիջապես չարիքին չի դիմում, այլ՝ աստիճանաբար»:

Ուրեմն, ի՞նչ է մեզ մնում. աղոթքով ու պաղատանքով խնդրել և հայցել Տիրոջից, որպեսզի Իր աստվածային շնորհը ամբողջապես հեղի մեր հոգու խորքերը, որպեսզի ինչպես արեգակով է մեր աչքի ոսպնյակը լուսավորվում և տեսնում ամեն ինչ, այդպես էլ աստվածային շնորհի լույսով լուսավորվի մեր միտքը, մեր հոգին, մեր սիրտը և մեր ողջ էությունը: Ամեն:

Ի՞ՆՉ Է ՍԵՐԸ
«ՍԵՐՆ Է ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ», - ԱՍՈՒՄ Է ՊՈՂՈՍ
ԱՌԱՔՅԱԼԸ

Պողոս Առաքյալը Կորնթացիներին ուղղած իր նամակի 13-րդ գլխում խոսում է Սիրո մասին: Այդ գլուխը կոչվում է «Օրհներգ Սիրո», ուր նա խոսում է այն մասին, թե ամեն բան կարող ենք իմանալ և ունենալ՝ լեզուներ, մարգարեություններ, ունեցվածք, հարստություն, լեռները տեղափոխելու չափ հավատ, զանազան գիտություններ, սակայն, եթե սեր չունենանք՝ ոչինչ ենք: «Սերը համբերող է, քաղցրաբար է, սերը չի նախանձում, չի ամբարտավանանում, չի գոռոզանում, անվայել վարմունք չի ունենում, իրենը չի փնտռում, բարկությամբ չի գրգռվում, չար բան չի խորհում, անիրավության վրա չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտության վրա. ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում է, մշտապես հույս է տաճում, ամեն բանի համբերում: Սերը երբեք չի անհետանում, թե մարգարեություններ են, պիտի չքանան, թե լեզուներ՝ պիտի լռեն, թե գիտություն՝ պիտի անցնի, քանզի շատից քիչը գիտենք և շատից քիչն ենք մարգարեանում: Իսկ երբ գա կատարյալը, շատից քիչը կանհետանա... Բայց արդ, մնում են՝ հավատ, հույս, սեր, սրանք երեքը՝ և սրանցից մեծագույնը՝ սերն է» (Ա. Կորնթ. 13:1-13):

«Սերն է ամենակարևորը», - ասում է Պողոս Առաքյալը:

Դժբախտաբար այսօրվա աշխարհը գուրկ է այդ աստվածային սիրուց: Մենք կարիքը չունենք նայելու աշխարհի քարտեզին, զգալու համար այդ բացը մեր ընկերային կյանքից ներս, երբ ամեն օր անցնում ենք տխուր փորձության միջով ամեն տեղ տիրող քաղաքական վերիվայրումների պատճառով, ուր չար մարդիկ շեղված Աստ-

ծու պատգամած սիրուց ու հանդուրժողության ոգուց, իրենց գազանական բնագղները սրած, քաղաքական շահեր ակնկալելով, անմեղ մարդկանց ամենօրյա սպանությունների ու դժբախտությունների պատճառ են դառնում:

Դարեր շարունակ, տարբեր մոտեցումներով առաքյալներից սկսած մինչև եկեղեցու հայրերն ու բանաստեղծները, երգել են հավատով ու հույսով լի սերը: Սերը, որը հույս ու հավատ է ներշնչում, կորածին ու մոլորվածին, սերը, որը հույս և հավատ կոչվող այս երկու արժանիքներին իրապես տալիս է իրենց դիրքին պատշաճ բարձրությունը:

Ահա թե ինչպես է պատկերացնում Սերը Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Շենուդա Գ-ը «Աստված Սիրո Գանձ է» վերնագիրը կրող իր խրատականի մեջ:

«...Մի սպասեք, մինչև չար միտքը գա ձեր ուղեղի մեջ, և դուք դժվարանաք դիմադրել, այլ դուք պետք է նախաձեռնություն հանդես բերեք և զբաղեցնեք ձեր մտքերը արդար գործերով: Ձգտեք ձեռք բերել սուրբ խոկումներ և աստվածային մտքերի գանձ, առ Աստված ունեցած սիրո գանձը, որ ձեր գիտակցությունը ամաչի այն մտքերից և զգացմունքներից, եթե դեր ուզում է կեղտոտել այն կամ մղել անկման: Միշտ զբաղվեք օգտակար բաներով և հիշեք, որ Աստված կարդում և քննում է ձեր մտքերը: Ուստի դուք պետք է ամաչեք ձեզանից, երբ տեղ եք տալիս մեղսալից մտքերի: Եվ երբ դուք ընկնեք չար մտքերի մեջ, մի հուսահատվեք կամ պահեք այդ միտքը, այլ սթափվեք շուտով և կարգավորեք ձեր մտքերը:

Ես խորհուրդ եմ տալիս ձեզ անել առաջին քայլը. դուք պետք է ուղղեք ձեր մտքերը և թույլ չտաք նրանց իշխելու և կառավարելու ձեզ: Միտքը կարող է զենք լինել ձեր ձեռքին և կարող է զենք դառնալ ձեր դեմ. թող այն

ձեր ընկերը լինի և ոչ թե՝ թշնամին: Իմացե՛ք, որ ամենանշանակալի և օգտակար նախաձեռնությունները նախապես գաղափար են եղել և օգտակար համամարդկային գործերը ծնունդ են առել գաղափարներից: Թող ձեր գաղափարները գանձ լինեն թե՛ ձեր և թե՛ ուրիշների համար: Թող ձեր մտքերը օրհնություն լինեն այն հասարակության համար, որտեղ ապրում եք: Եթե դուք չեք կարող ձեր մտքերն օգուտի աղբյուր դարձնել ձեր և ուրիշների համար, գոնե թույլ մի տվեք, որ այն ձեր սրտի մաքրության և հավիտենականության կորստյան պատճառ դառնա:

Թող Աստված ձեզ հետ լինի, շնորհելով ձեզ մտքի մաքրություն որպես մի սուրբ գանձ»:

Այս պատմությունը հուզիչ է և ուսուցողական.

Իրական և անշախախտի սերը

«Սովորական մի հոգսաշատ առավոտ էր...Ժամը 8:30-ի մոտ էր... 80 տարեկանի մոտ մի ծերունի եկել էր հիվանդանոց, որ ձեռքի մատի կարերը հաներ: Ակնհայտ էր, որ նա շատ էր շտապում ու դողդողացող ձայնով ասաց, թե շատ կարևոր գործ ունի ժամը 9-ին:

Ես խնդրեցի նրան նստել՝ իմանալով, որ բոլոր բժիշկները զբաղված են: Երբ նայում էի նրա ձեռքը, նա ամեն վայրկյան թախծոտ աչքերով նայում էր ժամի վայրկյանալաքին: Ես տեսա, որ դեռ շուտ է կարերը հանելու համար... մյուս բժիշկներից վերցրի համապատասխան դեղանյութերը...իսկ մինչ այդ մենք զրուցում էինք: Ես հարցրի.

Երևի դուք մեկ այլ բժշկի մոտ եք նշանակված ու դրա համար եք շտապում:

Ոչ, ոչ...ես պետք է հասցնեմ մեկ այլ հիվանդանոց գնալ, որ կերակրեմ իմ հիվանդ կնոջը:

Ես հարցրեցի ծերունուն ու իմացա, որ իր կինը հիշողության կորուստ ունի:

Խոսելու ընթացքում ես մշակեցի նրա ձեռքն ու վիրակապ դրեցի կրկին: Նայեցի ժամին ու հարցրեցի.

Կանհանգստանա՞ծ եր կինը, եթե մի փոքր ուշ գնաք:

Իմ կինը ինձ չի հիշում արդեն հինգ տարուց ավել է: Նա անգամ չգիտի, թե ո՞վ եմ ես, - ասաց ծերունին:

Ու դուք ամեն առավոտ գնում եք նրա մոտ, չնայած նրան, որ նա ձեզ չի՞ հիշում...

Նա ժպտաց ու հայրաբար բռնելով ձեռքս՝ ասաց.

Նա չգիտի, թե ո՞վ եմ ես, բայց ես գիտեմ չէ, թե ո՞վ է նա:

...Ես հազիվ էի զսպում արցունքներս ու փշաքաղվել էի... և մտածում էի. «Հենց սա է այն սերը, որի մասին ես միշտ երազել եմ»...

Ընդհանրական Քրիստոնեական Հայրերից Սուրբ Հովհանն Ոսկեբերան Հայրապետն ասում է. «Եթե բժիշկն ասի և երես թեքի հիվանդից, իսկ հիվանդը խուսափի բժշկից, ապա կարո՞ղ է հիվանդը բուժվել, երբ բժիշկ չկան՝ չի, իսկ բժիշկը չայցելի նրան: Ինչո՞ւ ես դու խուսափում և երես թեքում նրանից: Որովհետև նա պի՞ղծ է: Հենց այդ պատճառով հարկ է գալ և բժշկել, որպեսզի վերականգնվի հիվանդի առողջությունը: Թեկուզև նա տառապի անբուժելի հիվանդությամբ, միևնույն է, դու պետք է քո գործն անես: Հուդան նույնպես բռնված էր անբուժելի հիվանդությամբ, սակայն Աստված չղաղարեց նրան բժշկել:

Այդ պատճառով դու մի թուլացիր: Թեկուզև ջանքեր թափելով դու անկարող ես նրան ազատել պղծությունից, միևնույն է, դու պարզև կստանաս՝ կարծես թե ազատել ես նրան և կստիպես նրան զարմանալ քո խոնարհությամբ՝ դրանով իսկ փառաբանելով Աստծուն: Թե-

կուզն հրաշքներ գործես, թեկուզն հարություն տաս մեռյալներին, թեկուզն նման այլ բաներ կատարես, հեթանոսները երբեք այդքան չեն զարմանա քեզ վրա, որքան երբ քեզ տեսնեն այդպես խոնարհ, այդքան բարի և սիրալիր վարվեցողությամբ: Իսկ դա պակաս կարևոր չէ, որովհետև շատերն այդ կերպ կարող են ազատվել արատներից: Ոչինչ այնպես չի կարող գրավել, քան սերը:

Այսպիսով, եթե սերը առաքինության մեղավորն է, ապա ջանք չիսայենք, որ նա բնակվի մեր հոգիներում, որպեսզի նա մեզ բարիքներ պարգևի և մենք մշտապես հավաքենք նրա հավերժ ծաղկող ու երբեք չթառամող առատության պտուղները: Այդ կերպ մենք հասու կլինենք և հավերժական բարիքներին, որոնցով և կարժանանանք մենք բոլորս՝ բարեշնորհ և մարդասեր մեր Տեր Հիսուս Քրիստոսին» (Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետ):

Սերը մի տեսակ նպաստ է, աստվածային նվեր ու մեզանից յուրաքանչյուրը անպայման կարող է իր բաժինը բերել ամեն ասպարեզում, որպեսզի մարդիկ ամեն օր ու ամեն բոլոր, փառք տան Աստծուն՝ Սիրո Արարչին:

Կ. Պոլսի Պատրիարք Մեսրոպ Արքեպս. Նարոյանը, իր քարոզներից մեկում այս ձևով է ներկայացնում Սիրո իմաստը. «Սիրո կյանքը հավատի ծաղկումն է: Հավատը սիրո շնորհիվ է աշխատում ու կյանքում շարունակվում, ինչպես արյունը մարմնի մեջ: Հավատը մեռած է, եթե նրա հետ զուգընթաց չէ Սերը՝ կյանքի երջանկությունը: Ամեն մարդ պետք է իր անձից, իր տաղանդից, իր հարստությունից մի բան գոհի, նվիրի իր ընկերոջը: Որով «Սերը մեր հավատքի ոգին ու իմաստն է»:

Եկեք հետևենք Պատրիարք Հոր իմաստուն խոսքերին և աղոթենք, որպեսզի Աստված Հավատի ու Սիրո անսպառ աղբյուրից հոսեցնի մեր ժողովրդի բոլոր զավակների սրտերից ներս: Ամեն:

ՀՈՒՅՍՈՎ ԱՊՐԻՐ

«Թող օրհնյալ լինի այն մարդը, որ հույսը Տիրոջ վրա կդնի, որ Տերը նրա հույսը կդառնա» (Երեմ. 17:7):

«Ի՞նչ է հույսը», «Ո՞ւմ վրա կարող ենք մեր հույսը դնել» և վերջապես «Մեր կյանքի համար ինչքանո՞վ է կարևոր հույս ունենալը»: Մրանք հարցեր են, որոնք յուրաքանչյուրիս էլ հետաքրքրում են և փորձում ենք գտնել դրանց պատասխանները:

«Եթե պատահի, որ մեկին ինչ-որ բան հարցնես, նախ մտածիր, որ խոսքդ նրան չվերաբերի, որովհետև չես կարող նրանից ճիշտ պատասխան ստանալ քո տարակուսանքները ցրելու համար...»,- ասում է Պողոս Պատրիարք Ադրիանապոլսեցին,- յուրաքանչյուր ոք իր շահի մասին ավելի է մտածում, քան ուրիշների: Ուստի խոսքերդ թյուր կողմը շրջելով՝ անհնարին դժվարություններով հուսաբեկ կանի քեզ: Հարցրու նրան, ում որևէ կերպ չի վերաբերում այն, ինչի մասին հարցնում ես, որպեսզի ճիշտ պատասխան ստանաս: Հուսահատությունն առաջ է գալիս Աստծու գրության մասին չիմանալուց. որովհետև հուսահատն Աստծուն ներող ու ողորմած չի ճանաչում, կամ Աստծու ողորմությունն իր հանցանքից պակաս է համարում...» («Խրատի Թանգարան»):

Աշխարհը թողնողը մտնում է կյանքի բոլորովին մի նոր ասպարեզ, որը անշուշտ ամբողջությամբ անծանոթ է մեզ համար, սակայն ունենում է շատ կողմեր, որոնք մեր կամքից անկախ այսպիսի հարցեր են առաջացնում. «Ի՞նչ անել կամ ինչպե՞ս ապրել»:

Այս հարցին պատասխանում է Սուրբ Անտոն Մեծը. «Հույսդ մի դիր քո արդարության վրա, ճշմարտապես զոջա քո անցյալ մեղքերի համար, սանձիր լեզուդ, սիրտդ և որովայնդ: «Բոլոր գործերից առավել լավը, որը

կարող է կատարել մարդը, դա իր մեղքերն են՝ Աստծու և իր ծերերի առաջ խոստովանելը, ինքն իրեն դատելը ու մինչև վերջին շունչը պատրաստ լինելը հանդիպելու ամեն մի փորձության»:

Հույսը չպետք է շփոթել այն պարզ ցանկության հետ, որը կարող ենք ունենալ մեր կյանքի այս կամ այն պայմաններում, այն ժամանակավոր մի զգացում է մեր մեջ, որը մեզ միշտ կապում է Աստծուն, ո՛չ միայն նեղությունների, ո՛չ միայն վտանգների ու դժվարությունների, այլ ամեն տեսակի երևույթների ընթացքին:

Հույսը այն գերբնական առաքինությունն է մեր մեջ, որը մեզ մղում է Աստծուց մի բարիք ակնկալելու և սպասելու: Հետևաբար հույսը իրեն հենակետ ունի Նրան և իբրև նպատակակետ՝ բարին: Հույսը հավատի վրա հիմնված մի առաքինություն է, որի միակ պատասխանը տվողը՝ Աստված Ինքն Է:

Պողոս Առաքյալը շարունակելով իր խոսքը Կորնթացիներին ուղղած առաջին թղթով, նորադարձ քրիստոնյաներին կոչ էր անում օժտվել այս երեք շնորհներով՝ հավատով, հույսով ու սիրով, որովհետև սրանք իրար միացած պիտի ստեղծեին չտեսնված այնպիսի մի ուժ, որը պիտի կարողանար քայքայել նույնիսկ Հռոմեական հզոր կայսրությունը, նրա փոխարեն մի նոր Թագավորության՝ Աստծու Հավիտենական Թագավորության հիմքերը դնելու համար:

Սա հետաքրքիր պատմություն է հուսահատության մասին:

«Շատ տարիներ առաջ սատանան որոշում է գլուխ գովել և ի ցույց դնել իր զինանոցի բոլոր զենքերը: Նա դրանք զգուշորեն տեղադրում է ապակե ցուցափեղկում և ամրացնում դրանց վրա պիտակներ՝ նշելով, թե որը ի՞նչ է և ի՞նչ արժե:

Ի՞նչ հավաքածու էր դա: Այստեղ էր գտնվում և՛ ՆԱԽԱՆՁԻ ոսկե դանակը, և՛ ՉԱՐՈՒԹՅԱՆ մուրճը, և՛ ԺԼԱՏՈՒԹՅԱՆ թակարդը: Փայտիկների վրա գեղեցիկ ձևով շարված էին նաև ՎԱԽԻ, ԳՈՌՈԶՈՒԹՅԱՆ և ԱՏԵԼՈՒԹՅԱՆ բոլոր զենքերը: Դրանք բոլորը դրված էին գեղեցիկ բարձերի վրա և հիացնում էին Դժոխքի բոլոր այցելուներին: Իսկ ամենահեռու դարակի վրա դրված էր փոքրիկ, ուշադրություն չգրավող և բավականաչափ մաշված փայտե սեայ, որի վրա ամրացված էր «ՀՈՒՍԱՀՄՏՈՒԹՅՈՒՆ» պիտակը: Ի զարմանս բոլորի՝ նրա արժեքը ավելի բարձր էր, քան մնացած զենքերի արժեքը բոլորը միասին: Այն հարցին, թե ինչո՞ւ է Սատանան այդ զենքը մնացածից ավել գնահատում, նա պատասխանում է.

Սա միակ զենքն է իմ զինանոցում, որի վրա ես կարող եմ հույս դնել, եթե մնացած զենքերը իրենց չար դարացնեն:

Նա քնքշորեն շոյում է փայտե սեայը և շարունակում.

Եթե ինձ հաջողվի այն մտցնել մարդու գլխի մեջ, նա կբացի դռները մնացած բոլոր զենքերի առաջ»:

Այնպես որ, երբեք մի հուսահատվեք, քանզի ձեր ճանապարհին ինչ-որ տեղ միշտ մի լուսավոր կետ կա, որ դառնալու է ձեր կյանքի մասը: Հուսահատությունը՝ ինքնասպանություն է:

Հետաքրքիր մի հարց է ծնվում մեր մտքում, «Իսկ ո՞ւմ վրա կարող ենք հույս դնել»:

Սաղմոսերգուն հստակորեն պատասխանում է այս հարցին.

«Սակայն իմ հոգին հնազանդ կմնա Աստծուն, քանզի նրանից է իմ համբերությունը: Նա է Աստվածն իմ ու փրկիչն իմ, ապավենն իմ՝ որ չսասանվեմ: Աստծուց է գործությունն ու փառքն իմ. Աստված է օգնականն իմ: Եվ

Աստծու վրա է հույսն իմ: Ձեր հույսը դրեք նրա վրա, ժողովուրդների ողջ բազմություններ, բացեք նրա առջև սրտերը ձեր. քանզի Աստված օգնականն է մեր հավիտյանս հավիտենից» (Մաղմ. 61:6-9):

Մի այլ պատմություն.

«Հույսը վառում է բոլոր մարված մոմերը (առակ).

Չորս մոմեր այրվում էին դանդաղ: Լռություն էր և լսվում էր նրանց զրույցը:

Առաջինն ասում է,- Ես խաղաղությունն եմ, մարդիկ չեն հասցնում ինձ պահել, կհանգչեմ,- ասում և թուլացնում է կրակը ու հանգչում:

Երկրորդն ասում է,- Ես հավատն եմ, ավելորդ եմ, մարդիկ չեն ուզում իմանալ իմ մասին, իմաստ չունի վառված մնալ: Երբ ավարտում է խոսքը, փչում է թույլ գեփյուռը և հանգցնում նրան:

Երրորդ մոմը արտահայտվում է տխուր,- Ես սերն եմ: Էլ ուժ չունեմ, մարդիկ չեն հավատում իմ կարևորությանը. մոռանում են նույնիսկ իրենց սիրելիներին,- ասում և անմիջապես հանգչում է:

Այդ պահին ներս է մտնում մի երեխա և տեսնում երեք մոմերը հանգած: Ի՞նչ է սա, դուք պետք է մինչև վերջ վառվեք,-ասում ու սկսում է լացել:

Այդ ժամանակ խոսում է չորրորդ մոմը, - Քանի դեռ ես կրակ ունեմ, կվառենք մյուս մոմերը: Ես հույսն եմ: Եվ փայլող աչքերով երեխան հույսի մոմով վառում է մյուսները»:

«Հույս մի դրեք անիրավության վրա, հափշտակություն մի ցանկանաք, եթե հարստությունն առվի պես իսկ հոսի, թող ձեր սրտերը չցանկանան» (Սաղմ. 61:11):

Երբեք մարդու վրա հույս մի դրեք, քանի որ նա փոփոխական է: «Այսպես է ասում Տերը. Թող անիծյալ լինի այն մարդը, որ իր հույսը կդնի մարդու վրա՝ ապավինելով նրա մարմնին ու բազկին» (Երեմ. 17:5): Ձեր հույսը դրեք Աստծու վրա, որովհետև Աստված երեկ նույնն էր, այսօր նույնն է և հավիտյանս նույնը պիտի մնա, չի փոխվելու: «Թող օրհնյալ լինի այն մարդը, որ հույսը Տիրոջ վրա կդնի, որ Տերը նրա հույսը կդառնա» (Երեմ. 18:7),- ասում է Երեմիա մարգարեն: Հիշեք Հիսուսի կյանքի վերջին օրերը, երբ Ծաղկազարդին ժողովուրդը ուրախությամբ ու ցնծությամբ դիմավորում էր Օծյալ Թագավորին, Նրա ոտքերի տակ փռելով զգեստներ, ձիթենու և արմավենու ճյուղեր, առաջնորդելով Նրան դեպի տաճար: Իսկ մեկ շաբաթ անց, Հիսուսին օրհնաբանող այդ նույն մարդիկ գոռում էին «Խաչ հանեք դրան, խաչ հանեք»: Այս է մարդը, «այսօր այսպես է, վաղը մի այլ կերպ»:

«Հույսը երբեք չի ամաչեցնում, որովհետև Աստծու սերը սփռված է մեր սրտերում Մուրբ Հոգու միջոցով, որ տրվեց մեզ» (Հռոմ. 5:5),- ասում է Պողոս առաքյալը Հռոմայեցիներին ուղղած իր թղթում:

Ուրեմն, եկեք շահենք այն կյանքը, որը Նա մեզ ժառանգ թողեց: Զջմարիտ կյանքը Քրիստոսն է, որին ունենալու համար մեր կյանքի օրերը պիտի լցնենք իրար հանդեպ ունեցած հույսով, հավատով, ու սիրով: Ամեն:

«ԵՂԻՑԻՆ ԿԱՄՔ ՔՈ...» ՏԵՐՈՒՆԱԿԱՆ
ԱՂՈԹՔ «ՀԱՅՐ ՄԵՐ»

«ԹՈՂ ՔՈ ԿԱՄՔԸ ԼԻՆԻ»

«Ոչ թե հսկողության տակ ծառայելով, որպես
մարդահաճոյ անձեր, այլ որպես Քրիստոսի ծառաներ՝
կատարելու համար Աստծու կամքը» (Եփես. 6:6):

Այս խոսքը ես վերցրել եմ Պողոս Առաքյալի Եփե-
սացիներին ուղղած նամակի 6-րդ գլխի 6-րդ համարից, ուր
նա խոսում է այն մասին, թե իբրև Քրիստոսի ծառաներ, ոչ
թե մարդկանց պիտի ծառայենք և հաճելի լինենք նրանց,
այլ կատարենք Աստծու կամքը:

Հարց է առաջանում. «Ի՞նչ է Աստծու կամքը: Ինչո՞ւ
Աստծու կամքը պիտի լինի և ոչ մարդու: Ինչո՞վ է Աստծու
կամքը զանազանվում մարդու կամքից»: Հարցեր են, որոնք
պատասխանի են սպասում:

Շատ անգամ մարդիկ ասում են, որ մենք ամեն օր
արտասանում ենք Հիսուսի Տերունական աղոթքը, բայց
Աստված խուլ է մեր աղոթքին և մեր խնդրանքները չեն
կատարվում: Ինչո՞ւ: Աստված չի նայում մարդու արտա-
քինին, շքեղությանը, պալատի նման տներին, թանկարժեք
մեքենաներին, այլ նայում է՝ մեր սրտին: Հիսուս ասում է,
երբ կաղոթեք Աստծուց երկրային բաներ մի խնդրեք, այլ՝
միայն Երկնքի Արքայությունը: Ամեն անգամ աղոթելուց
սրտանց և ամբողջ հոգով պիտի ասենք. «Տեր Աստված թող
Քո կամքը լինի»:

Աստծու կամքը կատարելու համար մարդկանց
օգտակար պիտի լինենք, ցույց պիտի տանք նրանց ճիշտ
ճանապարհը հասկացնելու համար, որ իրենց հույսը
չդնեն մարդկանց վրա, այլ խնդրեն Աստծուն, որ Իր կամքը
լինի: Առանց Աստծու կամքի մի տերև իսկ չի կարող շարժ-

վել աշխարհում: Ո՞վ է այն մարդը, որը անտեսելով Աստծու կամքը, կփորձի շրջանցել Նրան ու մարդկանց հաճության: Պիտի փորձենք նախ մարդկանց սովորեցնել Աստծու ճանապարհը և ապա, այնուհետև, թե ինչպե՞ս պիտի կատարենք Նրա կամքը: Կան մարդիկ, որոնք Աստծու կամքին հակառակ են գործում և ծառայում են չարին: Ոչ միայն ծառայում են, այլ նաև մեծ վնասներ են հասցնում իրենց նմաններին, կեղծավորությամբ, շողոքորթությամբ, քծնելով և մանավանդ հաճոյանալով բարձր պաշտոններ գրադեցնող պաշտոնյաների առաջ:

Սուրբ Անտոն Մեծն ասում է. «Մարդիկ հաճախ խելացի են անվանվում այդ բառի սխալ մեկնաբանությամբ: Խելացիները նրանք չեն, ովքեր հին իմաստունների ասացվածքներն ու գրվածքներն են ուսումնասիրել, այլ նրանք՝ ում հոգին է խելացի, ովքեր կարող են հասկանալ, թե ո՞րն է բարին ու չարը, և փախչում են չարից ու հոգու համար վնասակարից:... Իսկապես խելացի մարդը մեկ հոգս ունի միայն. ողջ հոգով և ամեն կերպ Աստծուն հնազանդվել ու գոհացնել Նրան»:

Շատ անգամ մեծամիտ մարդիկ իրենց չափից ավելի գիտունի և խելացու տեղ են դնում, կարծում են իրենք Աստված են, իսկ շրջապատի մարդիկ՝ իրենց ծառաներն են: Նրանք մոռանում են Հիսուսի խոսքը. «Ես չեկա ծառայեցնելու, այլ՝ ծառայելու: Ես ձեր մեջ սպասավորի պես եմ»: Չմոռանանք, որ այս խոսքերը ասողը Աստծու Որդին էր, որ պետք չուներ ծառա լինելու, քանի որ Ինքը բոլորից էլ բարձր էր: Սակայն խոնարհվեց, որպեսզի մեզ՝ մարդկանց բարձրացնի: Եթե մենք այս կարևոր բանը հասկանանք, կգիտակցենք, թե մենք ինչքան փոքր ենք Աստծու կամքի առաջ, թե մենք իբրև մարդ մի փոքրիկ հյուլն ենք Նրա մեծ գործության առաջ:

Այս կյանքում մարդկանց երեք դասակարգեր կան՝ իրար հակառակ ըմբռնումներով և բարքերով:

ա. Շատերը մտածում են, որ ԿՅԱՆՔԸ ՄԻ ԱՆԿՈՂԻՆ Է, որի վրա պառկում են և ուզում, որ ուրիշները ծառայեն իրենց: Սակայն այս դասակարգին պատկանողները շատ շուտ հուսահատության են մատնվում և ծանր դժբախտությունների մեջ են միայն հասկանում, թե հանգստավետ կարծած այդ անկողինը, իրենց համար շատ հաճախ վշտի ու մահվան անկողնի է վերածվում:

բ. Ոմանք էլ կարծում են, թե ԿՅԱՆՔԸ ՄԻ ՄԵԾՊԱՐԿ Է, որը պարտավոր են լցնել ոսկով, պատիվներով, փառքերով ու ամեն տեսակի հաճույքներով: Այս դասակարգի մարդիկ նյութապաշտության գոհերն են: Շաբաթվա յոթ օրը աշխատում են լցնել այդ պարկը, բայց առանց հաջողություն ունենալու իրենց վագրի մեջ, հանկարծակի մահը վրա է գալիս և կանգնեցնում նրանց բազմաշխատ վագրը:

գ. Կա սակայն մարդկանց փոքրաթիվ մի խումբ, որոնք հավատում են, թե ԿՅԱՆՔԸ ՄԻ ՃՐԱԳ Է, որը վառվում ու լուսավորում է շրջապատին: Սրանց նպատակը ծառայելն է և ոչ թե ծառայություն ընդունելը. ապրում են Աստծու լույսի մեջ և ամբողջությամբ գոհաբերում են ու գոհաբերվում, որ թշվառների նեղությունները և ցավերը մեղմացնեն: Նրանք շատ լավ հասկանում են, թե ուր կարոտություն և արցունք կա: Նրանք ճշմարիտ կյանքի ճրագներն են, որոնք շարունակ վառվում են ու փարատում շրջապատի խավարը: Եղեք Աստծու լույսին հետևող (Վարդան Ա. Քին. Դուլգերյան «Արձակ և չափածո մանրավեպեր»):

Մի՞թե ժամանակավոր մարդը կարող է ուժեղ լինել ու միշտ հրամայող: Այնպիսի բռնակալ-ուժեղներ են աշխարհ եկել ու գնացել, առանց դույզն իսկ մի հետք

թողնելու: Այդպիսիները միշտ պիտի հիշեն, թե բիրտ ուժը, երբեք էլ հավիտենական չէ:

Իհարկե առանց Աստծու մարդը չի կարող խելացի լինել և եթե ցանկանում է, միայն Նրա կամքի շնորհիվ կարող է լինել: Պողոս Առաքյալը Եփեսացիներին ուղղած իր նամակում ասում է. «Դրա համար անմիտ մի եղեք, այլ իմացեք, թե ինչ է Տիրոջ կամքը» (Եփես. 5:17):

Մեր եկեղեցական հայրերից մեկն ասում է, որ մարդը երեք կամքից մեկը կարող է կատարել.

ա. Աստծո կամքը, որը կատարյալ ու փրկագործ է.

բ. Մարդու կամքը, որն առանց Աստծու չի կարող փրկչական լինել.

գ. Չարի կամքը, որը տանում է դեպի կործանում:

Այս երեքից կարելի է եզրակացնել, որ միայն Աստծու կամքն է, որ մարդուն առաջնորդում է դեպի հոգու փրկություն: Դրա համար էլ ամեն անգամ աղոթելիս ուրիշ բաներ խնդրելու փոխարեն, փնտրենք Աստծու կամքը:

Աստծու կամքը կատարել, նշանակում է հնազանդվել Աստծու պատվիրաններին և ապրել աստվածահաճո կյանքով:

«Թող Քո կամքը լինի»:

Աստծու կամքն է, որ աղոթենք նաև ուրիշ մարդկանց համար, նրանք, ովքեր հիվանդ են, մոլորված են, խռովյալ վիճակ ունեն, մեկը մյուսի հետ չեն խոսում: Երբ կաղոթենք մեր նմանների համար, մենք ինքներս մեզ կմաքրենք, բարի կդառնանք, չարությունը դուրս կգա մեր միջից, սատանան կնահանջի: Չարը միշտ արթուն է, նա չի քնում, իսկ երբ մենք Աստծու հետ ենք, չարը անպայման կհեռանա մեզանից: Հիշեք, որ Աստված միշտ մեզ հետ է, մնում է, որ մենք աշխատենք մեր կյանքով Նրա հետ լինել:

Պողոս առաքյալն ասում է. «Դրա համար մենք էլ այն օրվանից, երբ լսեցինք այդ, չենք դադարում ձեզ հա-

մար աղոթելուց և Աստծուն աղաչանքներ մատուցելուց, որպեսզի լցվեք նրա կամքի գիտությամբ՝ ունենալով կատարյալ իմաստություն և հոգևոր իմացություն՝ ապրելու համար Տիրոջն արժանի և ամեն ինչում նրան հաճելի ձևով, բոլոր բարի գործերում պտղաբեր լինելու և Աստծու գիտությամբ աճելու համար՝ զորացած նրա ամբողջ ուժով, նրա փառքի գործությամբ, կատարյալ համբերությամբ և հարատևությամբ» (Կող. 1:9-11):

Ուստի կարևոր է, որ բոլորս հիշենք այս զգուշացնող պատվերը, թե՛ ամեն մարդու մի՛ հավատացեք:

Որևէ հարուստ, որքան էլ իմաստուն ու բարի լինի, հնարավոր չի որ թերութիւն չունենա, որովհետեւ սխալական մարդ է՝ ընկած իրեն շրջապատող հաճելի մարդկանց անթիվ երագների մեջ, մանավանդ եթե դաստիարակվել է սնափառության ու ազատամտության մեջ:

Սաղմոսաց գրքում ասվում է: «Աստված ցրելու է երեսպաշտների ոսկորները» (Սաղմ. 52:6): Թշվառ է տվյալ մարդը, երբ նա թունավորվում է շողոքորթների ու կեղծավորների խոսքերից, որոնց նա կապում է իր կյանքը, քանի որ նրա կողքին առաքինի մարդիկ չկան, որոնք նրան ճշմարիտ ճանապարհը ցույց տան:

«Պահպանիչ» աղոթքի մեջ ասվում է. «Խաղաղությամբ պահպանիր մեզ Քրիստոս Աստված սուրբ և պատվական խաչիդ հովանու տակ: Փրկիր մեզ երևելի և աներևույթ թշնամուց: Արժանի դարձրու մեզ գոհությամբ փառավորել Քեզ Հոր և Սուրբ Հոգու հետ միասին, այժմ և միշտ և հավիտյանս: Ամեն»:

Սրանք այդ աներևույթ թշնամիներն են, որոնք չափից ավելի վտանգավոր են և շատ անգամ անկարելի է դառնում նրանց դեմ պայքարելը: Միակ ճանապարհը մեր հույսը Աստծու վրա դնելն է, որ մեզ պահպանի նրանցից,

քանի որ Նա ամեն ինչ տեսնում է ու լսում, այն ինչ որ մեզ համար հնարավոր չէ:

Աղոթենք, որ Տերը բոլոր մարդկանց ուժ և կարողություն պարգևի, որպեսզի գիտակցեն ու հասկանան, թե իրենց կամքով չեն կարող իրենց նպատակները իրագործել, այլ պիտի խնդրեն Աստծուն, որ Նրա կամքը լինի ամեն ինչում, ամեն գործի մեջ և ամեն պարագայում:
Ամեն:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ճմարտությունը երկրից բուսավ,
արդարությունը երկնքից երևաց»

(Սաղմ. 84:12)

Այս խոսքը ես վերցրել եմ Սաղմոսաց գրքի 84-րդ գլխի 12 համարից:

Երկու կարևոր մտածումներ կան Սաղմոսերգուհի մտքում՝ ճմարտություն և արդարություն:

ա. «Ճմարտությունը երկրից բուսավ»: «Ի՞նչ ճըճմարտության մասին է խոսում Սաղմոսերգուն, մարդկայի՞ն, երկրայի՞ն, թե՞՝ երկնային»:

Ճմարտությունը երկրից բուսավ, այն ճմարտությունը, որով Տերը խոստացել էր, սերմնահատիկի նման թաքնված էր հողի տակ, ժամանակը հասավ, երբ այդ ճմարտությունը սերմնահատիկի պես աճեց, այս պարագային Հիսուսի միջոցով:

Ուրեմն, ճմարտությունը հենց Ինքը մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսն էր: Իսկ մինչ Հիսուսի գալը երկրի վրա ճմարտություն կա՞ր: Իհարկե կար: Բայց նրա հիմքը շատ թույլ էր, փոփոխական, կապված մարդկանց քնահաճույքից, երբ իրենց հարմար էր, կարող էին նույնիսկ բռնի ուժով ճմարտությունը խեղաթյուրել հոգուտ իրենց «ես»-ի: Այդպիսին էր Պիղատոսը, երբ Հիսուսին հարցրեց. «Թե որ այդպես է, ուրեմն դու թագավո՞ր ես»: Հիսուս նրան պատասխանեց. «Դու ես ասում, որ ես թագավոր եմ, բայց ես դրա համար իսկ ծնվել եմ և դրա համար իսկ եկել եմ աշխարհ, որպեսզի ճմարտության համար վկայեմ: Ամեն մարդ, որ ճմարտությունից է, իմ ձանր լսում է»: Պիղատոսը Նրան հարցրեց. «Ի՞նչ է ճմարտությունը», սակայն չսպասեց Հիսուսի պատասխանին և իր դատավճիռը կայացրեց: Հիսուսին հանդիպելով նա հասկացավ, բայց

քաջությունը չունեցավ այն ստանալու: Այս էր մարդկային ճշմարտությունը: «Ես եմ ճանապարհը եւ ճշմարտությունը և Կյանքը», - պատգամում է Հիսուս (Հովհ.14:6), քանի որ Ինքն էր հոգեկան ու իմացական այն լույսը, որի միջոցով միայն կարող ենք հասկանալ կյանքի իմաստը և տիեզերքի գաղտնիքները: Նրա ճշմարտությունը հավիտենական է և անփոփոխ, այն մի ուժ է, որն ազատագրում է մարդուն իր մեղքերից ու մոլություններից: Նա հիմնովին փոխում է մարդու մտածելակերպը: «Նա կամենում է, որ բոլոր մարդիկ փրկվեն և հասնեն ճշմարտության գիտությանը» (Ա. Տիմ.2:4), - ասում է Պողոս Առաքյալը:

Ճշմարտությունը գտնելը բավական չէ, կարևորը այն պահելն է:

բ. «Արդարությունը երկնքից երևաց»: Այո՛, պետք է ասենք, որ Աստծու արդարությունն է, որ երկնքից երևաց, այսինքն, միայն Աստծու կողմից տրված արդարությունն է ճշմարիտ արդարությունը, մարդկային արդարությունը հիմք չունի և փոփոխական է: Աստծու արդարությունը ուրիշ բան չի, եթե ոչ Նրա պատրաստած փրկության ծրագիրը, որը մարդկանց արդարացնելն էր, այդ էլ երկնքից պիտի երևար: Որով Աստծու նախախնամությամբ և Նրա կողմից տրված արդարությունը իր լրումը պիտի գտներ Հիսուս Քրիստոսի միջոցով:

«Երանի նրանց, որ քաղցն ու ծարավն ունեն արդարության, որովհետև նրանք պիտի հագնենան» (Մատթ. 5:6), - ասում է Հիսուս:

Մի կտոր հացն ու մի բաժակ ջուրը որոշ չափով կկշտացնեն մարդու ստամոքսը, բայց ոչ հոգին: Հոգին կշտացնելու համար անհրաժեշտ է արդարությունը: Աստված առատաձեռն է, միայն պետք է խնդրել Նրանից:

Ըստ մեր Տիրոջ արդարությունը երկնքի բանալին է: Նա ասում է. «Եթե Ձեր արդարությունը ավելի չլինի, քան

օրենսգետներինը և փարիսեցիները, երկնքի արքայությունը չեք մտնի» (Մատթ. 5:20): Երկնքի արքայությունը հոգու վերջնական կայանն ու վիճակն է, ուր կյանքը հավիտենական երջանկություն և երանություն է:

Այս պատմությունը շատ ուսանելի է.

«Երկինք տանող ճանապարհը.

Տրոլեյբուսն ընթանում էր իր սովորական երթուղով: Մարդիկ բարձրանում, իջնում էին: Երբ արդեն վերջին կանգառներին էին հասնում՝ վագոնում երկու կին էին մնացել ու աղքատիկ հագնված մի փոքրիկ տղա՝ խոշոր ու շատ թախծոտ աչքերով: Կանանցից մեկը նախավերջին կանգառում իջավ: Տոմսավաճառը ձայնեց նրան՝ կարծելով, թե տղան նրա հետ էր.

Տիկին, Դուք մոռացա՞ք Ձեր երեխային:

Ո՛ւմ, սրա՞ն: Այսպիսի անխնամ երեխան չի կարող իմ որդին լինել,- արհամարհանքով պատասխանեց նա:

Դու ո՞ւմն ես, փոքրիկ: Կորե՞լ ես,- հոգատարությամբ հարցրեց տոմսավաճառը:

Ե՛ս: Ես ոչ ոքինը չեմ: Մենակ եմ երթնեկում:

Երեխաները չեն կարող ոչ ոքինը չլինել: Որտե՞ղ է մայրիկդ: Մոլորվե՞լ ես:

Մայրիկս Երկինք է գնացել: Ես էլ եմ ուզում այնտեղ գնալ: Մորաքույր, չգիտե՞ք, թե որ տրոլեյբուսն է Երկինք գնում:

Այդպիսի երթուղի չկա, փոքրիկս: Եվ այնտեղ հասնելն էլ հեշտ չէ:

Բայց ես այնքա՛ն եմ ուզում մայրիկիս տեսնել... Մի՞թե Երկինք տանող ոչ մի երթուղի չկա:

Մյուս կինը, որ ավելի երիտասարդ էր, մոտեցավ տղային, գրկեց ու քնքշորեն կրծքին սեղմեց:

Անունդ ի՞նչ է, տղաս:

Անունս Միտյա է, բայց ինձ այժմ 57 են անվանում: Մանկատանն եմ ապրում: Այնտեղ շատ երեխաներ կան և նրանցից ոչ ոք մայրիկ չունի: Դաստիարակչուհին չի կարողանում բոլորին հիշել և այդ պատճառով էլ համարներով է կոչում:

Դժվա՞ր է քեզ համար, փոքրիկ:

Ինձ ոչ ոք չի սիրում: Մայրիկս միշտ համբուրում էր ինձ, քնելուց առաջ հեքիաթ էր կարդում, օրորոցային երգում: Նաև աղոթում էինք միասին: Այնպես եմ ուզում մայրիկիս տեսնել: Նա գնաց ու այլևս չվերադարձավ: Մորաքույր, իսկ դու Երկինքում եղե՞լ ես:

Դեռ ոչ, անուշիկս: Բայց գիտեմ, թե ինչպես կարելի է այնտեղ գնալ: Միայնակ ճանապարհը չես գտնի: Ուզո՞ւմ ես քեզ իմ տուն տանեմ: Մենք միասին կապրենք ու Քրիստոսին կսպասենք: Նա կարող է մեզ Երկինք տանել, որտեղ այժմ մայրիկդ է ապրում:

Տղայի աչքերը հույսով փայլեցին: Նա սեղմվեց բարի կնոջն, ինչպես ժամանակին իր մայրիկին, իսկ նա քնքշությամբ շոյում էր նրա գլուխն ու մեղմորեն ժպտում:

Վերջին կանգառում իջան: Տոմսավաճառն ու վարորդը երկար նայում էին նրանց ետևից: Այնուհետև նրանցից մեկն ասաց.

Մեր երթուղու վրա «Երկինք» կանգառը նշված չէ: Բայց ինձ թվում է, որ այն կա այս գծում»:

Աշխարհն ավելի քան երբևէ ունի Քրիստոսի, Նրա փրկության և սիրո կարիքը: Շատ մարդիկ դատարկություն են նկատում իրենց շուրջը և ներսում: Մյուսներն ապրում են անհանգստության և անապահովության մեջ՝ անհուսալիության ու հակամարտությունների պատճառով: Մեզ բոլորիս հարկավոր են բավարար պատասխաններ՝ մեր գոյաբանական հարցերին: Քրիստոսի մեջ և միայն Նրա մեջ է հնարավոր գտնել իրական խաղաղու-

թյուն ու մարդկային յուրաքանչյուր ձգտման իրականացում: Հիսուս ճանաչում է մարդու սիրտը, ինչպես ոչ ոք: Հետևաբար կարող է բուժել այն, տալով նրան կյանք ու մխիթարություն:

Նա Իր գալուստով և Իր վարդապետությամբ շեշտել էր արդարության կարևորությունը. «Նախ խնդրեցեք Աստծու արքայությունը և նրա արդարությունը, և այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա» (Մատթ.6:33):

Նա իբրև Արդարության Արեգակ և Ճշմարտության Լույս, իջավ երկնքից ու մարդկանց ցույց տվեց դրանց ճանապարհը՝ Իր օրինակով:

Ուրեմն, եկեք չմերժենք Հիսուսին և մեր բարիքի ու հաջողությանց համար՝ հետևենք Նրա արդարությանն ու ճշմարտությանը և Սաղմոսերգուի հետ աղոթենք ու խնդրենք. «Ուղարկիր Տեր, քո լույսն ու ճշմարտությունը, որ ինձ առաջնորդեն և հասցնեն քո սուրբ լեռն ու օթևանը: Ես կմոտենամ Աստծու սեղանին...» (Սաղմ. 42:3-4): Ամեն:

ՀԱՎԱՏ ԵՎ ՀՈԳԻ

«Որտեղ հավատ չկա, այնտեղ հոգի չկա, իսկ որտեղ
հոգի չկա, այնտեղ կենդանություն գոյություն չունի,
ապա ուրեմն բոլոր անհավատները մեռած են
և նրանց մեջ հոգի չկա»
Ընդհանրական Քրիստոնեական
Վարդապետներ

Այս խոսքը ես վերցրել եմ Ընդհանրական Քրիստոնեական Վարդապետներից. շատ խորիմաստ մտքեր են, մտքեր, որոնք մեզ մտածել են տալիս հավատի, նրա արտահայտությունների, հոգու, անհավատության ու նրանից բխող հոգեկան վիճակների մասին:

Եվ բնականաբար հարցեր են առաջանում, թե՝ «Ի՞նչ է հավատը, կա՞ն անձեր, որոնք չեն հավատում, չհավատացողը հոգի ունի՞, եթե չունի՝ կյանք կա՞, թե՞ ոչ, իսկ եթե անհավատները հոգի չունեն՝ կենդանի՞ են, թե՞ մեռած և այլ նմանատիպ հարցեր»:

ա. «Ի՞նչ է հավատը» հարցմանը Պողոս Առաքյալը Եբրայեցիներին ուղղած իր թղթում ասում է. «Ի՞նչ է հավատը, եթե ոչ՝ հուսացված բաների հաստատումը և ապացույցն այն բաների, որոնք չեն երևում» (Եբր.11:1): Եթե հավատը հուսացված բաների հաստատումն է և ապացույցը այն բաների, որոնք չեն երևում, ուրեմն այնտեղ, ուր հավատ չկա, չտեսնված բաները կարող ենք հոգով հասկանալ: Այնպես, ինչպես պիտի ասեր Քրիստոս Սամարացի կնոջը. «Կգա ժամանակը, և արդեն իսկ եկել է, երբ ճշմարիտ երկրպագուները կերկրպագեն Հորը ոգով և ճշմարտությամբ, քանի որ Հայրն էլ իրեն այդպիսի երկրպագուներ է ուզում: Հոգի է Աստված, և նրա երկրպագուները պետք է հոգով և ճշմարտությամբ երկրպագեն»

(Հովհ. 4:23-24): Ուրեմն ըստ Հիսուսի Աստված հոգի է և միայն կարելի է հոգով Նրան պաշտել: Ծննդոց գրքում կարդում ենք. «Տեր Աստված մարդուն ստեղծեց հողից, նրա դեմքին կենդանության շունչ փչեց, և մարդն եղավ կենդանի էակ» (Ծննդ. 2:7): Այդ կենդանության շունչը՝ Աստված իբրև հոգի դրեց մարդու մեջ:

բ. Մեր կապը Աստծու հետ հոգով կապված լինելու վիճակն է, ըստ այնմ այնտեղ ուր որ վստահություն չկա, հավատ չկա, նշանակում է հոգի չկա, իսկ մեզ կենդանի պահողը մեր հոգին է, հոգին, որը մարդուց է դուրս գալիս և հոգի է դառնում: Դրա համար էլ այնտեղ ուր հոգի չկա, այնտեղ կյանք գոյություն չունի: Եթե կյանք գոյություն չունի նշանակում է այն մեռած է: Երբեմն վատ մարդկանց մասին այսպիսի ժխտական արտահայտությունների ենք հանդիպում. «Այս մարդու մեջ հոգին մեռած է» կամ «Այս ինչքան անհավատ մարդ է»:

գ. Ուստի անհավատները մեռած են, թեև կարող են ֆիզիկապես ապրել, բայց հոգեպես մեռած են: Եվ որովհետև մեռած են, ուրեմն նրանց մեջ բնական է, որ հոգի չկա, այն հոգին, որով Աստծուն կարող են ճանաչել, այն հոգին, որն Աստծու հետ կապի մեջ պիտի լինի և այն հոգին, որն Աստծու հետ սիրո կապի մեջ է:

Իմ կարծիքով անհավատ մարդիկ չկան, բայց կան մարդիկ, որոնք դառնում են նյութի գերի, կարելի է ասել դառնում են դրամի երկրպագու և նրանց համար հավատը դառնում է պարզապես ցույց տալու միջոց: Եվ բնական է գերի դառնալով դրամին, նյութին, ունեցվածքին, հարստության, մեռնում է Աստծու տված կենդանության շունչը՝ հոգին, իսկ ում մեջ խամրում է հոգին, նա դառնում է կենդանի և կորցնում է մարդկային բոլոր շնորհներն ու առավելությունները, որոնք նա ստացել էր Ամենաբարձրյա-

լից: Այդպիսիների համար ժողովուրդը ասում է. «Նա իր հոգին ծախել է սատանային»:

Այս պատմությունը հոգին ծախելու մասին է.

«Այնպես պատահեց, որ մի անգամ ոմանք պանդոկում գինի էին խմում և հարբած խոսում էին միմյանց հետ զանազան բաներից: Հետո զրույց բացվեց, թե այս աշխարհից հեռանալուց հետո ի՞նչ է լինելու: Այդ ժամանակ նրանցից մեկն ասաց.

Քահանաները սնոտի կերպով մեզ ծաղրում են, երբ ասում են, թե հոգիներն այս կյանքից հետո կենդանի են մնում:

Այս լսելով՝ ամենքն էլ ծիծաղեցին: Եվ ահա ուժեղ ու մեծահասակ մի մարդ, գալով նրանց մոտ նստեց և հրամայելով գինի բերել, սկսեց ըմպել և հարցրեց, թե միմյանց հետ ի՞նչ են խոսում: Առաջինը պատասխան տվեց.

Մարդկանց հոգիների մասին էինք զրուցում, եթե մեկը կամենար իմ հոգին գնել, նրան էժան կվաճառեի և ինչ որ առնեի, հոժարությամբ ամենքի փոխարեն գինու գինը կվճարեի:

Եվ բոլորը նրա անմիտ խոսքի վրա ծաղրում էին, հյուրն ասաց.

Ես այդպիսի վաճառող եմ փնտրում և հոժարությամբ կգնեմ: Ասա՛, ի՞նչ գնով ես վաճառում այն:

Իսկ նա, բերանը բացելով, պատասխանեց.

Այսքան:

Եվ անմիջապես գինը որոշեցին, և հոգիների գնորդը զումարը տվեց: Եվ երբ բոլորն ուրախությամբ գինի էին խմում, նա, որ իր հոգին էր վաճառել, չէր էլ մտածում այդ մասին: Իսկ երբ երեկո եղավ վաճառականն ասաց. ժամանակն է, որ ամեն մարդ իր տունը գնա, բայց մինչև գնալը, նախ դատաստան արեք: Եթե մեկը ձի գնի և այն բե-

րանին սանձ ունենա, մի^օ թե սանձը նրանը չի լինի, որ ձին գնել է:

Ամենքն էլ միաբերան պատասխան տվեցին.

Այդպես է:

Եվ ահա հոգեվաճառ թշվառականն ահից սկսեց դողալ: Իսկ վաճառականը, նրան առնելով, բոլորի աչքի առաջ վեր բարձրացրեց և հոգով ու մարմնով իր հետ դժոխք տարավ, որովհետև մարդու կերպարանքով սատանան էր. քանզի մարդու հոգին էլ ուրիշ, ով կգնի, եթե ոչ նա, ով մշտապես փնտրում է, որպեսզի մարդու հոգին կորստյան մատնի»:

Նա ով իսկականից և անկեղծորեն հավատում է Աստծու գործությանը, հոգևոր ուժի միջոցով սերտ, անխազելի և հզոր կապ է ստեղծում երկրի և երկնքի մեջ՝ իրեն դարձնելով այդ շղթայի բազմահազար հուսալի օղակներից մեկը: Եվ հակառակը՝ անհավատի մոտ այդ կապը խզված է և նա ապրում է որպես սովորական մի մարդ, իր ամենօրյա հոգսերով, անլուծելի խնդիրներով ու դժվարություններով, որը վերջին հաշվով կարող է բերել անհաջողությունների և դժբախտությունների:

Մեր հոգու մաքրության համար անհրաժեշտ է, որ մեր միջից հանենք՝ նախանձի, փառասիրության, գոռոզամտության, անհամեստության և այլ բացասական երևույթները, որպեսզի հոգով մաքրվենք ու այդ մաքրությունը հնարավորություն ընձեռի մեր հոգևոր ուժի հզորացմանը:

Գերագույն Արարիչը, ստեղծելով մարդուն և կանխատեսելով նրան սպառնացող անընդհատ աճող բացասական գործոնների ազդեցությունը, նրան զինել է մի հզոր ու անպարտելի զենքով՝ հոգով: Նա բոլորիս մարմնի մեջ տեղադրել է այդ Աստվածային մասնիկը և մենք պարտավոր ենք իմանալ ոչ միայն, թե ինչպե՞ս պահպանենք մեր հոգու մաքրությունը, որպես Աստծու Գերագույն Պար-

գեր, այլն թե ինչպե՞ս և ի՞նչ ձևով հզորացնենք մեր հոգու ուժը, որպեսզի դիմակայենք առաջացող դժվարություններին:

Մաքրենք մեր հոգիները աղոթքով, որպեսզի բացվեն մեր հոգու աչքերը: Մի օր, ուզենք կամ չուզենք պատասխան ենք տալու մեր երկրային կյանքի համար: Չըզրկենք մեզ երկրային բարիքները վայելելուց, բայց չմոռանանք դրանց Ստեղծողին: Այս ձևով մեր հոգիները փրկած կլինենք հավիտենական կրակների մեջ այրվելուց:

Աղոթքով սնենք մեր հոգին: Հոգևոր սննդի ստացման որակն ու քանակը կախված է միմիայն մեզանից, թե ինչքանո՞վ մենք անկեղծ, անկողմնակալ, անմիջական ու խոր հավատով ենք դիմում Արարչին:

«Անհավատ մի եղիր, այլ՝ հավատացյալ» (Հովհ. 20:27), Հիսուսի խրատն է ուղղված Թովմաս առաքյալին և նրա միջոցով՝ բոլորիս: Աստծու հետ կապը կարող ենք հաստատուն պահել, միմիայն հավատով, սիրով ու աղոթքով: Փորձենք այն մնայուն կամրջի վերածել: Ամեն:

ՓՈՂԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Բոլոր չարիքների արմատը փողասիրությունն է, որին ոմանք ձգտելով՝ մոլորվեցին հավատից և իրենք իրենց զցեցին բազում ցավերի մեջ» (Ա. Տիմ. 6:10):

Այս խոսքը ես վերցրել եմ Պողոս Առաքյալի Իր աշակերտ Տիմոթեոսին ուղղած առաջին թղթի 6-րդ գլխի 10-րդ համարից, ուր նա խրատում է, որպեսզի հավատացյալները հեռու մնան արժաթսիրությունից:

«Ի՞նչ է դրամը և ի՞նչ է փողասիրությունը: Տարբերություն կա »:

Ապրում ենք աշխարհում, ունենք ընտանիք, զանազան տեսակի ծախսեր, վճարումներ, որոնք միմիայն կարող ենք կատարել դրամով: Առանց դրամի, անշուշտ հնարավորություն չենք ունենա ոչ մի բան անել, նույնիսկ չենք կարող պարզ ուտելիք գնել սնվելու համար: Ուրեմն դրամը կարևոր է, այնքանով, որ իբրև միջոց պետք ունենք այն օգտագործելու: Իսկ երբ այն դառնում է նպատակ, այսինքն գիշեր ցերեկ մտածում ենք դրամի մասին, թե ո՞ր տեղից շատ վաստակենք, որպեսզի կարողանանք վայելել ու օգտվել հաճույքներից՝ մեղքի է վերածվում:

Ուրեմն, երբ դրամը դառնում է նպատակ, չարիքի է վերածվում: Դրա համար էլ Պողոս Առաքյալն ասում է. «Բոլոր չարիքների արմատը փողասիրությունն է, որին ոմանք ձգտելով՝ մոլորվեցին հավատից և իրենք իրենց զցեցին բազում ցավերի մեջ»: Ուշադրություն դարձրեք, առաքյալը չի ասում չարիքի արմատը դրամն է, այլ՝ շեշտում է, որ չարիքի արմատը դրամասիրությունն է, այսինքն՝ դրամը դարձնել կուռք, սիրել, երկրպագել ու խոնարհվել:

«Աշխարհի սերը և Աստծո սերը չեն կարող համատեղ բնակվել մի սրտում, ինչպես որ նույն աչքերը չեն

կարող միաժամանակ նայել երկինք ու երկիր», - ասում է Ընդհանրական Քրիստոնեական Հայրերից՝ Օգոստինոս Երանելին, իսկ Սարգիս Վարդապետ շնորհալին շարունակում է. «Մարդկանց մեծամասնությունը այսօր ձգտում է հարստության և փողի: Այնինչ՝ «Տերը մեզ հրամայում է, որ գանձերը պահենք երկնքում, որը գողերի համար անմերձենալի է (Դուկաս 12.33), իսկ մենք մեր ունեցած գույքը հողի մեջ ենք թաղում և գողերի ու ավագակների համար ենք հավաքում»:

Դրամի ստրուկը չդառնանք՝ կկորչենք, քանի որ այն ժամանակավոր է, ինչպես ամեն մի իր, ունեցվածք, նույնիսկ մարդը՝ իբրև մարմին: Հին Կտակարանից Հոբ երանելու պատմությունը մեզ համար լավագույն օրինակն է, երբ նա սատանայից փորձվելով իր ամբողջ ունեցվածքը, ընտանիքը, հարստությունը կորցնելուց հետո, չի դադարում խոնարհվել և երկրպագել Տիրոջը, որից հետո ստացավ ավելին իր հավատարմության, համբերության ու սիրո համար: Իսկ մենք պիտի կարողանա՞նք այսօր դիմանալ այն փորձությանը, որը չարը մեզ ենթարկում է՝ երևալով ու գայթակղելով մեզ դրամի կերպարանքով:

Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետն ասում է. «Երբ մենք մեր միտքը կատարյալ դարձնենք և ցույց տանք, որ մենք արհամարհում ենք երկրավոր բաները, այնժամ Աստված շնորհում է մեզ նաև երկրայինը, բայց ոչ առաջ, այլ միայն այս բանից հետո, քանի որ մենք կապված ենք երկրավոր բարիքներին և եթե այն ստանանք, առավել կկապվենք նրան: Ազատվիր նախ ստրկությունից, ասում է Նա, և այնժամ ստացիր, քանզի դու ստացար ոչ թե որպես ստրուկ, այլ որպես տեր: Արհամարհիր հարստությունը և կլինես հարուստ, արհամարհիր փառքը և կփառավորվես, արհամարհիր թշնամուն վրեժխնդիր լինելը և վրեժդ կլուծվի, արհամարհիր հանգիստը և կստանաս այն, որպեսզի

ստանալով, չստանաս որպես ստրուկ, այլ որպես տեր» և շարունակում է. «Սարսափելի, ճշմարտապես սարսափելի բան է արծաթսիրությունը: Այն փակում է թե՛ աչքերը, և թե՛ ականջները, դարձնում է գազաններից ավելի կատաղի, թույլ չի տալիս մտածել ոչ խղճի, ոչ ընկերության, ոչ՝ հարաբերվելու, ոչ՝ էլ սեփական հոգու փրկության մասին, սա հանկարծ ետ է դարձնում այս ամենից, և իրենով գերվածներին դարձնում ստրուկներ, ինչպես ոմն դաժան բռնավոր: Եվ ի՞նչն է ավելի վատ, որ այս դառը ստրկության մեջ, սա ստիպում է որպեսզի էլ ավելի իրենով տարվեն և ինչքան ավելի է տարածվում, ավելի հաճելի է թվում արծաթասերին: Եվ հիմնականում սրանից է, որ այս հիվանդությունը դառնում է անբուժելի ու այս գազանը չի սանձահարվում»:

Մեր ամբողջ էությանմբ նվիրվենք Աստծուն, տանք Նրա բաժինը և չզլանանք Իր շնորհների ու պարգևների դիմաց:

Այս պատմությունը ուսանելի է. այն վերնագրված է՝ «Աստծուն տվածը ետ չի կարելի վերցնել».

«Կոստանդնուպոլսեցի մի մարդ ծանր հիվանդ էր և վախենալով մահվանից՝ աղքատներին է բաժանում 30 ոսկեդրամ: Աստված զթառատ է գտնվում նրա նկատմամբ և նրա տված ողորմության դիմաց նրան առողջություն է շնորհում: Բայց այս անմիտը դրամի փայլից կուրացած սկսում է զոջալ ծախսած գումարի համար ու այդ մասին իր վիշտն ու ցավը հայտնում է իրեն ծանոթ մի հարուստ մարդու: Հարուստը փորձում է համոզել նրան չզոջալ տված ոսկիների համար. «Նայիր, որ չբարկացնես Տիրոջը,- ասում է նա,- չե՞ որ Նա քո տված ողորմության դիմաց համարյա թե քեզ մեռելներից հարություն տվեց: Տես, որ չմահանաս առանց ապաշխարության այդ բանի համար»: Բայց այդ անմիտը չէր դադարում ափսոսալ իր ոսկիների

համար: Այդ ժամանակ հարուստը ասում է նրան. «Եթե դու չես ուզում լսել ինձ, ուրեմն գնանք եկեղեցի, այնտեղ միայն ասա՝ «Տեր, ողորմությունը ես չեմ տվել, այլ՝ այս մարդը»: Հենց նույն պահին ես քեզ կտամ քո բոլոր ոսկիները»: Դժբախտ արծաթասերը ուրախությամբ համաձայնվում է:

Երբ եկեղեցում նա արտասանում է վերևում հիշատակված խոսքերը ու իր ձեռքն է վերցնում հարուստի տված ոսկիները, հենց այդ պահին ընկնելով՝ մահանում է: Եկեղեցու սպասավորները առաջարկում են հարուստին ետ վերցնել 30 ոսկին, բայց Աստծու ծառան պատասխանում է. «Աստված ինձ հեռու պահի նման բանից, որ ես վերցնեմ այն, ինչը ես արդեն տվել եմ Աստծուն: Մի՞թե հնարավոր է: Աստված ծաղրի ենթակա չի»:

Եվ այդ դրամները բաժանվում են աղքատներին: Ահա այսպես եղավ Աստծու դատաստանն այն մարդու հանդեպ, որը չամաչեց շահամոլությունից դրդված հրաժարվել այն բարի գործից, որի փոխարեն նա արդեն Աստծուց մեծ ողորմություն էր ստացել» (Հոգեշահ գրքեր):

Տեսա՞ք, թե դրամասիրությունը ինչի՞ պատճառ դարձավ այն մարդուն, որն արդեն իսկ Աստծուց առողջություն էր ստացել իր ողորմության դիմաց: Այդպիսիների համար կարելի է գործածել. «Ողորմելի» բառը: Այո՛, իրապես, որ այդպես է: Այն մարդիկ, որոնք չեն հասկանում թե ի՞նչ է իրենց կյանքի իմաստն ու նպատակը՝ ողորմելի են, քանի որ ոչ մեկը այս աշխարհից իր հետ ոչինչ չի տանելու, ինչպես վերևում հիշված անմիտ մարդը չտարավ այն ոսկիները, որոնք նա ետ վերցրեց:

Աստծու պատվիրանները պահելը և՛ աշխարհային և՛ թե հոգևոր կյանքում կարևոր է: Դրանք պահող անձը, երբեք վախ չունի, թե կարող է ձախտրդություն ունենալ իր կյանքում, որովհետև հետևում է իր խղճի ձայնին ու միշտ

բարձր է մնում բոլոր այն հակասական երևույթներից, որոնք հանդիպում են իրեն, կամա թե ակամա, իրեն դժվարության մատնելու ու իր հավատի մեջ թուլություն մտցնելու մտածումով:

Թորգոմ Պատրիարք Գուշակյանն ասում է. «Ու այդ պատճառով անհրաժեշտություն է իր չափի մեջ պահել դրամի համար զգացված սերը: Առանց սանձի՝ մի գազան է այն, մի բռնավոր, որը խորտակում է ամեն ինչ որ գեղեցիկ է հոգու մեջ:

...«Սա այն մոլությունն է, որ փչացնում է բոլոր մյուս առաքինություններին, երբ մի անգամ իրեն իբրև բույն է դարձնում սիրտը, այնտեղ այլևս տեղ չունի սերը. ո՛չ Աստծու, ո՛չ ընկերոջ, ո՛չ ընտանիքի, ո՛չ ազգի, և ո՛չ իսկ իր անձի - այս վերջինը անշուշտ իր լավագույն իմաստով - այո՛, ո՛չ իսկ իր անձի նկատմամբ:... Ի գուր չի, որ հառաչել է հնության ամենամեծ բանաստեղծներից մեկը. «Գարշելի արծաթասիրություն, ինչ ահավոր ոճիրների ես առաջնորդում դու հաճախ մարդկային սիրտը»:

Լսենք Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետին.

«Արհամարհենք դրամը և փառքը: Այս կրքերից ազատվածը ազատ է բոլոր մարդկանցից առավել և հարուստ է արքայական պատմուճան հագնողից: Չե՛ս տեսնում արդյոք, թե որքան չարիք է լինում դրամի պատճառով: Չեմ ասում, որքան ազահությունից, այլ որքան փողի հանդեպ կրքոտությունից: Օրինակ, մեկը փող է կորցրել և հիմա ապրում է մի կյանքով, որ մահվանից ավելի անտանելի է: Ինչի՞ համար ես դու սգում, ով մարդ, ինչի՞ համար ես լացում, արդյոք դրա համա՞ր, որ Աստված քեզ ազատեց ավելորդ հոգսերից: Այն բանի համա՞ր, որ էլ չես նստում ահի և դողի մեջ: Եթե մեկը քեզ նստեցներ իր գանձի մոտ և հրամայեր գիշեր ու զօր այն հսկել, դու կդժգոհեի՞ր դրա համար և կտրտնջայի՞ր: Բայց երբ դու

ինքդ ես քեզ կապել անտանելի կապանքներով, էլ ինչու՞ ես սգում, որ արձակվել ես այդ կապանքներից»:

Հայրապետը մեզ խրատում է, հեռու մնալ դրամասիրությունից: Այն կործանարար է: Ուրեմն բավարարվենք մեր ունեցածով և փորձենք բաժին հանել նրանց, ովքեր կարիքավոր են, պետք ունեն մեր օգնության, նեղյալներին, հիվանդներին, տնագուրկներին, որպեսզի Տերն էլ Իր գթությունն ու ողորմությունը պարգևի մեզ: Ամեն:

ՃՇՄԱՐԻՏ ԻՄԱՍՏՈՒՆԸ

«Ճշմարիտ իմաստունը նա է, որ ոչ միայն խոսքով է
ուսուցանում, այլև գործով է վարդապետում»
Ընդհանրական Քրիստոնեական
Վարդապետներ

Այս խոսքը ես վերցրել եմ Ընդհանրական Քրիստոնեական Վարդապետների ուսուցումներից: Իմ բնաբանը վերաբերում է ճշմարիտ իմաստունին, ոչ թե նրան, որը միայն խոսքով է սովորեցնում, այլ գործով է իր ուսուցումը արժևորում:

Այստեղից հարց է ծագում. «Ի՞նչ է իմաստությունը կամ ո՞վ է ճշմարիտ իմաստունը»:

Հին Կտակարանից կարելի է մեջբերել Սողոմոն թագավորի խնդրանքը Աստծուն.

«...Քո ծառան քո ժողովրդի մեջ է, մի ժողովուրդ, որը բազմամարդ է, անթիվ ու անհամար: Իմաստություն տուր քո ծառային, որ նա կարողանա արդարությամբ լսել ու դատել քո ժողովրդին, իսելամտություն ունենա տարբերելու բարին ու չարը, որովհետև, ո՞վ կարող է դեկավարել քո այս բազմամարդ ժողովրդին»: Տիրոջը հաճելի եղավ Սողոմոնի այս խնդրանքը և Տերն ասաց նրան. «Քանի որ դու այդ բանը խնդրեցիր ինձնից, խնդրեցիր ոչ թե կյանքի երկար օրեր, հարստություն կամ քո թշնամիների մահ, այլ խնդրեցիր իսելամտություն՝ դատ անելու. ուստի քո ասածի համաձայն եմ վարվելու. քեզ եմ տալիս իմաստուն ու հանճարեղ միտք, այնպես որ ոչ քեզնից առաջ է քո նմանը եղել և ոչ էլ քեզնից հետո քո նմանը կհայտնվի: Քեզ եմ տալիս նաև այն, ինչ դու չխնդրեցիր՝ հարստություն ու փառք, այնպես որ քո ապրած կյանքի օրերին թագավորներից ոչ ոք չի լինելու քեզ նման...» (Գ. Թագ. 3:8-13):

Սողոմոն թագավորը հասկացել էր, որ առանց խելամտության ու իմաստության չպիտի կարողանար ճիշտ դատել, տարբերել բարին ու չարը, դրա համար էլ Աստծուց իմաստություն խնդրեց ու ստացավ ավելին: Սողոմոն իմաստունի արդար դատերից մեկը կարող ենք կարդալ Գ Թագավորության 3-րդ գլխի 16-28 համարներում, ուր նա երկու անառակ կանանց զավակների վիճելի հարցը լուծում է իմաստությամբ ու բարձրանում իր ժողովրդի աչքում...:

Երանի բոլոր մարդիկ, Աստծուց խնդրեն իմաստություն, խելամտություն, որպեսզի կարողանան տարբերել չարն ու բարին, իրենց նմանների նկատմամբ լինեն սիրալիր, հանդուրժուղ ու համբերատար և Աստված նրանց կտա ավելին: Օրինակը՝ Սողոմոն իմաստունն է և մեր ժողովրդի շնորհալի զավակներից շատ շատերը պատմության ընթացքին:

12-րդ դարի մեր վարդապետներից Սարգիս Շնորհալին ասում է.

«Իմաստությունը երկու տեսակ է. Մեկը երկրավոր ու բանական է, որ ճարտասանությամբ է իմացվում, իսկ մյուսը հոգևոր է, որ գործերով է ճանաչվում: Սրանց միջև շատ տարբերություններ կարելի է տեսնել: Այն իմաստությունը, որ ճարտասանությամբ է արտահայտվում, իր մեջ խառնված շատ կեղծիք ունի, իսկ այն իմաստությունը, որ գործով է դրսևորվում, անմասն է խաբեությունից և մերձավոր է ճշմարիտ Իմաստությանը, այն Իմաստությանը, ում մասին Պողոս առաքյալն ասաց. «Քարոզում ենք Քրիստոսին որպես Աստծո գորություն ու իմաստություն» (Ա Կորնթ. 1:24): Որովհետև Նա Իր բոլոր խոսքերը գործով իրականացրեց աշխարհում և հեզությամբ արտահայտեց Իր իմաստությունը...Իրապես նա՛ է իմաստուն, ով գործով է ուսուցանում իր իմաստությունը: Նա՛ է Աստ-

ծուց ընտրված ուսուցիչ, ով նախ կատարում է և ապա՝ ուսուցանում, ինչպես ճշմարիտ Իմաստությունը՝ Հիսուսը, Ով նախ սկսեց գործել մեզ սովորեցնելու նպատակով և ապա՝ խոսքով ուսուցանել...» («Խրատանի ապաշխարության»):

Իմաստուն մարդը, եթե հավատ չունի և գործով այն չի կարողանում ցույց տալ, փուչ ու դատարկ է իր ունեցած գիտելիքներով, քանի որ այդ պարագային նրա մոտ նահանջ է ապրում համեստությունն ու խոնարհությունը և հպարտության մահացու մեղքն է տիրում նրա մեջ: Աստված սիրում է խոնարհներին, բայց տեղ չի տալիս ամբարտավաններին:

Նշանավոր փիլիսոփաները, որոնք բավականաչափ իմաստություն ունեին, չէին ընդունում Աստծու գոյությունը, Նրա հավիտենականությունը, հոգու անմահությունը: Նրանցը՝ միայն փիլիսոփայությունն էր և այդ չափանիշով էլ ապրում էին: Սակայն իրենց կյանքի մայրամուտին, վերջ ի վերջո իրենց փիլիսոփայությունն ու իմաստությունը մի կողմ դրած, վկայում էին, որ մահից այն կողմ, պատի ետևում մի բան կա:

Իմաստուն մարդը դյուրահավատ է, հեզ է և խոնարհ, քանի որ հասկանում է ու ընդունում, որ իր շնորհները և իմաստությունը ստացել է Գերագույնից, ինչպես Սողոմոն իմաստունը, քանի ուր հեզություն ու դյուրահավանություն կան, այնտեղ է նաև մարգարեության հոգին:

Այս պատմությունը փոքրիկ մի օրինակ է նրանց համար, ովքեր ուզում են իմանալ. թե իրական իմաստությունը կյանքում ի՞նչ է.

«Մի անգամ, նստած գետի ափին զրուցում էին ծեր իմաստունն ու նրա աշակերտը: Աշակերտը հարցնում է.

Օ՛, մեծագույն իմաստուն, դու այնքան իմաստուն ես, և մորուքդ վաղուց զարդարվել է ճերմակով, հուշիր ինձ, ինչպե՞ս հիմարս կարողանամ ճանաչել մարդկանց: Ո՛ւմ վստահել և ումի՞ց խուսափել:

Միրտը քո դեռ շատ երիտասարդ է իմ բարեկամ: Սակայն իմաստությունը կարող է օգտակար լինել յուրաքանչյուր տարիքում և այդ պատճառով կբացեն քեզ մի գաղտնիք: Առաջին հերթին խուսափիր տեսքով հնազանդից: Մի փառաբանիր նրան և մի գրկիր: Եթե տեսնում ես, որ երիտասարդը կամ ծերունին քո հանդեպ չափազանց հնազանդություն է ցուցաբերում՝ խուսափիր նրանից, ինչպես կրակից:

Ես չեմ հավատում իմ ականջներին: Իմաստուն, բացատրիր ինձ, ինչպե՞ս կարող է այդպես լինել, - զարմանում է աշակերտը:

Այդ մարդը կլինի առաջինը, ով քեզ կդավաճանի, ով կգրպարտի քո անունը՝ երբ կշրջվես, - հոգոց հանելով պատասխանում է ծերունին:

Այդ դեպքում ո՞ւմ վստահել, - հարցնում է աշակերտը:

Վստահիր նրան, ով պարզ է քեզ հետ, և միշտ ասում է քեզ ճշմարտությունը՝ ինչպիսին էլ որ այն լինի: Որովհետև, երբ դժբախտությունը ծեծի դուռդ, այդ մարդը առաջինը կգա քեզ օգնության:

Իմաստունը մտամոլոր լռում է, մի պահ նայում արևին, որն արդեն մայր էր մտնում և կամաց ասում. «Իրական հնազանդությունը միշտ աննկատ է, այդ պատճառով այն դժվար է գտնել, բայց երբ գտնես նրան՝ նա երբեք քեզ չի դավաճանի» (mediamag.am):

Պողոս Պատրիարք Ադրիանապոլսեցին ասում է. «Սակավ ամոթ չէ իմաստունին, եթե որևէ անգրագետ նրանից ավելի բարեգործ է: Ճշմարիտ իմաստունը նա չէ,

ով բազում գիտություններ է սովորել, այլ նա, ով նաև սովորել է բարիք գործել: Շատերը բազում գրքեր գրեցին և տվեցին աշակերտներ՝ նրբամիտ ու գիտուն, այո՛, բայց ոչ՝ բարի ու առաքինի: Որովհետև գրքերը գրելիս այն բանի համար չաշխատեցին, որ դրանք ընթերցողները բարիք գործել սովորեն ու բարի լինեն, այլ միայն հպարտությամբ փորձեցին իրենց գիտելիքները հայտնել: Իհարկե, մարդ պիտի սովորի իմաստասիրական գրքերից ոչ այն բանի համար, որ միայն գիտուն հռչակվի, այլ մանավանդ որպեսզի բարի լինի: Քանզի գիտուն ու առաքինի մարդը նման է մաքուր ոսկու՝ թանկարժեք ակով ընդելուզված ու զարդարված: Իսկ եթե մարդ երկուսն էլ միաժամանակ չկարողանա ձեռք բերել, նախընտրելի է լինել բարի, քան գիտուն» («Խրատի Թանգարան»):

Ուշադրություն դարձրեք նրա վերջին նախադասության վրա. «Իսկ եթե մարդ երկուսն էլ միաժամանակ չկարողանա ձեռք բերել, նախընտրելի է լինել բարի, քան գիտուն»: Հետևենք Պողոս Պատրիարքի այս խրատներին և ճշմարիտ իմաստունի պես մեր ունեցած բարությունը ի սպաս դնենք մեր դարավոր Հայրենիքի, մեր Սուրբ Եկեղեցու և մեր բազմաչարչար ժողովրդի բարօրությանը, բարգավաճմանն ու պայծառությանը:

Ուրեմն եկեք մեր այս կարճ ու անցավոր կյանքում, անկախ մեր ունեցած կարգավիճակից, հողագործ, թե՛ պաշտոնյա, հոգևորական, թե՛ արհեստավոր, Աստծուց տրված մեր շնորհները, իմաստությունը, խելքը, կամքը, խիղճը՝ օգտագործենք բարի ու արդար գործեր կատարելով, որպեսզի արժանանանք Աստծու ողորմածությանն ու գթությանը: Ամեն:

ԸՆՏՐՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«ԿԱՆԶՎԱԾՆԵՐԸ ՇԱՏ ԵՆ, ԲԱՅՑ ՍԱԿԱՎ ԵՆ
ԸՆՏՐՅԱԼՆԵՐԸ» (ՄԱՏԹ. 20:16)

Այս խոսքը ես վերցրել եմ Մատթեոս Ավետարանչի 20-րդ գլխի 16 համարից:

Ավետարանիչը պատմում է «Այգու մշակների վարձի մասին» առակը. «Երկնքի արքայությունը նման է մի տանուտերի, որ առավոտյան ելավ իր այգու համար մշակներ վարձելու: Եվ մշակների հետ օրավարձը մեկ դահեկան սակարկելով՝ նրանց ուղարկեց իր այգին: Եվ առավոտյան ժամը իննի մոտ դուրս ելնելով՝ տեսավ ուրիշների, որ պարապ կանգնել էին հրապարակում: Նրանց էլ ասաց. «Դուք էլ գնացեք իմ այգին, և ինչ որ է արժան է, կտամ ձեզ»: Նրանք ևս գնացին: Եվ դարձյալ դուրս ելնելով կեսօրին ու կեսօրից հետո ժամը երեքի մոտ՝ նույն ձևով արեց: Եվ ժամը հինգի մոտ դուրս ելնելով՝ գտավ ուրիշների, որ պարապ կանգնել էին, նրանց ասաց. «Ինչո՞ւ եք այստեղ ամբողջ օրը պարապ կանգնել»: Նրան ասացին. «Որովհետև մեզ ոչ ոք չվարձեց»: Նրանց ասաց. «Դուք էլ գնացեք այգին, և ինչ որ արժան է, կստանաք»: Եվ երբ երեկո եղավ, այգու տերը իր գործավարին ասաց. «Կանչիր մշակներին և տուր նրանց վարձը՝ սկսած վերջիններից մինչև առաջինները»: Երբ եկան ժամը հինգի մոտ վարձվածները, յուրաքանչյուրը մեկ դահեկան ստացավ: Առաջիններն էլ գալով՝ կարծում էին, թե ավելի կստանան, բայց նրանք էլ յուրաքանչյուրը մեկ դահեկան ստացավ: Երբ առան, տրտնջում էին տիրոջից ու ասում. «Դրանք՝ այդ վերջինները, մեկ ժամ գործ արեցին, իսկ դու դրանց հավասար արեցիր մեզ, որ տարանք օրվա ծանրությունը և տոթը»: Նա պատասխանեց նրանցից մեկին և ասաց. «Ընկեր, քեզ չեմ զրկում, չե՞ որ ինձ հետ մեկ դահեկանի սակարկեցիր, ստացիր քոնը և

գնա՝ այս վերջիններին կամենում եմ տալ որքան և քեզ մի թե իրավունք չունեմ ունեցածիս հետ վարվելու, ինչպես կամենում եմ կամ թե՛ նախանձո՞ւմ ես, որ ես առատաձեռն եմ»: Այսպես վերջինները առաջին պիտի լինեն, և առաջինները՝ վերջին. որովհետև բազում են կանչվածները, բայց սակավ են ընտրյալները» (Մատթ. 20:1-16):

Առակը անշուշտ փոխաբերական իմաստով է ասված, որի մեկնաբանությունը կարող ենք ամփոփել բաժանելով այն մի քանի մասերի.

ա. Առաջին և վերջին մշակներին հրավիրող Տանուտերը՝ Աստված է:

բ. Առաջին մշակները նրանք են, ովքեր սակարկեցին տիրոջ հետ աշխատելու մեկ դահեկան օրավարձով:

գ. Օրվա վերջում եկած մշակները, քանի որ աշխատանք չունեին, Տանուտերը հրավիրեց այդ խեղճերին աշխատելու. «Դուք էլ գնացե՛ք այգին և ինչ որ արժան է, կստանաք»: Մշակներ, ովքեր նույնիսկ չսակարկեցին Տիրոջ հետ, թե ի՞նչ պիտի վճարի իրենց:

դ. Վճարումը առաջիններին և վերջիններին եղավ հավասարապես՝ բոլորին մեկ դահեկան:

ե. Առաջինները, որոնք ավելի քան ութը, ինը ժամ աշխատել էին, նույնպես ստացան մեկ դահեկան, ինչպես վերջինները և բողոքեցին դրա համար. «Դրանք՝ այդ վերջինները, մեկ ժամ գործ արեցին, իսկ դու դրանց հավասար արեցիր մեզ, որ տարանք օրվա ծանրությունը և տոթը»:

զ. Տիրոջ պատասխանը առաջինների բողոքին. «Ընկեր, քեզ չեմ զրկում, չե՞ որ ինձ հետ մեկ դահեկանի սակարկեցիր, ստացիր քոնը և գնա. այս վերջիններին կամենում եմ տալ որքան և քեզ. մի թե իրավունք չունեմ ունեցածիս հետ վարվելու, ինչպես կամենում եմ: Կամ թե՛ նախանձո՞ւմ ես, որ ես առատաձեռն եմ»:

Այս առակն ասվեց ի պատասխան Պետրոս Առաքյալի միամիտ հարցին, թե «Ահավասիկ, մենք թողեցինք ամեն բան և եկանք Քո հետևից. արդ, մենք ի՞նչ կունենանք» (Մատթ. 19: 27):

Այս առակում Տերը ցույց է տալիս կրոնի նկատմամբ սպառողական մոտեցման ոչ ճիշտ լինելը: Մարդն իր փրկության համար այնքան քիչ բան է անում, որ վաստակի և պարգևատրման մասին խոսք լինել չի կարող: Այս առակը մեզ սովորեցնում է, որ Աստծու շնորհը, ինչպես և հավիտենական կյանքը, տրվում է մարդուն ոչ թե նրա գործերի կամ եկեղեցում անցկացրած ժամանակի թվաբանական հաշվարկի արդյունքում, այլ՝ Աստծու ողորմության շնորհիվ:

Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետն ասում է. «Իմացեք, որ մենք վարձված մշակներ ենք: Տիրոջ հետ սակարկելը վայել չէ. աշխատիր, կատարիր Նրա սուրբ պատվիրանները, իսկ պարգևատրելը Նրան թող: Նա Գթասիրտ է և կտա քեզ ավելին, քան կարող ես ցանկանալ....Մեզ էլ Տերը տարբեր ժամերին է կանչում՝ աշխատելու հոգու փրկության համար...»:

Տերը կանչում է մեզ Իր այգում աշխատելու, այգի, որը խորհրդանշում է Սուրբ Եկեղեցին: Մարդն ինքն է որոշում լսել, թե չլսել այդ հրավեր-կանչը, ընդունել իր սրտում Աստծու այդ շնորհի ազդեցությունը կամ ոչ: Առաջին մարդուց՝ Ադամից սկսած Տերը մեզ կանչում է աշխատելու և վաստակելու հավիտենական կյանք՝ կարճ ժամանակով ու վարձատրությունը ընդամենը մեկ դահեկան է, որպեսզի կարողանանք այդ ձևով երկնքում ժառանգել հավիտենական երանությունը, ստանալով այդ պարգևը:

Երբ Տերը առաջիններին նույն գումարը տվեց, ինչ որ վերջիններին, նրանց ուզեց հասկացնել, թե սխալ են

արել իր հետ սակարկելով օրավարձի կապակցությամբ, այլ ճիշտ կլիներ, եթե նրանք վստահեին Նրա բարությանը: Այդ պարագային գուցե և նրանց վարձը ավելին կլիներ: Եթե մենք այսօր էլ չենք վստահում Տիրոջը, Նրա ողորմածությանն ու հպարտանում ենք մեր բարի և արդար գործերով, ինչպիսի՞ վարձատրություն պիտի սպասենք Ամենակալից: Ի՞նչ շնորհներ ենք ուզում ստանալ Նրանից, երբ չենք հավատում ու վստահում Նրան: Աստված ողորմած և գթառատ է բոլորի հանդեպ, ինչպես առակի վերջին մշակների պարագային, որոնք անգործ կանգնած էին ամբողջ օրը, սակայն տանուտերից հրավեր ստանալով անմիջապես առանց սակարկելու գնացին այգին աշխատելու: Մենք էլ այսօր, երբ Աստված մեզ հրավիրում է, չփորձենք Նրա հետ պայմանագիր կապել կամ նյութական պայմաններ դնել Նրա առաջ, այլ վստահենք Նրան ու հավատանք:

Մաղաքիա Արք. Օրմանյանը այսպես է մեկնաբանում այս առակը.

«Մակայն Հիսուսի առակում մի իմաստ էլ կա: Մակարկող և գործը վաղ սկսած մշակները Հին Օրենքի մարդիկ են, որոնց հետ Աստված Մովսեսի միջնորդությամբ դաշինք կնքեց և ուխտ հաստատեց: Իսկ մի պահ անգործ մնացող մշակները հեթանոսներն են, որոնց հետ կնքված չէր աստվածային ուխտը և այգուց դուրս էին մնացել, բայց երբ տեսնում են Տանուտերին և գործի առիթը բացվում է, շտապում են հետզհետե իրենց պարտքը կատարելու: Աստված նրանց հանդեպ գթասիրտ է գտնվում, նրանց էլ արժանացնելով այն շնորհին, որին արժանացել էին Հին Ուխտի մարդիկ: Այսպես վերջինները հավասարվում են առաջիններին, մինչ առաջիններն էլ նույնանում են վերջիններին: Իսկ «բազում են կանչվածները, բայց սակավ են ընտրյալները» ասածը, պատմված առակի հետ բաղդատելով, այն իմաստն է տալիս, թե բոլոր սրանք, որ վարձի

արժանացան, «ընտրյալ» են, և թե որևէ ժամվա մեջ Ավետարանի այգում աշխատության կոչեցյալները շատ են: Ամբողջ աշխարհը հրավիրված է, բայց, դժբախտաբար, բոլորը չեն ներկայանում, չեն աշխատում, վարձի չեն արժանանում» (Մաղաքիա Արք. Օրմանյան «Համապատում»):

Ուրեմն, մեզ տրված է առիթը, լսելու և ընդունելու Տիրոջ հրավերը՝ առանց սակարկության ապրելու աղոթքի, բարության, արդարության, խաղաղության և սիրո կյանքով: Ամեն:

ԱՍՏԾՈՒ ՇՆՈՐՀԸ

«Բայց Աստծո շնորհով եմ, ինչ որ եմ, և իմ մեջ եղած նրա շնորհները իզուր չանցան, այլ նրանցից բոլորից ավելի աշխատեցի, բայց ոչ թե ես, այլ Աստծո շնորհը, որ ինձ հետ էր» (Ա. Կորնթ. 15.10)

Պողոս Առաքյալի Կորնթացիներին ուղղած առաջին նամակի 15-րդ գլխի 10-րդ համարից է այս խոսքը, ուր նա շեշտում է, թե իր մեջ եղած բոլոր շնորհները Աստծու կողմից են և ինքը դրանց շնորհիվ է, որ աշխատում է, քարոզում ու օգնում մարդկանց:

Մի պահ մենք մեզ եկեք հարց տանք, թե՝ «Ո՞րն է Աստծու շնորհը և կամ որո՞նք են Նրա շնորհները»:

Աստվածաշնչից բերենք մի քանի վկայություններ մարդուն տրված Աստծու շնորհների և գործադրության մասին.

«Իմ Աստվածը թող այնպես անի, որ շնորհ գտնեք այդ մարդու մոտ» (Ծննդոց 43:14):

«Եվ ինչի՞ց պիտի իմացվի, թե ես ու քո ժողովուրդն, իրոք, քո շնորհին ենք արժանացել: Եթե դու մեզ հետ գնաս, ես ու քո ժողովուրդը կփառավորվենք շատ ավելի, քան երկրի վրա եղած բոլոր ազգերը»: Տերն Ասաց Մովսեսին. «Այդ քո ասածն էլ կկատարեմ, որովհետև դու իմ շնորհին ես արժանացել, և քեզ ավելի եմ ճանաչում քան մնացած բոլորին» (Ելից 33:16-17):

«Զարմանում եմ, որ այսպես շուտ լքում եք նրան, ով Քրիստոսի շնորհով կանչեց ձեզ և դառնում եք դեպի ուրիշ ավետարան» (Գաղ.1:6):

«Նախասահմանեց մեզ որդեգրության Հիսուս Քրիստոսի միջոցով, ըստ իր կամքի հաճության...: Նրանով է, որ ունենք փրկություն, նրա արյան միջոցով՝ մեղ-

քերի թողություն, ըստ իր շնորհի մեծության չափի...» (Եփես. 1:5:7):

«Եվ բոլոր շնորհների Աստվածը,- որ ձեզ կոչեց իր հավիտենական փառքին Քրիստոս Հիսուսի միջոցով, որին մի փոքր ժամանակ չարչարակից պիտի լինեք,- թող վերականգնի, գորացնի, հաստատահիմն դարձնի ձեզ» (Ա. Պետրոս 5.10):

Երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսն ասում է.

«Հաստատապես, հավատի մեջ կա շնորհի բաղադրատարր: Սակայն այդ շնորհը որոշ մարդկանց առանձնաշնորհը չէ, տրված է բոլորին, բայց կան նաև մարդիկ, որոնք ընկալունակ չեն այդ շնորհին կամ ուրիշներից պակաս ընկալունակ են: Կյանքի հանգամանքներից կախված՝ այդ շնորհը դրսևորվում է մեծ կամ փոքր չափով. Հավանաբար որոշ մարդիկ հնարավորություն չեն տալիս, որ այն արմատներ նետի իրենց հոգում, թողնում են, որ խամրի...:

Խոսելով շնորհի մասին՝ ես չեի ցանկանա այն համեմատել տաղանդի հետ, որը քչերի առանձնաշնորհն է: Ասացի, որ հավատը տրվում է յուրաքանչյուրին, և մեզ տրված են համընդհանուր շատ շնորհներ, որոնք մեր մարդկային էության մաս են կազմում, ինչպես տեսողությունը, լսողությունը կամ շնչառությունը... Հավատը մեր կյանքի զարդը չէ ինչպես տաղանդը, այն ավելի շուտ կտավ է, որի վրա գույները դրսևորվում են իրենք իրենց: Այն տրվում է բոլոր տղամարդկանց և կանանց, որովհետև համարվում է մարդկային բնության տարր: ...Յուրաքանչյուր մարդ ի ծնե ստանում է հավատի այդ շնորհը...»:

Այս պատմությունը կոչվում է «Հրաշագործ ճգնափորը», որը կարծում եմ հետաքրքիր է և կապված է Աստծուց տրված մեր շնորհների հետ.

«Հայրը, իր հետ վերցնելով անչափահաս տղային, գնում է Անտոնյան լեռները աբբա Միսիանոսի մոտ՝ նրանից օրհնություն ստանալու: Այնպես է պատահում, որ ճանապարհին տղան հիվանդանում է և մահանում, սակայն նրա հայրը չի խռովվում ու հավատով մեռածին տանում է աբբայի մոտ: Մտնելով սրբի խուցը՝ հայրը ծունկի է գալիս նրա առաջ և իր մահացած որդուն այնպիսի դիրքով է դնում աբբայի ոտքերի մոտ, որ կարծես նրանից օրհնություն ու աղոթք էր խնդրում:

Այն բանից հետո, երբ աբբան ավարտում է աղոթքը և օրհնում նրանց, հայրը դուրս է գալիս՝ տղային թողնելով մեռած վիճակում աբբայի ոտքերի մոտ: Ծերը չի նկատում, որ տղան մահացած է և կարծելով, որ նա սպասում է օրհնության, ասում է նրան՝ «Վեր կաց, մանուկ և գնա այստեղից»: Եվ մահացածն իսկույն հարություն է առնում ու հետևում իր հորը: Այդ ժամանակ հայրը տեսնելով իր որդուն կենդանի, նրա հետ վերադառնում է աբբայի մոտ և խոնարհվելով՝ շնորհակալություն է հայտնում նրան իր որդուն կենդանացնելու համար: Աբբան իմանալով, որ հարություն է տվել մեռած տղային, խիստ տխրում է, որովհետև նա խուսափում էր հրաշագործ լինելու փառքից և արգելում է նրան որևէ մեկին պատմել այդ մասին մինչև իր՝ աբբայի մահը:

Ճգնավորը հետևում էր Տիրոջ օրինակին: Երբ Հիսուս բուժում էր կույրին, բորոտին, կաղին և մեռածներին, պատվիրում էր, որ ոչ մեկին չասեն այդ մասին»:

Պողոս Առաքյալը Կորնթացիներին գրած իր առաջին թղթի 12-րդ գլխի 6-11 համարներում խոսում է շնորհների մասին. «Թեև կան շնորհների զանազանություններ, բայց պարզևող Հոգին նույնն է... Մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք, մյուսին՝ գիտության խոսք՝ նույն Հոգուց, մյուսին՝ հավատ՝ նույն Հոգով, մյուսին՝ բժշկություն-

ների շնորհ՝ նույն Հոգով... մյուսին՝ տեսակ-տեսակ լեզուներով խոսելու շնորհ, մյուսին՝ լեզուների թարգմանության շնորհ: Բայց այս ամենը միևնույն Հոգին է առաջացնում և բաժանում յուրաքանչյուրին՝ ինչպես որ կամենում է» (Ա. Կորնթ. 12:6-11):

Գիտակցենք, որ մեզ տրված շնորհները Աստծուց են և, երբ մենք օգտագործելով դրանք հասնենք հաջողությունների, փորձենք չվարակվել հպարտության մահացու մեղքից, ինչպես այս պատմության հրաշագործ ճգնաժամը ու ամեն բան կատարենք համեստորեն, խոնարհությամբ ոչ թե մեր փառքի, «ես»-ի, անվան, հեղինակության, այլ՝ Աստծու փառքի համար: Ամեն:

ԽՈՍՔԻ ՈՒ ԳՈՐԾԻ ԱՐԺԵՔԸ

«Քո գործերը թող ամոթի չմատնեն քո շրթների խոսքերը,
որպեսզի, երբ խոսես, չասեն «Ինչո՞ւ չես անում,
ինչ որ ասում ես»

Մբ. Գրիգոր Աստվածաբան

Սուրբ Գրիգոր Նազիանզացին կամ ինչպես հայտնի է Սուրբ Գրիգոր Աստվածաբանը, ապրել է 4-րդ դարում ու մեկն է Ընդհանրական Քրիստոնեական Եկեղեցու այն մեծագույն սրբերից, ով իր մաքրակենցաղ վարքով և ուղիղ դավանությամբ շատ-շատերին լուսավորեց ի վերուստ իրեն շնորհված Սուրբ Հոգու վարդապետությամբ: Մբ. Բարսեղ Կեսարացու և Մբ. Գրիգոր Նյուսացու հետ նա կազմում է «Երեք մեծ կապաղովկիացիների» եռյակը:

Այսօրվա իմ բնաբանը ես վերցրել են նրա խոսքերից. «Քո գործերը թող ամոթի չմատնեն քո շրթների խոսքերը, որպեսզի, երբ խոսես, չասեն «Ինչո՞ւ չես անում, ինչ որ ասում ես»: Սուրբը իրապես եղավ իր այս արտահայտության կրողը: Լինելով մեծահարուստի որդի, կամավոր գրկեց իրեն և իր բոլոր հարստությունը բաժանեց աղքատներին, այսինքն՝ ինչ որ իր քարոզած խոսքերն էին՝ գործի վերածեց ու իր ամբողջ կյանքը անցկացրեց գրկանքներով և զոհողությամբ: Եվ իրավամբ իր մահից հետո արժանացավ սրբի կոչմանը:

Իսկ այսօր մենք ի՞նչ ենք անում: Ապրում ենք մի այնպիսի դարում, երբ մեր շուրջը մարդիկ ոչ միայն իրենց խոսքի տերը չեն, այլ ստում են, խաբում, կողոպտում, շատ անգամներ էլ մարդկանց նեղացնում են, խոստանալով ու չկատարելով. մի խոսքով ասում են մի բան, բայց անում են մի այլ բան: Խոսքով սարեր են խոստանում, բայց գործով՝ ոչինչ:

Հիսուս յուրաքանչյուր քրիստոնյայի համար եղավ օրինակ՝ բարության, ազնվության, հավատի, սիրո և մաքրության: Ինչ որ ասեց, քարոզեց, գործի վերածեց: Նրա շրթները բացվեցին և գործերը ամոթով չթողեցին Նրան: Կույրերի աչքերը բացեց, կաղերը քայլեցին, բորոտները մաքրվեցին, մեռածները նույնիսկ հարություն առան: Հիսուս ասաց. «Ինչ որ հավատով խնդրեք, կտրվի ձեզ»: Իսկ Հակոբոս Առաքյալը շարունակում է «Ինչպես որ մեռած է մարմինը առանց հոգու, այնպես էլ մեռած է հավատը առանց գործերի» (Հակ.2:26): Այո՛, եթե իրապես հավատում ենք, գործով պիտի ապացուցենք:

«Մի երիտասարդ տղամարդ ողջ սրտով ընդունեց ուղղափառ հավատն ու իր հետ կնոջը և դստերն էլ Եկեղեցի բերեց: Նա ջանասիրությամբ զբաղվում էր հոգևոր կյանքով և սովորում ուղղափառության ճշմարտությունները: Սակայն մի քանի տարվա բարեպաշտ կյանքից հետո նրա հավատն սկսեց նկատելիորեն թուլանալ: Նրա սրտում կասկածներ հայտնվեցին եկեղեցական ավանդությունների և դավանաբանական հարցերի վերաբերյալ: Եվ միննույն ժամանակ կրկին հետաքրքրություն առաջացավ արևելյան պաշտամունքների նկատմամբ, որոնցով տարված էր մինչ ի Քրիստոս դառնալը:

Ընտանիքի գլխի Եկեղեցուց հեռանալը, սակայն, չազդեց նրա կնոջ ու դստեր վրա և նրանք մնացին Եկեղեցու հավատարիմ զավակները: Նրանք շատ էին մտա-հոգվում իրենց հարազատի համար, չնայած որ երբեմն ստիպված էին լինում տառապել նրա կողմից իրենց հավատի հասցեին ուղղված կատակներից:

Մի անգամ, երբ նրանք տեղափոխվեցին իրենց նորակառույց տունը՝ մի ծանոթ հոգևորականի հրավիրեցին տնօրինեքի կարգ կատարելու համար: Քահանան կարդաց սահմանված աղոթքներն ու առաջ անցավ՝ երկ-

հարկանի տունն օրհնված ջրով ցողելու համար: Երբ մոտեցավ երկրորդ հարկ տանող աստիճանին, ընտանիքի գլուխը՝ տղամարդը, հեզնանքով, ասում է.

Տե՛ր Հայր, աստիճանը մի լավ ցողեք, թե չէ մեկնումեկը կարող է դրա վրայից ցած ընկնել:

Կինն ու դուստրը վիրավորվեցին այս խոսքերից, քանի որ զգացին դրանց տակ թաքնված հեզնանքը, իսկ քահանան չզգաց ենթատեքստն ու աստիճանը ցողելով՝ վեր բարձրացավ: Երբ երկրորդ հարկն էլ էր օրհնված՝ բռնորդ ներքն ուղղվեցին: Վերջինն ընտանիքի հայրն էր գնում: Կինը, դուստրն ու քահանան բարեհաջող ցած իջան, իսկ ամուսինը սայթաքեց ամենավերին աստիճանի վրա ու ցած գլորվեց: Դստեր սիրտը մի պահ կանգ առավ վախից, կարծեց, թե հայրը ողնաշարը կկոտրի: Սակայն ինչ-որ անհավանական կերպով նրան հաջողվեց ճաղաշարից բռնվել ու խուսափել սարսափելի անկումից:

Բոլորը վախից քարացել էին, տղամարդու գունատված դեմքին առանձնանում էին անսովոր կերպով լայն բացված, վախով լի աչքերը:

Դե հիմա, սիրելի՛ հայրիկ,- ասաց դուստրը,- մտածիր, թե ինչո՞ւ մենք երեքս հանգիստ իջանք աստիճաններով և միայն դու սայթաքեցիր»:

Ես մարդիկ գիտեմ, որ ամեն օր վաղ առավոտյան գնում են քայլելու այգում: Իսկ այգում զիշեր ցերեկ, ցրտին ու քամուն, անձրևին ու փոթորկին, արևին ու տաքին բացօթյա կամ վրանի տակ ապրում են տնագուրկներ, ինչպես Ամերիկայում ասում են անգլերենով homeless-ներ: Մարդիկ անցնում են նրանց կողքով անտարբեր, սովորական, ոչ մի վերաբերմունք ցույց չտալով: Մի պահ մտածեք, մենք տուն ունեք, ամեն հարմարություններով, քնում ենք փափուկ անկողնում, ամառը օդափոխիչներ ունենք, ձմեռը՝ տաքացուցիչներ, պաշտպանված ենք անձրևից ու

փոթորիկից, աշխատանք, դրամ և ունեցվածք ունենք, այս բոլորով մենք ապահովված ենք, բայց նրանք՝ չունեն: Մայր Թերեզան, որին վերջերս Կաթոլիկ եկեղեցին սրբերի շարքը դասեց, Հնդկաստանում խնամում էր աղքատներից ամենաաղքատներին: Իսկ մենք չե՞նք կարող օգնել, կարող ենք, եթե ցանկություն ու խիղճ ունենք: Մեկը կար, որին ճանաչում եմ, ամեն օր առավոտյան իր քայլելուց և մարզանք կատարելուց հետո այդ տնագուրկներից մեկին ողորմություն էր տալիս փոքրիկ մի գումար նախաճաշի համար: Այդ մարդը, որը ուզում էր մի փոքրիկ օգնություն տալ տնագուրկին, իր համար սկզբունք էր արել՝ խոսքը գործի վերածելու: Նրա արածը Աստծու մոտ գնահատելի և ընդունելի է:

Այս պատմությունը հետաքրքիր է:

«Մեծն Փիլիպպոս թագավորի ժամանակ, մի այրի կին քաղաքի դատավորներից անիրավվելով կորցնում է իր տնակը, որը գտնվում էր պալատականի մի դղյակի մոտակայքում: Ուր որ դիմում է կինը, որին որ խնդրում է, որպեսզի իր բողոքը լսեն և լուծում տան, հաջողություն չի ունենում: Միակ միջոցը մնում է ներկայանալ թագավորին և արդարություն խնդրել: Ամիսներով սպասում է, մինչև որ Մեծն Փիլիպպոս թագավորը տոնական մի օր իր շքախմբով երևում է Աթենքի հրապարակում: Այրի կինը հակառակ իր մեծության, հաջողում է ճեղքել մարդկանց բազմությունը և հասնել թագավորի մոտ: Հազիվ սկսում է բարձրադադակ իր ցավը պատմել, թագավորը կոպտորեն ընդհատում է նրան. «Տիկին, հիմա քեզ լսելու ժամանակ չունեմ»: Այս կոպիտ պատասխանից այրին խորապես վրդովված, ավելի է բարձրացնում իր ձայնը, առանց նկատի առնելու իր հանդգնության ծանր հետևանքը. «Եթե դու, ով Մեծն Փիլիպպոս, ժամանակ չունես հպատակներիդ լսելու, ուրեմն, իրավունք էլ չունես նրանց վրա թագա-

վորելու»: Հուզված ու հիացական մի լուրջություն է տիրում ժողովրդի մեջ: Թագավորը այրի կնոջ արցունքներից զգացված, հրամայում է, որ խստորեն պատժվի անիրավ պալատականը և չքավոր այրու արդար իրավունքը վերականգնվի»:

«Ֆրանսիացի Կլաստիոս փիլիսոփային մի օր լուր են տալիս, թե մի մտավորական, որը անպատվել էր իրեն իր գրքում, հոգեպես ծանր հիվանդ է և գտնվում է ապրուստի կարոտ վիճակում:

Փիլիսոփան մտածում է իր մի բարեկամի միջոցով որոշ գումար ուղարկել իբրև օգնություն, պայմանով, որ նրան չհայտնվի իր անունը:

Հասկանում ես,- ասում է փիլիսոփան իր բարեկամին,-այդ մարդը այնքան մեծ չարիք է արել հրապարակով զրպարտելով ինձ, որ մեծապես իր արժանապատվությունը կվիրավորվի, երբ իմանա, որ այդ օգնությունը գալիս է նրանից ում ինքը... զրպարտել է»:

Հիսուս Իր ներողամտության ոգով հորդորեց սիրել կյանքում տեսանելի թշնամիներին և ոչ միայն սեր ցույց տալ նրանց նկատմամբ, այլև ողորմություն անել: Իսկ Առակաց գիրքն ասում է. «Եթե թշնամիդ քաղցած է, կերակրիր նրան, եթե ծարավ է, ջուր տուր խմելու, քանզի այդպես անելով՝ դու նրա գլխին կրակի կարծեր կդիզես, և Տերը քեզ պիտի բարություն հատուցի» (Առակ. 25:21-22):

Մարդը մեկ քայլ է անում դեպի Աստված, իսկ Նա տասը քայլ է անում դեպի մարդը: Ինչպես Երանելի Օգոստինոսն է ասում. «Փնտրի՛ր, գտի՛ր, սիրի՛ր Աստծուն և ինչ ուզում ես արա.»: Իսկ Աստծուն սիրողը ոչ թե վատ բան չի անում, այլ անելուց անմիջապես զղջում է և վազում է Հոր մոտ ներողություն խնդրելու: Պետք չէ հետևել որևէ մեկի փորձառությանը, որովհետև մեր եկեղեցու Հայրերից ավելի փորձառու ոչ ոք չէ, նրանք ապրել են իրենց քարո-

զած կյանքը և գրքեր են գրել մեզ համար: Քրիստոնյան պրպտող, հետաքրքրվող և գտնող պետք է լինի առավել, քան կույր հավատացյալ, քանի որ այդ գտածը իր կյանքում պետք է գործածի...

Եկեք փորձենք մեր կյանքը լցնել բարի գործերով, գործեր, որոնք ցույց կտան մեր նկարագիրը ու այսպես մենք կատարած կլինենք Սբ. Գրիգոր Աստվածաբանի խոսքը. «Քո գործերը թող ամոթի չմատնեն քո շրթների խոսքերը, որպեսզի, երբ խոսես, չասեն «Ինչո՞ւ չես անում, ինչ որ ասում ես»: Ամեն:

ՔԱՋ ԵՎ ԶՈՀՎՈՂ ՀՈՎԻՎԸ

«Ես եմ լավ հովիվը. լավ հովիվը իր կյանքն է տալիս ոչխարների համար» (Հովհ. 10:11)

Հովհաննես Ավետարանչի 10–րդ գլխի 11-15 համարներում խոսվում է Քաջ Հովիվի մասին, Հովիվ, ով իր անձը զոհում է ոչխարների համար:

Ո՞վ է քաջ Հովիվը: Իհարկե մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, որն Իր երիտասարդ կյանքը զոհեց հանուն մարդկության մեղքերի մաքրման: Հեշտ է ասել, զոհեց: Պատկերացրեք, որ Հիսուս ընդամենը 33 տարեկան էր: Ինչպիսի վիճակում կհայտնվի մի մայր, երբ իր 33 տարեկան զավակը իր կյանքը զոհաբերի հանուն ինչ որ մի նպատակի: Հիսուսի խաչելության ու զոհողության ներկա էր նրա մայրը՝ Մարիամը՝ արցունքը աչքերին:

Ավետարանիչը շարունակում է. «Իսկ վարձկանը, որ հովիվ չէ, և ոչխարներն էլ իրենք չեն, երբ տեսնում է, որ գայլը գալիս է, թողնում է ոչխարներին և փախչում է: Եվ գայլը հափշտակում է նրանց ու ցրում է. քանի որ վարձկան է, և ոչխարների համար հոգ չի անում: Ես եմ լավ հովիվը, և ճանաչում եմ իմ ոչխարներին ու ճանաչվում նրանցից» (Հովհ. 10:12-15):

Հարց է առաջանում. «Իսկ ո՞վ է Քահանան և Հոգևոր Հովիվը, ո՞ւմ է մեր Տերը լավ Քահանա և Հովիվ համարում»:

Անշուշտ ինչպես շեշտեցինք ճշմարիտ և քաջ Հովիվն ու Քահանայապետը Ինքը մեր Տերն է, Ով Իր Հարությանը և Սուրբ Հոգու գալստյամբ հավատ ու ուժ ներշնչեց Իր աշակերտներին, որոնք պատվով կատարեցին իրենց առաքելությունը՝ տարածելով և ուսուցանելով Մեծ Վարդապետի ուսմունքը՝ նույնիսկ իրենց նահատակության գնով:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանցի խոսքը Հիսուսի Անձի մասին իբրև Քաջ Հովիվ. «Մեր Փրկիչը՝ կրոնական անձնավորության կատարելատիպը, այստեղ կենդանի կերպով կանգնած է մեր առաջ և բարոյական կատարելության, գոհաբերության ճանապարհ է ցույց տալիս: «Հա՛յր, եթե կամենում ես, այս բաժակը ինձնից հեռացրո՛ւ, բայց ոչ թե իմ կամքը, այլ քո՛նր թող լինի» (Ղուկ. 22:42), հակիրճ, բայց սրտառույշ աղոթք, որ Աստուծո կամքի հպատակության մի սրբազան ուխտ էր: Հիսուսի կյանքի, գործունեության ամբողջ էությունը կարելի է այդ աղոթքի մեջ ամփոփել: Նա եկել էր՝ Իր Հոր կամքը կատարելու և դորանով հաստատելու, թե կատարելության իսկական, արքայական պողոտան Աստուծո հնազանդության ճանապարհն է» (Գարեգին Արքեպս. Հովսեփյանց, «Դեպի Լույս և Կյանք», էջ 180):

Հիսուս Իրեն իբրև աշակերտ ընտրեց պարզ ձկնորսներին, կանչելով նրանց հետևելու Իրեն և ասաց. «Եկեք» և նրանք իրենց բոլոր գործերը թողած հավատացին Հիսուսին ու հնազանդվելով եկան Նրա հետևից: Երեք տարիներ շարունակ Հիսուս նրանց համար դարձավ տիպար Քահանայապետ և Հովիվ՝ խոնարհության, ազնվութեան, հավատի, սիրո ու համբերության, որից հետո նրանք ականատեսները եղան իրենց Վարդապետի մատնության, չարչարանքներին, տանջանքներին, տեսան խաչի վրա Նրա տառապելը և սակայն ուրախությունը ունեցան ողջունելու հրեշտակների Հարության բարի լուրը: Հիսուս Իր Հարությունից հետո քառասուն օրեր երևաց Իր աշակերտներին և հետևողներին, քաջալերեց, զորացրեց ու ապա Իր երկինք համբառնալուց առաջ նրանց պատվիրեց. «Գնացեք ուրեմն աշակերտ դարձրեք բոլոր ազգերին, նրանց մկրտեցեք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անու-

նով: Ուսուցանեցեք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի...» (Մատթ. 28:19-20):

Ուրեմն Հիսուս իբրև ճշմարիտ Քահանայապետ և քաջ Հովիվ կանչեց Իր առաքյալներին ծառայության, նվիրումի ու հավատի գորացման և ասաց. «Գնացեք և սովորեցրեք» նույնիսկ ձեր կյանքի գնով: Հիսուս դարձավ իրապես տիպար օրինակ մեզ համար ծառայության, նվիրումի և հավատի: Հիշենք իր խոսքը. «Մեծարանք ընդունելու չեկա, այլ՝ ծառայելու»: Ես ձեր մեջ եմ իբրև սպասավոր» (Ղուկ. 22:27):

Մեր պատմության ընթացքին մենք էլ ունեցել ենք շատ ու շատ հերոսներ, որոնք հանուն հավատի ու հայրենիքի իրենց երիտասարդ կյանքն են զոհաբերել: Օրինակները շատ են, չենք ուզում կրկնվել, բայց վերցնենք մեր ժամանակների Արցախյան պատերազմում զոհված շատ ու շատ ազատամարտիկների, որոնք գիտեին, ինչի համար են պայքարում, սակայն անվախ և առանց երկմտելու մտան այդ ծանր պայքարի մեջ ու հաղթեցին:

Զենք կարող չհիշել 1918 թվականի Սարդարապատի հերոսամարտից առաջ հայ զինվորներին քաջալերող պայքարի անվեհեր մարտիկ Գարեգին Հովսեփյանց Եպիսկոպոսին, որը զինվորներին կոչ էր անում ոչ թե մեռնել ու նահատակության պսակին արժանանալ, որը չպիտի օգներ Հայ ժողովրդին գոյություն ունենալու, այլ «Կռվել ու հաղթել, հաղթել ու ապրել»։ «Եթե պարսիկն Ավարայր էր հասել... մեր հավատն ու ազգային ինքնությունը վերացնելու, այսօրվա թշնամին մեր ազգի կեսը կոտորել և մյուս կեսն է ուզում ոչնչացնել... Փոխվել են ժամանակները, փոխվել են ազգերն ու ցեղերը: Ավարայրում մեր դեմ կանգնած բռնակալն ուզում էր ոչնչացնել մեր լեզուն ու հավատը: Թուրքը մեզ ուզում է լրիվ ոչնչացնել: Ուրեմն այստեղ նահատակությունն էլ չի կարող օգնել,

որովհետև մեր նահատակությունից հետո ոչ մի հայ չի մնա, որպեսզի բարի հիշի սարդարապատյան նահատակությունը: Պատմության դասերն այլևս անգոր են այսօրվա մեր ազգային աղետի առաջ: Այսօր միայն հաղթանակն է, որ պիտի հայությանը փրկի վերահաս կործանումից: Ուրեմն, կովենք ու հաղթենք, հաղթենք ու ապրենք, ի հեճուկս դարավոր թշնամու ցանկությանը...»:

«Բարոյական կատարելություն և զոհաբերություն», այս է քաջ Հովիվի ուղին, որն այնքան էլ վարդերով լցված չի:

Այդ օրերից անցել են ավելի քան երկու հազար տարիներ: Հիսուսի օրհնությամբ Առաքյալները շարունակեցին քարոզել և ուսուցանել Աստծու խոսքը: Նրանցից երկուսը՝ Սբ. Թադեոս և Սբ. Բարթողիմոս Առաքյալները եկան Հայաստան և դարձան առաջին լուսավորիչները: Այսօր 21-րդ դարում մենք իբրեւ քահանաներ և Հոգևոր Հովիվներ նրանց հաջորդներն ենք:

Որպեսզի ավելի հստակ լինի, թե ինչպիսի՞ն պիտի լինի քահանան և Հոգևոր Հովիվը, ուզում եմ ձեզ պատմել Հայ Բժշկության Նահապետ՝ 12-րդ դարի հայ գիտնական Մխիթար Հերացու մասին.

«Բժշկությունը կոչում է և խիղճ» - Մխիթար Հերացի:

Իբրև բժիշկ Մխիթար Հերացին հայտնի էր իր բարությամբ և ազնվությամբ: Նրա տան դուռը բաց էր հիվանդի ու կարոտյալի առջև ու լույսը մինչև առավոտ վառվում էր: Նա լուսավոր դեմք էր հայ ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքում: Մի գիշեր. երբ բժշկապետը իր սենյակում զանազան բույսեր էր ուսումնասիրում, դուռը թակում են: Դռան առաջ կանգնած էր մի օտարական, որն ասում է. «Ներեցեք բժիշկ, որ անհարմար ժամի եմ անհանգստացնում ձեզ: Հեռուներից եմ գալիս ու ձեր բարի խոր-

հըրդի կարիքն ունեմ«: Հերացին կարծելով, թե եկողը սովորական մի հիվանդ է, ներս է հրավիրում նրան: Երբ օտարականը նստում է, բժիշկը սկսում է հարց ու փորձ անել հյուրին իր առողջության մասին:

Ես հիվանդ չեմ, բժիշկ, եկել եմ ձեզ երեք հարց տալու.

Կարո՞ղ եմ իմանալ, թե ինչո՞ւմն է կայանում ձեր բժշկության գաղտնիքը:

Իմ բժշկությունը ոչ մի գաղտնիք էլ չունի,- պատասխանում է Հերացին,- այն ամբողջական և անշահախնդիր սեր է մարդկանց հանդեպ:

Իսկ դժվար ր է բժշկի աշխատանքը:

Այո՛, դժվար է, նույնիսկ երբեմն կարելի է ասել չափազանց դժվար է: Սակայն նկատի ունեցեք, որ բժշկությունը պարտականությունն չէ: Ամենից առաջ այն կոչում է եւ խիղճ:

Երբորդ և վերջին հարցս: Ինձ աշակերտ կընդունե՞ք:

Այս պահին չեմ կարող պատասխանել,- ասում է Հերացին,- մինչև որ չասեք, թե մի հիվանդի համար կարո՞ղ եք ամեն ինչից ձեզ զրկել: Կարո՞ղ եք ձեր ամենօրյա հացի փոխարեն հիվանդի համար դեղ գնել: Կարո՞ղ եք անքուն գիշերներ անցկացնել նրա անկողնի մոտ: Վերջապես կարո՞ղ եք միանգամընդմիջտ ընդունել, թե բժշկի աշխատանքը միայն պարտականություն չի, այլ սեր մարդկանց հանդեպ, նվիրում և սրբազան գործ: Եթե անկեղծ մարդ եք, ասացեք ճշմարտությունը:

Օտարականը շփոթվում է և պատասխանում.

Ես անկեղծ մարդ եմ, բժիշկ, ձեզ չեմ կարող խաբել: Ավելի լավ է ես գնամ ու շարունակեմ զբաղվել իմ արհեստով տակառագործությամբ:

Մխիթար Հերացին մոտենում է, գրկում օտարականին և ասում. «Ապրեք, դուք այս բուպեին ապացուցեցիք, որ իրապես խղճամիտ մարդ էք»:

Ուրեմն, ըստ Մխիթար Հերացու բժշկությունը կոչում է եւ խիղճ:

Մի այլ պատմություն ևս, որը նույնպես վերաբերվում է բժշկության և հետաքրքիր է.

«Հրաշալի լեզվագետ Հրաչյա Աճառյանը, որը տիրապետում էր բազում լեզուների քերականության և գիտեր 10 լեզու, իր կենսագրության մեջ պատմում է, թե երբ իր հայրը հիվանդացել է՝ բժիշկ է կանչել, որպեսզի նրան բուժի: Մի քանի շաբաթ հետո նա առաջարկել է, որպեսզի երկու բժիշկներ ևս կանչվեն, խորհրդակցելու և եզրակացութեան գալու իր հոր հիվանդության վերաբերյալ: Քննությունից հետո նրանք երեքով անցնում են կողքի սենյակը, որը տախտակի մի պատով բաժանված էր և ինչ որ խոսեին պարզ լսվում էր: Բժիշկները խոսել են զանազան նյութերի շուրջ, բայց ոչ՝ մի բառ՝ հիվանդի մասին: Վերադառնալով նրանք հաւաստիացրել են, որ հիվանդը պիտի առողջանա...»

Եզրակացությունը թողնում ենք ձեզ: Ամեն բժիշկ չէ որ բժիշկ է, դժբախտաբար մեր օրերում առավել ևս:

Քահանայության և հոգևոր հովվության ասպարեզը կոչում է, խիղճ և նվիրում: Միրել մարդկանց և ծառայել նրանց հոգիների փրկության ի խնդիր՝ ավելի վեհ ու բարձր է, քան բժշկել մարդու մարմինը: Մարմինն էլ կարևոր է, բայց հոգին ավելի կարևոր է:

Եթե բժշկությունը բարձր նվիրում է պահանջում, որը մարդու մարմինը ցավից ու հիվանդությունից փրկում է փրկել ու բուժել, ապա Եկեղեցու և ժողովրդի ծառայությունը ինչքան անձնուրացություն, անշահախնդիր սեր, հավատ ու նվիրում է պահանջում Աստծու սպասավորից:

Տարիներ առաջ ես պատրաստվում էի քահանայության: Երիտասարդ Մարկավագ էի՝ 24 տարեկան: Էջմիածին քաղաքում հոգևորականների շատ կային, բայց կար մեկը, որը շատ սիրված էր ժողովրդի կողմից, այն աստիճան, որ նույնիսկ փողոցը, ուր որ նրա տունն էր, մարդիկ առ ի հարգանս նրա կոչել էին իր անունով, հակառակ որ փողոցը մի բուլղարացի կոմունիստի անունն էր կրում: Չմոռանանք, որ իմ խոսքը 1970-ական թվականների մասին է, երբ Խորհրդային անաստված կարգերն էին տիրում և եկեղեցին ու հոգևորականությունը բավական ճնշված վիճակ ունեին: Երբ առիթ եղավ, ես նրան խնդրեցի պատասխանել ինձ հուզող մի քանի հարցերի: Առաջին հարցս. «Ինչո՞ւ են մարդիկ ձեզ սիրում, երբ կան շատ հոգևորականներ, որոնց նույնիսկ չեն էլ ճանաչում, ի՞նչն է պատճառը»: Ժպտաց և փորձառու հոգևորականի շեշտով պատասխանեց. «Սիրվելու համար նախ պետք է սիրես և գործով ապացուցես, որ սերդ անկեղծ է: Սա մեկ. երկրորդ ժողովուրդը այն աղբյուրն է, որից մենք հոգևորականներս մշտապես ջուր ենք խմում, աշխատիր երբեք չկեղտոտես այդ աղբյուրը, ընդհակառակը փորձիր մաքուր պահել»:

Երկրորդ հարցս. «Իսկ ի՞նչ է նշանակում անձնություն և նվիրյալ ծառայություն»: Նորից ժպտաց և պատասխանեց. պատասխանեմ Հակոբոս Առաքյալի խոսքով. «Հավատը առանց գործի մեռած է»: Իմ դուռը բոլորի համար միշտ բաց է և ես գիշեր ու ցերեկ պատրաստ եմ այցելելու հիվանդին, օգնելու կարիքավորին, նեղյալին: Անձնուրացաբար և նվիրեալ ծառայություն չի նշանակում միայն ծիսական արարողություններով ժողովրդին ծառայել: Այո,՝ մկրտությունը, պսակը, թաղումը և մյուս արարողությունները բնական կերպով մաս են կազմում մեր առաքելության, բայց մեր հիմնական առաքելությունը ժողովրդին ցույց տալն է Աստծու ճշմարիտ ճանապարհը, հավատը

ու Նրա սերը: Իմ խորհուրդս է քեզ, հակառակ կյանքի հարվածներին, դժվարություններին, նեղություններին, հիշիր Հիսուսի խօսքը. «Որովհետև իմ լուծը քաղցր է և բեռը՝ թեթև» ու աղոթքով և համբերությամբ շարունակիր ծառայությունդ: Մի՛ կարծիր, թե իսկապես նվիրյալ սիրով լի քահանայի ծառայությունը այդքան հեշտ է: Ժամանակը կգա, տարիների փորձառություն կունենաս, այն ժամանակ ավելի լավ կհասկանաս»:

Այդ օրերից անցել են ավելի քան 44 տարիներ: Ավագագույն Քահանայի խրատները ինձ համար դարձան իմ հոգևոր ծառայության հիմքը: Հիմա լավ եմ հասկանում նրա իմաստուն խրատների կարևորությունը և իմ աղոթքով մշտապես փառք եմ տալիս Աստծուն, որ այդպիսի ծառայասեր, նվիրեալ ու անձնուրաց քահանաներ մեզ երիտասարդներին համար եղան տիպար օրինակներ: Հիմա այդ հոգևորականը չկա, վաղուց վախճանվել է, բայց նրա բարի անունը մարդկանց շուրթերին է:

Ինչպես Քրիստոս Իր առաքյալներին կանչեց և նրանք պարզ ձկնորսներից դարձան մարդկանց որսորդներ, հետաքրքիր է, որ ավելի քան հիսունութ տարիներ առաջ, ես էլ կանչվեցի ծառայության, երբ ընդամենը տասը տարեկան պատանի էի: Կյանքում ոչ մի պատահականություն չի լինում, կա Աստծու նախախնամությունը և կամքը:

Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցին Աստծու սպասավորներից ակնկալում է, որ իրենց նպատակը դարձնեն ազնիվ ու նվիրյալ ծառայությունը: Այդ ճանապարհը արդեն իսկ Հիսուս Իր օրինակով ցույց է տալիս մեզ. «Եվ մինչդեռ նրանք գնում էին, ճանապարհի վրա մեկը նրան ասաց. «Կգամ քո հետևից, ինչ տեղ էլ գնաս»: Հիսուս նրան ասաց. «Աղվեսները որջեր ունեն, և երկնքի թռչունները՝ հանգստանալու տեղ, բայց մարդու

Որդին գլուխը դնելու տեղ չունի»: Մի ուրիշի էլ ասաց. «Արի՛ իմ հետևից»: Եվ սա ասաց. «Տե՛ր, հրաման տուր ինձ, գնալ նախ թաղել իմ հորը»: Հիսուս նրան ասաց. «Թող որ մեռածնե՛րը թաղեն իրենց մեռելներին, իսկ դու գնա՛ քարոզիր Աստծու արքայությունը»: Մեկ ուրիշն էլ ասաց. «Քո հետևից կգամ, Տե՛ր, բայց նախ թո՛ւյլ տուր ինձ, որ հրաժեշտ տամ իմ տանը»: Հիսուս նրան ասաց. «Ո՛չ ոք իր ձեռքը մաճի վրա կդնի և ապա հետ կնայի, եթե հարմար է Աստծու արքայությանը» (Լուկ. 9:57-62):

Ձեռքը մաճի վրա դնել նշանակում է Հիսուսի ծառայության մեջ մտնել: Հիսուսի կատարելությունը և տիպար օրինակ լինելը՝ Իր անսակարկ սիրո, խոնարհության ու հեզության մեջ էր: «Իմ լուծը ձեր վրա վերցրե՛ք և սովորեցեք ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ» (Մատթ. 11:29): Քահանան իբրև հոգևոր սպասավոր իր ծառայությամբ Քրիստոսի նման հեզ ու խոնարհ պիտի լինի, խաչ պիտի բարձրանա և Հիսուս ապրի իր մեջ. «Քրիստոսի հետ խաչը ելա, կենդանի եմ այսուհետև. բայց ոչ թե ես. այլ իմ մեջ ապրում է Քրիստոս» (Գաղ. 2:20), - ասում է Պողոս Առաքյալը Գաղատացիներին ուղղած իր նամակում:

Քաջ և զոհվող Հովիվը պիտի ունենա ծառայության կոչում, նվիրում, խիղճ, անսահման հավատ և սեր Աստծու ու մարդկանց նկատմամբ: Ամեն:

ՆԱԽԱՆՁԱԽՆԴՐՈՒԹՅԱՆ ՈԳԻՆ

«Նախանձ տան քո կերիցէ զիս»
«Քո տան նկատմամբ իմ նախանձախնդրությունը
ինձ կուտի» (Հովհ. 2:17)

Սաղմոսերգուի դարերի խորքից եկող խոստովանությունն է սա, խոստովանություն, որը պարզապես խոստովանություն չէր, այլ նաև՝ մարգարեություն, որը կարող է նույնիսկ մեզ ուղեցույցի դեր կատարել:

Այս խոսքերը, Քրիստոսի մարդեղությունից հազար տարիներ առաջ արտասանված Դավիթ թագավորի կողմից, մի անգամ ևս նորոգվեցին Աստվածորդու աշակերտների մոքում, երբ Հիսուս հաղթականորեն մուտք գործելով Երուսաղեմ տաճար մտավ, սրբագործելով Աստծո Տունը, բացականչելով՝ «Գրված է՝ իմ տունը աղոթքի տուն պիտի կոչվի, իսկ դուք ավագանների որջ եք արել այդ» (Մատթ. 21:13) և Իր նախանձախնդրության դրսևորումով մեզ բարի օրինակ եղավ: Աստծու տաճարում աստվածային հեգությունը փոխակերպվեց բարկության, մեր Տիրոջ «սրբասեր աչքը» չհանդուրժեց ապականությունը և Նրա նախանձախնդրության շնորհիվ տաճարը մաքրվեց ու սրբացավ:

Նույն նախանձախնդրությամբ էր, որ Մովսես մարգարեն Իսրայելի ժողովրդին դուրս բերեց Եգիպտոսից և Հեռուն առաջնորդեց նրանց «Ավետյաց Երկիր»: Նախանձախնդրությունն իմաստնացրեց Մողոմոնին ու Սիրաքին, ոգեշնչեց մարգարեներին, սաղմոսերգուին ուղղություն տվեց կնքելու իր խոստովանագիրը: Եղիա մարգարեն, մինչ իր հրեղեն կառքով երկինք բարձրանալը, այդ ոգին փոխանցեց Եղիսեին:

Հիսուս Իր համբարձումից տասը օր հետո աշակերտների վրա իջեցրեց «Նախանձախնդրության և կրակի հոգին»: «Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խոսել ուրիշ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս» (Գործք Առաք. 2:1-4): Եվ առաքյալները, ովքեր Հիսուսի ձերբակալության ժամանակ «հրեաների վախից թաքնվել էին», բոցավառված այդ ոգով, անվեհեր նետվեցին վկայելու Աստվածորդու մասին և արժանացան նահատակության փառավոր պսակին: Նրանցից երկուսի՝ Սբ. Թադեոս և Սբ. Բարթողիմեոս առաքյալների արյունը սրբագործեց հայոց հողը և դարձավ վեմը Հայ Եկեղեցու:

Նույն ոգով մեր հավատի Հայրապետը՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչը հանձն առավ կրել բազում տառապանքներ և որպես իր չարչարանքների արդյունք լուսավորեց ազգը Հայոց: Եվ մեր հայրերը, հայացքները հառած այդ Կենսատու Լույսին, իրենց արյան և քրտինքի գնով փայփայեցին ու առատապէս փոխանցեցին մեզ ազգային-եկեղեցական արժեքները:

Կան մարդիկ, ովքեր կարծում են, թե իրենք ամենակարող են և Աստծուց էլ ուժեղ են ու կարող են ամեն ինչ ստեղծել առանց Նրա օգնության: Ինչո՞ւ, որովհետև նրանց մեջ նախանձախնդրության ոգին ոչ միայն թույլ է, այլ պակաս է:

Այս պատմությունը դրա մասին է.

«Խորհրդային Միության անհավատության շրջանի գիտնականներից մեկը, որը ուժեղ անհավատ էր և երկրի վրա իր քարոզչությունն էր կատարել ամենաթունդ կերպով, մահանում և նրա հոգին բարձրանում է երկինք: Հրեշտակները նրան հարցնում են, թե ինչո՞ւ իր ամբողջ կյանքում չի հավատացել Աստծո գործությանը: Անհավատը պատասխանում է և ասում, որ Աստված իրենից այնքան էլ ուժեղ չէ, որովհետև ինքն էլ է կարողանում ստեղծել

այն, ինչ որ ստեղծել է Աստված: Եվ այդ դեպքում էլ ինչո՞ւ պիտի հավատա Նրա գործությանը: Հանկարծ լսվում է Աստծու ձայնը.

Դե որ այդպես է, արի մա՛րդ ստեղծենք:

Անհավատը համաձայնվում է: Տիրոջ հետ շտապ գործի անցնելով, նա կռանում է և փորձում գետնից մի բուռ հող վերցնել: Այդ պահին Աստված նրան կանգնեցնում է և ասում.

Այդ հողը ես եմ ստեղծել: Դու օգտագործիր քո ստեղծածը: Գիտնականը մնում է գլխիկոր» («Գեղեցիկ ապրելու գաղտնիքները» գրքից):

Մի թե այսօր նախանձախնդրության ոգու անհրաժեշտությունը կենսական չէ մեզ համար, մի՞թե սաղմոսերգուի երեք հազար տարիներ առաջ արտասանված խոսքերը ժամանակակից չեն, մի թե Աստվածորդու տված օրինակը համազոր չէ այսօրվա մարտահրավերներին: Մի թե երանություն չէ, Հայրենիքի ու Եկեղեցու նկատմամբ մեր դրսևորած նախանձախնդրության պատճառով, ազգային-եկեղեցական արժեքները «նախատողներին, նախատինքի» արժանացնելը:

Մի պահ ինքներս մեզ հարցնենք. «Արդյոք մեր մեջ բնակվո՞ւմ է նախանձախնդրության ոգին, արդյոք ամբողջական նվիրման ու հանձնառության ոգով ենք մոտենում մեր պարտավորություններին»:

Սուրբ Անտոն Մեծը ասում է. «...Այդ գործությունը փրկության նախանձախնդրությունն է, որ հանուն Աստծո փառքի պատրաստ է ամեն ինչի: Եթե այդ նախանձախնդրությունը կա, ապա վանականի բոլոր սխրագործությունները ի գործ են դրված, եթե չկա, ապա ամեն ինչ կորած է:

Ուստի, երբ մի անգամ մի եղբայր, ում մեջ պակասում էր այդ նախանձախնդրությունը, գալով Սուրբ Անտոնի

մոտ, խնդրեց նրան աղոթել իր համար, մեծ ծերը պատասխանեց նրան. «Ո՛չ ես, ո՛չ Աստված չենք գթա քեզ, եթե ինքդ չհոգաս քո համար և չաղոթես Աստծուն... Այդ պատճառով հորդորեց ոչ մի բանում ներողամիտ չլինել ինքն իր հանդեպ, այլ համբերությամբ միշտ պահել այդ նույն նախանձախնդրության ոգին՝ ասելով. «Վանականը, որը մի քանի օր աշխատում է, իսկ հետո ներողամտությամբ վերաբերվում իր անձի նկատմամբ, ապա նորից աշխատում է և նորից ծուլանում, այդպիսի վանականը միևնույնն է, թե ոչինչ չի անում և երբեք կյանքի կատարելության չի հասնի մշտական նախանձախնդրության և համբերատարության պակասի պատճառով... Բայց նախաձախնդրությունը ինքն իրենով երբեմն կույր է լինում և կարող է ընտրել մի այնպիսի ուղղություն, որը համապատասխան չլինի բռնած կյանքի ճանապարհին: Այդ պատճառով պետք է պաշտպանված լինի ղեկավարների կողմից: Իսկ ովքե՞ր են այդ ղեկավարները: Սուրբ Անտոնը մատնանշում է երկուսը՝ սեփական դատողությունը և փորձառուների խորհուրդները»:

Ամեն մեկս առիթի դեպքում, երբ մեզ հնարավորություն է տրվում, պարծենում ենք մեր հայրերի փառավոր գործերով ու մեր ժառանգած արժեքներով: Այո՛, իրապես մենք վայելում ենք նրանց տքնության ու չարչարանքի գինը, բայց արդյոք դա բավարա՞ր է: Այսօր նույնպես հանդիպում ենք ազգանպաստ ու եկեղեցաշեն ձեռնարկումների, բայց որքանո՞վ է մեզանից յուրաքանչյուրը մասնակից այդ ամենին և ի՞նչը պետք է առաջնորդի մեզ մաս ու բաժին ունենալու այն մեծ առաքելության մեջ, որը կոչվում է «շինություն»: Խոսքը ֆիզիկական շինության մասին չէ, այլ հոգեկան, որը կառուցելը այնքան էլ հեշտ բան չէ, բայց անկարելի չէ: Այսօր, առավել քան երբևէ, մեծ են հնարավորությունները ապրելու և ստեղծելու: Երանելի ենք,

քանզի Ամենաբարձրյալն Աստված մեզ շնորհք ու ազատություն է պարգևել անկաշկանդ առաջ գնալու և մեր հայրերի ավանդին մեկ քար ևս ավելացնելու: Բայց ի՞նչն է պատճառը, որ մեր վերելքն ուշանում է, ոչ այնքան կայուն տնտեսությո՞ւնը, քաղաքական բարդություննե՞րը, բարոյահոգեբանական մթնոլո՞րտը, անտարբերությո՞ւնը մեր շրջապատում տիրող երևույթների նկատմամբ: Արդյոք այս կերպ չե՞նք դավաճանում մեզ բազում անգամներ փորձություններից ազատած նախանձախնդրության ոգուն: Հիշենք, որ այդ ոգին մեզ երբեք չի դավաճանել:

Եկեք միասին աղոթենք, որ Տերը մեր Հայրենիքին, այնտեղ ապրող կառուցող ու շենացնող մեր ժողովրդին, ինչպես նաև Սփյուռքի մեր եղբայրներին ու քույրերին պարգևի խաղաղություն, սեր և միություն, իսկ մեր դարավոր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ պայծառություն ու անսասանություն: Ամեն:

ԱՆՁՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Այս բանն իմացիր, որ վերջին օրերին չար ժամանակներ պիտի գան, երբ մարդիկ պիտի լինեն անձնասեր...»

(Բ.Տիմ. 3:1-2)

Այս խոսքը վերցրել եմ Պողոս առաքյալի իր աշակերտին Տիմոթեոսին ուղղած երկրորդ նամակի 3-րդ գլխի 1-2 համարներից, ուր նա խոսում է անձնասիրության մասին:

«Ի՞նչ է անձնասիրությունը, ո՞վ է անձնասերը, այն դրակա՞ն է, թե՞՝ բացասական»:

Անձնասիրությունը հոմանիշ է եսասիրության: Անձնասերը այն մարդն է, որ ամեն ինչը չափում է իր անձի միջոցով: Նա ամեն ինչի մեջ փորձում է իր կարծիքը հայտնել, առանց հաշվի առնելու դիմացինի մտածումը, իմանալով հանդերձ, որ իր կարծիքը ճիշտ չէ: Անձնասեր մարդու համար կարևորը իր «ես»-ի գոհացումը և փառավորումն է:

Հակոբոս Առաքյալն ասում է. «Ապա եթե կատարեք արքայական օրենքը Սուրբ Գրքի համաձայն, թե՛ «Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես ինքդ քեզ», լավ եք անում»: Իսկ եթե աչառություն (կողմնապահություն) եք անում, մեղք եք գործում՝ դատապարտվելով օրենքից որպես օրինազանցներ» (Հակ. 2:8-9):

Անձնասերի վարմունքը հակառակ է քրիստոնեական սիրուն: Անձնասիրությունը ոչ միայն մեղք է, այլև չարիք մարդկության համար:

Այս հիվանդությունից ամեն մարդ էլ քիչ թե շատ կարող է ունենալ, բայց երբ հպարտ չես, ապա այն չի կարող տեղ գրավել քո ներսում և իր սաղմի մեջ կարող է խեղդվել, և անհատը իր մտավոր ու հոգևոր կարողու-

թյունները անշահախնդրորեն կներդնի ուրիշների օգուտի համար:

Աստծու օրենքը տրվեց մարդկության Տասնաբան-յայի միջոցով, ուր հատակ կերպով շեշտվում են «մի»-երը, զգուշացնելով անհատին իր անձի վրա կենտրոնանալուց, այլ շեշտվում է Աստծու հեղինակությունը ու Նրա ստեղծած արարարածների վրա գուրգուրանքը:

Անձնասիրությունը յոթը մահացու մեղքերին է նմանվում, որը կամաց-կամաց ավազի մեջ մխրճվելու ձևի տակ ենթակային իջեցնում է գեհեն, իր հոգին կրծելով ու փչացնելով:

Աստծուն մոտենալու ամենակարևոր քայլը՝ մարդուն սիրելն է: Անձը սիրելու փոխարեն, սիրենք մեր նմաններին, ապա Աստծուն սիրած կլինենք:

Հետաքրքիր և գեղեցիկ բացատրություն է տվել մտածողներից մեկը անձնասերի նկարագրի մասին. «Այն մարդիկ, որոնք չգիտեն, թե որտե՞ղ են փնտրում ճշմարտությունը, նայում են իրենց «ես»-ի նեղ ջրհորում, որի հատակին տեսնում են իրենց պատկերը և շփոթված են մնում, թե ի՞նչ են փնտրում»:

Իսկ Հույն փիլիսոփաներից Պլատոնն ասել է. «Աշխատելով ուրիշների երջանկության համար՝ մենք գտնում ենք մեր սեփականը»:

Հիսուս ասում է. «Ով սիրում է իր անձը, կկորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կպահի հավիտենական կյանքի համար» (Հովհ. 12:24-26): Մեր ծնողները մեզ համար մեծագույն օրինակն են զոհողության, նվիրվածության, որովհետև Հիսուսի ասածի նման՝ նրանք իրենց անձը ատում են, որպեսզի կարողանան մեզ՝ զավակներին կյանքի ճիշտ ճանապարհը ցույց տալ: Անձը ատել նշանակում է «ես»-ը խեղդել, զրկել իրեն կյանքի

հաճույքներից, վայելքներից, հանուն կարևոր մի նպատակի:

Ավետարանական սկզբունքի համաձայն բարձրանալու միակ ճանապարհը ու միջոցը խոնարհվելն է:

Այս պատմությունը իրապես հրաշալի մի օրինակ է, երբ Աբբա Հովհաննեսը իր անձի մասին չի մտածում: Պատմության վերնագիրն է. «Աբբա Հովհաննեսի պարտքը»:

«Աբբա Հովհաննեսը կատարյալ հեգուության էր հասել՝ իր մեջ եղած աստվածային բարեշնորհության առատության շնորհիվ: Մի անգամ նա մի վանական եղբորից մի ոսկե դրամ է վերցնում պարտքով և իր ձեռագործերի համար վուշե կտոր գնում:

Դրանից հետո մեկ ուրիշ եղբայր գալիս է նրա մոտ ու խնդրում:

Աբբա, ինձ մի փոքր այդ կտորից տուր, որպեսզի ինձ համար շապիկ կարեմ:

Աբբան սիրով տալիս է: Հետո մեկ ուրիշն է գալիս ու նույնպես խնդրում:

Աբբա, մի փոքր կտոր տուր սրբիչի համար:

Ծեր վանականն այս մեկին էլ է տալիս, և շատ այլոց նույնպես, քանի որ շատ հեզ էր սրտով: Վերջապես այն եղբայրը, ով նրան պարտք էր տվել, գալիս է իր դրամը ետ ուզելու:

Վանականը պատասխանում է.

Հիմա կգնամ, կբերեմ:

Չիմանալով, թե ումից պարտք վերցնի՝ աբբա Հակոբի մոտ է գնում, ով պատասխանատու էր ողորմություն բաժանելու համար, որպեսզի նրանից մի ոսկե դրամ խնդրի՝ պարտքը վերադարձնելու համար: Աբբայի մոտ գնալու ճանապարհին մի ոսկե դրամ է տեսնում գետնին ընկած: Ձեռք չի տալիս, բայց աղոթք է անում ու վերա-

դառնում իր խուցը: Եղբայրը կրկին գալիս է իր պարտքը ստանալու:

Ես աշխատում եմ այդ ուղղությամբ,- պատասխանում է ծերունին ու կրկին աբբա Հակոբի մոտ է գնում:

Ճանապարհին տեսնում է, որ ոսկե դրամը նույն տեղում էր: Աղոթում ու ետ է վերադառնում: Եղբայրը երրորդ անգամ է գալիս իր դրամը ետ ուզելու:

Անպայման կբերեմ,- պատասխանում է ծեր վանականն ու գնում այն տեղը, ուր դրամն էր ընկած: Աղոթք է ասում ու վերցնելով՝ աբբա Հակոբի մոտ բերում:

Աբբա, ճանապարհին այս ոսկե դրամը գտա: Բարի եղիր ու շրջակայքում հարցուփորձ արա, թե ով է կորցրել: Եթե գտնես կորցնողին, ետ վերադարձրու:

Աբբա Հակոբը երեք օր շրջում է՝ հայտարարելով գտնված դրամի մասին, սակայն չի գտնվում մեկը, ով կորցրել էր այն: Սյոժամ ծերն ասում է աբբա Հակոբին.

Եթե ոչ ոք չի կորցրել այդ դրամը, ապա այսինչ եղբորը տուր, ում ես պարտք եմ: Ես քեզ մոտ էի գալիս գումար խնդրելու, որպեսզի պարտքս տամ ու գտա այդ ոսկե դրամը:

Չարմանում է աբբա Հակոբը, որ պարտք լինելով հանդերձ, ծեր վանականն իր գտած դրամը չէր վերցրել ու նույն պահին վերադարձրել պարտքը: Մեկ այլ զարմանալի սովորություն էլ ուներ աբբա Հովհաննեսը. եթե ինչ-որ մեկը գալիս էր նրանից ինչ-որ բան փոխ առնելու, ապա իր ձեռքով չէր տալիս, այլ ասում էր. «Գնա, վերցրու ինչ անհրաժեշտ է քեզ»: Երբ մարդը ետ էր բերում իր վերցրածն, ապա ասում էր. «Դիր այնտեղ, որտեղից վերցրել ես»: Իսկ եթե մեկն իր պարտքը չէր վերադարձնում, ապա վանականը նրան չէր էլ հիշեցնում այդ մասին»:

Մայր Թերեզան ասում է. «Տվեք ձեր ձեռքերը ծառայելու և ձեր սիրտը սիրելու: Մարդիկ անխոհեմ են,

անտրամաբանական և եսակենտրոն, սիրիւր նրանց ամեն դէպքում: Երբ բարիք եւ գործում, մարդիկ քեզ կմեղադրեն անձնասիրութեան հետին նպատակների մեջ, բարիք գործիր ամեն դէպքում»:

Եթէ լսեք, որ անձնասերը բարիք է գործել, մի՛ հավատացեք, որովհետեւ այդպիսի մեկը բարիքը բարիքի սիրո համար չի գործում, այլ անպայման դրա ետևում մի հաշիվ է հետապնդում, իր սնափառութեան գոհացում տալու և ուրիշներին իրեն ենթարկելու համար: Ժողովրդական ասացվածքն ասում է. «Եթէ լսեք, որ մի լեռ իր տեղից շարժվել է, հավատացեք, սակայն եթէ լսեք, որ մի մարդ իր նկարագիրն է փոխել՝ մի՛ հավատացեք»: Մարդու նկարագիրը փոխելու համար հրաշք տեղի պիտի ունենա: Դամասկոսի ճանապարհին Սողոմը Պողոսի փոխողը Տիրոջ հրաշքն էր:

Ամեն մարդ տարբեր կարողությամբ է օժտված: Բոլորը կողք-կողքի երբ գան՝ ամբողջություն և կատարելություն կլինի: Մա կարող է իրականություն դառնալ միայն սիրո կապով: Այդ հավիտենական կապը՝ Հիսուս Քրիստոսն է: Եթէ մեր Տերը մարդու ներսում տեղ գտնի, արդեն կդադարենք անձնասեր լինելուց և կհետևենք Նրա բարի ու նվիրյալ օրինակին: Ամեն:

ԲԱՐՏԻՄԻՈՍ ԿՈՒՅՐԻ ԽՆԴՐԱՆՔԸ

«Ի՞նչ ես ուզում, որ քեզ անեմ: Վարդապետ,
աչքերս թող բացվեն» (Մարկ.10: 51)

Որպեսզի կարողանանք լիովին հասկանալ, թե այս խոսքերով, Հիսուս ի՞նչ էր ուզում ասել կույրին, որը հավատով դիմել էր նրան իր աչքերը բացելու համար, մեջ եմ բերում Մարկոս Ավետարանչի 10-րդ գլխի 46-52 համարները. «Եվ եկան Երիքով: Եվ մինչ նա Երիքովից դուրս էր գալիս իր աշակերտներով, բազում ժողովրդով, Տիմեի որդին՝ կույր Բարտիմեոսը, նստել մուրում էր ճանապարհի եզրին: Երբ լսեց, թե անցնողը Հիսուս Նազովրեցին է, սկսեց աղաղակել և ասել. «Դավթի Որդի, Հիսուս, ողորմիր ինձ»: Եվ շատերը նրան սաստում էին, որ լռի, իսկ նա առավել ևս աղաղակում էր. «Դավթի, Որդի, ողորմիր ինձ»: Հիսուս կանգնեց և հրամայեց, որ նրան կանչեն: Կույրին կանչեցին ու նրան ասացին. «Քաջալերվիր, վեր կաց, կանչում է քեզ»: Եվ նա, դեն գցելով իր զգեստները, վեր կացավ եկավ Հիսուսի մոտ: Հիսուս նրան ասաց. «Ի՞նչ ես ուզում, որ քեզ անեմ»: Կույրը նրան ասաց. «Վարդապետ, աչքերս թող բացվեն»: Եվ Հիսուս նրան ասաց. «Գնա, քո հավատը քեզ փրկեց»: Եվ իսկույն նրա աչքերը բացվեցին, և ճանապարհին գնում էր նրա հետևից» (Մարկ. 10:46-52):

Մարկոս Ավետարանչի այս պատմությունից կարելի է առանձնացնել երկու բան.

ա. Կույրի փափագը և խնդրանքը, որը գալիս էր Հիսուսի նկատմամբ ունեցած իր վստահությունից և հավատից:

բ. Նա խնդրում էր Հիսուսի ողորմածությունը, քանի որ հավատում էր Նրան և մտածում էր, եթե Տերը ողորմի իրեն, նաև կբուժի ու դրա համար, երբ Հիսուս նրան հարցնում է, թե «Ի՞նչ է ուզում, որ Ինքը նրա համար

անի», նա ներքին հուզումով ու հավատով պատասխանում է. «Վարդապետ, թող աչքերս բացվեն»: Նա վարդապետից լույս էր ուզում, լույս, որը ինքը կորցրել էր, լույս, որը իրեն հնարավորություն պիտի տար տեսնելու աշխարհի գեղեցկությունները. «Ես եմ աշխարհի լույսը. ով իմ հետևից է գալիս, խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը» (Հովհ. 8; 12), - ասում է Հիսուս:

Կույրը գրկված էր լույսից, քայլում էր խավարում: Նա ոչինչ չէր տեսնում, այլ միայն լսում էր, որ կան գեղեցկություններ, որոնցից ինքը գրկված էր՝ արևի լույսից, բնության հրաշքներից և նրանցից, որոնք հաճելի են մարդկանց: Եվ երբ բարձրաձայն կանչում էր Հիսուսին. «Դավթի Որդի, Հիսուս, ողորմիր ինձ», Տերը լսում է նրա՝ աղաչողի ու խնդրողի ձայնը և պատասխանում է. «Կանչեք նրան ինձ մոտ»: Հիսուսի շուրջը գտնվողները կույրին ասում են. «Քաջալերվիր, վեր կաց, Նա կանչում է քեզ», այսինքն՝ ուրախացիր, ցնձա, քո ժամը եկել է, խնդրանքդ տեղ է հասել ու շուտով Աստված քեզ կօգնի:

Մարդկանց վրա, եթե հույս դնենք, երբեք վստահ չենք կարող լինել, որ անպայման կհասնենք ինչ որ Բանի: Իսկ Աստծու վրա հույսը դնող անձը, խելքն ու կամքը և խիղճը գործածելով, անպայման կհասնի իր նպատակին: Ճիշտ այդպես եղավ և Բարտիմիոս կույրը: Նա հավատաց ու հասկացավ, որ իր աչքերը կարող են բացվել միայն Աստծու շնորհիվ ու Նրա գործությամբ և Հիսուսի այն հարցմանը, թե՝ «Ի՞նչ է ուզում, որ Ինքը նրա համար անի», պատասխանում է այդ կանչին մեծ հույսով ու հավատով, թե՝ «Վարդապետ, թող աչքերս բացվեն»:

Բարտիմիոս կույրը հավատաց, որ իր աչքերը կարող են բացվել միայն Աստծու շնորհիվ ու Նրա գործությամբ:

Ես այս պահին ապրում եմ կույրի վիճակով: Նա հույսով ու հավատով սպասում էր: Երկար տարիների իր երազն էր, թե մի օր պիտի բացվեն իր աչքերը: Եվ եկել էր ժամանակը, պահը, որ իր երազը իրականություն դառնար: Ու իր այս հարցմանը, Հիսուս պատասխանում է. «Գնա, քո հավատը քեզ փրկեց»: Եվ Ավետարանիչը շարունակում է, թե՝ իսկույն նրա աչքերը բացվեցին, և ճանապարհին գնում էր նրա (Հիսուսի) հետևից»:

«Ժպտա և ողջ աշխարհը կժպտա քեզ.

Մի ծեր մարդ իր 25-ամյա տղայի հետ նստում է գնացք... Տղան նստում է պատուհանի մոտ...

Երբ գնացքը շարժվում է, նա ձեռքը տանում է պատուհանից դուրս ու հանկարծ ուրախացած բացականչում է.

Հայրի՛կ, բոլոր ծառերը հետ են գնում, տեսնո՞ւմ ես...

Հայրը լսում է տղային ու ժպտում... նրանց դիմաց ամուսնական մի զույգ էր նստած ու տարօրինակ հայացքով հետևում էր երիտասարդի քայլերին... նա այդքան մեծ էր ու իրեն փոքր երեխայի պես էր պահում...

Հայրի՛կ, տեսնո՞ւմ ես լիճն ու կենդանիներին... ամպերին նայի՛ր, տես՝ ի՞նչ չքնաղ են:

Քիչ անց սկսում է անձրև տեղալ... տղան, երբ զգում է անձրևի կաթիլն իր ձեռքի վրա, կրկին ժպտում է ու ասում.

Հայրի՛կ, անձրև է գալիս, տեսնո՞ւմ ես... տեսնո՞ւմ ես հայրի՛կ...

Ամուսնական զույգը որոշում է հարց տալ ծերունուն.

Պարոն, ինչո՞ւ Ձեր տղային հոգեբույժի մոտ չեք տանում: Շատ լավ մասնագետներ կան ու կօգնեն նրան...

Ծերունին, նայելով գույգին, ժպտալով պատասխանում է.

Մենք հենց հիմա հիվանդանոցից ենք գալիս... այսօր իմ տղան առաջին անգամ տեսողություն է ձեռք բերել...»:

Մի բուպե դուք ձեզ պատկերացրեք կույրի դրության մեջ: Խավար էր տիրում իր շուրջը: Նա ոչինչ չէր տեսնում: Հիսուսի հրամանով իսկույն խավարը լույսի վերածվեց: «Ժողովուրդ, մարդիկ, սիրելիներ, ես տեսնում եմ, տեսնում եմ», - բարձրաձայն գոռում էր կույրը: Ուրախություն, ցնծություն, խնդություն: Տերը լույս է սփռում՝ կույրերի աչքերը բացելով: Հիսուս ոչ միայն կույրի ֆիզիկական աչքերը բացեց, այլ նաև նրա հոգու աչքերը. «Գնա, քո հավատը քեզ փրկեց»: Եվ միանգամից բացվեցին նրա ֆիզիկական և հոգու աչքերը:

Մենք էլ շատ անգամ կույրի վիճակում ենք: Մեր ֆիզիկական աչքերը բաց են, մենք տեսնում ենք աշխարհի լույսը, բայց դժբախտաբար փակ են մեր հոգու աչքերը, քանի որ լիիրավ աղոթքի կյանքով չենք ապրում: Աղոթքը թերևս ցնում է մարդու հոգին, մաքրում, գտնում ու պարզություն է մտցնում մարդու հոգում: Աղոթող մարդը միշտ էլ լավատես է, երբեք չի բողոքում, այլ գոհ է իր վիճակից ու Աստծուն փառք է տալիս իր ամենօրյա կյանքի համար: Ես երբեմն զարմանում եմ, երբ մարդիկ բողոքում են իրենց կյանքից: Կարծում եք նրանք շահո՞ւմ են այդպես բողոքելով: Բիարկե, ոչ. ընդհակառակը այդպես անելով նրանք իրենց սրտում ու հոգում կուտակում են ավելորդ տառապանք, հոգս ու տրտմություն: Եվ դա կաթիլ առ կաթիլ ազդում է նրանց հոգեկանի վրա: Աստծուն փառք տալով, մենք մեզ ապահովում ենք, քանի որ Տերն է հոգում ամեն ինչ: Մեր հույսը Նա է:

Այսօր էլ Հիսուս մեզանից յուրաքանչյուրին կարող է հարցնել. «Զավակս, ի՞նչ ես ուզում, որ Ես քեզ համար անեմ»: Մենք պատրաստ պիտի լինենք այս հարցին պատասխանելու համար. «Վարդապետ, թող բացվեն մեր հոգու աչքերը», որպեսզի մենք սրբված, մաքրված և հավատի մեջ զորացած շարունակենք մեր կյանքը՝ ամեն օր փառք տալով Երկնավոր Հորը Իր բարիքների համար: Ամեն:

ԲՂՋԱԽՈՀՈՒԹՅՈՒՆ
«ՄԻ ՇՆԱՑԻՐ» (ԵԼՔ 20:14)

«Իսկ եթե մեկը շնանում է խելքի պակասության պատճառով, նա կորստի է մատնում ինքն իրեն... և երբեք չի ջնջվելու նրա նախատինքը» (Առակ. 6:35-33)

Յոթը մահացու մեղքերից վերջինը բղջախոհությունն է, որը պարզ բառերով ասած նշանակում է չար ցանկություն կամ ցանկասիրություն: Սրա հակառակ առաքինությունը ողջախոհությունն է, այսինքն՝ ողջամիտ մտածումը:

Մարդու ցանկասիրության պատճառով է, որ Աստված Իր տասը պատվիրաններից մեկը դարձրեց «Շնություն մի արա» կամ «Մի շնացիր»-ը:

Հին կտակարանում ցանկասիրությունը նկարագրվել է իբրև «ցանկությամբ անկարգ սեր ունենալ»: Իսկ Նոր Կտակարանում այն կոչվում է «սեռային ցանկությամբ այրվել»:

Հիսուս Լերան քարոզում այս պատվիրանին այլ մոտեցում ցույց տվեց. «Լսել եք, թե ինչ ասվեց. «Մի շնանար», իսկ ես ձեզ ասում եմ. ամեն մարդ, որ կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտում» (Մատթ. 5:27):

Իսկ Պողոս Առաքյալը ավելացնում է. «Սպանեցեք ուրեմն ձեր երկրավոր ցանկությունները. դեն գցեցեք պոռնկություն, պղծություն, հոռի կրքեր, չար ցանկություն... (Կող. 3:5) և շարունակում է. «Ձեզնից յուրաքանչյուր ոք գիտենա իր մարմինը պահել սրբությամբ ու պատվով, և ոչ թե ցանկության կրքով, ինչպես այլ հեթանոսներ, որ չեն ճանաչում Աստծուն» (Կող. 4:5):

Մարդը իր մտքի մաքրությամբ, հոգու անարատությամբ և մարմնի կանոնավորությամբ միայն կարող է

մոտենալ Աստծուն, խոսել Նրա հետ, ներշնչվել Նրա պատգամներով, կատարել Նրա պատվիրանները, ապրել երանության մեջ, երկնքի արքայությունը վայելել երկրի վրա և Աստծուն ընդունելի լինել:

Չար ցանկությունը ընդհանրապես մարդիկ գործադրում են իրենց երիտասարդ տարիքում, երբ մտածում են, թե այդ երիտասարդական ուժն ու գեղեցկությունը պիտի թառամեն, հետևաբար առիթից օգտվելով պետք է այսպես ասած «կյանքը ապրել ու վայելել» առանց անդրադառնալու, թե կյանքից տուժողը «կյանքը ապորինի ապրողն է»: Այսպիսները համոզված են, թե արգիլված ամեն պտուղ համով կլինի, ապորինի ամեն գործ ձեռք գցելիք մեծություն է և կյանքում անկարգությունը ցանկությունների վերջակետին է հասցնում:

Մարմինը ամենալավ սպասավորն է, եթե մարդը ինքն է կառավարում այն և վատ տեր է, եթե մարդը կառավարվում է նրանից: Այս տեսակետից, եթե նայենք, կրտեսանենք, որ չար ցանկությունը՝ բղջախոհությունը, անբնական մեղք է մարդու համար:

«Վանականն ու անառակ կինը.

Մի վանական իր ծառայությանն էր գնում, երբ ճանապարհին նրան մի անառակ կին հանդիպեց ու ասաց.

Փրկիր ինձ, Հա՛յր, ինչպես Քրիստոս փրկեց անառակ կնոջը:

Վանականը, հաշվի չառնելով, որ իրեն կարող են դատապարտել, բռնեց նրա ձեռքն ու ողջ քաղաքով անցավ: Մարդիկ տեսնում էին դա ու ասում.

Վանականն անառակին կնության է առել:

Երբ կուսանոցին էին մոտենում, այդ կինը եկեղեցու մոտ լքված մի նորածնի է տեսնում ու վերցնում նրան: Մի տարի անց, երբ մարդիկ տեսնում էին նախկին անառակին՝ երեխան գրկին, ասում էին.

Համա թե միանձնուհի է, ահա՛ ապագա վանականի էլ ծնել է:

Եվ քաղաքում սկսեցին խոսել, որ անառակ Պորֆիրիան ծեր վանականից երեխա է ունեցել ու երեխան էլ հորը շատ է նման: Իսկ երբ վանականն Աստծուց հայտնություն ստացավ իր մահվան օրվա մասին, իր մոտ կանչեց նախկին անառակին, իսկ այժմ միանձնուհի Պորֆիրիային ու ասաց.

Պետք է քաղաք գնանք, ուզում եմ դու էլ ինձ հետ գաս:

Պորֆիրիան, իր յոթնամյա որդեգրյալի հետ միասին, գնաց նրա հետ: Երբ քաղաք հասան՝ ծեր վանականն արդեն ծանր հիվանդ էր և մոտ հարյուր մարդ էր եկել նրան տեսակցելու: Ծերունին ասաց.

Կրակ բերեք: Թեժ ածուխով լի մի թավա բերեցին: Վանականը դրանք իր փեշի մեջ լցրեց ու ասաց ներկաներին.

Արդ գիտեք, եղբայրներ՝, որ ինչպես Մովսեսի անկեզ մորենին էր այրվում ու չէր մոխրանում, և ինչպես իմ հագուստն անվնաս մնաց այս կրակից, այդպես էլ ես իմ ծննդյան օրվանից մինչ օրս կանացի մեղքը չեմ ճանաչել ու պահպանել եմ կուսությունս:

Բոլորը զարմացան՝ ծերունու հագուստն ամբողջովին անվնաս տեսնելով ու փառաբանեցին այդպիսի գաղտնի սուրբ ծառաներ ունեցող Աստծուն:

Արդ դադարե՛ք ուրիշների մեղքերը քննարկելուց ու դատապարտելուց»:

Պողոս Առաքյալն ասում է. «Մարմինը ոչ թե պոռնկության, այլ Տիրոջ համար է, և Տերը՝ մարմնի համար...: «Զգիտե՛ք թե ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են: Արդ, Քրիստոսի անդամներն առնելով՝ պոռնիկի՞ անդամներ ենք դարձնելու: Քավ լիցի: Զգիտե՛ք, թե, ով

մերձենում է պոռնիկին, նրա հետ մեկ մարմին է դառնում... Եվ ով մերձենում է նրա Տիրոջը, մեկ հոգի է դառնում նրա հետ: Փախեք պոռնկությունից: Ինչ մեղք էլ որ գործի մարդ, այդ իր մարմնից դուրս է, իսկ ով պոռնկանում է, իր մարմնի դեմ է մեղք գործում: Չգիտե՞ք, թե ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մեջ է, և որն ստացել էք Աստծուց, և դուք ձեր տերը չեք, քանզի մեծ գնով գնվեցիք: Փառավորեցեք Աստծուն ձեր մարմինների մեջ» (Ա. Կորնթ. 6:13-20):

Առաքյալի այս խոսքերը մեզ ցույց են տալիս մեղքից հեռու մաքուր ու առողջ ապրելու ճանապարհը:

Պողոս Պատրիարք Ադրիանապոլսեցին ասում է. «Մարմնական ցանկությունը միշտ մարտնչում է իմաստության հետ. մեկը մյուսից ավելի ջանք է թափում նվաճելու մարդկանց սիրտը, և մարդիկ անդադար տարուբերվում են երկու հակառակ ուժերի կողմից: Երանելի է նա, ով իմաստությամբ հաղթում է մարմնի ցանկությանը և ոչ թե հաղթվում...: Ոչ մի ուրիշ ցավաբեր ախտ այնքան անողորմաբար չի տանջում երիտասարդներին, որքան մոլեկան սիրո ախտը: Ավելի շատ մեռնում են ցանկական սիրուց, քան երկաթե սրով: Մոլեկան ցանկությունը ոչ միայն միտքն է խանգարում, այլև մաշում ու նիհարեցնում է մարմինը: Վերցրու փայտը կրակի միջից, և կրակ այլևս չի մնա, մտքից վերցրու ցանկության առարկան, և ցանկություն այլևս չի մնա: Բղջախոհը գուցե չի զգում դների պատճառած տանջանքները, որովհետև առավել իր ախտավոր կրքերից է չարչարվում, քան դներից: Կրակը կամ ջրով է մարում, կամ հողով, կամ նյութի պակասությամբ. բղջախոհությունը կամ պահեցողությամբ է խափանվում, կամ ծերությամբ, կամ մահվամբ: Ուր բղջախոհ կա, թող այնտեղ կույր կամ դիվահար չփնտրվի, որովհետև բղջախոհը և՛ կույր է և՛ դիվահար» («Խրատի Թանգարան»):

Հայրերից մեկն ասում է.«Չար ցանկությունը խփում է գրպանին, թշնամի է մարդուն, վտանգ է մտքի համար, ջնջում է խիղճը, թուլություն է ուշիմությանը, հարբեցնում է զգացմունքները և վերջապես մահացություն է ամբողջ մարմնի համար»:

Փորձենք հեռու մնալ վերջին մահացու մեղքից՝ բղջախոհությունից կամ չար ցանկություններից ու մեր կյանքում կատարենք այս մահացու մեղքին հակառակ առաքինությունը՝ ողջախոհությունը, այսինքն՝ ողջամիտ մտածումը, որը ավելի ընդունելի է Աստծու կողմից: Ամեն:

ԱՆՁՆՈՒՐԱՅՈՒԹՅՈՒՆ

«Որը Աստծու կերպարանքով էր, բայց Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց, այլ իր անձը ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով. մարդկանց նման լինելով և մարդու կերպարանքով խոնարհեցրեց ինքն իրեն» (Փիլ. 2:6-8)

Այս խոսքը ես վերցրել եմ Պողոս Առաքյալի Փիլիպպեցիներին ուղղած նամակի 2-րդ գլխի 6-րդ համարից, ուր Առաքյալը խոսում է Հիսուսի Անձնուրացության մասին:

«Ի՞նչ է անձնուրացությունը, ինչպե՞ս մարդը կարող է զոհել իր անձը, կամ ինչպե՞ս կարող է այն նվիրել և զոհաբերել հանուն հայրենիքի և հանուն հավատի»:

Իր անձը ուրացողը արդեն պատրաստ է այն զոհելու իր սիրածի կամ հավատացած գաղափարի համար: Որևէ անհատ մարդու կողմից կատարված զոհողություն իր մեջ պարունակում է մեծ սեր: Անձնուրացությունը հակապատկերն է անձնասիրության:

Հայրենասիրության ու ազգասիրության զգացումները շատ անգամ մարդկանց մղում են անձնուրացության ի պաշտպանություն հայրենի հողին և ժողովրդի ազատության:

Ապրիլյան քառօրյա Արցախյան պատերազմը ցույց տվեց, թե մեր երիտասարդ՝ 18-20 տարեկան զինվորները ինչպիսի՞ անձնուրացությամբ, անձնագոհությամբ և քաջությամբ պաշտպանեցին մեր Հայրենիքի սահմանները ներս խուժած թշնամուց, իրենց ամենաթանկագինը՝ կյանքը դնելով Հայրենիքի զոհասեղանին ու մատաղ անելով այն:

Հիսուս և մեր քաջարի զինվորները իրենց անձնուրացությամբ և անձնագոհությամբ հրաշալի օրինակ են մեզ բոլորիս համար:

Մի մտածող ասել է. «Անձնուրացությունը Աստծու հետ մի տեսակ ընկերակցություն է: Նրան քեզ բաժնեկից անելով, Նրա մոտ քո երջանկությամբ հետաքրքրվելու տրամադրություն ես առաջացնում»:

Պողոս Առաքյալը վկայում է, թե՝ Հիսուս. «Որը Աստծու կերպարանքով էր, բայց Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց, այլ իր անձը ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով. մարդկանց նման լինելով և մարդու կերպարանքով խոնարհեցրեց ինքն իրեն՝ հնազանդ լինելով մինչև մահ և այն էլ մահվան՝ խաչի վրա»:

Այս պատմությունը գոհողության սքանչելի օրինակ է.

«Շվեդիայի թագավորը, պատերազմի ամենաժանր պահին, երբ տեսնում է, որ զինվորները ռազմադաշտը լքում ու խուճապահար փախչում են, ձիուց իջնում է և բարձրաձայն կանչում նրանց.

Ո՞ր եք փախչում այ վախկոտներ, գոնե մի բռնականգնեք, որ տեսնեք, թե ինչպե՞ս է մեռնում ձեր թագավորը:

Այս խոսքերը լսելով, զինվորները ուժ են առնում, վերադառնում են ճակատ և հերոսական դիմադրությունից հետո, թեև թշնամին պարտված նահանջում է, բայց ծանրորեն վիրավորված թագավորը, մի քանի բռնակ հետո մահանում է»:

Երբ Հուդան Հիսուսին մատնեց և զինվորները Նրան բռնեցին, առաքյալները վախեցան ու փախան: Նույնիսկ Պետրոս Առաքյալը, ով իրեն անվախ ու քաջ էր համարում, պատրաստ մեռնելու Հիսուսի հետ, երեք

անգամ վախի պատճառով ուրացավ Նրան: Սակայն Հիսուսի զոհողությամբ և ապա մեռելներից Հարությամբ առաքյալները վերստին ուժ առան ու լցվելով Մխիթարիչ Սուրբ Հոգու շնորհներով՝ անվախ քարոզեցին օրինակ ունենալով Մեծ Վարդապետին և իրենց նահատակությամբ ամուր հիմքերի վրա դրեցին Քրիստոնեությունը:

Կյանքը այնքան էլ հեշտ չէ, մարդիկ այսօր «կեր, խմիր և ուրախ եղիր»-ի տրամաբանությամբ են շարժվում, որը աշխարհում դժբախտաբար համատարած երևույթ է դարձել: Անձնուրացության հարյուրավոր օրինակներ ունենք պատմության մեջ, սակայն ցայտուն օրինակներից մեկն է հանդիսանում Հիսուսի աշակերտներից Հովսեփ Արեմաթացին, ով Նրան խաչից իջեցրեց և իր անձի համար պատրաստել տված գերեզմանը տրամադրեց Նրա մարմնին:

Երբ մեկը մի օգտակար ծառայություն է ուզում կատարել, անպայման կարևոր է, որ մոռանա իր անձը, իր հանգիստը, իր դիրքը և իր օգուտը: Եթե ուզում ենք նվիրվել, չենք կարող որևէ բանից օգուտ ակնկալել: Եթե մտածենք մեր օգուտի մասին և այդ տեսակետից անձնական օգուտի ակնկալություն ունենանք, այդ պահից կդադարի մեր ծառայությունը նվիրում ու անձնուրացություն լինելուց:

Իր անձը ուրացողը նման է խունկի ու մոմի: Նա լուսավորում է ուրիշին ինքնիրեն հանգցնելով և անուշահոտությամբ ուրախացնում է՝ դարձյալ ինքնիրեն զոհելով: Ճիշտ այստեղ է անձնուրացության գաղտնիքն ու խորհուրդը:

Սողոմոն իմաստունը, ով ամեն տեսակ փառքեր ու վայելքներ տեսավ, սակայն Աստծու փառքը առաջնային համարեց, ասում է. «Բարի անունը հարստությունից ավելի լավ է»:

Պատմության մեջ շատ մարդիկ կան, որոնք իրենց անունները արյունով գրեցին նրա էջերում, ինչպես՝ Ներոնը, Արդուլ Համիդը, Էնվերը, Թալեաթը, Հիտլերը, Ստալինը և ուրիշներ, որոնք անմահացել են իրենց ռժիրներով ու դարեր շարունակ անեծքներ պիտի ընդունեն, թեև ժամանակին իրենց վատությունը արեցին ու միլիոնավոր մարդիկ մեռան: Երանի նրանց, ովքեր պատմության մեջ և կամ մարդկանց սրտերում օրհնյալ անուն կթողնեն ու կանմահանան:

Պաիսիոս Աթոսացին ասում է.

«Մեղավոր մարդիկ մյուս կյանքում իրենց ցանկությունների պատճառով պիտի տառապեն: ...

Ինչ նշանակությունն որ բենգինն ունի մեքենայի համար, այդպես էլ սիրտն է հոգևոր կյանքի համար: Մարդն ինչ-որ ի սրտե է անում, չի հոգնեցնում նրան: Դրա համար էլ բոլոր նրանք, ովքեր ինձ հարցնում են՝ ի՞նչ սովորել, պատասխանում եմ՝ ինչ որ սիրում եք: Հատկապես որոշ մասնագիտություններ, ինչպես օրինակ՝ բժիշկ, մանկավարժ, շատ անհրաժեշտ է, որ մարդը դրանք սիրի: Հոգևոր կյանքում էլ, աղոթքին սիրտն էլ պետք է մասնակցի:

Հոգևոր կյանքը մեծ անձնուրացություն և բարեխղճություն է պահանջում» («Խրատներ»):

Դժբախտաբար շատ մարդիկ անձնուրացությունը հիմարություն և նույնիսկ ծիծաղելի են համարում, որովհետև նրանց ավելի հետաքրքրում է շահը, հաճույքներն ու վայելքները: Նրանց երկրպագության առարկան դրամն է: Այսպիսի մարդիկ կյանքը մսի ու ոսկորի բաժինն են կարծում և անմահությունը երագում են դրամի զորությամբ ու նրա միջոցով:

Պողոս Պատրիարք Ադրիանապոլսեցին ասում է.

«Այս աշխարհը կառավարվում է Աստծու իմաստությամբ, նախախնամվում նրա ողորմությամբ ու արդարությամբ,

որ չգիտի վրիպել կամ որևէ մեկին անիրավել: Քանզի վտանգներն էլ՝ երկնքից, երկրից, տարերքներից կամ մարդկանց անիրավությունից եկող, ոչ թե պատահակա- նորեն են հասնում մարդկանց, այլ ըստ Աստծու անքնին դատաստանների՝ ըստ այսմ. «Ո՛չ արևելքից, ո՛չ արևմուտ- քից, ո՛չ էլ լեռների անապատից, այլ Աստված է դատավոր» (Սաղմ. 74:7):

Ուրեմն՝ կարճամիտների լեզուները թող պա- պանձվեն՝ չխոսելու ընդդեմ Աստծու նախախնամության ու դատաստանի, այլ միայն գոհանան նրանից, որ ամեն ինչ արեց ու միշտ անում է բարվոք կերպով:

Եկեք հետևենք Պողոս Պատրիարքի խրատին ու մեր հույսը դնելով Աստծու վրա, փորձենք օգտակար հան- դիսանալ մեր նմաններին առանց որևէ շահի ակնկա- լության, սիրով ու հավատով, նվիրումով և գոհողությամբ ու վստահ եղեք, որ Տիրոջ օրհնությունը միշտ մեզ հետ պիտի լինի: Ամեն:

ԲԱՐԻՔ ԱՐԱ ԿԱՐՈՏՅԱԼԻՆ

«Մի հապաղիր կարոտյալին բարություն անել,
երբ քո ձեռքը կարող է օգնել նրան» (Առակ.3:27)

Այս խոսքը ես վերցրել եմ Առակաց գրքի 3-րդ գլխի 27 համարից, ուր Հիսուս մեզ ցույց է տալիս բարության եւ ողորմության ճանապարհը:

«Ի՞նչ է բարությունը, և կամ ի՞նչ է ողորմությունը: Ի՞նչ կապ կա այս երկուսի միջև: Արդյոք սրանք իրար լրացնո՞ւմ են կամ հակառակը»:

Աստված բարի է և ողորմած է: Անսահման է Նրա բարությունը մեր նկատմամբ: Ամեն անգամ մեր աղոթքների մեջ խնդրում ենք, որ Աստված մեր մեղքերին թողություն տա ու ողորմած լինի մեր հանդեպ: Ընդհանրական հայրերից մեկն ասում է. «Քո ողորմությունը թաքցրու աղքատի ծոցում, որպեսզի Դատաստանի օրը այն գտնես Քրիստոսի ծոցում»:

Առակած գրքից վերցված իմ բնաբանը. «Մի հապաղիր կարոտյալին բարություն անել, երբ քո ձեռքը կարող է օգնել նրան: Չասես թե՝ «Գնա, կգաս՝ վաղը կտամ, մինչդեռ կարող ես բարությունդ անել, քանի որ չգիտես, թե վաղն ինչ է բերելու քեզ» (Առակ.3:28) մեզ մտածելու առիթ է տալիս ու մի քանի հարցեր առաջացնում, թե ես ի՞նչ պարտավոր եմ բարություն անել կամ բարի լինել, երբ որ ամեն կողմ չար մարդիկ ավելի շատ հարգանք ու հեղինակություն ունեն, քան մենք, որ բարի ենք: Գոնե ժողովրդի մի մասը այսպես է մտածում: «Արդյոք այսպես մտածող մարդիկ իրավացի՞ են կամ ոչ», - կարող է հարցնել որևէ մեկը: Իմ պատասխանը ոչ է, քանի որ Աստված բոլորին հավասար աչքով է նայում և՛ բարուն և՛ չարին:

10-րդ դարի աղոթասաց Սբ. Գրիգոր Նարեկացին ասում է. «Ամբողջ մարդկության մեղքը եթե վերցնենք, ապա այն նմանվում է մի փխրուն հողի, որը պետք է հավի և վերանա աստվածային անսահման օվկիանոս ողորմության մեջ»: Բարի գործը և ողորմությունը չափ ու սահման չունեն: Ամեն մարդ անում է իր հնարավորության սահմաններում: Հիշենք Ավետարանից Այրի կնոջ լուծայի առակը, երբ Հիսուս Իր առաքյալներին ասած. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այդ չքավոր այրին ավելի շատ գցեց, քան գանձանակի մեջ մյուս բոլոր դրամ գցողները, քանի որ ամենքը իրենց ավելորդից գցեցին, իսկ նա, իր չքավորությունից, գցեց ամեն ինչ, որ ուներ՝ իր ամբողջ ապրուստը» (Մարկ. 12.41-44): Այրի կինը ընդամենը երկու լումա էր գցել գանձանակը:

Պողոս Առաքյալը Հռոմեացիներին ուղղած իր թղթում ասում է. «Մի ձանձրացեք բարին գործելուց, որովհետև հարմար ժամանակին պիտի հնձեք առանց թուլանալու»:

Այս պատմությունը հետաքրքիր է և կոչվում է «Ճգնավորի վերարկուն»:

Մի օր, երբ ճգնավորը մտնում է շուկա իր կողովները վաճառելու, հանկարծ աչքն ընկնում է գինետան մոտ հավաքված մարդկանց, որոնց մեջ էր նաև այն աղքատը: Այդ պահին աղքատը պատմում էր իր բաժակակիցներին հետևյալը. «Խմենք եղբայրներ, քանզի այս գինին ձեռք է բերված մի վանականի վերարկուի վաճառված գումարից, ես ձևացրեցի, թե հույժ կարիքավոր մեկն եմ և խաբելով նրանից ձեռք գցեցի այս վերարկուն»: Այս լսելով, գինուց հարբած սկսեցին բարձրաձայն ծիծաղել: Ճգնավորը լսելով այս խոսակցությունը, շատ տխրեց և վշտացավ, որ իգուր տեղն է զրկվել իր վերարկուից ու ընկավ մեծ թախիծի մեջ:

Երեկոյան, երբ տխուր նստած էր իր խցում, թմրությունից ննջում է և տեսնում մի տեսիլք: Արեգակի պէս պայծառ, սքանչելի մի երիտասարդ կանգնել էր իր առջև և ասում էր. «Ինչո՞ւ ես այդպէս տխրել, նայիր և տես, թե ի՞նչ է իմ հագին» և ճգնավորը նկատում է, որ իր վերարկուն էր նրա վրա, ու Տերն ասում է. «Մի վշտացիր, քանի որ ինչ տվեցիր՝ ինձ տվեցիր»: Մթափվելով քնից, ճգնավորը գոհանում է Տիրոջից և մխիթարվելով իր վշտից, մենձ ցնծությամբ փառավորում բարերար Աստծուն» (Հոգեշահ գրքերից):

Սրբակյաց Թադեոս Վիտովնիցկիին նշում է, որ Երկնավոր Հայրն այնքան ներդաշնակ է ստեղծել մեր օրգանիզմը, որ առանց մեր հրամանների ու ծրագրերի այն համաչափ աշխատում է, սակայն մենք ի՞նչ ենք անում..., մեր մտքերով ու ցանկություններով ավերում ենք այդ ներդաշնակությունը: Պատկերացրեք, եթե Աստված յուրաքանչյուրին գերբնական իշխանությամբ օժտեր, արդեն քանի անգամ էինք ավերել և ոչնչացրել մեր մոլորակն ու տիեզերքը...

Նա նշում է,- «Երբ արթնանում եք, ուշադրություն դարձրեք կենդանիներին, թռչուններին, որոնք ամեն առավոտ իրենց օրը սկսում են գոհություն հայտնելով Աստծուն: Իսկ մենք արթնանալով մեր օրը սկսում ենք անգոհունակությամբ, հոգսաշատ մտքերով, ուրիշներին դատելով, թերագնահատելով: Չէ՞ որ այդ բոլորն արդեն ազդում են առողջության վրա ու խաթարում այն գեղեցիկ ներդաշնակությունը, որն Արարիչը դրոշմել է մարդու էության մեջ: Եվ մենք, փոխանակ պայծառացնելու ու ծաղկեցնելու մեր ներքին յուրօրինակ այդ հրաշքը, ավերում ենք ինքներս մեզ՝ հենվելով հողեղեն խաթարված աշխարհի ու մեղքի հույսի տապալվող սյան վրա: Արդ, միշտ գոհություն հայտնենք Աստծուն և աստվածային սիրո գորու-

թյամբ լցվենք, որպեսզի վերականգնվի մեր ներքին խաղաղությունն ու ներդաշնակությունը»:

Հետաքրքիր է նաև այս պատմությունը, որը կոչվում է «Թոյնը»

«Գյուղում մի աղջիկ էր բնակվում: Ամուսնանալուց հետո տեղափոխվում է ամուսնու տուն, սակայն ոչ մի կերպ լեզու չէր գտնում սկեսրոջ հետ: Վերջինս մշտապես խրատներ էր տալիս նրան և նախատում ամեն ինչում:

Մի անգամ, վաղ առավոտյան, երիտասարդ կինը անտառի գերին ապրող հեքիմի մոտ է գնում:

Ի՞նչն է քեզ ինձ մոտ բերել, գեղեցկուհի՛: Ուզում ես որևէ տղամարդու հմայե՞լ:

Ինձ ոչ ոք պետք չէ, ես իմ ամուսնուն սիրում եմ, բայց նրա մոտ հետ ապրելն ուժերիցս վեր է:

Իսկ ինձանից ի՞նչ ես ուզում:

Խնդրում եմ, օգնիր ինձ: Որևէ թույն տուր, որպեսզի թունավորեմ նրան:

Մի՞թե դրա վրա պիտի կառուցես երջանկությունդ: Դե, ինչ արած, խղճում եմ քեզ, կտամ քո ուզած թունավոր խոտաբույսերը: Ամեն առավոտ դրանցով թուրմ կպատրաստես և որպես թեյ՝ սկեսրոջդ կհրամցնես: Բայց մի խորհուրդ պիտի տամ քեզ:

Ի՞նչ խորհուրդ: Կանեմ այն ամենն, ինչ կասես, միայն թե հնարավորիս շուտ ազատվեմ այդ օձից:

Մեր գյուղում նորություններն արագ են տարածվում և քեզ կկասկածեն: Այդ պատճառով էլ, դրանից խուսափելու համար, սկեսրոջդ հանդեպ վերաբերմունքդ փոխիր: Քնքուշ ու բարեհամբույր դարձիր, ժպտա՛: Ստիպված չես լինի երկար տանջվել:

Երիտասարդ կինն այդպես էլ վարվում է: Աքլորականչի հետ արթնանում էր, հացի խմորը պատրաստում, վառարանը վառում, շիլան եփում և թունավոր թուրմը

պատրաստում սկեսրոջ համար: Եվ քնքշորեն հրավիրում նրան հրաշք թելը համտեսելու: «Մայրիկ» էր կոչում, ամեն ինչում՝ ենթարկվում: Ամուսնու ուրախությանը չափ ու սահման չկար՝ մայրն ու կինը հարազատներ էին դարձել: Սկեսուրը հարսին անսահման սիրում էր, վերջինս էլ անկեղծ սիրով էր պատասխանում նրան: Եվ կրկին հեքիմի մոտ է շտապում հարսը և արցունքն աչքերին աղաչում.

Պապի՛կ, աղաչում եմ քեզ: Դու ամեն ինչ կարող ես: Հակաթոյն տուր: Չափազանց շատ թուրմ եմ արդեն տվել սկեսրոջս: Կմեռնի: Իսկ նա հոգատար մայր է դարձել ինձ համար:

Հանգստացի՛ր, անուշի՛կս: Ես քեզ բուրումնավետ խոտաբույսեր էի տվել, որոնցով համել և օգտակար թել էիր եփում սկեսրոջդ համար: Իսկ թույնը քո սրտում էր, բայց Աստծո օգնությամբ ազատվեցիր դրանից»:

Ինչ բարի գործ որ պիտի անենք, այսօր անենք որովհետև չգիտենք, թե վաղը ի՞նչ է բերելու մեզ: Ապրենք ամեն օրով և փորձենք մեր հնարավորության սահմաններում մի բարի գործ կատարել, գործ, որը եթե մենք չլինենք էլ, կհիշեցնի մեր գոյության մասին: Մեզ պիտի հիշեն այն սիրո ու բարի գործերի համար, որոնք մենք հիշատակ կթողնենք այս կյանքում: Եվ եթե ամեն օր անձանձրությամբ աղոթենք հիվանդների, տկարների, անօգնականների, ինչու չէ նաև մեր թանկագին ծնողների ու բանտարկյալների համար, կտեսնեք թե ինչքան հեշտ պիտի լինի հաղթահարել ամեն ինչ և կյանքը ավելի գեղեցիկ ու գրավիչ կլինի: Ամեն:

ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ

«Արդարների համար չէ օրենքը, այլ՝ անօրենների
և անհնազանդների...» (Ա. Տիմ. 1:9):

Այս խոսքը ես վերցրել եմ Պողոս Առաքյալի իր
աշակերտ Տիմոթեոսին ուղղած նամակի 1-ին գլխի 9-րդ
համարից, ուր նա շեշտը դնում է անհնազանդության վրա:

«Ի՞նչ է անհնազանդությունը և ո՞վ անհնազանդ
գտնվեց Աստծուն, անհնազանդությունը թերություն է,
թե՞ առաքինություն»:

Այս հարցերին պատասխանելու համար, պիտի
սկսենք աշխարհի և մարդու ստեղծումից: Աստված մար-
դուն ստեղծեց Իր պատկերի համաձայն, այսինքն՝ նրան
տվեց հոգի, միտք, կամք, խիղճ և աշխարհին կառավա-
րելու իշխանություն, քանի որ մարդը Աստծու ստեղծած
ամենակատարյալ էակն էր:

Առաջին կնոջ թերությամբ և Ադամի սխալով ան-
հնազանդությունը տեղ գտավ աշխարհի վրա: Առաջին
մարդը ապերախտ գտնվեց Աստծու հանդեպ և չկարո-
ղացավ վայելել եդեմական կյանքը, որովհետև իր կնոջը
Աստծուց ավելի սիրեց և փոխանակ Նրան, իր կնոջը հնա-
զանդվեց, որը խաղալիք էր դարձել սատանայի ձեռքում:

Աստծուն չհավատացողն ու Նրան իր սրտում
չունեցողը՝ հնազանդություն էլ չունի: Աստված չունեցողը
սեր ու վախ էլ չունի:

Սուրբ Ավետարանը մեր հավատի պատմության
գիրքն է, որի յուրաքանչյուր խոսքը մեզ մարդկանց դեպի
կյանք առաջնորդելու լուսատու լապտեր է:

Եթե մի այլ կողմից մոտենանք, կտեսնենք, թե ան-
հնազանդությունը նաև հպարտության արդյունք է, ինչ-
պե՞ս: Պարզ է, հպարտ մարդը ինքն իրենից այն կողմ ոչինչ

չի տեսնում և դրա համար էլ չի հնազանդվում ո՛չ Աստծուն և ո՛չ էլ որևէ մեկին:

Պողոս Առաքյալը ասում է. «Համերաշխ եղեք միմյանց հետ, մի՛ մեծամտացեք, այլ խոնարհ եղեք խոնարհների հանդեպ, դուք ձեզ իմաստունի տեղ մի՛ դրեք, մեկի չարի փոխարեն չար մի՛ հատուցեք. խորհեցեք բարին՝ բոլոր մարդկանց առաջ» (Հռոմ. 12:16-17):

Անհնազանդությունը առաքինություն չէ, այլ՝ թերություն:

Այս փոքրիկ պատմությունը հետաքրքիր է.

«Ճաշարանատերից մեկը հայտարարություն է տալիս թերթում, թե մատուցողների կարիք ունի: Հաջորդ և մի քանի օրերի ընթացքում բավական մեծ թվով երիտասարդներ են ճաշարան գալիս: Ճաշարանատերը շփոթվում է այդքան շատ երիտասարդներ տեսնելով, սակայն արագ կողմնորոշվելով հնարը գտնում է. «Կընդունեն նրանց, ովքեր հնազանդ են իրենց ծնողներին»: Կատարվում է զարմանալին, մնում են ընդամենը երկու երիտասարդ»:

Յավ ես ապրում այս կարդալով: Մեր երիտասարդները կարծում են իրենց ծնողներին հնազանդվելով կորցնում են իրենց անկախությունը և անհատապես իրենց շնորհները դրսևորելու կարողությունը: Այդպես չէ, ծնողներին հնազանդվելով, նրանք ընդհակառակը ուժ են ստանում անվախ ու համարձակ քայլելու ուղիղ և ճիշտ ճանապարհով:

Հնազանդվել բառը ուղղակի կերպով չպիտի հասկանանք: Այն նշանակում է հարգել ու սիրել: Ես համաձայն չեմ կույր հնազանդության: Դա ավելի մեծ փորձության կարող է տանել անհատին: Միթե ու հարգել ոչ թե իբրև պարտականություն, այլ՝ գիտակցորեն:

Կարող ենք զարմանալ, եթե ուշադիր դիտենք բնությունն ու կենդանական աշխարհը: Մրանցից ոչ մեկը Աստծու կամքին հակառակ չեն գործում: Ամեն բան իր եղանակն ու ժամանակը ունի: Մարդու պարագային հակառակն է, ո՛չ ժամանակ կա և ո՛չ էլ եղանակ անհնազանդության իրենց արարքների մեջ: Եթե մարդ դիտի մրջյունների կյանքը, նրանցից կարգապահություն և աշխատասիրություն կտվորի: Նրանք ուժեղ կարգապահությամբ հետևում են իրենց առաջնորդին և երբեք էլ շարքից դուրս չեն գալիս:

Այս պատմության մեջ հնազանդությունը ուղղակի փրկում է երեխայի կյանքը.

«Տարիներ առաջ Ռուսաստանի գյուղերից մեկի երկաթգծային կայարանի պահակը, նշան է տալիս, որ պեսզի գնացքը անցնի: Այդ պահին հանկարծ նկատում է իր չորս տարեկան փոքրիկին, որը խաղում էր երկաթգծերի վրա: Գնացքը շատ մոտ էր և պահակը ժամանակ չունեի տղային ազատելու: Նա արագ պիտի կողմնորոշվեր՝ կամ փոքրիկը պիտի գոհվեր և կամ գնացքը պիտի խորտակվեր՝ ուղևորներն էլ գոհվեին՝ տղային փրկելու համար: Պահակի մոքում անմիջապես մի միտք է ծագում. նա ամբողջ ուժով գոռում է, որ փոքրիկը պառկի գետնին: Հակառակ որ փոքրիկը չի հասկանում, թե ի՞նչ է լինում և ինչո՞ւ ինքը պիտի պառկի, սակայն հնազանդվում է իր հորը ու գնացքը անցնում է նրա վրայից՝ առանց նրան վնասելու: Պահակը արժանի կերպով գնահատվում է փոքրիկին ճիշտ ձևով դաստիարակելու և կրթելու համար»:

Աղամ Քահանա Մակարյանը գրում է. «Գիտենք, որ քրիստոնեական կրոնը քարոզում է հնազանդություն իշխողների նկատմամբ, որովհետև ըստ Աստվածաշնչի՝ յուրաքանչյուր իշխանություն տրվում է Աստծո կողմից

(Հռ. 13.1): Սակայն շատ սրբերի արարքների մեջ տեսնում ենք անհնազանդություն և նույնիսկ ըմբոստություն հեթանոս իշխողների հրամանների ու կարգադրության դեմ: Ինչպե՞ս կարող ենք հասկանալ քրիստոնեական հնազանդության կոչը և այս սրբերի արարքները: Մեզ հաճախ թվում է, թե հնազանդությունը ազատության սահմանափակումն է: Եվ մեր ժամանակների պատկերացումներն էլ ազատության մասին հասել են անհեթեթության իրենց բարձրակետին: Այսօրվա մարդկանց մեծամասնության մտածելակերպով ազատություն նշանակում է ամեն ինչ անելու կարելիություն: Բայց մի պահ կանգ առնենք և մտածենք՝ մի՞թե ազատություն նշանակում է սանձարձակություն...:

Ճշմարիտ ազատությունը, որը մեծ չափով բխում է հնազանդությունից, լինում է աշխարհիկ և հոգևոր: Աշխարհիկ և հոգևոր հնազանդությունները միշտ իրար միացած պետք է լինեն և բաժանվեն միայն այն դեպքում, երբ աշխարհիկ հնազանդությունը կարող է սպառնալ հավատքի և հոգու կորստյանը: Այս ամենն իմանալուց հետո մեզ համար հասկանալի է դառնում որոշ սրբերի ըմբոստությունն ու պայքարը: Ի՞նչ կարող են սովորել մեր երեխաները այն սրբերի կյանքի պատմությունից, ովքեր անհնազանդ են եղել իրենց հեթանոս ծնողներին: «Հայրը պիտի բաժանվի որդու դեմ և որդին՝ հոր, մայրը՝ աղջկա դեմ, և աղջիկը՝ մոր» (Մատթ. 10:35, Ղուկ. 12:53, հմմտ. Միք. 7:6),- ասում է Աստվածաշունչը...: Սուրբ Հովհան Ոսկեբերանի խոսքերն են. «Մի ասա, թե երկար ժամանակ է պետք արդեն հայիոյանք կամ անպատշաճ խոսքեր սովորած երեխային ուղղելու համար, երկու ամիսն էլ բավական է»: Անհոգ ծնողները կպատժվեն ոչ միայն իրենց մեղքերի համար, այլև իրենց երեխաների վրա ունեցած վատ ազդեցության կամ իրենց պարտականության թե-

րացման համար: Առաջին հերթին երեխայի հոգին պետք է գորացնել ու պարարտացնել և ոչ թե մարմինը: Իսկ ինչպիսի՞ն էին քրիստոնեական ոգով դաստիարակված սրբերը: Իրենց հոգևոր իմաստության և ուժի շնորհիվ անգամ գազանները նրանց չէին վնասում և առյուծները ծառայում էին նրանց: «Եթե հայրերը քրիստոնեաբար դաստիարակեին իրենց երեխաներին, ապա պետք չէին լինի ո՛չ դատարաններ և ո՛չ էլ պատիժներ ու գրկանքներ», - ասում է Սուրբ Հովհան Ոսկեբերանը: Ահա այսպիսի ոգով դաստիարակված երեխաները ծնողների կամ պետության հանդեպ որոշ սրբերի անհնազանդությունից չար վարվելակերպ երբեք չեն սովորի և միայն մեկ կարևոր բան կիմանան՝ Աստված ավելի վեր է քան պետությունը և ավելի բարձր է, քան ծնողը» («Քրիստոնեության Իսկությունը» գրքից):

Եթե անհնազանդությունը գիտակցության պակասությունն է, հնազանդությունը մարդուն երջանկության ու կատարելության առաջնորդող մի միջոց է: Ճանապարհը Ինքը՝ Քրիստոսն է:

Նախամարդու թերությունը եղավ իր անհնազանդությունը: Այն օրից ի վեր մարդկային փորձառությունը սովորեցնում է, թե սիրո օրենքի կատարմամբ և Քրիստոսին հասնելով հավատացյալը կարող է վերստին մտնել այդ ճանապարհի մեջ ու քայլել դեպի կատարելություն և հավիտենական երջանկություն՝ հնազանդվելով Աստծու կամքին:

Բոլոր հոգևորականները ձեռնադրությունից առաջ ուխտ են կատարում, որ պիտի լինեն նվիրյալ ու ծառայասեր սպասավորները Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և միաժամանակ հնազանդվեն իրենց առաջնորդներին: Անհնազանդությունը պատժվում է:

«Մի անգամ չորս սկյութիացիներ գնացին երանելի հայր Պամբոյի մոտ: Նրանք կաշվե զգեստներ էին հագել, և նրանցից յուրաքանչյուրը պատմեց իր հետ այնտեղ եղող ընկերոջ առաքինությունները: Նրանցից մեկն անսասան էր պահքի մեջ, երկրորդն՝ այնինչ էր, երրորդը հույժ ողորմած էր, իսկ չորրորդի մասին ասացին, թե քսաներկու տարի է, ինչպիսի հնազանդությամբ մնում է ծերի մոտ: Հայր Պամբոն նրան ասաց. «Ահա ասում եմ ձեզ, որ սրա առաքինությունն ամենքիցդ բարձր է, որովհետև ձեզնից յուրաքանչյուրը, որ առաքինությունը կամեցավ, այն էլ գործադրեց, իսկ սա իր կամքը մերժեց և ուրիշների կամքը կատարեց: Այսպիսիները մարտիրոսներ են, եթե պահեն մինչև վերջ»:

Բոլոր մարդիկ էլ մեղավոր են: Անմեղ մարդ չկա: Եթե մեղավոր ենք, ուրեմն նշանակում է նաև անհնազանդ ենք: Այդ պատճառով Պողոս Առաքյալը շեշտում է. «Արդարների համար չէ օրենքը, այլ՝ անօրենների և անհնազանդների...» (Ա. Տիմ. 1:9):

Ուրեմն փորձենք հնազանդվել Աստծու կամքին: Եթե ուզում ենք երջանկության ու կատարելության հասնել, ճանապարհը մեկն է՝ հետևել ու հնազանդվել Ճշմարիտ Հովվին՝ Հիսուս Քրիստոսին: Ամեն:

ԱՆԻՐԱՎՈՒԹՅՈՒՆ

«Դատ դատատանի ժամանակ որևէ մեկի հանդեպ անիրավություն մի՛ արեք: Անիրավություն մի՛ արեք նաև չափելու, կշռաքարերի ու կշռելու մեջ»

(Ղևտ. 19:35)

«Ի՞նչ է անիրավությունը, ինչո՞ւ են մարդիկ անիրավություն անում, ի՞նչ է անարդարությունը, արդյոք անարդարությունը և անիրավությունը նո՞ւյնն են»: Սրանք հարցեր են, որոնց պատասխանները մեր առօրյա կյանքում ցայտուն կերպով առկա են:

Ասենք, որ անիրավությունն ու անարդարությունը նույն միտքը ունեցող բառեր են: Երկուսի պարագային էլ մի ուրիշի իրավունքը խլելու գործողություն կա: Այդ պատճառով էլ իմ բնաբանիս մեջ օգտագործված խոսքը զգուշացնում է այսպիսիներին. «Դատ դատատանի ժամանակ որևէ մեկի հանդեպ անիրավություն մի՛ արեք: Անիրավություն մի՛ արեք նաև չափելու, կշռաքարերի ու կշռելու մեջ»:

Փաստորեն, եթե նայելու լինենք առօրյա մեր կյանքին, կտեսնենք, որ մարդիկ անիրավություն են գործում բարոյական գործերի, առևտրի, քաղաքականության և ազգային գործերի մեջ:

Անիրավության առաջին և գլխավոր մեղքը ազատությունն է, իսկ երկրորդը՝ տիրելու, զավթելու, նվաճելու հոգեբանությունը, և այդ ճանապարհին մեռնում է աստվածայինը՝ խիղճը և մաքուր սիրտը: Մարդը անիրավությամբ և անարդարությամբ թաթախվում է կեղտի մեջ:

Զարմանալիորեն այսօրվա աշխարհում այսպիսիներին մարդիկ սիրում են անվանել՝ «ճարպիկ մարդ է, աչքը բաց և իր գործը իմացող»: Այդպիսիները մարդկանց աչքին թոզ փչելու համար նույնիսկ կարող են եկեղեցի

զնալ, ծունկի գալ, «Տեր ողորմեա» լսել, Սուրբ Հաղորդություն ստանալ, դրամ նետել գանձանակի մեջ, ուրիշներին ցույց տալ իբրև թե աղոթող են և Աստված կա իրենց մեջ:

Հակառակ նրան, որ մարդիկ շատ լավ գիտեն, որ այսպիսի անհրավություններ արգելված են Աստծու և պետության կողմից, սակայն անհասկանալի պատճառներով նորից են կատարում, որովհետև դրամը քաղցր է և բարձր ամեն ինչից:

Ազնիվ աշխատանքով դրամ շահելը ընդունելի է և՛ Աստծու և՛ մարդկանց կողմից, սակայն խարդախությամբ ու անհրավ ձևերով դրամ վաստակելը դեմ է Օրենքի և խղճի առաջ: Ով որ այս ճանապարհի վրա է, ո՛չ Աստված ունի և ո՛չ էլ խիղճ:

Անհրավ մարդու ցայտուն օրինակ է Ավետարանից Անհրավ Դատավորի և այրի կնոջ օրինակը, դատավոր, որ ո՛չ Աստծուց էր վախենում և ո՛չ էլ մարդկանցից ամաչում (Ղուկ. 18:5):

Սողոմոն իմաստունի այս պատմությունը անհրավության և խաբեբայության լավագույն օրինակն է.

«Երկու կին գալիս են Սողոմոն իմաստունի մոտ: «Մենք երկուսով ապրում էինք նույն հարկի տակ,- բացատրում է նրանցից մեկը,- ես մի որդի ունեցա, իսկ դրանից երկու օր հետո արու զավակ ունեցավ նաև այս կինը: Բայց մի գիշեր նրա որդին մահացավ: Օգտվելով առիթից, որ ես քնած եմ՝ նա իմ կողքից վերցնում է երեխայիս ու տեղը իր մահացած որդուն դնում: Երբ ես արթնացա ու նայեցի մեռած երեխային, իսկույն նկատեցի, որ նա իմը չէ»: Այդ ժամանակ երկրորդ կինն առարկում է. «Ոչ, ողջ մանուկը իմն է, իսկ մեռածը՝ նրանը»: Առաջին կինը թե՛ ոչ, մեռած մանուկը քոնն է, իսկ կենդանին՝ իմը: Եվ նրանք այսպես վիճում են: Ինչպե՞ս պիտի վարվի Սողոմոն իմաստունը:

Նա հրամայում է մի սուր բերել, ապա ասում է. «Ողջ երեխային երկու կտոր արեք. կեսը տվեք մեկին, կեսը՝ մյուսին»:

Ոչ- ճշում է իսկական մայրը:- Խնդրում եմ, մի սպանեք նրան, այլ տվեք այդ կնոջը:- Իսկ մյուս կինն ասում է. «Մանուկը ո՛չ ինձ լինի, ո՛չ էլ քեզ: Կիսեք նրան»: Այստեղ Սողոմոն իմաստունը միջամտում է. «Մի՛ սպանեք երեխային: Տվեք նրան առաջին կնոջը: Նա է իսկական մայրը»: Սողոմոն իմաստունը գլխի է ընկնում, թե ով է իսկական մայրը, քանի որ վերջինս այնքան է սիրում իր զավակին, որ անգամ պատրաստ է նրան տալու ուրիշին, միայն թե երեխան կենդանի մնա»:

Անհրավ, խաբեբա և անարդար մարդկանց թվում է, թե իրենք մահ չունեն և հավիտենապես պիտի ապրեն ու այդպես մտածելով շարունակում են անիրավություններ անել և ուրիշների ունեցվածքներին տեր դառնալով հարստություն են կուտակում, սակայն մոռանում են Աստծու հիշեցումը. «Անմիտ, հենց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են, իսկ ինչ որ պատրաստել ես, ո՛ւմն է լինելու» (Ղուկ. 12:20): Անհրավ մարդկանց խորհուրդ կտանք, որ գնան գերեզմանատուն և ննջեցյալներին մի հարց տան, թե իրենց հետ ի՞նչ են տարել ու հետո գան և շարունակեն իրենց կյանքը:

19-րդ դարի մեր եկեղեցականներից Գևորգ Եպիսկոպոսը իր խոսքն ուղղում է անհրավ մարդկանց և ինչո՞ւ չէ նաև մեզ, որ կարծում ենք ավելի արդար ենք, քան նրանք, որ մեղանչել են Աստծու դեմ անիրավություններ գործելով. «Քննեցեք, եղբայրներ, ձեր անցած ճամբան և տեսեք ձեր աշխատասիրության չափն ու ձեր աշխատանքի պտուղները. տեսեք, թե ի՞նչ եք տվել աշխարհին, ի՞նչ բարոյական գործեր եք կատարել Աստվածային պատվիրանների հանդեպ:

Հարցրեք ձեզ, թե՞ ո՞ւր և ե՞րբ նեղություն եք կրել հանուն Աստուծո, հանուն ճշմարտության, ո՞ւր և ե՞րբ զրկվել ու տանջվել եք ի սեր Աստուծո և ի սեր ճշմարտության և չարության հաղթելով բարին կատարել: Գալիս եմ էական պատվիրանին, սիրո պատվիրանին և հարցնում՝ դուք որ ամեն օր ձեր անձի համար շատ աշխատանք եք թափում, նույնը անո՞ւմ եք արդյոք ձերայնիներին, մեղանչած չե՞ք արդյոք ձեր հոր ու մոր դեմ: Ցույց տվե՞լ եք ձեր կյանքը ընկերոջը՝ ձեր կեսին ոսկու նման մաքուր սեր ու հավատարմություն: Մեղանչած չե՞ք երբեք որդիներիդ հանդեպ. առաջնորդել եք նոցա եկեղեցի՝ ճշմարտության, արդարության և սիրո տաճարը. մարզե՞լ եք նոցա աշխատանքի, գործով կրթե՞լ եք նրանց սիրտը ողորմած լինելու, դաստիարակե՞լ եք նրանց ազգային հոգով, սնուցե՞լ եք նրանց հոգին մանկական անմեղ զվարճություններով, որոնք մանկան մատղաշ հոգու էական պայմաններն են՝ թե՞ նվիրել եք ձեզ ձեր անձի հաճույքներին ու զվարճություններին՝ այդ ամենը հավատալով միայն օտար կանանց:

Եղե՞լ եք ձեր խեղճ դրացիների ճշմարիտ բարեկամն ու եղբայրը. զգացե՞լ եք նոցա հոգսերն ու կարիքները, և ամոքելով նոցա վշտերը՝ ուրախացե՞լ եք նոցա հետ, թե՞ լոկ ականատես եք եղել և իսկույն երես շրջել, որ չտանջվեք ու չվշտանաք, եթե միայն կարեկցելու ընդունակ եք: Ի՞նչ եք արել ձեր համայնքի կարիքների համար, ի՞նչ եք արել ձեր ազգի ցավերը ամոքելու համար. ավելի հեռուն կերթամ, ի՞նչ եք արել աշխարհի բարոյական վերածնության համար, դուք, որ բողոքում եք աշխարհի բարոյական անկման դեմ, դուք, որ պարծենում եք, թե ճշմարիտ քրիստոնյաներ եք, ավետարանի հարազատ զավակներ:

Վախենամ եղբայրներ, որ մենք բոլորս և՛ հարուստ և՛ աղքատ, և՛ ուսյալ և՛ անուս դիտելով մեր կյանքն ու գործերը և գիտակցելով մեր պարտքերը կարմրենք ու լռենք, եթե մեր հոգու ապականված թանձր մշուշի մեջ աստվածային խղճի ձայնը դեռ ընդունակ է արձագանք տալու» (Գևորգ Եպիսկոպոս, «Քարոզներ»)

Երբեմն իբրև հոգևորական լսում եմ այսպիսի արտահայտություններ, թե՛ «Ինչո՞ւ անիրավ, ավագակ, խարդախ, անարդար, կողոպտիչ մարդիկ ավելի լավ ու երկար են ապրում, իսկ դրան հակառակ առաքինություններով օժտված և բարի ու արդար կյանքով ապրողները լավ վիճակում չեն և ժամանակից շուտ էլ հեռանում են այս աշխարհից: Սրա պատասխանը կարող ենք գտնել Ամոսի գրքում, ուր այս մասին ասվում է. «Դրա համար աղքատներին նեղելով, և նրանցից ընտրությամբ կաշառք առնելով՝ շքեղազարդ ապարանքներ պիտի շինեք, բայց չեք բնակվի նրանց մեջ, գեղեցիկ այգիներ պիտի տնկեք, սակայն նրանց գինին չեք խմի, քանի որ ես իմացա ձեր բազում ամբարշտությունները, և սարսափելի են ձեր մեղքերը: Արդարին ոտնակոխ էիք անում՝ կաշառք առնելով, և աղքատին դռնե դուռ էիք գցում: Ահա թե ինչու նա, ով իմաստուն է, այդ ժամանակ կլսի, քանի որ ժամանակը չար է: Բարին փնտռեցեք և ոչ թե չարը, որպեսզի ապրեք և ձեզ հետ կլինի Ամենակալ Տեր Աստվածը, ինչպես որ ասում է, թե՛ «ատեցինք չարը և սիրեցինք բարին» (Ամոս 5:11-14):

Իսկ Պողոս Պատրիարք Ադրիանապոլսեցին շաբունակում է. «Եթե Աստված մարդու կամքին թողներ աշխարհի բարիքներն ունենալը, ինչպես կամենում են, որքան կամենում են և ուր կամենում են, այս աշխարհն ավագակների ու հափշտակողների հրապարակ կլիներ, և ամենքը զրկող ու անիրավ կլինեին: Ուժեղները տկար-

ներին կհաղթեին, և տկարներն էլ միաբանվելով ընդդեմ ուժեղների կելնեին, մինչև որ միմյանց ջնջեին երկրից: ...» («Խրատի Թանգարան», «Այս կյանքի վիճակը»):

Բնական է, որ բոլորս էլ պիտի մեռնենք լավ թե վատ, արդար թե՛ անիրավ, հարուստ թե՛ աղքատ, բայց երանի այն մարդուն, ով իր աչքերը կփակի խղճի կատարյալ խաղաղությամբ և հոգեկան հարստությամբ կմտնի հավիտենականության մեջ:

Փորձենք ապրել մաքուր սրտով ու խղճով, առանց խաբեբայության, անիրավության ու խարդախության, որպեսզի հաճելի լինենք և՛ Աստծուն և՛ մարդկանց: Ամեն:

ԾՈՒԼՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՐԻՔ Է

«Ծուլությունը հատուկ է թուլամորթին,
և գործ անել չսիրող մարդը քաղցած կմնա» (Առակ. 19:15)

Այս խոսքը ես վերցրել եմ Առակաց գրքի 19-րդ գլխի 15 համարից: Ինչպես նկատեցիք խոսքը ծուլության մասին է:

«Ի՞նչ է ծուլությունը, այն չարի՞ք է, թե՞ բարիք. օգտակա՞ր է, թե՞ վնասակար»

Նախ ասեմ, որ ծուլությունը յոթը մահացու մեղքերից մեկն է. յոթը մահացու մեղքերն են՝ հպարտությունը, նախանձը, բարկությունը ծուլությունը, ագահությունը, որկրամոլությունը (շատակերությունը), բղջախոհությունը (ցանկասիրությունը) և նրանց հարակից մասերը:

Սողոմոն իմաստունը ասում է. «Ծուլությունը հատուկ է թուլամորթին, և գործ անել չսիրող մարդը քաղցած կմնա» (Առակ. 19:15): Նա ոչ միայն գնահատում ու գովաբանում է աշխատավորին, այլև կշտամբում ու հանդիմանում է ծուլին, ամենաթույլ արարածի հետ համեմատության մեջ դնելով նրան. «Մրջյունի մոտ գնա, ով ծույլ, նախանձիր նրա գործերին և իմաստուն եղիր նրանից ավելի» (Առակ. 6:6):

Ծուլությունը լինելով մահացու մեղք, մի քանի չարիքների արմատն է, նույնիսկ կարելի է ասել «Ծուլությունը առաքինության գերեզմանն է»:

«Պողոս Առաքյալն էլ անդադար աշխատում էր ոչ միայն ցերեկը, այլև գիշերը: Սա ի հայտ է բերում նա, երբ ասում է. «Եղբայրներ, հիշեցեք մեր վաստակը և ջանքը, երբ գիշեր-ցերեկ աշխատում էինք» (Ա. Թեսաղ. 2:9): Հաճույքի և հոգևոր հանգստի համար չէ, որ նա աշխատում էր, ինչպիսիք էին եղբայրներից շատերը, այլ այնպիսի ջանք էր թափում աշխատանքի ժամին, որ օգնում էր նաև

ուրիշներին: Մի մարդ, որը իշխանություն ուներ դերի վրա լինելով տիեզերալույս վարդապետ, աշխատում էր գիշեր ու ցերեկ և մի փոքրիկ իսկ հանգիստ չէր առնում աշխատանքներից» (Սբ. Հովհան Ոսկեբերան Հայրապետ):

Աստված Ինքն էլ դատապարտել է ծուլությունը, ասելով. «Չար և ծույլ ծառա» (Մատթ 25:26): Երբ ծույլին ուզում ես մի տեղ ուղարկել, ասում է.

«Ճանապարհին առյուծ կա, հրապարակում՝ մարդասպաններ»

Ինչպես դուռը շուտ է գալիս իր ծխնիի վրա,

Այնպես էլ ծույլն է թավալվում իր մահճում:

Ծույլն իր ձեռքերը թաքցնում է ծոցում և ալարում է նույնիսկ իր բերանը տանել:

Ծույլն իր աչքին ավելի իմաստուն է թվում, քան այն անձը, որ հարստության բարի լուր է ավետում» (Առակ. 26: 13-18)

Ես ապրում եմ Բրբենկ քաղաքում և ամեն առավոտ, երբ քայլում եմ այգում տեսնում եմ մի քանի տնազուրկների (homeless), որոնք կիսամերկ քնում են գետնին: Նայում եմ ու զարմանում, թե նրանք ինչպե՞ս են դիմանում ցրտին, անձրևին, սովածության: Մենք, որ ապրում ենք մեր տներում, փափուկ անկողիններում, պաշտպանված ցրտից, անձրևից և այլ տեսակի փորձանքներից, ավելի շատ հիվանդ ենք, դժգոհ ու բողոքող կյանքից, քան նրանք: Ես զրույցի եմ բռնվել նրանցից մի քանիսի հետ և փորձել եմ հասկանալ, թե ի՞նչն է պատճառը, որ նրանք հայտնվել են փողոցում, ինչո՞ւ և ինչի՞ համար: Չեմ կարողանում հասկանալ, սա իրենց համար ապրելաձև է, թե՞ ծուլության դրսևորում:

Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետը պատասխանում է այս հարցին. «Պարապությունը և ճոխությունը

ոչնչի պիտանի չեն, այլ ծառայում են միայն սնափառության և հաճույքներին: Այսպիսի մարդը արհամարհելի է թե՛ տնեցիների, թե՛ ընկերների և թե՛ բարեկամների կողմից: Արդարությամբ կարելի է ասել, որ նա բեռ է երկրի վրա և իզուր է ծնվել ու աշխարհ եկել: Ավելի ճիշտ, ոչ իզուր, այլ իր գլխին որպես փորձանք, իր կորստի և ի վնաս ուրիշների համար: Եվ տեսնենք, թե ի՞նչ հաճելի բան կա այդպիսի պարապ և անգործ կյանքում: Ի՞նչ ավելի տհաճ բան կա այն մարդուց, որ չգիտի ինչով զբաղվի: Ի՞նչն է ավելի ամոթալի նրանից, ի՞նչն ավելի խղճուկ: Անձն իր բնությամբ կարիք ունի շարժման և տանել չի կարող անգործությունը: Աստված այն ստեղծել է որպես գործող էակ, դրա համար էլ նա գործում է իր բնության համեմատ, իսկ անգործությունը հակառակ է նրա բնությանը: Ոչ մի այլ ամոթալի բան չկա պարապությունից և անգործությունից, դրա համար էլ Աստված մեր մեջ դրել է աշխատելու կարիքը: Անգործությունը վնասում է ամեն բան և նույնիսկ մարմնավոր անդամները: Քանզի եթե աչքը, կամ ստամոքսը, կամ որևէ մի այլ անդամ մնա անգործության մեջ՝ չկատարելով իր պարտականությունները, այնժամ այն կընկնի ծայր աստիճան հիվանդության գիրկը, բայց ոչինչ այնպես չի տուժում այդ բանից, ինչպես հոգին...»: Փառք եմ տալիս Աստծուն և ուրախ եմ, որ Աստված այնպիսի մի ժողովուրդ է ստեղծել, հանձինս հայ ժողովրդի, որն աշխատասեր է, ժրաջան, ստեղծող ու Աստվածավախ:

«Աղոթքի պտուղը և ծուկության արդյունքը.

Աշակերտն ասում է ծեր վանականին.

Աղոթում եմ, բայց իմ բարի նպատակներից որևէ մեկն իրականություն չի դառնում:

Վանականը պատասխանում է.

Նայիր, թե բարեխիղճ այգեգործն ինչպես է գործում: Նա հողի մեջ մատղաշ ծառը չի տնկում և սպասում, թե երբ է աճելու և պտուղ տալու, այլ կռանում, խոնարհվում և ծառի շուրջ հողը փխրեցնում է, այնուհետև ջրում, մշակում, հոգ տանում՝ ցուցաբերելով սեր և գոհաբանություն առ Աստված: Այդպես էլ աղոթողը նման է այգեգործի, իսկ աղոթքը՝ մատղաշ ծառի: Դու նման ես անբարեխիղճ այգեգործի, որ դալար ծառերը տնկում ես և սպասում, թե երբ պտուղներ կտան, սակայն անմշակ ծառերը չորանում են, ինքդ էլ՝ խռովք ապրում, թե պտուղներ չստացար: Այդքանից հետո ինչո՞ւ ես Աստծուց դժգոհում, երբ ինքդ ես ծուլանում ու քո տնկած ծառերը չորացնում...

Հարատև աղոթքը հրաշքներ է գործում ու պտուղներ տալիս, որովհետև Աստված նույնպես հարատև է, և Իր պարգևն էլ կտրվի նրան, ով կհամապատասխանի հարատևության մակարդակին...» (Հովհաննես սրկ. Մանուկյան, «Առակներ»):

Տոնական մի Կիրակի առավոտյան, Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետը եկեղեցի է գնում: Ներկաների քիչ թիվը տեսնելով հուսախաբ է լինում և հետևյալ քարոզն է խոսում.

«Այսօր շատ քչերն են եկել այստեղ: Ինչ էլ որ լինի արդարանալի չի: Մենք այսօր Մարտիրոսների հիշատակն ենք տոնում և ոչ մեկը չի եկել: Ճանապարհի երկարությունն է նրանց դժվարացրել, թե՛ պարզապես ծուլությունը: Ինչպես հոգով ուղիղ, մտքով արթուն և կյանքով լի մարդուն ոչ մի բան չի կարող կանգնեցնել իր ճանապարհին, սրան հակառակ էլ թուլասիրտ ու ծույլ մարդու ճանապարհի վրա էլ ոչ մի արգելիչ պատճառ չեմ տեսնում:

Մարտիրոսները իրենց կյանքը տվեցին ճշմարտության համար, իսկ դուք չե՞ք կարող ճանապարհի կարճության մասին մտածել: Նրանք իրենց կյանքը տվեցին

Քրիստոսի սիրուն, իսկ դուք Նրա համար կարճ ճանապարհ գալը շատ էք համարում: Մարտիրոսների հիշատակությունն ենք տոնում և դուք ծուլությամբ ու անտարբերությամբ տա՞նն ենք նստում... Արդար է, որ ներկա լինեք տեսնելու սատանայի պարտությունը, մարտիրոսների հաղթանակը, Աստծու փառավորվելը և եկեղեցու պատվով պսակվելը»:

Ծուլությունը հոգու թշնամին է: Մի ծուլացեք, այլ ձեր աշխատանքով ու արդարությամբ փառավորեք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն: Ամեն:

ԿԵՂԾԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

«Հիսուս հասկացավ նրանց խորամանկությունն ու ասաց. «Ինչո՞ւ եք ինձ փորձում, կեղծավորներ» (Մատթ. 22:18)

Որպեսզի կարողանանք լրիվ հասկանալ, թե Հիսուս ինչո՞ւ ասաց այս խոսքը և ո՞ւմ համար, պիտի կարդանք Մատթեոս Ավետարանի 22-րդ գլխի 15-17 համարները. «Այն ժամանակ փարիսեցիները գնացին խորհուրդ արեցին նրա մասին, թե ինչպես խոսքերով նրան որոգայթ լարեն: Եվ նրա մոտ ուղարկեցին իրենց աշակերտներից ոմանց՝ հերովդեսականների հետ միասին և ասացին. «Վարդապետ, գիտենք, որ ճշմարտախոս ես և Աստծու ճանապարհը ճշմարտությամբ ես ուսուցանում, և ոչ մեկից չես քաշվում ու ոչ մի մարդու աչառություն չես անում: Արդ, ասա մեզ, ինչպե՞ս է քեզ թվում, պե՞տք է հարկ տալ կայսրին, թե՞ ոչ»:

«Հիսուս հասկացավ նրանց խորամանկությունն ու ասաց. «Ինչո՞ւ եք ինձ փորձում, կեղծավորներ, ինձ հարկի դահեկան ցույց տվեք»: Եվ նրանք մի դահեկան բերեցին: Եվ նա ասաց նրանց. «Այս պատկերը կամ գիրը ո՞ւմն է»: Նրանք ասացին՝ կայսրինը: Այն ժամանակ նրանց ասաց. «Գնացեք տվեք կայսրինը՝ կայսեր և Աստծունը՝ Աստծուն» (Մատթ. 22:15-22):

Երեմիա մարգարեն ասում է. «Նրանց նենգավոր լեզուները խոցոտող նետ են: Նրանց բերանի խոսքերը իրենց ընկերոջ հետ խաղաղության մասին են խոսում, իսկ նրանք իրենց սրտում թշնամություն ունեն» (Երեմ. 9:6):

Շահ փնտրող և հաճելի երևացող մարդիկ շատ անգամ խաբում են նաև իրենց ղեկավարին, որովհետև շրջապատելով նրան շողոքորթում են: Զարմանալիորեն ղեկավարը ավելի նախընտրում է գործ ունենալ այսպիսի մարդկանց, քան նվիրյալ ու խելացի անձերի հետ:

Սաղմոսաց գրքում ասվում է: «Աստված ցրելու է երեսպաշտների ոսկորները» (Սաղմ. 52:6):

Միամիտ պիտի լինենք, եթե հավատանք շողոքորթներին: Նրանք մեր երեսին ծիծաղում են և հաճոյանում, բայց դա անում են, որպեսզի գողանան մեր սրտի գաղտնիքները ու խաբեն հոգուտ իրենց:

Հիսուս դիմելով փարիսեցիներին ասում է. «Այժմ դուք՝ փարիսեցիներդ, բաժակի և ամանի արտաքինն եք մաքրում, իսկ ձեր ներքինը լի է հափշտակությամբ և չարությամբ: Անմիտներ, չէ՞ որ նա, ով արտաքինը ստեղծեց, նաև ներքինը ստեղծեց: Բայց տեսեք, թե ինչն է իսկապես արժան. ողորմություն տվեք, և ահա ձեր ամեն ինչը մաքուր կլինի» (Ղուկ. 11:39-41):

Մի թե ժամանակավոր մարդը կարող է ուժեղ լինել ու միշտ հրամայող: Այնպիսի բռնակալ-ուժեղներ են աշխարհ եկել ու գնացել, առանց դույզն իսկ մի հետք թողնելու: Բռնակալները միշտ էլ շրջապատված են եղել կեղծավորներով, շողոքորթներով ու գիշեր-ցերեկ նրանց գովեստի խոսքեր ասողներով: Ոչինչ հավիտենական չէ, նույնպես էլ բռնակալները:

«Թագավորի գործությունը և Սիրո Կայսրությունը.

Ժամանակին, Անգլիական արքունիքում պալատականները թագավորի մոտ տեղ ունենալու համար, գովում էին նրա սխրագործությունները:

Թագավորը լավ էր ճանաչում նրանց իբրև հիվանդ կեղծ գովեստներ շալլողներ: Եվ մի օր էլ նրանց տանում է ծովեզերք ու սուրը մերկացնելով ասում իր ոտքերը թըրջող ալիքներին:

Ես, Անգլիայի և Գաղթավայրերի ամենագոր թագավորը, հրամայում եմ ձեզ, որ կանգ առնեք և չթրջեք ոտքերս:

Ծովը չի լսում սակայն արքայական այս ազդու հրամանը և ավելի ուժեղ մի ալիք արագ ձևով բարձրանալով ամբողջ մարմնով թրջում է թագավորին ու պալատականներին:

Հիմա հասկացա՞ք, թե ինչքա՞ն թույլ է ձեր գոված թագավորի գործությունը,- ասում է նա դառնալով իր պալատականներին,- որ նույնիսկ մի ալիքի կողմից անգամ հանդիմանվում է ու անպատվում» (Վարդան Ա.Ք. Դուլգերյանի «Արձակ և չափածո մանրավեպեր» գրքից):

Կեղծավորները կարելի է ասել աշխարհի ամենավատ նկարագիր ունեցող մարդիկ են: Շատեր զոհ են գնացել նրանց արարքներին և բազմաթիվ ընտանիքներ քանդվել են նրանց երեսից: Ի՞նչ է նրանց շահը. դրամ, դիրք ու ձրի պատիվ: Սրանց հասնելու համար նրանք մոռանում են կյանքի ամեն սկզբունք և նույնիսկ՝ ոտքի տակ ընկնելով, ծոմովելով, հազար ու մի տեսակ ձևեր և արարքներ կատարելով, փորձում են ամեն գնով հասնել իրենց նպատակին:

Դժբախտաբար ցավ ի սիրտ աշխարհը լցված է կեղծավորների «բանակով», որոնք սրբություն չունեն. նրանք ինչի ասես ընդունակ են՝ լրտեսության, մատնության, ստորաքարշության, վատության, չարության, նենգության ու այդ ճանապարհին նրանք չեն խնայում նույնիսկ իրենց հարազատներին և ընկերներին ու առանց խղճի խայթ գգալու, դաշունահարում են նրանց մեջքից, Հուդայի համբույր տալով:

Մեր Տերը զգուշացնում է բոլորին. «Երբ ողորմություն անես, փող մի հնչեցրու քո առջև, ինչպես անում են կեղծավորները ժողովարաններում և հրապարակներում» (Մատթ. 6:2) և շարունակում է. «Կեղծավոր, նախ հանիր քո աչքից այդ գերանը և ապա հստակ կտեսնես՝ քո եղբոր աչքից շուղը հանելու համար» (Մատթ. 7:5):

«Եվ երբ կադորթես, չլինես կեղծավորների նման»
(Մատթ. 6:5):

Խիստ հատկանշական է պատվերը, որովհետև այն ի հայտ է բերում մարդու նկարագրի հոռի երևույթներից մեկը կեղծավորությունը:...

«...Անկեղծ մեղավորը, գիտակից գործած իր մեղքին, ոչ միայն ճշմարտորեն է գղջում ու ապաշխարում, այլև գործնական միջոցներ է ձեռք առնում, որպեսզի նույն մեղքը չգործի ուրիշ անգամ: Ինչ պիտի արժի գղջումն ու ապաշխարությունը, եթե մի քանի ժամ հետո կրկին պիտի մեղանչենք: Այս ճշմարիտ երևույթի առնչությամբ, ինչքան ճիշտ է մի բարոյագետի բերած հետևյալ օրինակը՝ թե երբ մարդը մի կեղտոտ բան ունի իր ձեռքում, նա ինչքան էլ փորձի իր ձեռքերը լվանալ նույնիսկ ամբողջ ծովերի ջրերով, չպիտի մաքրվի, սակայն եթե ձեռքի կեղտոտ բանը նետի, այն ժամանակ մի բաժակ ջուրն էլ բավական պիտի լինի կեղտոտ ձեռքերը մաքրելու» (Բաբկեն Վրդ.Թոփչյան, «Քարոզներ»):

Կեղծավորները իրենք իրենց առանձնաշնորհյալ և ընտրյալ մարդիկ են կարծում ու հակառակ իրենց իմացական և հոգեկան բոբիկության, խնջույքների, համերգների, հանդեսների ու զանազան այլ միջոցառումների ժամանակ, միշտ աշխատում են նստել ամենաառաջին աթոռներին, որպեսզի բոլորի ուշադրության կենտրոնում լինեն «իբրև թե պատվավոր մարդիկ են»:

Բավական դժվար է կեղծավորներին զանազանելը մաքուր ու անկեղծ մարդկանցից, սակայն ժամանակը ուշ թե շուտ այն ցույց է տալիս ու ամեն ինչ ջրի երես է դուրս գալիս: Ավետարանը մեզ զգուշացնում է հեռու մնալ նրանցից:

Լսենք Տիրոջ ձայնը.

«Վայ ձեզ կեղծավորներիդ՝ օրենսգետներիդ և փարիսեցիներիդ, որ երկնքի արքայությունը փակում եք մարդկանց առաջ. դուք չեք մտնում և մտնողներին էլ թույլ չեք տալիս, որ մտնեն»:

«Վայ ձեզ կեղծավորներիդ՝ օրենսգետներիդ և փարիսեցիներիդ, որ շրջում եք ծովի ու ցամաքի վրա, անգամ մեկին նորահավատ դարձնելու համար, և երբ նա այդպիսին է դառնում, նրան ձեզանից կրկնակի անգամ ավելի գեհենի որդի եք դարձնում»...:

«Վայ ձեզ կեղծավորներիդ՝ օրենսգետներիդ և փարիսեցիներիդ, որ տալիս եք անանուխի և սամիթի ու չամանի տասանորդը, բայց թողել եք օրենքի ամենից կարևորները՝ արդարադատությունը, ողորմությունը և հավատը. հարկ էր այս անել և այն չթողնել...Կույր առաջնորդներ, որ մժղուկները քամում եք և ուղտերը կուլ եք տալիս» (Մատթ. 23:13-16, 23-24, 27-28):

Փորձենք ապրել մաքուր ու արդար կյանքով՝ առանց կեղծավորության: Ամեն:

ԱՌԱՏԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ

«Յուրաքանչյուրը թող տա, ինչպես հոժար է սրտով և ոչ թե հարկադրաբար և տրտմությամբ, որովհետև Աստված սիրում է զվարթառատ տուրքը»

(Բ. Կորնթ. 9:7)

Այս խոսքերը Պողոս Առաքյալի Կորնթացիներին ուղղած երկրորդ նամակի 9-րդ գլխի 7 համարից է. շարունակելով Առաքյալն ասում է. «Եվ Աստված կարող է ամեն շնորհի շատացնել ձեր մեջ, որպեսզի ամեն ինչում ամենայն ժամ ամենայն բավականություն ստանալով առատաճաք բոլոր բարի գործերում, ինչպես գրված էլ է. «Սփռեց և տվեց աղքատներին, նրա արդարությունը մնում է հավիտյան» (Բ. Կորնթ. 9:8-9):

«Ի՞նչ է նշանակում առատաձեռն լինել, ինչո՞ւ պետք է առատաձեռն լինենք և ինչպե՞ս»:

Երբեմն կան մարդիկ, որոնք այսպիսի արտահայտություն են ունենում, երբ հարց է լինում աղքատներին, բարեսիրական հաստատություններին, հիմնադրամներին, և այլ նպատակների համար օգնություն ցուցաբերելու, ասում են. «Եթե ունենանք, անպայման կօգնենք»: Ճիշտ խոսք չէ, ամեն մարդ կարող է այս պահին իր ունեցածից օգնել, ինչ որ ունի. իսկ վաղվա օրը Աստծուն է պատկանում:

Աստված ուզում է, որ մարդը նախ մաքուր, արդար ու անխարդախ հոգի ունենա և ապա բարի նպատակների համար իր նվերները կատարի, որպեսզի կարողանա շարունակել իր բարի գործերը աշխարհում, ինչպես որ Առաքյալն է ասում Եփրայեցներին ուղղած իր նամակում. «Մի մոռացեք բարեգործությունը և ձեր ունեցած բարիքնե-

րին միմյանց մասնակից դարձնելը, քանզի այդպիսի պատարագներն են հաճելի Աստծուն» (Եբր.13:16):

Շատ մարդիկ կան, որոնք նվիրաբերելով նույնիսկ մեծ գումարներ, երբեք չեն ուզում, որպեսզի իրենց անունները որևէ տեղ հիշատակվեն: Այդպիսիները հրաշալի գիտեն Հիսուսի խոսքը, թե՛ «Երբ դու ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում աջը» (Մատթ. 6:3) և կամ «Վաճառեցեք ձեր ինչքերը և ողորմություն տվեք. և ձեզ համար շինեցեք չինացող քսակներ և անհատնում գանձեր երկնքում, ուր ոչ գողն է մոտենում, և ոչ ցեցը՝ փչացնում» (Ղուկ. 12:33):

Շատ հարուստ և բարեգործ մարդիկ եղան պատմության ընթացքին, որոնք իրենց կենդանության ընդհանրապես չուզեցին որևէ հիշատակություն ունենալ, բայց իրենց մահից հետո մեր ժողովուրդը նրանց անունները անմահացրեց:

Այսպիսի խոնարհ մարդկանց կողքին դժբախտաբար կան մարդիկ, որոնք իրենց կենդանության ոչ մի բարի գործ չեն կատարում, այլ միայն հարստություն են հավաքում: Ոչ միայն ուրիշներին բարիք չեն անում, դժբախտաբար իրենք էլ չեն վայելում:

Այս օրինակը դրա ցայտուն վկայությունն է:

«Մի մեծահարուստ շատ ունեցվածք էր հավաքել, բայց ոչ առանց մեղքերի: Երբ վերջին շնչում էր հարազատները նրան խրատում են, որպեսզի մտածի իր հոգու փրկության մասին: Բայց նա նման խոսքեր լսել չէր սիրում, սակայն մահճակալի մեջ այս ու այն կողմ շրջվելով՝ ափսոսում էր, ի խորոց սրտի լաց ու, կոծ էր անում և ողորմելի ձայնով ողբում էր.

Ավաղ, ինչ մեծ չարչարանքով փորձեցի, որ հարստություն ձեռք բերեմ, և ահավասիկ ես չվայելեցի ուրիշները պիտի ժառանգեն ու վայելեն իմ գանձերը: Օ, ունեց-

վածք իմ, օ, հարստություն իմ, օ, մխիթարություն իմ սրտի, ո՞ւմ ձեռքը պիտի ընկնեք, ո՞ւմ պիտի թողնեմ ձեզ: Եվ այսպիսի խոսքեր ասելով սրտի նեղությունից մահանում է»:

Չնմանվենք այս պատմության մեջի դրամ, ունեցվածք, հարստություն ունեցող մարդուն, որը փոխանակ բարի գործ անելու, իր մահվան մահճում նույնիսկ մտածում է միայն, թե ո՞ւմ պիտի մնա իր ունեցածը: Ավաղ, անցած փառքիս: Այլևս շատ ուշ է:

Մեր ունեցած նյութական հարստությունը եկեք օգտագործենք այն հավատավոր հոգիների համար, որոնք մեր սիրո և օգնության կարիքն ունեն: Աշխատենք նյութական հարստության միջոցով ձեռք բերել ամենակարևորը՝ հոգևոր հարստությունը:

Հետաքրքիր մի խոսք էր գրված մահացած մարդու տապանաքարի վրա, որը կարող է դաս լինել վերևում հիշված մարդկանց նմանների համար. «Ինչ որ տվել եմ, ունեմ, ինչ որ ծախսել եմ, ունեի, ինչ որ պահել եմ՝ կորցրել եմ»:

Ինչ մեծ դաս ունևոր ազահներին, որոնք արևի լույսի դեմ աչքները փակելուց հետո ամեն ինչ պիտի կորցնեն:

Մինչդեռ բանաստեղծ Վահան Թեքեյանի ձայնը հնչում է.

«Ինչ որ գնաց ուրիշին վերադարձավ անուշցած

Ու գորացած՝ հոգիիս մեջ մնալու հավիտյան»:

Տարիներ առաջ ծանոթ էի մի բարի մարդու: Զարմանալի մարդ էր, այն իմաստով, որ շատ անգամներ տարբերվում էր իր հասակակիցներից իր մարդկային արժանիքներով: Առատաձեռն էր: Միրում էր մարդկանց օգնել և՛ դրամով և՛ խորհրդով: Իմ հարցին, թե ինչու է այդքան առատաձեռն, նա պատասխանում էր. «Աստված ասում է, քո ունեցածից բաժին հանիր կարիքավորներին, աղքատ-

ներին, տնանկներին, որպեսզի ավելիով քեզ տամ: Եթե աջ ձեռքով վերցնում եմ իմ աշխատանքի վարձը, քրտինքով վաստակածս, ձախ ձեռքով էլ այն պիտի բաժանեմ նրանց, ովքեր պետք ունեն իմ օգնության»: Եվ իրապես էլ ինչքան ծախսում էր, այնքան Աստված նրան ավելիով էր տալիս: Ափսոս, որ այդ մարդը այսօր հավիտենության մեջ է և վստահ եմ, որ նա երկրի վրա արդեն իսկ երկնքում իր օթևանը ապահովել էր՝ բարությանը, ազնվությանը ու հավատով և անսահման սիրով իր ընտանիքի ու մեր ժողովրդի նկատմամբ:

Ադամ Քահանա Մակարյանն ասում է. «Միմյանց հետ խոսակցության ժամանակ մարդկանց գիտակցությունը կարծես թուլանում և ուժգնանում է՝ կախված այն բանից, թե որքանով է զրուցակցի ասածը հետաքրքրում դիմացիին: Անգամ խոսակցության մեջ մարդիկ սիրում են շահը, սեփական օգտակարության համար որևէ բան ստանալը: Մակայն առաքյալը հիշեցնում է Քրիստոսի խոսքերը, թե՝ երանելի է մանավանդ տալը, քան առնելը (Գործք 20:35): Հետևաբար, երանելի է ողորմություն անելը: Փիլիսոփաներից մեկն ասում է, որ Ալեքսանդր մեծը թագավորություններ էր բաժանում, իսկ Ավետարանի այրի կինը ընդամենը երկու լումա էր գցում գանձանակը: Եվ չնայած նրանց տվածի չափը տարբեր է, բայց երկու դեպքում էլ նույն առատաձեռնությունն է դրսևորվում, որովհետև նրանցից յուրաքանչյուրը տվեց իր ունեցածից մեծագույնը: Դրա համար էլ քիչ ունեցողի քիչ տվածը շատ է համարվում, իսկ շատ ունեցողի քիչ տվածը համարվում է ժլատություն:

Փիլիսոփա Կանտն ասում էր, որ արարքը լավն է, երբ արվում է պարտքի զգացումից, նույնիսկ առավել գնահատելի է այն դեպքում, երբ մարդը հակառակ իր ցանկության, բայց պարտքի զգացումից ելնելով՝ բարի բան է

անում: Սակայն այս կարծիքին հակադրվում էր փիլիսոփա Շոպենհաուերը, ով պնդում էր, որ անգամ արվեստի գործերն արարվում են ոչ թե գեղագիտության չոր օրենքներով, այլ ներշնչումով ու ներշնչանքով: Նույնպես բարեգործությունը արժևորվում է գթասարտությամբ: Իսկ Պողոս առաքյալն ասում է. «Ինչ էլ անեք, ամեն ինչ արեք Աստծու փառքի համար» (Ա Կորնթ. 10.31)» («Քրիստոնեության Իսկությունը» գրքից):

Հիսուս ասում է. «Գանձեր, մի դիզեք ձեզ համար երկրի վրա, ուր ցեց և ժանգ ոչնչացնում են, և, ուր գողեր պատերն են ծակում եւ գողանում, այլ գանձեր դիզեցեք ձեզ համար երկնքում... քանի որ ուր ձեր գանձերն են, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» (Մատթ. 6:19-21): Միսալ չհասկանանք, Հիսուս չի ասում, թե դրամ չունենանք, այլ հորդորում է՝ չհավաքել, բարեգործություններ անել և օգնել նրանց, ովքեր դրա կարիքն ունեն:

Ուրեմն, հետևենք մեր Մեծ Վարդապետի խրատին ու փորձենք մեր այս ժամանակավոր կյանքում առատաձեռն կերպով նվիրել նրանց, ովքեր սպասում են մեր օգնության, առանց ակնկալիքի ու փոխադարձ վարձատրության, նույնիսկ կարող եմ ասել՝ առանց սպասելու շնորհակալության: Աստված Ինքը վարձահատույց կլինի մեզ մեր առատաձեռնության համար, երբ մեր ժամանակը հասնի: Ամեն:

ՄԵՂԴՈՎ ԼՅՐՈՒ ՔԵԶ

«Ուզում ես բարությանը լցվել, թափիր չարը.
Աստված ուզում է քեզ մեղրով լցնել, սակայն դու
լեղիով ես լեցուն, ո՞ր դնի մեղրը»
Երանելի Օգոստինոս Հայրապետ

Այս խոսքը ես վերցրել եմ Ընդհանրական Քրիստոնեական Հայրերից Երանելի Օգոստինոս Հայրապետի մտածումներից: Շատ գեղեցիկ միտք է և ուսանելի:

Կարելի է Հայրապետի ամեն մի խոսքին անդրադառնալ առանձին-առանձին .

ա. «Ի՞նչ է նշանակում՝ «Եթե ուզում ես բարությանը լցվել, թափիր չարը»:

Հիսուս ասում է. «Երկու տիրոջ չես կարող ծառայել, մեկին պիտի ատես և կամ մյուսին՝ սիրես»: Իհարկե, չես կարող և՛ բարի լինել և՛ չար, անպայման մեկից պիտի ազատվես: Երանելի Օգոստինոսը հստակ ասում է, եթե ուզում ես բարի լինել, ազատվիր չարից, դուրս հանիր նրան քո միջից, հեռացրու նրան, ինչպես մեր Տերը ասաց, երբ չարը Նրան փորձության ենթարկեց քառասուն օր անապատում ծով պահելուց հետո՝ «Ինձանից հեռու գնա, սատանա»: Այսպես ասելով, դու նրանից կազատվես և կլցվես բարությանը:

բ. «Աստված ուզում է քեզ մեղրով լցնել, սակայն դու լեղիով ես լեցուն»:

Ի՞նչ են նշանակում այս խոսքերը. իրապե՞ս մենք ամբողջովին լեղի ենք ու լի դառնությամբ, ոչ մի քաղցր բան չկա՞ մեր մեջ:

Նայենք մեր ներկա կյանքին ու կտեսնենք, թե մեր ընթացիկ գործերը երբեմն մեզանից շատ ժամանակ են խլում: Աշխատանք, դրամ, վճարումներ, ծախսեր, մտահո-

գություններ, ընտանեկան կյանք, հարազատներ, քեֆ և ուրախություններ, ծննդյան տոնակատարություններ և այլն, այս բոլորը մեր կյանքը ծանրացնում են, բարձրացնում մեր ճնշումը ու թեթևացնելու փոխարեն, շատ անգամ հասցնում են հուսախաբությունների, բողոքների ու նույնիսկ մահերի: «Ինչո՞ւ, ի՞նչն է պատճառը, Աստծու տված պարգևը՝ կյանքը այդքան դա՞ռն է, լեղի՞ է»:

Դառն է և լեղի է, որովհետև մենք չենք ապրում աղոթքի կյանքով: Դժբախտաբար այս հզոր երկրում, ուր ամեն տեսակ հաճույքներ և վայելքներ կան, պակաս է միայն աղոթքի ու ճշմարիտ հավատի կյանքը: Մարդիկ դարձել են նյութի, դրամի երկրպագուն: Նյութը միջոց լինելուց դադարել է և դարձել՝ նպատակ: Աստծու տեղ այդ ենք պաշտում:

գ.«Ո՛ւր դնի մեղրը»:

Այո՛, լեղիով ու դառնությամբ լի մեր կյանքում, ուր ամեն ինչին տեղ ունենք, բացի Աստծուց, ինչպես պիտի կարողանա Իր մեղրը դնել մեր մեջ, այսինքն՝ Իր քաղցրությունը, բարությունը, սերը, նվիրումն ու գոհողությունը: Հիսուս հստակ ասում է, եթե ուզում եք կյանքի դառնությունից ազատվել ինձ մոտ եկեք և ես ձեզ կհանգստացնեմ. «Եկեք Ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ: Իմ լուծը ձեր վրա վերցրեք և սովորեցեք ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեզ համար հանգիստ պիտի գտնեք, որովհետև իմ լուծը քաղյր է և իմ բեռը՝ թեթև» (Մատթ. 11:28-30):

Մինչև մեղանչելը մարդը մարմնով անմահ էր: Եկեղեցու հայրերը բացատրում են, թե նախամարդու հոգին ու մարմինն այնքան նրբորեն էին միահյուսված միմյանց, որ նա օծոված լինելով այդպիսի աստվածատուր շնորհներով, առանց որևէ արգելքի շփման մեջ էր

մտնում ոչ միայն հրեշտակների և երկնային զորությունների, այլև Աստծու հետ:

Երբ մարդը անհնազանդ գտնվեց Աստծու հրամանին և արհամարհեց իր ունեցած ուրախությունը ու հետևեց փորձիչի՝ սատանայի խոսքին, ոչ միայն նոր ձեռքբերումներ չունեցավ, այլև կորցրեց ինչ ուներ և՛ հոգեպես և՛ մարմնապես: Նա սկսեց ապրել մարմնական, կենդանական կյանքով: Իրականության մեջ անկումը միաժամանակ նաև մահ էր մարդու համար, քանի որ կորցրեց այն բարի կենդանությունը, որը վայելում էր դրախտում:

«Աշխարհի առաջին մարդը Աստծու կողմից իրեն ուղղված «Ո՞ր ես» հարցին իր տված պատասխանում հիշում է թե մերկ լինելու պատճառով ամաչում է... Բարոյական մերկությունը ավելի տխուր մի պատկեր է ներկայացնում անձի ընդհանուր կեցվածքի մեջ, քան ֆիզիկական մերկությունը...: Աստծու ուղղած հարցումը մարդու համար անակնկալ էր: «Ո՞ր ես»: Ներկա մարդու կյանքի համար որևէ տեղում իմաստ չունի ո՞ր լինելը, այլ ի՞նչ վիճակում լինելու նյութն է շոշափում: Ի՞նչ վիճակ է տիրում մարդու ներաշխարհում... Ի՞նչ պիտի պատասխանես, երբ հանկարծ Աստված քեզ հարցնի «Ո՞ր ես»: Պետք է հստակ մի պատասխան կարողանաս տալ անմիջապես կայծակնային արագությամբ դու քեզ բարոյական հայելու մեջ նայելով: Այդ հայելին երբեք չի խաբում քեզ, որովհետև խիղճդ սրբիչով մաքրված լինելով այնքան պայծառ է, որ իրական եղածիդ հետ կմրցի... Առաջին մարդը իր իսկ ստեղծած վախով սարսափեց Աստծու իրեն ուղղած «Ո՞ր ես» հարցից: Կարո՞ղ ես հաստատել քո իրավիճակը բարոյական հողի վրա, ճշտելով տեղդ և հայտարարելով ո՞ր լինելդ ամբողջ կյանքի չափ երկար նրա ճանապարհին...» (Գրիգոր Վրդ. Չիֆթյան «Ո՞ր ես» քարոզից):

Այս պատմությունը հետաքրքիր է.

«Անգլիայի Ջորջ թագավորն ու թագուհին մի երեկո պալատի շուրջ զբոսանքի ժամանակ տեսնում են մի փոքրիկ աղջկա, հագիվ տասնամյա, ցնցոտիներ հագած, որը երկու ձեռքով մի ափսե բռնած զգուշությամբ քայլում էր:

Ի՞նչ կա այդ ափսեի մեջ,- հետաքրքրության համար հարցնում է թագուհին՝ նրա գլուխը շոյելով:

Ոսպապուր է ծնողներիս համար, այնտեղ հեռվում ինձ են սպասում,- ասում է աղջիկը:

Թագուհին անմիջապես պայուսակը բացում է և հնչուն մի ոսկի դրամ է դնում աղջկա ափի մեջ: Աղջիկը խանդավառված շնորհակալություն հայտնելուց հետո, ավելի է արագացնում իր քայլերը: Կարճ ժամանակ անց, թագուհին հուզմունքից կարմրած ասում է թագավորին, մատով ցույց տալով աղջկան, որն արդեն հասել էր իր ծնողների մոտ: Տես, սիրելիս, այդ ընտանիքին՝ նայիր, երեքն էլ ծնկի եկած աղոթում են մեզ համար»:

Բարիք և երախտագիտություն: Երկու հրաշալի քրիստոնեական մոտեցումներ Աստծու ստեղծած մարդկանց նկատմամբ: Մեկը՝ նվիրեց, բարիք գործեց՝ օգնելու նպատակով, մյուսները՝ երախտապարտ եղան և աղոթեցին նրանց համար:

Ընդհանրական Եկեղեցու Հայրերից Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացին իր խոսքը ուղղելով նորադարձներին, հետևյալ խրատներ է տալիս նրանց. «Դեռևս վաղուց ցանկանում էի, ով Եկեղեցու հարազատ և հույժ ցանկալի զավակներ, զրուցել ձեզ հետ այդ հոգևոր ու երկնային խորհուրդների մասին... Բայց անհրաժեշտ եմ համարում բացատրել ձեզ, թե ինչու էք կանգնում դեպի արևուտք, ձեռքներդ պարզած և ասում. «Հրաժարվում եմ քեզանից, սատանա», կարծես թե այն ներկա է: Որովհետև աշխարհի արևմտյան հատվածը, որտեղ նայում ենք, խավարի վայրն

է, իսկ սատանան ով իրապես խավարն է, խավարի մեջ իշխանություն ունի: Այդ պատճառով դեպի արևմուտք շրջվելով՝ անջատվում և հրաժարվում ենք այդ խավար ու միջին տիրակալից: Եվ ի՞նչ էր ասում ձեզանից յուրաքանչ-յուրը, երբ կանգնած էիք դեպի արևմուտք. «Հրաժարվում եմ քեզանից, սատանա», հրաժարվում չար ու դաժան բռնակալից. այլևս չեմ վախենում քո իշխանությունից: Քանզի Քրիստոս, մարդ դառնալով, կործանեց քո իշխանությունը, մեռնելով որպես մարդ, իր մահով վերջ տվեց մահին, որպեսզի ես չլինեմ մշտապես ստրկացած ու գերության մեջ: Ժխտում եմ քեզ՝ դավադիր և խորամանկ օձիդ: Հրաժարվում եմ քեզանից, քանզի նենգամիտ լինելով՝ բարեկամ ձևացար և ամեն անօրենություն գործեցիր՝ իմ նախահայրերին մղելով ըմբոստության: Հրաժարվում եմ քեզանից, սատանա, քանզի դու ես պատճառ և գործակից ամեն չարության» և շարունակում է. «Այնուհետև կասես «Եվ քո ամբողջ պաշտամունքը»: Իսկ սատանայի պաշտամունք են անկյանք կոտրքերին ուղղված աղոթքները, նրանց պատվին ճրագներ վառելը, կամ աղբյուրների և գետերի մոտ խունկ ծխելը, ինչպես ոմանք այդ արեցին, խաբվելով երագներից և դների ուրվականներից, այդ արեցին, կարծելով, որ բուժում կգտնեն իրենց մարմնական հիվանդություններից: Բայց դու նման բաներ չանես:

Բացի այս ամենից, սատանայի պաշտամունք են նաև հավահմայությունը, գուշակությունը, հմայիլներին հավատալը, մոգությունը և սատանայական այլ նման բաները: Ուստի, այս բոլոր բաներից խուսափիր: Քանզի երբ արդեն հեռացել ես սատանայից և միացել Քրիստոսին, հետո նորից ընկնես այդ ամենի մեջ, դու կրկնակի պատժի կենթարկվես: Դու կգրկվես Քրիստոսից և թե քո հոգու բռնակալ սատանայից, գուցե այն բանի համար, որ նրան

խիստ դառնացրել էս՝ նրանից հրաժարվելով... Ուրեմն, զգուշացիր քեզ համար և ետ մի շրջվիր ներկա կյանքի աղի գործերին ու արարքներին, քանի որ ձեռքդ դրել էս մաճի վրա, այլ բարձրացիր լեռ՝ դեպի Հիսուս Քրիստոս, որը այն վեմն է, որ հանվել է առանց մարդկային ձեռքերի և լցրել ամբողջ տիեզերքը» (Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացի, «Կոչումն Ընծայության» գրքից):

Հրաշալի խոսքեր ու խրատներ են: Այսօրվա երիտասարդներն էլ պիտի լսեն Սուրբ Կյուրեղ Հայրապետի այս խոսքերը ու հետևեն դրանց, քանի որ սատանան միշտ գործում է ամեն ժամանակ:

Այսօր քանի՞ հոգի է աղոթքի կյանքով ապրում: Քանի՞ հոգի է աղոթում իր հիվանդ եղբոր, տարիներով անկողնուն գամված իր ընկերոջ, դժբախտությունների մեջ իր կյանքը անցկացնող հարազատի, քաղցկեղով տառապող մեր հայրենակցի և վերջապես դարիս թունոտ ծխախոտի ու խմիչքի մոլությամբ տառապող մեր հարևանի կամ ընկերոջ համար: Քանի՞ հոգի: Բոլորս էլ լավ գիտենք, որ տխուր է իրականությունը:

Բարեբախտաբար կան դեռևս նվիրյալ ու Աստծուն հավատարիմ մարդիկ, որոնք իրապես ապրում են աղոթքի կյանքով և օրինակ են մեզ բոլորիս համար: Այդպիսիների աղոթքի շնորհիվ Աստված դեռևս համբերում է, բայց Նրա համբերությունն ու բարկությունն էլ սահման ունեն: Չմոռանանք հիշել Սողոմ Գոմորն ու աշխարհի կործանումը ջրհեղեղով:

Եկեք ուրեմն քայլենք Աստծու ճանապարհով, ոչ միայն աղոթենք, այլ ապրենք աղոթքի կյանքով, բարի գործեր կատարենք, որպեսզի չարը՝ սատանան մեզ կործանման չտանի, սիրենք և օգնենք ու հոգատար լինենք մեր նմանի նկատմամբ: Ամեն:

ԳԹԱՍՐՏՈՒԹՅՈՒՆ

«Գթասիրտ եղեք, ինչպես որ ձեր Հայրը գթասիրտ է»
(Ղուկ. 6:36)

Այս խոսքը ես վերցրել եմ Ղուկաս Ավետարանչի 6-րդ գլխի 36 համարից, ուր մեր Տերը խոսում է գթասրտության մասին:

«Ի՞նչ է նշանակում գթասիրտ լինել, ինչո՞ւ գթասիրտ պիտի լինենք, ի՞նչ արդյունք կարող ենք ունենալ գթասիրտ լինելով»:

Ճշմարիտ հրաշքը հենց գթասրտությունն է: Գթասիրտ եղեք մեկդ մյուսի նկատմամբ: Խիղճ ունեցողը՝ անպայման գթասիրտ է, որը նրա խղճի արտահայտությունն է:

Ընդհանրական Քրիստոնեական Հայրերից՝ Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետն ասում է. «Հարուստներն ու կուշտ մարդիկ, անտարբեր նայելով սովյալներին ու աղքատներին և նրանց չօգնելով, հավասարվում են մարդասպաններին»: Հիսուս լավ ճանաչելով մարդկանց, պարզ խոսքերով բացահայտում է բոլոր ժամանակների ու ժողովուրդների գլխավոր մեղքը՝ անգթությունը: Իսկ երբ խորամուխ ենք լինում այս ճշմարտության մեջ և սկսում սարսափել մարդու բարոյական գիտակցության անլույս խավարից, երկնային մեղմ արշալույսը՝ գթասրտությունն է ծագում երկրի վրա, որի ետևում երևում է հենց Աստվածային Սիրո Արեգակը՝ Հիսուս Քրիստոսը:

Գութը քարակոփ լեռներից ավելին է. նա շարժում է քար սրտերը: Աշխարհում գութը հենց հրաշքն է: Գթությունը ողորմության բանալին է: Անգլիացի մեծ մտածող Շեքսպիրի համաձայն. «Գթությունը օրենքի առաքինությունն է, որը բռնապետները այն անգութ կերպով են օգտագործում»:

Մարդու սիրտը շարժող միակ գործությունը գթասրտությունն է և նրա աներևույթ մղիչ ուժը՝ աստվածային սերն է, որը երկնատուր մի շնորհք է տրված Աստծու կողմից: Գթասիրտ մարդը Աստծու պարտեզի պտղառատ ծառն է: Բավական չի լավ մարդ, հավատացյալ, հարուստ, գիտուն, աղոթող լինել, այլ պետք է դրանք սիրով ու գթությամբ արժևորել՝ առանց փառքի ակնկալության: Հիսուսի քարոզածը այս էր:

Սողոմոն իմաստունը հավատացյալին պատվիրում է գթասրտությունը դրոշմել իր սրտի տախտակի վրա: Առանց գթության որևէ սիրտ կնմանվի մի մսակույտի:

Գթության տիրապետած սրտում Աստծու խաղաղությունն է տիրում: «Ողորմած մարդը բարություն է անում իր հոգուն, բայց անողորմ մարդը խորտակում է իր մարմինը» (Առակ. 11:17):

Գթասրտությունը սիրո արտահայտությունն է: Սեր չունեցող մեկը, չի կարող գթասիրտ լինել, որովհետև այն աստվածային հատկություն է:

Գթասրտությունը առաքինություն է: Դրա լավագույն օրինակը անդամալուծի բժշկությունն է: Հովհաննես Ավետարանիչը 5-րդ գլխի 7-9 համարներում պատմում է անդամալուծի բուժման մասին. «Ահա այդ սրահներից մեկում, մի անդամալուծ կար, որը երեսուներե տարիներից ի վեր այնտեղ հիվանդ պառկած սպասում էր:...Հիսուս Իր աստվածային ամենագետ և խորաթափանց հայացքը շեշտակի ուղղելով հիվանդ անդամալուծին, քաղցր մի ժպիտով հարց է տալիս նրան. «Կամենո՞ւմ ես առողջ լինել»: Հիվանդի պատասխանը երևում էր նրա աչքերից: Հիսուս շեշտակիորեն նայում է նրա աչքերի մեջ և հրահանգում. «Վեր կաց, վերցրու քո մահիճը և գնա»:

Նա անմիջապես ոտքի է ելնում, վերցնում է իր մահիճը և սկսում քայլել:

Հիսուս Իր աստվածային գործությունը օգտագործում է հիվանդի նկատմամբ գթասիրտ լինելով: Պատկերացրեք ձեր վիճակը. երեսունութ տարի տառապել եք հիվանդությամբ, անկողնու մեջ պառկած, կորցրած ամեն հույս, տանջվել ու տառապել եք և ահա գալիս է մեկը, որը ձեզ հարցնում է. «Կամենո՞ւմ ես առողջ լինել»: Հիվանդի ուրախության պատասխանից հետո, հետևում է գթասրտության ամենավատ օրինակը. «Վեր կաց, վերցրու քո մահիճը և գնա»:

«Գաբրիել Հրեշտակապետը իր գթասրտությունն է ցույց տալիս հարբեցողի նկատմամբ:

Այս պատմությունը, որ կոչվում է «Ժամանակդ հասել է» հենց դրա մասին է.

«Հարբեցողի խմելու ժամանակ Գաբրիել հրեշտակապետը գալիս է ու ասում, «Ժամանակդ հասել է մեռնելու, եկել եմ, որ քեզ տանեմ»: Հարբեցողը անակնկալի է գալիս, բայց մի քիչ խելքը գլուխը գալուց հետո պատասխանում է. «Լավ, պարզ է, ես ոչինչ անել չեմ կարող, բայց մի խնդրանք ունեմ»: «Ի՞նչ է խնդրանքդ», - հարցնում է Հրեշտակապետը: «Կարելի է այս մի շիշն էլ խմեմ, նոր մեռնեմ»: «Ինչո՞ւ չէ, կսպասեմ»: Հարբեցողը սկսում է իր կյանքի վերջին շիշը խմել, այդ ընթացքում հոգնությունից Հրեշտակապետը ննջում է: Նրա քնած ժամանակ հարբեցողը նկատում է, որ Հրեշտակապետի թևի տակ թուղթ կա: Հետաքրքրության համար կամաց հանում է այդ թուղթը և տեսնում է, որ ցանկ է, ուր գրված են նրանց անունները, որոնք պիտի մեռնեն և վախով նկատում է, որ իր անունը ցանկում առաջինն է: Հարբեցողը գրիչը վերցնում է ու իր անունը ջնջելով գրում է ցանկի վերջում:

Որոշ ժամանակ հետո Հրեշտակապետը զարթնում է ու ասում. «Երազ տեսա և ինձ ասացին, թե հակառակ որ հարբեցողությամբ ես անցկացրել կյանքդ, բայց լավ մարդ ես եղել ու ոչ մեկին վնաս չես հասցրել և վատություն չես արել, քեզ լավություն անելու համար ես մեր օրենքը պիտի խախտեմ ու փոխանակ սկզբից սկսեմ մարդկանց մեռցնել, պիտի գամ ցանկի ամենավերջից, որպեսզի քեզ կարողանամ օգնել»:

Հրեշտակապետը ցանկացավ իր գթասրտությունը ցույց տալ մի մարդու նկատմամբ, որը հակառակ հարբեցող լինելու, բարի ու արդար մարդ էր: Մակայն մարդը ուզեց խառնվել Աստծու գործերին և իր կյանքի անիվը շրջել: Բայց հակառակը ստացվեց: Դուք էլ մի փորձեք, մի չարաշահեք Աստծու գթասրտությունը: Նա գիտի, թե ե՞րբ և ինչպե՞ս գթասիրտ լինի մեր նկատմամբ: Մենք փորձենք ապրել աղոթքի կյանքով ու ընթանանք Աստծու ճանապարհով:

«Գթասիրտ տղայի» այս պատմությունը վստահ եմ պիտի հուզի շատերիդ, նրա գութը մեծ մայրիկի՝ տատիկի նկատմամբ, ուղղակի ապշեցուցիչ է: «Փոքրիկ տղան մայրիկի ձեռքը բռնած գնում էր: Արևոտ, սակայն ցուրտ օր էր: Տղան բոլորովին չէր զգում ցուրտը, քանի որ տաք էր հագնված, նաև շատ ուրախ էր. օրը կիրակի էր, ինքն արդեն դասերը պատրաստել էր և ազատ էր, հայրիկն էլ իրեն նոր խաղալիք էր գնել: Մայրիկը մի պահ կանգ առավ տարբեր մրգերով բեռնված վաճառասեղաններից մեկի առջև:

Մրգավաճառները կշռեցին և տուպրակների մեջ լցրեցին կարմրաթուշ խնձոր, բուրավետ նարինջ ու մանդարին, կիտրոն, անուշահամ այլ մրգեր: Տղան արդեն կանխավայելում էր համեղ միրգը, պատկերացնում էր, թե ինչպես է տանը նարնջից ծաղիկ ստանալու, ինչպես է

դրանք գեղեցիկ ձևավորմամբ դասավորելու մրգամանի մեջ: Հանկարծ նա լսեց մի ծեր տատիկի ձայնը. նա ձեռքը մեկնել և վաճառողին խնդրում էր.

Միրելիս, ինձ մի խնձոր տուր: Շատ քաղցած եմ, ուտել եմ ուզում, այսօր դեռ ոչինչ չեմ կերել: Վատ եմ գգում, շատ թույլ եմ... Տղան չլսեց, թե մրգավաճառն ինչ ասաց: Նա անդադար նայում էր տատիկին, նրա խորշումած ձեռքին, մաշված վերաբկուին, պատառոտված ոտնամաններին: Գլխաշորի տակից երևում էր ևս մեկ ճերմակ գլխաշոր: Տղան հիշեց իր տատիկին, ով նույնպես գույգ գլխաշոր էր կապում: Նա պատկերացրեց իր տատիկի բարի աչքերը, տաք ձեռքերը, նրա պատրաստած համեղ բլիթները: Ծեր տատիկի աչքերից արցունք էր հոսում և կորչում դեմքը պատած կնճիռների մեջ:

Մի պահ նրան թվաց, թե այն տատիկն իր տատիկն է՝ մրսած, ցնցոտիների մեջ, քաղցած ու միայնակ: Անծանոթ տատիկը հուսահատ մոտեցել էր մեկ այլ մրգավաճառի՝ փորձելով նրա գուրքը շարժել: Տղան նայում էր տատիկին, իսկ նրա ձեռքն արդեն մեկնվել էր փաթեթներին և շոշափում էր պարունակությունը: Տղան արագ դուրս բերեց տոպրակից խնձոր, նարինջ և էլի ինչ-որ մրգեր, և մոտենալով տատիկին, մեկնեց դրանք նրան՝ շնջալով:

Վերցրեք, խնդրում եմ: Ապա արցունքոտված աչքերով մոտեցավ մորը և արագ բռնելով ձեռքն, ասաց.

Գնանք, մայրիկ: Մի փոքր հեռանալով՝ տղան շրջվեց. տատիկը դեռ կանգնած էր նույն տեղում: Խնձորը մնացել էր ձեռքում, իսկ մյուս մրգերն արդեն տեղավորել էր գրպաններում: Նա տեսավ, թե տատիկն ինչպես էր ժպտում, ապա խաչակնքեց: Տղան թեթևացած շունչ քաշեց: Արդեն գիտեր, որ շուրջը մարդիկ կան, ովքեր ոչ միայն

արևի, այլ մերձավորների ջերմության կարիքն ունեն: Եվ նա շատ ուրախ էր, որ կարող է ինչ-որ մեկին օգնել»:

Գթությունը երկնատուր մի շնորհք է Աստծու կողմից տրված: Գթասիրտ մարդը Աստծու պարտեզի սաղարթախիտ և պտղառատ ծառն է:

Մայր Թերեզան քարոզում էր բարություն և գթասրտություն: Կալկաթայում, հենց փողոցում հազարավոր մարդիկ էին մահանում: Նա ստեղծում է մահացողների համար նախատեսված տունը, որտեղ մահամերձ, անօթևան մարդուն շրջապատում էին սիրով և հոգատարությամբ, որպեսզի նա լիարժեք ապրեր իր վերջին օրերը: Երբ մահամերձ Մայր Թերեզային հարցնում են՝ եղե՞լ են արդյոք նրա կյանքում հանգստյան օրեր և տոներ, նա պատասխանում է. «Այո՛, իմ մոտ ամեն օր էլ տոն է»: Նա գթասիրտ էր և օգնում էր աղքատներից ամենաաղքատին:

Մի մտածող այս միտքն է արտահայտել.

«Այն դեպքում, երբ աշխարհում տիրապետող դառնան միայն կարեկցանքի ու գթասրտության երկու հատկանիշները, աշխարհը կլքեն մարդկային գիտակցության այնպիսի բացասական դրսևորումներն, ինչպիսիք են՝ պատերազմները, տեռորիստական գործողությունները, աստելությունը: Նաև շատ ուրիշ հատկանիշներ, որոնք ներկայումս բնորոշ են մարդկությանը, անեության գիրկը կանցնեն:

Եվ գլխավորը կդառնան միայն բոլոր կենդանի էակների նկատմամբ ձեր հոգածությունն ու ձեր Սերը յուրաքանչյուր Աստվածային դրսևորման նկատմամբ:

Ձեր կյանքում որքա՞ն հաճախ եք մտորում այն մասին, թե ի՞նչ ազդեցություն կարող էիք գործել ձեր շրջապատի վրա, եթե միայն ձեր սրտում տեղ գտնեին կարեկցանքի ու գթասրտության այդ երկու հատկանիշները: Խնդրում եմ այդ հատկանիշները չշփոթել խղճահարու-

թյան և ձեզ մոտիկ մարդկանց մասին հոգ տանելու հետ: Քանզի այն դեպքում, երբ կապվածություն եք զգում ձեր մերձավորների հետ և փորձում, ինչպես ձեզ է թվում, նրանց նկատմամբ տածել կարեկցանք ու գթասրտություն, ապա հենց ինքներդ եք տառապում: Քանի որ գթասրտության ու կարեկցանքի հատկանիշները, եթե իրապես են դրսևորվում ձեր կողմից, կախված չպետք է լինեն այն բանից, թե ինչ կարգի ազգակցություն գոյություն ունի ձեր և այն մարդկանց միջև, ում նկատմամբ գթասրտություն ու կարեկցանք եք տածում:

Պարզ կարող եք ընդհանրապես չճանաչել այն մարդկանց, որոնք տառապում կամ օգնության կարիք են զգում, բայց սիրո և օգնության ձեր սրտի առաքումն ունակ է փոխելու այն իրադրությունը, որում գտնվում են այդ մարդիկ...»:

Մեր հավատը գործի վերածենք, գթասիրտ լինենք, օգնենք հիվանդին, կարիքավորին, բանտարկյալին, նեղություն ու ցավեր ունեցողներին և՛ բարոյապես և՛ նյութապես, սա կլինի քրիստոնեական ոգու ամենավառ արտահայտությունը ու ընդունելի Աստծու կողմից:

Զաքարիա մարգարեն ասում է. «Արդար դատով դատեցեք, ողորմությո՛ւն և զթոթոթո՛ւն արեք՝ յուրաքանչ-յուրն իր եղբորը: Մի կեղեքեք այրուն, որբին, պանդխտին և տնանկին: Թող ոչ ոք իր սրտում ռի չպահի իր ընկերոջ դեմ՝ նրա գործած չարիքների համար» (Զաք. 7:9-1): Ամեն:

ԱՆԿԵՂԾՈՒԹՅՈՒՆ

«Քո անձը բոլորին օրինակ դարձրու բարի գործերի համար, ուսուցման մեջ պահիր անկեղծություն, սրբություն, պարկեշտություն, ողջամիտ խոսք, պարսավանքի տեղի չտվող, որպեսզի, ով որ հակառակվի, ամոթով մնա և մեր մասին ասելու որևէ չար բան չունենա»

(Տիտոս 2:7-8)

Այս խրատները Պողոս Առաքյալը ուղղել է իր աշակերտ Տիտոսին վերջինիս ուղղված նամակի 2-րդ գլխի 7-8 համարներում, ուր նա հատկապես շեշտը դնում է բարի գործերի վրա և կարևորում է, որ իր աշակերտը իր անձը դարձնի իբրև օրինակ՝ անկեղծության, սրբության, պարկեշտության, ողջամիտ խոսքի, որպեսզի հակառակորդները եթե փորձեն քննադատել, ամոթով մնան և չկարողանան որևէ չար բան ասել:

Բոլոր խրատները լավ են՝ սրբությունը, պարկեշտությունը, ողջամիտ խոսքը, սակայն ես այսօր ընտրեցի խոսել անկեղծության մասին.

«Ի՞նչ է անկեղծությունը, ինչո՞ւ պետք է անկեղծ լինենք, ի՞նչ է տարբերությունը անկեղծ մարդու և կեղծավորի միջև»:

Անկեղծության գլխավոր օրինակը Ինքը՝ մեր Տերը եղավ: Այդ պատճառով Պետրոս Առաքյալը հանձնարարում է. «Իսկ եթե բարիք գործեք և չարչարվեք ու համբերեք, որովհետև այդ բանի համար կոչվեցիք. քանի որ Քրիստոս էլ ձեզ համար մեռավ և ձեզ օրինակ թողեց, որ իր հետքերով գնաք, նա, որ մեղք չգործեց, և նրա բերանում նենգությունը տեղ չգտավ, նա, որ նախատվելով՝ փոխարենը չնախատեց, չարչարվելով՝ չսպառնաց, այլ հանձնվեց արդարությամբ դատողին...» (Ա. Պետ. 2:21-23):

Դժբախտաբար այսօր աշխարհին այնպիսին է, որ ավելի շատ կեղծավորներն են տեղ գրավում զանազան ասպարեզներում և կարծեցյալ առաջընթաց են ապրում: Նրանք նման են խավարի, որոնք ուր որ գնում են իրենց հետ տանում են տխրություն, սառնություն և խառնակ-չություն: Իսկ անկեղծ մարդը, ուր որ գնում է իր հետ տա-նում է՝ սեր, պարկեշտություն, ողջմտություն, լույս, ջեր-մություն և արդարություն:

Անկեղծությունը վեհ առաքինություն է, որը կարող է մարդու կյանքում շատ չարիքներ խափանել: Այն բխում է մաքուր նկարագիր ունեցող մարդու սրտից:

Ընտանիքները խաղաղ ապրելու համար կարիքն ունեն անկեղծության: Իր ամուսնու հանդեպ անկեղծ սեր ունեցող կինն է, որ իր տունը կարող է երջանիկ բույնի վերածել: Իր կնոջ նկատմամբ անկեղծ սեր ունեցող ամու-սինն է, որ կարող է օժտել իր ընտանեկան բույնը խաղա-ղությամբ և զարդարել այն բազմապիսի առաքինություն-ներով: Այսպիսի մթնոլորտի մեջ է, որ զավակները ճիշտ կրթություն կստանան և քրիստոնեական մաքուր նկա-րագիրը կկերտվի նրանց մեջ:

Անգլիացի նշանավոր գրող Վիլյամ Շեքսպիրը գը-րում է. «Անկեղծ մարդու խոսքը՝ պատգամ է, սերը՝ ան-կեղծ ու մտածումը՝ անարատ է, արցունքները սրտից բը-խած մաքուր պատգամավորներ են, իսկ սիրտը՝ խարդա-խությունից այնքան հեռու է, ինչքան երկինքը երկրից»:

Մարդիկ հաճախ իրենց առօրյա գործերում ավե-լորդ են համարում անկեղծությունը: Ոմանք էլ չեն հավա-տում կյանքում անկեղծությանը: Այս համոզումը ունեցող մարդկանց խիղճը մթնած է, խավարի մեջ է:

Այս պատմությունը բարի գործերի մասին է. ուսա-նելի է և օրինակելի.

«Բրայան Անդերսոն անունով մեկը երթնեկում էր մայրուղիով իր հին «Ֆորդով», երբ նկատեց մի անսարք «Մերսեդես», որի կողքին տարեց կին էր կանգնած: Նա կանգ առավ և բարեհամբույր ժպտալով առաջարկեց իր օգնությունը. «Միգուցե ես կարողանա մ ինչ-որ բանով օգնել ձեզ»: Պարզվեց, որ ընդամենը անիվն էր ծակվել: Բրայանը նրան առաջարկեց սպասել իր մեքենայում: Նա փոխեց անվադողը, չնայած այդ ընթացքում շատ կեղտոտվեց և կոտրեց մատը: Երջանիկ կինը չգիտեր ինչպես շնորհակալություն հայտնի իր փրկչին: Նա գումար առաջարկեց, բայց Բրայանը հրաժարվեց, միայն խնդրեց. «Ուղղակի դուք էլ օգնեք առաջին պատահած մարդուն, ով օգնության կարիք կունենա»:

Տղայի արարքից տպավորված, կինը շարունակում է իր ճանապարհը: Մոտակա քաղաքում նա կանգ է առնում մի սրճարանի մոտ՝ մի բաժակ սուրճ խմելու: Ներսում աղմկոտ էր, բայց երիտասարդ մատուցողուհին այնպիսի ժպիտով ընդունեց կնոջը, որ նա որոշեց մնալ: Խմելով իր սուրճը՝ կինը հետևում էր մատուցողուհուն, որը հազիվ էր հասցնում, բայց բոլորի հետ բարեհամբույր էր: Ուշադիր նայելով՝ կինը նկատեց, որ աղջիկը նաև հղի է:

Պարզ էր, որ աշխատանքը շատ ծանր էր աղջկա համար: Այդ պահին կինը հիշեց իրեն օգնող տղայի խոսքերը և որոշեց գոնե ինչ-որ կերպ օգնել այդ աղջկան: Նա անձեռոցիկի վրա ինչ-որ բան գրեց, վրան դրեց սուրճի համար գումարը և դուրս եկավ սրճարանից: Աղջիկը մոտեցավ սեղանին, գտավ գրությունն ու գումարը: Այնտեղ գրված էր. «Տեսնում եմ, որ քեզ հեշտ չէ, դրա համար որոշեցի օգնել: Դու ինձ ոչինչ պարտք չես, ուղղակի դու էլ մի բարի գործ արա մեկ ուրիշի համար: Թույլ մի տուր, որ այս բարի գործերի շրջանակը քեզանով ավարտվի»: Անձեռոցիկի տակ կար ևս 400 դոլար: Այս ամենից ոգևորված,

աղջիկը մեծ ուժով լցվեց: Նրան և իր սիրելիին իրոք անհրաժեշտ էր այդ գումարը, քանի որ նրանք փոքրիկի էին սպասում: Աղջկա հերթափոխն ավարտվեց: Նրան, ինչպես միշտ, դրսում սպասում էր իրեն շատ սիրող ամուսինը: Փաթաթվելով ամուսնուն՝ աղջիկը շնջաց նրա ականջին. «Ես սիրում եմ քեզ, Բրայան Անդերսոն... Նրա ամուսինը վերևի կնոջ մեքենայի անիվը փոխող մարդն էր»:

Այս պատմությունը ևս մեկ անգամ ապացուցում է այն փաստը, որ երբ Բարի գործ ես անում, այն միշտ հարյուրապատկված ետ է վերադառնում: Փորձեք դուք էլ օրվա ընթացքում Բարի գործեր կատարել:

Անկեղծությունը զգացմունքի ցուցիչ է: Այն շատ արագ մաղում է այն մարդկանց, ովքեր մեզ պետք չեն, ընդ որում՝ կյանքի բոլոր իրավիճակներում: Միշտ շրջապատիր քեզ այնպիսի մարդկանցով, որոնց հետ ուզում ես անկեղծ լինել ու բաժանվիր նրանցից, որոնց հետ հարաբերություններդ անկեղծ չեն:

Ուինսթոն Չրչիլը 1940-ին Չեմպերլենում ի պատիվ իրեն տրված ճաշկերույթին այսպես է արտահայտվել. «Մարդու միակ ուղեցույցը իր խիղճն է, իսկ մտքում միակ վահանը՝ իր ուղիղ գործերն ու անկեղծությունն են: Անկեղծության վերացումով աշխարհում սերն էլ կվերանա»:

Կյանքում իրական երջանկությունը անկեղծությունն է: Անկեղծ մարդու խիղճը խաղաղ է, քանի որ խիղճը Աստվածային է և կարևոր արժեք ունի:

Անկեղծությունը հոգեկան մի վիճակ է, որը սակայն մարդու հետ չի ծնվում: Մարդը դաստիարակվում է նրա համար, սովորում անկեղծության սկզբունքները և հագնում է այն մորթի և ոչ թե զգեստի նման:

Եկեք անկեղծ լինենք մեկս մյուսի նկատմամբ, չկեղծենք, բարի գործեր անենք, առավել ևս ամեն օր աղոթքի մեջ անկեղծ ու մտերմիկ զրույց ունենանք Աստծու հետ, պատմենք Նրան մեր օրվա անցուդարձը, մեր կատարած գործերը, ընտանեկան խնդիրները, շրջապատի հետ մեր հարաբերությունները, մի խոսքով ամեն ինչ անկեղծորեն ու սիրով պատմենք Նրան: Թակենք Նրա դուռը. առանց հոգնելու: Հավատացեք Նա միշտ և ամեն պահի պատրաստ է մեզ լսելու, օգնելու և պահապան լինելու: Ամեն:

ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԹՇՆԱՄԱՆՔ

«Բարկությունը թշնամանք է հարուցում, և թշնամանքը՝ կռիվ է ծնում, իսկ կռիվը՝ հարվածներ, և հարվածները՝ վերքեր, իսկ վերքերից շատ անգամ մահեր են լինում»

Սուրբ Բարսեղ Մեծ Հայրապետ

Այս խոսքը Ընդհանրական Քրիստոնեական Հայրերից՝ Սուրբ Բարսեղ Մեծ Հայրապետի խոսքերն են:

Հետաքրքիր մտածումներ են: Փորձենք հարցերի վերածել սրանք. «Ի՞նչ է բարկությունը, որը թշնամություն է առաջ բերում, ի՞նչ է թշնամությունը, որը կռիվ է ծնում, իսկ կռիվը՝ հարվածներ և հարվածները՝ վերքեր, վերքերից էլ երբեմն մահեր են լինում»:

Եկեք առանձին-առանձին վերլուծենք այս հարցերը.

ա. Նախ ի՞նչ է բարկությունը, մարդիկ ինչո՞ւ են բարկանում: Բարկությունը առաջ է գալիս, երբ յուրաքանչյուր մարդ սխալ մի բան է տեսնում՝ անհրաժեշտություն, անտեղի զրպարտություն, անարդար վերաբերմունք, ճշմարտության ուրացում, որոնք երբեմն հունից հանում են տվյալ անձին: Սաղմոսաց գրքում ասվում է. «Բարկացեք, բայց մի մեղանչեք և օր չանցնի ձեր բարկության վրայից» (Սաղմ. 4:4), այսինքն սխալ կամ անարդարացի բաների համար չափից ավելի բարկանալը մեղք է և վնասակար: Անզգամ ու շահամոլ մարդիկ են, որ չեն բարկանում, երբ տեսնում են անհրաժեշտություններն ու անարդարությունները: Երկրորդ, երբ բարկանում ենք զգույշ պիտի լինենք, որ այն թշնամությունների դուռ չբացի: Շատ անգամ մարդիկ այդպիսի բարկությունների ժամանակ է, որ տարիներով իրար հետ չեն խոսում, դառնում են իրար թշնամիներ, նույնիսկ քույրը՝ եղբոր, ծնողները՝ զավակների, հարևան-

ները՝ իրար և ընկերները՝ ընկերների հետ: Այդ պատճառով բարկությունը մեր Եկեղեցում դասվել է յոթը մահացու մեղքերի շարքին:

բ. Թշնամությունը՝ կռիվ է ծնում: Այո՛, ճիշտ է, չափից ավելի բարկացած մարդիկ չեն կարողանում իրենք իրենց վրա հսկել, դուրս են գալիս ավերից և սկսվում են փոխադարձ հայհոյանքները, մեկը մյուսին մեղադրելը գանազան հանցանքների մեջ, խոսքերը վերածվում են բռնոնցքների:

Պողոս Պատրիարք Ադրիանաապոլսեցին ասում է. «Բարկությունն անվանել բոլոր չարիքների աղբյուր անտեղի չէ, որովհետև չկա չարիք, որ բարկությունից առաջ չգա՝ հայհոյանք, հարված, սպանություն, գերություն, ունեցվածքի կորուստ, քաղաքների ավերում, խաղաղության, սիրո և բոլոր բարիքների վերացում. մի խոսքով՝ բարկությունը մարդկային ցեղի ժանտախտ ու դժոխքի դուռ է» և շարունակում է. «Բարկությունը հոգու կիրք է, որի պատճառը սրտի շուրջ արյան եռքն է, որի չափը երբ անցնում է, մարդու մեջ մեծամեծ վնասներ են գործվում, մինչև իսկ երակները պայթելու և տարածամ մահվան հասնելու աստիճան: Որովհետև «Բարկ» բառը նշանակում է սաստիկ ու ազդու, ուստի առած կա, թե՛ «Բարկ քացախն իր ամանին վնաս է»: Այս պատճառով էլ բժիշկները մարդկանց պատվիրում են սաստիկ բարկությունից զգուշանալ, քանզի դրանից առողջը հիվանդանում է, և հիվանդը՝ մեռնում, երբեմն էլ բարկությունը հիվանդանալու ժամանակ ու տեղ չի թողնում, այլ իսկույն նույն տեղում, իբրև անողորմ դահիճ, կյանքից զրկում» («Խրատի Թանգարան»):

գ. «Կռիվը՝ հարվածներ և հարվածները՝ վերքեր, իսկ վերքերից երբեմն մահեր են լինում»: Իրականում բարկացած մարդը անկառավարելի է և անզսպելի: Դեպ-

քեր են լինում, երբ մեկը մյուսին հարվածում են, վերքեր են բացվում, նույնիսկ շատ անգամներ այդ հարվածներից մարդիկ մահանում են: Առակաց գրքում ասվում է. «Անգգամ մարդը հակառակություն է գրգռում, հեզաբարո մարդը դադարեցնում է մեղքերը, իսկ բարկացկոտ մարդը խորացնում է դրանք» (Առակ. 29:22): Կռիվ հրահրողը անպայմանորեն ինքն է տուժում: Սրա համար հայկական ժողովրդական առածն ասում է. «Բարկությամբ ոտքի կանգնողը՝ վնասով իր տեղն է նստում»:

Հետաքրքիր է այս պատմությունը, որը պատկերում է բարկությունը, սակայն կենդանական աշխարհում.

«Պատմվում է, թե Հնդկաստանի անտառներից մեկի մոտակայքում գտնվող մի գյուղի ծայրամասի հյուղակում երկու փոքրիկ առանձին քնել էին: Անտառից մի խոշոր վագր է դուրս գալիս և մարդու հոտ առնելով մոտենում է հյուղակին ու նրա բաց դռնից ներս մտնում: Տեսնում է քնած փոքրիկներին և պատրաստվում է նրանց վրա ցատկել ու բզկտել: Հանկարծ դիմացի հայելու մեջ նկատում է մի այլ խոշոր վագրի: Բարկանում է, նա էլ նույնն է կրկնում, գայրանում է և ատամներն է ցույց տալիս, նա էլ նույնն է անում: Այս արարքի վրա դիմացի վագրին պարտության մատնելու և որսը առանձին ուտելու համար վագրը իր ամբողջ ուժով նետվում է հայելու վագրի վրա: Արդյունքը այն է լինում, որ հայելին ջարդ ու փշուր է լինում և աղմուկից վագրը երեխաներին թողած լեղապատառ փախչում է անտառ»:

Հարց է առաջանում. «Արդյոք բարկության դիմաց մի դեղ կամ հնարավորություն կա՞ կանխելու համար այս մահացու մեղքի գործադրությունը»:

Լսենք այս մասին մի անգամ ևս Պողոս Պատրիարքի խրատը. «Բարկության ախտի դեմ դյուրապատ-

րաստ դեղ է մարդու բնության տկարությունը ճանաչելը, որն առավել տկար է մանուկների, կանանց, երկչոտների ու թեթևամիտների մեջ և սպասավորների սխալները ներելը, որ ակամա գործվում են նրանց անգիտությունից կամ տկարությունից. որովհետև եթե նույնիսկ կամենան իրենց պարտավորությունն անթերի կատարել, միևնույն է, հնարավոր է, որ ինչ-ինչ բաներում թերանան:

Ուստի տանուտերը ներողամիտ ու համբերող պիտի լինի և ոչ թե վառողի պես բոցակիզի նրանց, որպեսզի չլինի թե հուսահատվելով կորցնեն իրենց հավատարմությունը և մտածեն նրան չարիք հասցնել» («Խրատի թանգարան»):

Մի՛ բարկացեք, ոխ ու քեն մի պահեք, բարկությունը բեռ մի դարձրեք ձեր առանց այդ էլ մտահոգիչ, ծանրաբեռնված ու հոգսերով լի կյանքում, այլ եղեք հանգիստ, խաղաղ և ապրեք հավատի, աղոթքի ու սիրո կյանքով:

Ուրեմն, եկեք հետևենք Հիսուսի աստվածային պատվիրաններին, փորձենք չբարկանալ, այլ, ընդհակառակը, մեր մեջ ավելի գորացնենք սերն ու ներողամտության ոգին մեկս մյուսի նկատմամբ, մնանք մեր բարձրության վրա, ապրենք պատվաբեր կյանքով, նվիրվենք մեր ընտանիքին, մեր ժողովրդին ու մեր Եկեղեցուն: Դժվար է, բայց անկարելի չէ, ապրել հեզ, պարկեշտ, մաքուր ու սրբակենցաղ կյանքով: Ամեն:

ԻՆՔՆԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

«Քննեցեք դուք ձեզ՝ տեսնելու, թե նույն հավատի
մե ջ եք...» (Բ. Կորնթ. 13:5)

Այս խոսքը ես վերցրել եմ Պողոս Առաքյալի Կորնթացիներին ուղղած երկրորդ նամակի 13-րդ գլխի 5-րդ համարից, ուր Առաքյալը խոսում է ինքնաքննության մասին:

«Ի՞նչ է ինքնաքննությունը, մարդ ինչպե՞ս կարող է ինքն իրեն քննել, ինչպիսի՞ փորձության պիտի ենթարկենք մեր հավատը, ինչո՞ւ պիտի քննենք մեր անձերը, նպատակը ի՞նչ է»:

Ահա այսպիսի հարցեր են առաջ գալիս մեր մտքում, երբ կարդում ենք Պողոս Առաքյալի այս խոսքերը. «Քննեցեք դուք ձեզ՝ տեսնելու, թե նույն հավատի մե ջ եք. փորձեցեք դուք ձեզ, չգիտե՞ք, թե Քրիստոս Հիսուս ձեր մեջ է, այլապես կլինեիք անպիտան» (Բ. Կորնթ. 13:5):

Աստված կատարյալ է, սակայն մարդուն հնարավորություն է տվել ձգտելու կատարելության և յուրաքանչյուր մարդու առաջ բաց է այդ ճանապարհը: Եթե այդպես է, ապա դրան միայն կարող ենք հասնել ինքնաքննությամբ և ինքնասրբագրությամբ: Չարը միշտ արթուն է, երբեք չի քնում, բայց երբ մենք մեզ ճանաչենք, այն ժամանակ նրա գոյությունը իսպառ կվերանա մեր միջից:

Եթե մեր հույսը դնում ենք միայն մեր վրա և փորձում ենք մեր ուժերով մաքրվել, դա բավական մեծ դժվարությունների առաջ կկանգնեցնի մեզ: Իսկ եթե մեր աղոթքով խնդրում ենք Աստծուն, որպեսզի Նա քննի և ուղղություն տա մեզ ու մաքրի, այդ պարագային մեր հավատն ենք ուժեղացնում, ինչպես մեզ խրատում է Սաղմոսեզուն. «Փորձիր ինձ Տեր, և քննիր ինձ, փորձիր երիկամներս ու սիրտս» (Սաղմ. 26:2):

Երբեմն կողքից լսում ենք մարդկանց, որոնք այսպիսի արտահայտություններ են ունենում. «Չենք կարող, չի ստացվում, հնարավոր չի, այդ բանը ինձ մի՛ ասեք և այլն»: Այսպիսի արտահայտություններ ունեցողները պարզապես երբեք իրենք իրենց չեն քննում և չգիտեն իրենց հավատի ուժը: Աստված արդեն այդ հավատի ուժը դրել է մեր մեջ, մնում է այն միշտ գործադրենք: Իսկական քրիստոնյան, իր հույսը դրած Աստծու վրա, իր գիտակցության լույսով և հավատի ուժով փորձում է իր լավագույնը անել իր նմանների նկատմամբ:

Կյանքում կան պահեր, որոնք ուզենք, թե չուզենք, ստիպում են մեզ ինքնաքննություն կատարելու: Դրանցից ամենակարևորներից մեկը՝ Սուրբ Հաղորդություն ստանալն է: Մոտենում ենք քահանային և լսելով նրա մեղքերի թվարկումը, «Մեղա Աստուծո» ասելով, մեր ներսում մեզ ինքնաքննության ենթարկելով, փորձում ենք զգալ Հիսուսի ներկայությունը մեր մեջ: Այդ բոլորն հոգևոր ներկայության մեջ ապրելու խորհրդավոր պահն է:

Ինքնաքննությունը մեր սխալները տեսնելու և սրբագրելու լավագույն ձևն է: Շատ անգամներ մենք մեզ չենք ճանաչում: Եթե փորձենք թվարկել մեր թերությունները և տեսնել դրանք՝ դժվարության կհանդիպենք: Ներքին ուժեղ հավատ է պետք, գիտակցելու, թե մեղավոր ենք և կարող ենք թերություններ ունենալ: Շատ կարևոր է մանավանդ, երբ օրվա վերջավորության, կանգնենք հայելու առաջ և մենք մեզ հարց տանք, թե ինչպե՞ս անցկացրեցինք օրը, մի բարի գործ կատարեցի՞նք, քննենք մենք մեզ այս հարցերով ու եթե դրական պատասխան ստանանք, ապա օրը շահած կլինենք:

Այս պատմությունը փորձության միջոցով ինքնաքննության մասին է.

«Վանական եղբայրներից մեկը ընկնում է փորձության մեջ և շատ տխրելուց կորցնում իր մենակեցության կարգը: Եվ երբ ուզում է վերսկսել, սրտի տխրությունը թույլ չի տալիս, այլ այսպես է ասում մտքում. «Ինչպե՞ս կարող եմ դառնալ այնպիսին, ինչպիսին էի»:

Եվ այդպես հուսահատված չէր կարողանում վերսկսել իր մենակեցության գործը: Մի օր էլ վեր կենալով գնում է մի ծերի մոտ և պատմում նրան այդ ամենը: Եվ ծերը նրան այսպիսի մի առակ է պատմում. «Մի մարդ ծուլանում է իր այգում, իսկ այն լցվում է փշերով ու մոլախոտերով: Հետո ուղարկում է իր որդուն և ասում. «Գնա մաքրիր այգին»: Որդին գնալով և տեսնելով բուսած փշերի ու մոլախոտերի վիթխարի քանակությունը, վախենում է և ասում. «Ես ինչպե՞ս կարող եմ մաքրել այս ամենը» ու պառկում է ու քնում: Եվ շատ օրեր այսպես է անցկացնում: Հայրը գնում է, գտնում նրան և տեսնելով, որ ոչինչ չի արել, ասում է. «Այս ի՞նչ բան է, որդյա՛կ, դու ոչինչ չե՛ս արել»: Եվ նա պատասխանում է. «Երբ ցանկանում եմ աշխատել, վախենում եմ փշերի շատությունը տեսնելով»: Հայրն ասում է. «Որդյա՛կ, ամեն օր քո ննջատեղին հավասար տարածքը մաքրիր»: Եվ նա լսելով իր հորը այդպես էլ անում է: Եվ երբ սկսում է, ամեն օր ավելացնում է իր աշխատանքը ու շատ ժամանակի ընթացքում ամբողջ այգին մաքրվում է»:

Արդ, այդպես էլ դու, մի՛ վախեցիր, այլ սկսիր, և Աստված Իր շնորհներով քեզ կվերահաստատի քո նախկին կարգի մեջ ու այսպես անելով՝ ապահով կլինես փորձություններից» («Սուրբ հայրերի վարքն ու կենցաղավարությունը» գրքից):

Չի կարող մեկը մեծ լինել, առանց ինքնիրեն լավ ճանաչելու:

Կան մարդիկ, որոնք նայում են, բայց չեն տեսնում, աչքը նայում է, բայց ուղեղն է տեսնողը:

Ճիշտ չի լինի, եթե մենք այսօրվա փոխարեն, փորձենք մեզ քննել վաղը, ինչո՞ւ, որովհետև Հիսուս ասում է վաղվա օրը մեզ չի պատկանում, իսկ եթե հանկարծ մեզ մի բան պատահի, ո՞վ գիտե մեծ աշխարհ է: Այդ պատճառով այսօրն է կարևոր, երբ ինքնաքննությամբ մենք պետք է փորձենք մեր սխալները ուղղել:

Որևէ մեկը կարող է այս հարցը տալ. «Իսկ ի՞նչ է ինքնաքննության օգուտը»: Պողոս Առաքյալն ասում է. «Եթե մենք մեզ քննեինք, ապա չէինք դատապարտվի» (Ա. Կորնթ. 11:31):

Դպրոցում, համալսարանում, երբ սովորում ենք, ուսուցիչները քննում են մեր թղթերը և սրբագրում: Սակայն շրջանավարտ լինելուց հետո էլ մեր ուսուցիչը մեզ հետ չէ, մենք արդեն, ուզենք, թե չուզենք, քննում ենք ինքներս մեզ և ուսում ստանալուց հետո շրջանավարտ լինում:

Եթե այսօր նայենք նյութականացած այս աշխարհին, կտեսնենք, որ կան մարդիկ, որոնք սխալ, չասելու համար այնպիսի սանձարձակ կյանք են վարում, որ չեն ուզում մտածել նույնիսկ ինքնաքննության մասին: Ինչո՞ւ, որովհետև այն ձեռնտու չէ իրենց, քանի որ պիտի տեսնեն իրենց իրական դեմքը, որը գուցե և հաճելի չլինի: Կարելի է ասել, եթե նրանք կանգնեն հայելու առաջ, ապա պիտի սարսափեն իրենց իսկ դեմքից, քանի որ մարդու աչքերը իրենց հոգու հայելին են: Առարկան, նյութը, դրամը, երբ իշխում է մարդու վրա, նա զրկվում է հոգևոր ներկայությունից ու դառնում է չար ուժերի գերին: Դժբախտաբար այս է իրականությունը:

Ինքնաքննությունը մարդու նկարագիրը հաստատում է ամուր Ժայռի վրա, որի համար ուժեղ կամք է պետք:

Հին հույն մաթեմատիկոս և փիլիսոփա Պյութագորաս Սամոսացին ասել է. «Ճանաչիր քեզ»: Հետևենք այս մտածողի խոսքին ու փորձենք ինքնաքննությամբ մենք մեզ ճանաչել, աղոթքով դիմելով Ամենակատարյալին: Ամեն:

ԽՂՃՄՏԱՆՔ

«Մաքուր խղճմտանք ունեցեք, որպեսզի այն բանով, որ չարախոսում են ձեր մասին, ամոթահար լինեն նրանք, որ բամբասում են ձեր բարի ընթացքը ի Քրիստոս»

(Ա. Պետ. 3:16)

Այս խոսքը ես վերցրել եմ Պետրոս Առաքյալի Ընդհանրական Առաջին Նամակի 3-րդ գլխի 16 համարից, ուր Առաքյալը խոսում է խղճի կամ խղճմտանքի մասին:

«Ի՞նչ է խիղճը, այն աստվածայի՞ն է, թե՞ մարդկային, ովքե՞ր են խիղճ ունեցողները և անխիղճները»;

Խիղճ կամ խղճմտանք նշանակում է սրտի գիտակցություն: Մարդու մեջ խղճի արձագանքը Աստծու ձայնն է: Քրիստոնեական հասկացողությամբ խիղճ ունեցողը Քրիստոսին է պատկանում, որը տեսնում, լսում ու կատարում է Նրա պատգամները և նրանով էլ առաջնորդվում է: Խղճմտանքը ինքնին առանց բոցի մի լույս է, որը լուսավորում է մարդու միտքը, սիրտը, հոգին ու գործած արարքները:

Սխալը սրբագրելը իմաստություն է: Ավետարանում կան զանազան դեպքեր, երբ անհատներ սխալները են գործել, սակայն խղճալով իրենք իրենց, փորձել են սրբագրել դրանք. ինչպես՝ Կայենը, որը նախանձից սպանեց իր եղբորը՝ Աբելին, Հուդան, որը մատնեց իր Վարդապետին՝ Հիսուսին, Տրդատ թագավորը, որը հեթանոս լինելով՝ սպանեց Հռիփսիմյանց կույսերին և բանտարկել տվեց Սբ. Գրիգոր Լուսավորչին, Սողոսը, ով հալածում էր քրիստոնյաներին, Դամասկոսի ճամբին Հիսուսին տեսավ ու դարձի եկավ ու դարձավ Պողոս Առաքյալ և այլն:

Անխիղճ մարդը բարոյապես կենդանի մի մեռել է: Նա չի կարող Քրիստոսին ունենալ իր մեջ, քանի որ Նա լույս է, իսկ անխիղճը քայլում է խավարում:

Այս պատմությունը ուսուցողական է
ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ԽԻՂՃԸ - ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

«Գյուղացիներից մեկը իր մինուճար որդուն մի հարուստ վաճառականի մոտ հինգ տարով ծառայության է տալիս: Գյուղացին քանի որ մաքուր ու ազնիվ մարդ էր, մտածելով, որ վաճառականը նույնպես այդպիսին է, վճարումը թողնում է նրա խղճին:

Տարիներն անցնում են և գյուղացու տղան դառնում է ճարպիկ վաճառական, այն աստիճան, որ շատերը նրան իրենց մոտ ծառայության են կանչում բավական մեծ գումարով, սակայն տղան քանի որ իր հոր զավակն էր, հարգում է նրա պայմանը ու սպասում, որ հինգ տարին լրանա: Հինգ տարին որ լրանում է՝ գյուղից, իր մորից նամակ է ստանում, թե. «Հայրդ մերձիմահ հիվանդ է, քո հաշիվներդ տիրոջդ հետ վերջացրու և եկ: Փողի համար որքան որ կտա՝ չհակաճառես, որովհետև հայրդ քո վարձի համար թողել է տիրոջդ խղճին, որքան կտա՝ կվերցնես, շատ թեքիչ»:

Որդին շատ է տխրում այդ նամակի վրա և երկար մտածելուց հետո գնում է տիրոջ մոտ ու ասում. «Մորիցս նամակ եմ ստացել, թե՛ հայրս մերձիմահ հիվանդ է, հաշիվներդ վերջացրու և ե՛կ»:

Վաճառականն առանց երկար մտածելու ասում է՝ գնա՛, ազատ ես:

Գործակատարը վրդովվում է, թե՛ «Պարո՛ն, բա ես հինգ տարի ծառայել եմ քեզ, թե ինչպես եմ ծառայել քեզ, այդ Աստված գիտե, վերև՝ Աստված, ներքև՝ դուք, հայրս մերձիմահ հիվանդ է, մեռնում է, իմ հաշիվս տվե՛ք գնամ»:

«Ի՛նչ հաշիվ, ի՛նչ Աստված, քեզ ուտացրել, խմացրել և փեշակ եմ սովորեցրել, էլ ի՞նչ ես ուզում, քեզ ոչ մի կոպեկ չեմ տա, որտեղ ուզում ես գնա»:

Ահա այսպիսի պատասխան է տալիս անխիղճ վաճառականը: Այդ ժամանակներում քաղաքում մի այսպիսի սովորություն է լինում: Եթե մեկը մահանում է, թաղման օրվա մասին բարեկամներին ոչ թե ննջեցյալի տերն է հայտնում, այլ՝ ծխատեր քահանան: Բոլոր ծախսերը կատարելուց հետո, քահանան ընդհանուր հաշիվը ներկայացնում է ննջեցյալի տիրոջը:

Գյուղացու որդին տեսնում է, որ իր տերը խիղճ չունի, մտածում է, թե նա արդեն իր համար մեռած է ու գնում և հայտնում է այդ մասին քահանային: Դե ինչպես կարգն է, քահանան ամեն պատրաստություն տեսնում է և թաղման օրվա մասին հայտնում վաճառականի բոլոր բարեկամ-ներին ու ընկերներին և երեկոյան գնում է վաճառականի տուն: Ջարմանում է, երբ տեսնում է, որ նա պատշգամբում նստած թեյ է խմում, ոչինչ չի ասում, նստում է ու ինքն էլ է նրա հետ թեյ խմում:

Քահանայի հետ նստած ժամանակ հերթով մարդիկ գալիս ու գնում են, առանց մի բան ասելու: Վաճառականը զարմանում ու գժվում է, մինչև որ քահանան բացատրում է նրան եղելությունը: Այս իմանալով վաճառականը բարկացած բողոքի է գնում թագավորի մոտ և ասում, որ իր գործակատարն ուզում էր իրեն ողջ-ողջ թաղել, խնդրում է մի դատաստան:

Կանչում են գործակատարին և նա պատմում է ամբողջ եղելությունը, որ իր տերը խիղճ չունի, ուրեմն իր համար մեռած է: Թագավորը լսում է ու դահիճներին ասում, որ նրան տանեն կախելու:

Գործակատարի բացակայության թագավորը երեք անգամ հարցնում է վաճառականին, թե իրեն բան չունի՞ ասելու և նա ոչ մի պատասխան չի տալիս:

Թագավորը մարդ է ուղարկում դահիճների մոտ, որ տղային ետ բերեն՝ չկախեն և վաճառականին տանեն կախելու:

Այդ ընթացքում թագավորը նույն հարցը տալիս է տղային, թե՛ էլ ուրիշ ասելու բան կամ գանգատ չունի՞ տիրոջ վրա:

Առաջին երկու անգամը տղան ոչ մի պատասխան չի տալիս:

Երբ թագավորը երրորդ անգամ է հարցնում, տղան լացակումած պատասխանում է.

Տե՛ր արքա, ես խղճում եմ նրա զավակներին. մըտնում եմ նրանց դրության մեջ: Նրանք պիտի լացեն, որ իրենց հորը կենդանի թաղել ենք: Բաց թողեք նրան, ես ոչ մի պահանջ չունեմ նրանից ու հրաժարվում եմ որևէ տեսակի վարձատրությունից:

Թագավորը տեսնելով գործակատար տղայի ազնվությունը, շատ է ազդվում և հրամայում է, որ վաճառականին ետ բերեն, չկախեն, բայց կանչել է տալիս քաղաքի հայտնի վաճառականներին, որպեսզի հարուստի կարողությունը չափեն ու կիսեն և կեսը հանձնում է գործակատարին: Արդար վճիռ»:

Անխիղճ մարդու դատաստանն էլ այս պիտի լինի:

Պողոս Առաքյալն ասում է Կորնթացիներին ուղղած իր երկրորդ նամակում. «Քանզի մեր պարծանքն այս է. մեր խղճմտանքի վկայությունը, այն որ սրբությամբ ու Աստծու ճշմարտությամբ և ոչ մարմնավոր իմաստությամբ, այլ Աստծու շնորհքով ենք ընթացել աշխարհում» (Բ. Կորնթ. 1:12);

«Մարդու բարքը ներքուստ ուղղվում է խղճից և արտաքուստ՝ օրենքից; Որովհետև եթե խիղճը, թյուր կամքիդ թելադրվելով, կռվում է ընդդեմ ուղիղ բանականության, օրենքը հանդիմանելով սանձում է նրան ու հնա-

զանդության բերում: Խիղճը, իբրև բնության կողմից հաստատված արդար դատավոր և օրենքը՝ իբրև Աստծուց հաստատված արտաքին իրավար...: Երկուսն էլ՝ խիղճն ու օրենքը կարևոր են՝ մարդկանց առաջնորդելու և հասցնելու համար առաքիության՝ իբր մոտակա նպատակի և դրանով էլ՝ երջանկության, իբրև վերջնական նպատակի: Որովհետև ըստ առածի. «Աստված և բնությունը երբեք հենց այնպես չեն գործում...», ասում է Պողոս Պատրիարք Ադրիանապոլսեցին և շարունակում է.

«Խղճահարությունը չար բան է, բայց ավելի չար է անխիղճ լինելը: Ուստի պետք է խղճմտանավոր լինել, այսինքն՝ իբրև փոքրոգի ամեն ինչից չվախենալ, իբրև հանդուգն՝ ամեն ինչին չվստահել, այլ իբրև արի՝ չվախենալ, ուր պետք չէ, և վախենալ, ուր պետք է...:

Մարդու խիղճը նման է ջան, որն օտարների վրա հաչում ու նրանց հալածում է, իսկ ծանոթներին քծնում է ու շողոքորթում: Որովհետև երբ մեկը որևէ չար բան է խորհում կամ գործում, խիղճը շուտով հաչում ու ջանում է չարը հալածել՝ իբրև մարդու բնությանն օտար ու թշնամի մեկի: Իսկ երբ մտքում ելումուտ գործելուն չարը տակավ առ տակավ ընտելանում է, այնուհետև խղճմտանքը նրա հետ իբրև ծանոթի հետ է վարվում ու հանդիմանելուց դադարում, այդ պատճառով էլ մարդը համարձակ գլորվում է ամեն տեսակ մոլորությունների մեջ, որոնցից նախկինում, խղճից տանջվելու պատճառով, խուսափում էր: Ուստի պետք է սկզբից նեթ ջանալ որևէ չարի տեղի չտալ ու խիղճը միշտ արթուն պահել, որպեսզի մարդը չգահավիժի չարիքների խորխորատները» («Խրատի թանգարան»):

Այս պատմությունը կոչվում է «Խիղճը»

«Մի վաշխառու, կիզիչ արևից հոգնած, քայլում է չոր տափաստանով: Ճանապարհի եզրին, թփուտների

մեջ, նկատում է մի երեխայի, որը նվաղած ու ցածրաձայն ջուր էր խնդրում:

Վաշխառուն մտքում հաշվարկում է, որ եթե այս երեխային ջուր տա, ապա իր ունեցած ջրի պաշարն իրեն չի բավականացնի ամբողջ ճանապարհին և արագ անցնում է: Որոշ ժամանակ անց տափաստանում անցնող հեծյալ զինվորներ են մոտենում վաշխառուին ու ասում, որ թագավորի որդուն են փնտրում և ով գտնի այդ տղային, մեկ պարկ ոսկի պարգև կստանա:

Վաշխառուի սիրտը սկսում է արագ թրթռալ: Մեծ փութաջանությամբ շրջվում է և գալիս հասնում այն թփուտին, ուր երեխան էր ընկած: Հապշտապ թփերի ճյուղերով ծածկում է տղային, որպեսզի ճանապարհով սլացող հեծյալները, ոչինչ չնկատելով, անցնեն: Այնուհետև իր պայուսակից հանում է ջուրը և խմեցնում տղային՝ ուրախությամբ ասելով. Խմիր, խմիր, ինչքան կարող ես. դու ինձ համար շատ թանկ ես, քանի որ թագավորի որդին ես: Տղան խմում է ջուրը, ուշքի գալիս ու պատասխանում.

Ես թագավորի որդին չեմ, այլ քո խիղճն եմ, ինչքան էլ ինձանից փախչես, ինչքան էլ ինձ անտեսես, մեկ է, ուր էլ գնաս ու պտտվես, վերջում ինձ մոտ ես գալու ու մեղքերիդ համար պատասխան ես տալու:

Այս ամենն ասելով՝ տղան, ինչպես հողմը, անհետանում է, իսկ այլայլված ու շփոթմունքի մատնված վաշխառուն հուսահատ գլուխն է բռնում.

Ջուրս խմեց, հացս կես արեց, ես ինչպես պիտի անցնեմ էս տափաստանը...» (Հովհաննես Մանուկյան, «Առակներ»):

Պողոս Պատրիարքի խոսքերը իբրև վերջաբան. «Ով իր խղճմտանքի դեմ է գործում, չի կարող նրա խայթոցից գերծ լինել. խղճի խայթը մահվանից էլ խիստ է. մահը մի անգամ է մեռցնում, իսկ խղճի խայթը՝ ամեն ժամ:

Ուստի ով իր խիղճն իբրև իր անձի անխաբ դատավոր ունի
և նրա օրենքներին ու հրամաններին հնազանդվում է,
սրտի ներքին տանջանքներից ազատ ու խաղաղ է մնում»:

Հետևենք Պատրիարքի խրատին ու խղճով փոր-
ձենք բարի և արդար գործեր կատարել, որպեսզի հան-
գիստ ու խաղաղ սրտով շարունակենք մեր կյանքը: Ամեն:

ՆԿԱՐԱԳԻՐ

«Բարի անունը լավ է մեծ հարստությունից,
ընտիր շնորհքը՝ արծաթից ու ոսկուց» (Առակ.22:1)

Այս բնաբանը ես վերցրել եմ Առակաց գրքի 22-րդ գլխի 1-ին համարից, ուր խոսվում է, թե բարի անունը լավ է մեծ հարստությունից, իսկ ընտիր շնորհքը՝ արծաթից ու ոսկուց:

Այս խոսքից բխում է մի հարց. «Ի՞նչ է մարդու նկարագիրը, ինչպիսի՞ն է մարդու էությունը, ի՞նչ է նշանակում բարի անուն, ի՞նչ պիտի անենք այն վաստակելու համար»:

Նախ բացատրենք, թե ի՞նչ է նշանակում նկարագիր բառը: Եթե բառը բաժանենք երկու մասի, այսպիսի պատկեր կունենանք՝ նկար և գիր, այսինքն, յուրաքանչյուր մարդու դիմագիծը, պատկերը, էությունը: Մարդու նկարագիրը չի տեսնվում ու չի շոշափվում, առարկա չէ, որ երևա: Աշխարհում շատ բաներ կան, որոնք նույնպես չեն տեսնվում ու չեն շոշափվում: Վերցնենք օրինակ ցավը, որը չի տեսնվում ու չի շոշափվում, սակայն զգում ենք նրա գոյությունն ու ներկայությունը:

Նկարագիր ունեցող մարդը զարդարված է լինում բարոյական ու հոգեկան հատկություններով և առաքինություններով: Չար մարդը նկարագիր ունենալ չի կարող, որովհետև նկարագիրը լավ հատկություն է:

Հարց է առաջանում. թե՛ «Ե՞րբ է սկիզբ առնում մարդու նկարագիրը»: Նկարագրի շենքը սկսվում է մեր մանկության ժամանակ ու շարունակվում մինչև մահ: Նորածին մանուկը նմանվում է կավի: Կավագործը իր ցանկությամբ կավին տալիս է իր ուզած ձևը, իր ծրագիրը իրագործելու համար: Այնպես էլ, ըստ մանկավարժ հոգեբանների, մանուկի մեջ նկարագիրը կերտվելու համար գլխավորը իր միջավայրն է և ոչ թե իր ժառանգականու-

թյունը: Մանուկի անբիծ ուղեղը լուսանկարչական մեքենայի նման ընդօրինակում է իր տեսածն ու լսածը: Հագվազյուտ է լինում, երբ լավ միջավայրից վատ մարդ է դուրս գալիս:

Նկարագիրը բարոյական մի սերմ է, որը բուսնում է միայն ու միայն մաքրակենցաղ հոգիներում և պտղաբերում է զանազան շնորհալի հատկություններով: Սողոմոն իմաստունը այսպիսի առաքինության համար է, որ ասում է. «Բարի անունը լավ է մեծ հարստությունից, ընտիր շնորհքը՝ արծաթից ու ոսկուց»:

Մի նշանավոր մտածող ասել է. «Ամեն մարդ իր նկարագրի ճարտարապետն է և կամ նկարագիրը կատարելապես դաստիարակված կամքն է»:

Նկարագիրը և շնորհքը մարդու զգեստի նման են, ինչպես որ վայելույշ մի հագուստ գեղեցիկ երևույթ է տալիս տվյալ անձին, այնպես էլ նկարագիրն ու առաքինագարդ կյանքը հոգեկան գեղեցկություն են տալիս նրան և զանազանում ուրիշներից:

Նկարագիր ունենալու առաջին պայմանը հոգու ազնվությունն ու կամքի զորությունը ունենալն է: Ամեն հովի առջև առազաստ բացողը չի կարող նկարագիր ունենալ և իր կյանքի ընթացքը ուղիղ քայլել:

Այս պատմությունը, որը կոչվում է «Ոչ սիրելի աշակերտը» մանուկի ճիշտ դաստիարակության ու նկարագրի կերտման մասին է:

«Ուսումնական տարվա սկզբին վեցերորդ դասարանի դաստեկը կանգնած էր իր նախկին հինգերորդցիների առջև: Նա մի հայացք նետեց դասարանին և ասաց, որ նրանց բոլորին հավասարապես սիրում է և ուրախ է կրկին տեսնել: Դա մեծ սուտ էր, քանի որ նստարաններից մեկի վրա կծկված մի տղա էր նստած, որին ուսուցչուհին չէր սիրում: Ուսուցչուհին նախորդ տարի էր ծանոթացել

այս դասարանի հետ և դեռ այն ժամանակ էր նկատել, որ այդ տղան իր համադասարանցիների հետ չի խաղում, նրա հագուստը կեղտոտ էր և այնպես էր բուրում, որ կարծես երբեք չէր լողացել:

Ժամանակի ընթացքում ուսուցչուհու վերաբերմունքն այդ աշակերտի նկատմամբ ավելի վատացավ և հասավ այնտեղ, որ նա ցանկանում էր ուղղակի կարմիր գրիչով խազմզել նրա գրավոր աշխատանքները և մեկ նշանակել:

Մի անգամ դպրոցի ուսմասվարը խնդրեց վերլուծել բոլոր աշակերտներին տրված բնութագրերը և ուսուցչուհին չսիրած աշակերտի գործն ամենավերջում դրեց: Երբ վերջապես հասավ դրան և չցանկանալով՝ սկսեց ուսումնասիրել՝ ապշեց:

Առաջին դասարանի ուսուցչուհին գրում էր. «Փայլուն երեխա է՝ լուսաշող ժպիտով: Տնային աշխատանքները մաքուր և կոկիկ է անում: Շատ հաճելի է նրա կողքին լինել»:

Երկրորդ դասարանի ուսուցչուհին գրում էր. «Գեղազանց աշակերտ է, որին բոլոր ընկերները գնահատում են, բայց նա խնդիրներ ունի ընտանիքում՝ նրա մայրն անբուժելի հիվանդ է և տանը նրա կյանքը պետք է, որ մահվան դեմ պայքար լինի»:

Երրորդ դասարանի ուսուցչուհին նշել էր. «Մոր մահը շատ մեծ հարված էր նրա համար: Նա ամեն կերպ ջանում է, բայց հայրը նրան ուշադրություն չի դարձնում և այդ վիճակը կարող է ազդել նրա ուսման վրա, եթե ոչինչ չձեռնարկվի»:

Չորրորդ դասարանի ուսուցչուհին գրել էր. «Տղան անպարտաճանաչ է և ուսման հանդեպ հետաքրքրություն չի ցուցաբերում: Ընկերներ համարյա չունի և հաճախ քնում է դասերի ժամանակ»:

Բնութագրերն ընթերցելուց հետո ուսուցչուհին ինքն իրենից շատ ամաչեց: Նա իրեն ավելի վատ զգաց, երբ Նոր տարուն բոլոր աշակերտներն իր համար փայլուն թղթերով ու ժապավեններով փաթեթավորված նվերներ բերեցին, իսկ չսիրած աշակերտի նվերը կոպիտ շագանակագույն թղթի մեջ էր փաթաթված: Երեխաներից ոմանք սկսեցին ծիծաղել, երբ ուսուցչուհին փաթեթից մի ապարանջան հանեց, որի վրա մի քանի քար պակասում էր, և օժանդակի մի սրվակ, որի մեկ քառորդն էր միայն մնացել: Բայց ուսուցչուհին լռեցրեց բոլորին՝ բացականչելով.

Ի՛նչ գեղեցիկ ապարանջան է,- և սրվակը բացելով՝ մի քիչ օժանդակ ցանեց դաստակին:

Այդ օրը տղան մնաց դասերից հետո, մոտեցավ ուսուցչուհուն և ասաց.

Այսօր դուք իմ մայրիկի պես եք բուրում:

Նրա հեռանալուց հետո ուսուցչուհին երկար լաց եղավ: Այդ օրվանից նա ոչ միայն գրականություն ու լեզու էր դասավանդում երեխաներին, այլև բարություն, կարեկցանք և սկզբունքներ:

Նման կրթությունից որոշ ժամանակ անց չսիրած աշակերտը սկսեց կյանք վերադառնալ և տարեվերջին դասարանի լավագույն աշակերտներից էր և ուսուցչուհու՝ սիրելին:

Դպրոցն ավարտելուց հինգ տարի անց ուսուցչուհին նամակ ստացավ նրանից, որտեղ տղան պատմում էր, որ ավարտել է քոլեջը և գնահատականներով երրորդն է եղել դասարանում, իսկ նա իր կյանքի ամենալավ ուսուցչուհին է:

Չորս տարի անց ուսուցչուհին մեկ այլ նամակ ստացավ, որտեղ նախկին աշակերտը գրում էր, որ բարձր գնահատականներով ավարտում է համալսարանը և նս

մեկ անգամ հաստատեց, որ նա մնում է իր կյանքի լավագույն ուսուցչուհին:

Մեկ այլ նամակ էլ ուսուցչուհին ստացավ ևս չորս տարի անց և աշակերտի անվան դիմաց արդեն դոկտոր բառն էր գրվում: Նա կրկին հավաստիացնում էր, որ ուսուցչուհին լավագույնն է իր կյանքում և հայտնում էր, որ հայրը մահացել էր երկու տարի առաջ, իսկ ինքը պատրաստվում է ամուսնանալ, և հարցնում, թե չէր համաձայնվի արդյոք իր հարսանիքին գրավել փեսայի մոր տեղը:

Ուսուցչուհին իհարկե համաձայնվեց և հարսանիքի օրը դրեց այն նույն ապարանջանը, որն իր սիրելի աշակերտն էր նվիրել, և գնեց այն նույն օձանելիքից, որը խեղճ երեխային իր մորն էր հիշեցնում:

Երբ հանդիպեցին ու գրկախառնվեցին, աշակերտն ասաց.

Շնորհակալություն, որ հավատացիք իմ ուժերին, հավատալ տվեցիք իմ անհրաժեշտությանն ու նշանակությանը, և օգնեցիք հավատալ սեփական ուժերիս, սովորեցրեցիք զանազանել բարին չարից:

Ուսուցչուհին՝ արցունքն աչքերին,- պատասխանեց.

Սխալվում ես, այդ դու ինձ ամեն բան սովորեցրիր: Ես չգիտեի, թե ինչ է պետք սովորեցնել, մինչև որ քեզ չհանդիպեցի...» (Վերցրել է surbzoravor.am կայքից, ռուսերեն թարգմ.՝ Էմիլիա Ապիգարյանի):

Կյանքն ունի իր վերուվայրումները: Նյութական ամեն կորուստ կարելի է վերագտնել, սակայն որևէ բարոյական կորուստ չի կարելի: Ինչպես որ մեռնողը չի կարող վերադառնալ, այնպես էլ կորած նկարագիրը ետ չես կարող բերել: Եթե մարդու անունը արատավորվի, դժվար կմաքրվի: Որևէ մարդ ինքն է, որ փչացնում է իր անունը

կյանքի սխալ ընթացքով: Եթե մարդը հաստատ է մնում իր նկարագրի վրա, ուրիշների քննադատությունները կամ բամբասանքները չեն կարող նրա մաքուր ու բարի անունը արատավորել: Այս բամբասանքները նման են ծովի ալիքներիին, որոնք մի պահ ցույց են տալիս, թե ծածկում են ափի ավազները, սակայն մի քանի րոպեից հետո, երբ ալիքները հանդարտվում են ու քաշվում, դարձյալ երևան են գալիս մաքուր ու ջինջ ավազները:

Մեր եկեղեցական հայրերից Հովհաննես Վարդապետ Երզնկացին ասում է. «Մարդու մարմինը պարսպապատ քաղաքի նման է, որն ունի հինգ դուռ՝ աչքը, ականջը, բերանը, ձեռքն ու ոտքը, այսինքն՝ շոշափելիքները: Բոլոր չար ու բարի բաներն այս հինգ դարպասներից են մտնում ներս և դուրս գալիս այնտեղից: Հոգին այս քաղաքի բնակիչն է, իսկ մարդու բարի գործերը՝ քաղաքի գանձերը: Միտքը թագավորն է այս քաղաքի ու գանձերի պահապանը, սատանան ու իր դևերը թշնամիներն են, որոնք ուզում են գրավել քաղաքը և հափշտակել հոգևոր գանձերը: Աստված, երբ բարիք է տալիս, և մարդիկ այդ մեծարանքի պատիվը չեն հասկանում ու գոհություն չեն հայտնում, Նա ետ է առնում Իր տված բարիքները»:

«Միտքը առանց սրտի, իմաստությունը առանց նկարագրի, ինելացիությունը առանց բարության, եթե ուժեր են, այդ պարագային չարիքի համար են», - ասում է մի այլ մտածող:

«Նկարագիրը մի ադամանդ է, որը կարող է քերել մյուս բոլոր քարերը»:

Քրիստոնեական մաքուր ու առաքինի նկարագրով օժտված մարդը կարող է ինքնիրեն աշխարհի ամենաերջանիկ ու հարուստ անձը նկատել, որովհետև այնպիսին հաճելի կլինի Աստծուն ու կհարգվի մարդկանցից:

Փորձենք մեր հավատի զորությամբ, խղճով ու աննկուն կամքով հեռու մնալ նկարագիրը արատավորող ու փչացնող մութ գործերից և մեր կյանքը առաջնորդենք դեպի Լույսի ու Բարության Աղբյուրը հանդիսացող Ամենակարող Արարչին: Ամեն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Օրինության խօսք	
Շնորհակալության խօսք	6
Առաջաբան	7
Աստվածասեր մարդը	9
Արդարի աղոթքը	14
Աշխարհի շահը	20
Տիրոջ ողորմությունը	26
Հիսուս թակում է մեր դուռը	30
Ընտանիքը ուժ է	35
«Ո՛ր էիր Աստված»	43
Քաղցրություն	48
Հոգևոր կուրություն	53
Նմանվեցեք Աստծուն	59
Քանքարների առակը	64
Ինքնախաբեություն	70
Երջանկություն	75
Ցուցամոլություն	80
Ողորմություն և ճշմարտություն	85
Թարգմանիչ Վարդապետներ	90
Փորձություն	95
Խոստովանություն	100
Հետաքրքրություն	106
Նախանձոտ մարդը	111
Բամբասանքը մեղք է	117
Արդարություն	122
Աշակերտների «Միալը»	127
Բարեկամ	133
Գոհաբանության օր	140
Մեղքը ո՞ւմն է	145
Ի՞նչ է Սերը	150

Հույսով ապրիր	155
Թող Քո կամքը լինի	160
Ճշմարտությունը և արդարությունը	166
Հավատ և հոգի	171
Փողասիրության մասին	176
Ճշմարիտ իմաստունը	182
Ընտրվածների մասին	187
Աստծու շնորհը	192
Խոսքի և գործի արժեքը	196
Քաջ և գոհվող Հովիվը	202
Նախանձախնդրության ոգին	211
Անձնասիրության մասին	216
Բարտիմիոս կույրի խնդրանքը	221
Բղջախոհություն	226
Անձնուրացություն	231
Բարիք արա կարոտյալին	236
Անհնազանդություն	241
Անիրավություն	247
Ծուլությունը չարիք է	253
Կեղծավորություն	258
Առատաձեռնություն	263
Մեղրով լցրու քեզ	268
Գթասրտություն	274
Անկեղծություն	281
Բարկությունը թշնամանք է	286
Ինքնաքննություն	290
Խղճմտանք	295
Նկարագիր	302
 Բովանդակություն	 309